



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

# ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՌԵԳԻՐՔ

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2013

## **ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

### **ՀԱՅ ԳԱՂԹԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՓՈՐՉ**

#### **ՄՈՒՏՔ. Պատմության պարբերացումը և հիմնական մոտեցումները**

Պատմության պարբերացումը համակարգման մի յուրօրինակ ձև է, որի հիմնական նպատակը պատմական գործընթացների պայմանական բաժանումն է առանձին ժամանակագրական շրջանների: Վերջիններս ունենում են տարբերակիչ յուրահատկություններ, որոնք առանձնացվում են պարբերացման համար որպես հենք ընդունված չափորոշիչներով: Արդյունքում ստացվում է համեմատաբար կայուն բնութագրիչներով ժամանակաշրջանային բաժանում<sup>1</sup>:

Հայտնի են պարբերացման մի քանի մոտեցումներ, որոնցիցից հարկ ենք համարում անդրադառնալ հասարակարգերի և քաղաքակրթությունների մոտեցումներին:

Հասարակարգերի մոտեցումն ընդունված էր խորհրդային պատմագիտության մեջ և հիմնված էր պատմությունը հինգ հասարակարգերի բաժանելու՝ 4. Մարքսի և Ֆ. Էնգելսի տեսությունների վրա<sup>2</sup>: Համարվում էր, որ յուրաքանչյուր մարդկային հանրույթ իր զարգացման ընթացքում անցնելու էր հինգ փուլ:

---

<sup>1</sup> Տե՛ս The Challenge of Periodization: Old Paradigms and New Perspectives, ed. L. Besserman, New York, 1996, J. Bentley, ch. I, Cross-Cultural Interaction and Periodization in World History. "American Historical Review", vol. 101, N 3, 1996 (June), էջ 749–770:

<sup>2</sup> Տե՛ս К. Маркс, Ф. Энгельс, Сочинения, изд. 2-е, т. 13, М., 1959, с. 7, т. 21, М., 1961, с. 26. Այդ մասին մանրամասն տե՛ս Всемирная история, т. 1, под редакцией Ю. П. Францева, И. М. Дьяконова, Г. Ф. Ильина, С. В. Киселева, В. В. Струве, М., 1956, էջ VII-XXII, Г. Кунов.

- ա. նախնադարյան համայնական,
- բ. ստրկատիրական,
- գ. ավատատիրական,
- դ. կապիտալիստական,
- ե. կոմունիստական:

Խորհրդային պատմագիտության մեջ այս մոտեցումը եղել է հիմնականը: Սակայն ասել, որ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո այն դուրս է եկել գիտական շրջանառությունից, այնքան էլ ճիշտ չէ:

Յու. Սեմյոնովը մշակել է գլոբալ հասարակարգերի տեսությունը, որտեղ հիմնական շեշտը դրված է այն փաստարկի վրա, թե հասարակության՝ բոլոր հասարակարգերով անցնելու դրույթը չի կարող պարտադիր կամ հենքային լինել: Նոր հասարակությունները, դուրս գալով մարդկային զարգացման «ճանապարհ», սկսում են այնտեղից, որտեղ կանգ են առել նախկինում զարգացած հանրույթները<sup>1</sup>:

Ըստ քաղաքակրթությունների մոտեցման՝ պատմական գործընթացը դիտարկվում է ոչ թե հիերարխիկ ուղղահայաց, այլ տարածական-հորիզոնական հարթության վրա: Այս մոտեցման կողմնակիցները կարծում են, որ «հավասարագոր» քաղաքակրթությունների տարբերակումը հնարավորություն է տալիս խուսափելու պատմության զարգացման հարցից, ուստի նաև ժողովուրդների՝ որպես զարգացած, զարգացող և չզարգացած հասարակությունների տարբերակման խնդրից: Այս մոտեցումը հստակեցվել է Օ. Շպլինգերի «Եվրոպայի մայրամուտը» և Ա. Թոյնբի «Պատմության ուսումնասիրությունը» աշխատություններում: Թոյնբին առանձնացրել է շուրջ երեսուն քաղաքակրթություն, որոնք ունեն յուրահատուկ-անկրկնելի դիմագիծ: Դրանց առաջացման պատճառ են դարձել արտաքին միջավայրի մարտահրավերները:

Марксова теория исторического процесса, общества и государства, т. 2, М.-Л., 1930, с. 121-124:

<sup>1</sup> Տե՛ս Yu. Semenov, Socioeconomic Formations in Historical Process. Philosophy in USSR, Problems of Historical Materialism, М., 1981, էջ 33-51:

Դրանցից յուրաքանչյուրն անցել է առաջացման, զարգացման, մասնատման և անկման փուլեր: Քաղաքակրթության ներքին կազմվածքը բաժանվում է երկու մասի՝ «ստեղծագործ փոքրամասնություն» և զանգվածներ: Առաջինների առկայությունը քաղաքակրթության հիմնական բնորոշիչներից մեկն է<sup>1</sup>:

Վերջին շրջանում որոշ հետազոտողներ քաղաքակրթություն են վերագրում գրեթե բոլոր էթնիկ հանրույթներին: Ի. Վալլերստայնը քաղաքակրթական մոտեցումը բնութագրում է որպես «թույլերի զաղափարախոսություն», որն էթնիկ ազգայնականության «բողոք» է ներկա աշխարհակարգի «միջուկ» հանդիսացող պետությունների դեմ<sup>2</sup>:

Շարունակելով քաղաքակրթական մոտեցման որոշ սկզբունքների զարգացումը՝ այդ մոտեցման կողմնակիցներն անցում են կատարել մեկ քաղաքակրթություն ընդգրկող ընկերային համակարգերի զարգացման ուսումնասիրությունից մինչև այնպիսի համակարգերի ուսումնասիրություն, որոնք ընդգրկում են մեկից ավելի քաղաքակրթություն և նույնիսկ աշխարհի բոլոր քաղաքակրթությունները: Այդ մոտեցման հիմնական մշակողներն են Ֆ. Բրոդելը<sup>3</sup> և Ի. Վալլերստայնը<sup>4</sup>:

Ակնհայտ է, որ նշված տեսություններից ուղղակի արտածել հայ գաղթաշխարհի պատմության պարբերացման սկզբունքներ և կամ մեթոդներ այնքան էլ դյուրին աշխատանք չէ:

Մյուս կողմից, վերոհիշյալ տեսությունները վերաբերում են հասարակություններին և դրանց զարգացմանը: Հայտնի է, որ մարդկանց՝ որպես հասարակությունների ձևավորումը տեղի է ունեցել

<sup>1</sup> Տե՛ս А. Тойнби. Изучение истории, М., 2009, с. 31:

<sup>2</sup> Տե՛ս I. Wallerstein, World-Systems Analysis, Social Theory Today, Cambridge, 1987, pp. 309-324:

<sup>3</sup> Տե՛ս Ф. Бродель, Материальная цивилизация, экономика и капитализм XV–XVIII вв., М., 2006:

<sup>4</sup> Տե՛ս I. Wallerstein, նշվ. աշխ.:

տարածքային սկզբունքով («տարածքային սոցիալիզացիա»), այն հենքի վրա, որ մարդիկ գիտակցորեն ու ենթագիտակցորեն աստիճանաբար կապվում են առանձին վերջրած տարածքի, ստեղծում ավանդույթներ, կենցաղ և մշակույթ<sup>1</sup>: Ակնհայտ է, որ հասարակության ձևավորումից մինչև հավաքական կենսագործունեության՝ համակեցության սոցիալական և արժեքային զարգացման փուլերը կապվում են առանձին տարածքների հետ, ուստի գաղթավայրերի պատմության պարբերացումը հայության տարածքային սոցիալիզացիայի և զարգացման փուլերի հիմքով կատարելը մի կողմից հնարավորություն կտա տեղայնացնելու գաղթաշխարհի պատմությունը և զարգացումն ըստ առանձին երկրների, իսկ մյուս կողմից՝ կնպաստի գաղթաշխարհի պատմության ամբողջացմանը և տարբեր սոցիալական ու արժեքային համակարգերում հայության համարկման խնդիրների պարզաբանմանը:

Սակայն հայ գաղթավայրերի պատմության պարբերացումը առաջին հերթին խնդիր է դնում գաղթաշխարհի համընդգրկուն պատմության և գաղթաշխարհի հայության՝ ժամանակի ու տարածության մեջ որպես ամբողջական համակեցական համակարգի ընկալման: Համակեցությունը նախատեսում է որոշակի աշխարհագրական, էթնոժողովրդագրական, պատմական, մշակութային, հոգևոր-կրոնական և այլ հենքերի առկայություն<sup>2</sup>: Դրանցից գաղթաշխարհին ընդհանուր առմամբ չի վերաբերում աշխարհագրական հենքը: Թեև աշխարհագրական առումով գաղթաշխարհում որոշակի միասնական դիմագծով են հանդես գալիս եվրոպայի և Մերձավոր Արևելքի հայերը: Մյուս կողմից՝ գաղթաշխարհի համակեցության աշխարհագրական հենքը կարելի է ձևավորել ընդհանուր հայրենիքի առկայությամբ:

<sup>1</sup> Տե՛ս I. Duchecik, Comparative federalism. The territorial dimension of politics, Lanham et al., 1987, p. 62:

<sup>2</sup> Տե՛ս F. Braudel, A history of civilizations, New York, 1995, p. 18:

### 1. Հայ ժողովրդի պատմության պարբերացման խնդիրը և գաղթաշխարհի գործոնը

Արդեն ԽՍՀՄ-ի փլուզումից հետո անհրաժեշտություն առաջացավ հրաժարվելու պատմության պարբերացման մարքս-էնգելսյան մոտեցումից և մշակելու նոր, պարբերացման ավելի արդյունավետ համակարգ: 1992 թ. Երևանում տեղի ունեցավ գիտաժողով՝ նվիրված այդ խնդրին<sup>1</sup>: Բարեբախտաբար պատմաբան Պ. Հովհաննիսյանն ամփոփել ու մշակել է այդ համաժողովում հնչած բոլոր տեսակետները, որը հնարավորություն է տալիս ընդհանրացված տեսնելու հայ պատմագիտության ձեռքբերումներն այդ ասպարեզում:

Համաժողովի մասնակիցները, հիմք ընդունելով այն, որ առանց հայ ժողովրդի պատմության պարբերացման խնդրի լուծման՝ հնարավոր չէ խոսել պատմագիտության մեջ լայնամասշտաբ ձեռքբերումների մասին՝ մասնակիցներից շատերը ներկայացրել են սեփական մոտեցումները և առաջարկել հայ ժողովրդի պատմության պարբերացման տարաբնույթ սկզբունքներ:

Ըստ Գ. Սարգսյանի՝ հայոց միջնադարը կարելի է բաժանել նախաավատատիրական և միջնադարյան կամ ավատատիրական ժամանակաշրջանների՝ սահմանագիծն անցկացնելով IV դարով<sup>2</sup>:

Ըստ Վ. Դիլոյանի՝ արդեն XVII դ. հայ վաճառականական կապիտալն աննախադեպ վերելք է ապրել: Այդ գործընթացը հասկանալի պատճառներով տեղի էր ունենում հայկական գաղթավայրերում: Հայ վաճառականությունն իր ձեռքն է վերցնում գրատպության գործը՝ տարածելով առաջադիմական գաղափարներ: Նրանք իրենց հայացքը դարձնում են դեպի Հայաստան՝ երկրի

<sup>1</sup> Տե՛ս Պ. Հովհաննիսյան, Հայ ժողովրդի պատմության պարբերացման հիմնահարցին նվիրված համաժողով, «Լրաբեր (հաս. գիտ.)», 1993, թիվ 4, էջ 148-161:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 149:

ազատագրումը կապելով լուսավորական գաղափարների և հանրապետական կարգերի հաստատման հետ: Այդ հարցում համերաշխվել են հնդկահայ և ռուսահայ վաճառականության առաջադեմ ներկայացուցիչները: Ուստի Վ. Դիլոյանն առաջարկեց իրականացնել հայ ժողովրդի պատմության ընդհանրական բաժանում՝ հետևյալ դարաշրջանների ծիրում.

1. նահապետական, տոհմացեղային,
2. ավատատիրական (Ք. ա. IX դ. - Ք. հ. XVII դ. երկրորդ կես),
3. նոր պատմություն (XVII դ. երկրորդ կես-1918 թ.),
4. արդի պատմություն (1918 թ.-առ այսօր)<sup>1</sup>:

Լ. Շահինյանի կարծիքով՝ հայ ժողովրդի պատմության պարբերացումը պետք է իրականացնել ըստ դարակազմիկ իրադարձությունների.

1. հնագույն շրջան (սկզբից մինչև Ք. ա. 134 թ.),
2. հին շրջան (Ք. ա. 134 թ. - 428 թ.)՝ հեթանոս և քրիստոնյա Արշակունիներ ենթաբաժիններով,
3. միջնադար (428 թ.-XVIII դ. վերջ),  
ա. վաղ միջնադար (V-XI դդ.),  
բ. միջին միջնադար (XI-XV դդ.),  
գ. ուշ միջնադար (XVI դ.-1800 թ.):
4. նոր շրջան (1801-1918 թթ.),
5. նորագույն շրջան (1918 թ.-առ այսօր)<sup>2</sup>:

Կարևոր խնդիրներից մեկը, որ քննարկվեց համաժողովում, այն էր, թե արդյոք անհրաժեշտ է հայոց պատմության միջնադարյան շրջանի պարբերացումն իրականացնելիս հաշվի առնել գաղթաշխարհի գործոնը: Մ. Զուլալյանը նշեց, որ գաղթաշխարհը չի որոշել հայոց պատմության ընթացքը, ուստի այդ գործոնը պարբերացման ընթացքում չի կարելի կիրառել<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 151:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 151-152:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 152:

Է. Դանիելյանի կարծիքով՝ հայ ժողովրդի պատմության պարբերացման հիմքում անհրաժեշտ է դնել պետականության առկայության գործոնը՝ հին ու միջնադարյան պատմության միջև որպես բաժանարար ի նկատի ունենալով քրիստոնեության ընդունումը<sup>1</sup>:

Ն. Հովհաննիսյանի հույժ կարևոր դիտարկման համաձայն՝ անհրաժեշտ է պարբերացման ընթացքում առանձնացնել երկու կարևոր չափանիշներ.

1. անփոփոխ կամ կայուն չափանիշներ,
2. շարժական կամ ոչ կայուն չափանիշներ:

Վերջինիս մեջ մտնում են հոգևոր-մշակութային, գաղափարաբանական, սոցիալ-տնտեսական և այլ գործոններ:

Անփոփոխ չափանիշների մեջ պետք է հաշվի առնել, մասնավորապես, V դարը, երբ կործանվեց Արևմտյան Հռոմեական կայսրությունը, և ավարտվեց հին դարերի շրջանը, կամ 1918 թ., երբ ավարտվեց Առաջին աշխարհամարտը, և կործանվեցին ցարական, Ավստրո-հունգարական և Օսմանյան կայսրությունները: Այդ շրջանները դարակազմիկ նշանակություն ունեն մաս հայոց պատմության մեջ՝ ի դեմս պետականության կորստի և Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծման: Նորագույն շրջանը, որը սկիզբ է առել 1918 թ., որպես բնորոշ գիծ ընդգրկում է Սփյուռքի ձևավորումը՝ ի հետևանս Արևմտյան Հայաստանի բռնի դատարկման<sup>2</sup>:

Յու. Մկրտումյանի տեսակետի համաձայն՝ պարբերացման հիմքում պետք է դրվեն պատմության որակական փոփոխությունները (քաղաքական, տնտեսական, մշակութային, կրոնական և իրավական)<sup>3</sup>:

Կարևոր է Ա. Ստեփանյանի այն նշումը, որ նախքան պարբերացումը հարկ է հստակություն մտցնել հայոց համակեցության ըն-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 153:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 155:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 156:

կալման մեջ՝ անդրադառնալ դրա հենքային գործոններին, որից հետո՝ փորձ կատարել այն ներկայացնելու ժամանակի և տարածության կոնկրետ հոլովություն: Ըստ որում՝ մարդկային համակեցությունը բարդ ու ինքնատիպ համակարգ է, որի գոյության տարբեր շրջաններում առանձնահատուկ նշանակություն են ստանում նրա տարբեր կառուցակազմիկ (համակարգաստեղծ) տարրերը: Որպես օրինակ է բերվում այն, որ հունական պատմության շրջափուլերի բաժանումը կատարվել է՝ ըստ համակեցության այս կամ այն տարրի՝ հոմերոսյանը՝ էթնոռազմական և ցեղային ինտեգրման, արխայիկը՝ տնտեսության և քաղաքային կյանքի ծաղկման և դասականը՝ ստեղծագործական հասարակաշինության և մշակույթի զարգացման<sup>1</sup>:

Արժեքավոր է Ա. Ստեփանյանի այն դիտարկումը, որ պարբերացումը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով հասարակության ինչպես քաղաքական ու մշակութային, այնպես էլ հասարակական զարգացման մակարդակը: Այդ առումով առաջարկվել է պարբերացման հետևյալ տարբերակը.

1. համայնական (վաղնջական ժամանակներից մինչև Ք. ա. XXIII դ.),
2. տոհմատիրական (Ք. ա. XXIII դ.-Ք. ա. II դ.),
3. նախարարական (Ք. ա. II դ.-XIII դ.),
4. առևտրական կապիտալի (XIV դ.-XVII դ.),
5. նոր (XVII դ.-1918 թ.),
6. արդի (1918 թ.-մեր օրերը)<sup>2</sup>:

Կարծիքների ամփոփմամբ հանդես եկող Լ. Խորշուդյանի կարծիքով՝ հայ ժողովրդի պատմության պարբերացման հարցում որպես չափանիշ պետք է ընդունվեն ազգային (պետականություն, ազգային-ազատագրական պայքար, ազգային հեղափոխություն), քաղաքական, մշակութային, կրոնական և համաշխարհային կյանքի՝ ժողովրդի պատմության համար կարևոր նշանակու-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 156-157:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 157-158:

թյուն ունեցող դարակազմիկ, շրջադարձային, բախտորոշ իրադարձությունները: Հայ ժողովրդի պատմությունը չպետք է դիտարկվի համաշխարհային պատմությունից կտրված, այլ դրա համատեքստում: Հայաստանը և հայության տարբեր հատվածները հասարակական հարաբերությունների այս կամ այն շրջանն են թևակոխել այն երկրի հետ միասին, որի տիրապետության ներքո կամ որի տարածքում ապրել են:

Ըստ այդմ՝ հայ ժողովրդի պատմության լավագույն պարբերացումը կարող է լինել ըստ հին, միջնադարյան, նոր և արդի շրջանների բաժանումը: Հին շրջանն ավարտվում է V դ., երբ ընկավ պետականությունը, հիմնավորվեց քրիստոնեությունը, և ստեղծվեց այբուբենը (ոսկեդարի սկիզբը): Այսինքն՝ այս բաժանման հիմքում դրվում են երեք կարգի գործոններ՝ պետականությունը, կրոնը և մշակույթը: Միջնադարյան շրջանն ավարտվում է XVII դ., երբ զարթոնք է ապրում ազատագրական պայքարը, և մշակվում ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը: Արդի շրջանը սկիզբ է առնում 1918 թ., երբ ստեղծվեց Հայաստանի Հանրապետությունը<sup>1</sup>:

Ի դեպ, հենց այս սկզբունքով է ստեղծվել ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի հեղինակած «Հայոց պատմություն» բուհական ձեռնարկը<sup>2</sup>:

## 2. Հայ գաղթաշխարհի պատմության պարբերացումը պատմագիտության մեջ

Վերագրյալը ցույց է տալիս, որ հայ ժողովրդի պատմության պարբերացման հարցում գաղթաշխարհի գործոնը համարվել է ոչ էական առնվազն մինչև XVII դ. ընկած ժամանակահատվածի համար, երբ գաղթաշխարհի հայ վաճառականության շրջանում

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 158-161:

<sup>2</sup> Տե՛ս «Հայոց պատմություն», հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, ուսումնական ձեռնարկ, խմբագրությամբ պրոֆ. Գր. Ռ. Սիմոնյանի, Ե., 2000, Բ հրատարակություն, Ե., 2012:

ձևավորվել են Հայաստանի ազատագրության գաղափարները: Հայ ժողովրդի պատմության պարբերացման հարցում գաղթաշխարհի գործոնին էական դեր է վերապահվում միայն նոր շրջանում:

Փաստորեն պարբերացման է ենթարկված հիմնականում Հայաստանի պատմությունը, այսինքն՝ հայության՝ հայրենիքում բնակվող հատվածի պատմական ընթացքը: Մինչդեռ արդեն IV դ. սկսած՝ այն ուղեկցվել ու զուգահեռվել է գաղթաշխարհի պատմությամբ: Վերջինիս ձևավորումը տեղի է ունեցել ի հաշիվ Հայաստանում հայության նվազման և երկրի թուլացման, որը կարող է լինել պատմական գործընթացի և դրա պարբերացման կարևոր բաղադրիչ:

Նախորդ տասնամյակներում հրատարակվել են հայ ընդհանուր առմամբ գաղթաշխարհին և ի մասնավորի առանձին գաղթավայրերին վերաբերող բազմաթիվ աշխատություններ<sup>1</sup>: Դրանցից յուրաքանչյուրում գաղթաշխարհի և գաղթավայրերի պատմության ուսումնասիրության ինչ-ինչ սկզբունքներ են կիրառվել, որոնցից հնարավոր է որոշակի պատկերացում կազմել գաղթաշխարհի պատմության պարբերացման խնդրի վերաբերյալ հեղինակների տեսակետերի մասին: Հարկ ենք համարում անդրադառնալ դրանցից հիմնականներին:

Հ. Աճառյանը հատկապես առանձնացրել է հայկական գաղութների ուղղությունները՝ նշելով, որ դրանք ունեցել են չորս գիծ՝ հյու-

<sup>1</sup> Տե՛ս «16-18-րդ դդ. հայ ազատագրական շարժումները և հայ գաղթավայրերը», ժողովածու, Ե., 1989, «Էջեր հայ գաղթավայրերի պատմության», հոդվածների ժողովածու, Ե., 1996, «Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.)», հ. 1-2, Ե., 2003, Վ. Բարխուդարյան, Նոր Նախիջևանի հայ գաղթօջախի պատմություն (1779-1861 թթ.), Ե., 1967, նույնի՝ Նոր Նախիջևանի հայ գաղթօջախի պատմություն (1861-1917 թթ.), Ե., 1985, Վ. Միքայելյան, Դրինի հայկական գաղութի պատմություն, հ. 1-2, Ե., 1964, 1970, Հ. Թովուզյան, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն, Ե., 1986, Վ. Բայրուրյան, Նոր Ջուղայի հայ գաղթօջախի պատմությունը XVII դ., Ե., 1969, Հ. Մարտիրոսյան, Իրանի տարածքի հայ համայնքները XI-XV դդ., Ե., 1990, Ա. Խառատյան, Կ. Պոլսի հայ գաղթօջախը (XI – XII դդ.), Ե., 2007, Զ. Ավագյան, ԱՄՆ հայ գաղութի պատմությունը սկզբնավորումից մինչև 1924 թ., Ե., 2000 և այլն:

սիսային, հարավային-արևելյան, հարավային-արևմտյան և արևմտյան: Այդ գծերին հետևելով՝ նա իր աշխատությունը բաժանել է չորս մասի<sup>1</sup>: Մեծ հայագետը ուսումնասիրության չորս հիմնական մասերում, որոնք ենթաբաժանված են ըստ տարբեր երկրներ հայության գաղթի և հաստատման պատմության, սկսում է հնագույն տեղեկություններից և հասնում մինչև իր օրերը: Այսինքն՝ գաղթաշխարհի պատմության պարբերացումը հստակեցված չէ ժամանակաշրջանային առումով, և որպես հիմք է ընդունված աշխարհագրական տարածման գործընթացը:

Գրեթե նույն սկզբունքով են իրենց աշխատությունները շարադրել նաև Ա. Ալպոյաճյանը<sup>2</sup> և Ա. Գ. Աբրահամյանը<sup>3</sup>: Թեև Ա. Ալպոյաճյանը իր եռահատորյակը բաժանել է Ք.ա VI դարից մինչև XI դ., XI-XV դդ. և XVI դարից մինչև մեր օրերն ընդգրկող պարբերաշրջանների, սակայն բավարարվել է միայն առանձին գաղթավայրերի պատմության այս կամ այն խնդիրների ու իրադարձությունների վերաբերյալ փաստեր բերելով: Իսկ Ա. Գ. Աբրահամյանի աշխատության մեջ ընթերցողին է ներկայացվում շուրջ երեսուն հայկական գաղթավայրերի պատմության ուրվապատկերը:

Լեոն, անդրադառնալով հայոց պատմության մեջ գաղթաշխարհի դերին, նշել է, որ նոր շրջանում այն կարևոր լիցքեր էր հաղորդում Հայաստանին: XIX-XX դդ. զարգացումները հայկական իրականության մեջ հնարավոր չէ բացատրել՝ առանց գաղթաշխարհի գործոնը հաշվի առնելու: Նա գտնում է, որ նոր շրջանի հայոց պատմության մեջ միախառնված են հայրենիքն ու Սփյուռքը, ուստի հայոց պատմությունը պետք է ուսումնասիրել այդ երկուսի ամբողջության մեջ<sup>4</sup>: Փաստորեն, ըստ Լեոնի՝ XIX-XX դդ.

<sup>1</sup> Տե՛ս Հ. Աճառյան, Հայ գաղթականության պատմություն, Ե., 2002, էջ 11-13:  
<sup>2</sup> Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. 1, Կահիրէ, 1941 (Ք.ա 6-րդ դ.-11-րդ դ.), հ. 2, Կահիրէ, 1955 (11-15 դդ.), հ. 3, Կահիրէ, 1961 (16-րդ դ.-մինչև մեր օրերը):  
<sup>3</sup> Տե՛ս Ա. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա, Ե., 1964, հ. Բ, Ե., 1967:  
<sup>4</sup> Տե՛ս Լեոն, Երկերի ժողովածու, հ. 4, Ե., 1984, էջ 73:



պարբերաշրջանը առանձնահատուկ է հայոց պատմության մեջ, քանի որ միահյուսված են հայրենիքի և գաղթաշխարհի հայության պատմական ընթացքները:

Հայ գաղթաշխարհի պատմության պարբերացման հարցով զբաղվել է նաև Վ. Բարխուդարյանը: Նա պարբերացումը կատարել է՝ բնույթի և ժամանակագրության հարցերն ընդհանուր առմամբ համադրելով: Նա գաղթաշխարհի պատմությունը (հայկական գաղթավայրերի ամբողջական պատմություն) պարբերացնում է երեք հիմնական դարաշրջանների՝ միջնադար, նոր և նորագույն: Նորագույն շրջանն ընդգրկում է Առաջին աշխարհամարտից հետո ընկած ժամանակահատվածը, երբ ստեղծվեց հայկական սփյուռքը: Միջնադարում, ավելի ստույգ՝ ուշ միջնադարում (XV-XVIII դդ.) գոյություն ունեցած և վերելք ապրած գաղութներն ունեցել են առանձնահատկություններ՝ որպես կանոն ձեռք բերելով ինքնավարություն: Հայ համայնքն ապրել է ինքնամփոփ կյանքով և պահպանել ազգային նկարագիրը: Այդ շրջանի նշանավոր կենտրոններից էին Նոր Ջուղայի, Հնդկաստանի, Լեհաստանի, Ուկրաինայի և Ղրիմի գաղթավայրերը, որոնք մնալուն հետք են թողել հայոց պատմության մեջ: Դրանց վերելքի շրջանը եղել են XVI-XVIII դդ. և, մասամբ, XIX դ. առաջին տասնամյակները: Այդ շրջանից սկսած՝ արդեն նոր շրջանում, վերոհիշյալ գաղթավայրերի մի մասը աստիճանաբար կորցնում է արտոնությունները, ազգային նկարագիրը և բռնում մարման ուղին: Վ. Բարխուդարյանն այդ գործընթացը կապում է միջնադարից դեպի նոր հարաբերություններ անցման հեղաբեկումների հետ<sup>1</sup>: Փաստորեն, Վ. Բարխուդարյանի կողմից կատարված պարբերացումը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

1. միջնադար՝ XVI-XVIII դդ.,
2. նոր շրջան՝ XIX դ. սկիզբ-1918 թ.,
3. նորագույն շրջան՝ 1918 թ. մինչև մեր օրերը:

<sup>1</sup> Տե՛ս Վ. Բարխուդարյան, Պատմագիտության հարցեր, Ե., 2008, էջ 366-368, 389-407:

Հաշվի առնելով այն բոլոր դժվարությունները, որոնք ի հայտ են գալիս հայ գաղթավայրերի պատմության ամբողջական, ընդհանրացնող աշխատություններ ստեղծելիս, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ գաղթավայրերի պատմության բաժինը ձեռնամուխ եղավ գաղութահայ պատմության եռահատորյակի ստեղծմանը: Այնտեղ հայ գաղթաշխարհի պատմությունն այդպես էլ պարբերացման չենթարկեց: Այն ստեղծվեց «գաղթավայրերի պատմության տարածաշրջանային սկզբունքով՝ յուրաքանչյուր գաղութի պատմության շարադրանքի ժամանակագրության պահպանմամբ»: Հաշվի առնելով ժամանակագրական առումով գաղթաշխարհի պատմության ստեղծման անարդյունավետությունը՝ շեշտվում է տարածաշրջանային սկզբունքի նպատակահարմարությունը<sup>1</sup>:

Հայ գաղթաշխարհի պատմության պարբերացման խնդրում հստակեցում է մտցված եռահատորյակի «Հայկական արտագաղթերը» բաժնում, որտեղ գաղթաշխարհի սկիզբ համարվում է քրիստոնեության ընդունումից հետո սկսված շրջանը<sup>2</sup>: Որպես գաղթերի չափերի մեծացման փուլ համարվում է արաբական արշավանքների և տիրապետության շրջանը: VII-XI դարերը, պայմանավորված արաբա-բյուզանդական պատերազմներով և սելջուկյան արշավանքներով, համարվում են Բյուզանդիայում, Բալկաններում, Հյուսիսային Կովկասում և Մերձավոր Արևելքում հայկական գաղթավայրերի առաջացման շրջան<sup>3</sup>: XI-XIII դարերում, սելջուկյան և մոնղոլական տիրապետություններով պայմանավորված, արտագաղթը շարունակվում էր և նույնիսկ աճում<sup>4</sup>: XIV-XVII դդ. աչքի էին ընկնում ոչ միայն արտագաղթերով, այլ

<sup>1</sup> Տե՛ս «Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.)», հ. 1, «Ալավոնական աշխարհի և Հյուսիսային Կովկասի հայկական գաղութները, Ե., 2003, հ. 2, «Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղութները», Ե., 2003, հ. 3, «Եվրոպայի և ԱՄՆ-ի հայ գաղութները», Ե., 2013:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, հ. 1, էջ 21:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 21-22:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 34:

նաև մի գաղթավայրից մյուսը հայության տեղաշարժերով<sup>1</sup>: XVII դ. նշանավորվեց Օսմանյան կայսրությունում ջելալիների շարժման հետևանքով առաջացած մեծ արտագաղթով և 1604 թ. պարսից շահ Աբաս Մեծի կողմից իրականացված բռնագաղթով<sup>2</sup>: Պարսկաստան բռնագաղթած շատ հայեր այնուհետև տեղափոխվեցին Հնդկաստան՝ լիցք հաղորդելով տեղի հայկական գաղթավայրին<sup>3</sup>: XVIII դ. հայության արտագաղթի հիմնական ուղղությունը Ռուսական կայսրությունն էր<sup>4</sup>: XIX դ. հայության արտագաղթը ստանում է երկու բնորոշ ուղղվածություն՝ պանդխտություն և Օսմանյան կայսրության հայասպան քաղաքականության հետևանքով՝ փախստականություն: Այդ երևույթներն առկա էին նաև XX դ. առաջին տասնամյակին<sup>5</sup>:

Կարելի է տեսնել, որ այս բաժնում առկա է գաղթաշխարհի պատմության որոշակի պարբերացում, որը հենված է արտագաղթերի ժամանակաշրջանների ու բնույթի վրա.

1. VII-XI դդ.,
2. XI-XIII դդ.,
3. XIV-XVII դդ.,
4. XVII դ.,
5. XVIII դ.,
6. XIX դ.-XX դ. սկիզբ:

Հայ գաղթաշխարհի և հատկապես հայության արտագաղթերի պատմության պարբերացման փորձ է կատարվել նաև Է. Մելքոնյանի կողմից: Ըստ ուսումնասիրողի՝ արդեն III-IV դդ. հայերը բռնագաղթեցվել են Իրան: Պետականության կորստի և արաբների, իսկ հետո նաև սելջուկների արշավանքների շրջանում սկսվում է հայության արտագաղթը հայրենիքից: Մինչև IX դ. հայության արտահոսքը դեպի Բյուզանդիա խրախուսվում էր կայս-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 35:  
<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 36:  
<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:  
<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 36-37:  
<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 38-40:

րության կողմից: Հայոց պատմության համար մեծ նշանակություն ունեցավ հայության արտագաղթը Կիլիկիա, որտեղ ձևավորվեց հայկական պետականություն: XIII դ. սկսած՝ հայության արտագաղթերին սկսում է նպաստել նաև միջազգային առևտրում հայ վաճառականների խաղացած դերը: Հայության արտագաղթերն ու բռնագաղթերը շարունակվել են նաև XVI-XVIII դդ. պարսկա-թուրքական պատերազմների շրջանում: XIX դ. վերջին և XX դ. սկզբին հայության արտահոսքը հայրենիքից մեծանում է Օսմանյան կայսրության ցեղասպան քաղաքականության պատճառով: 1920-ական թթ. կազմավորվեց «նոր հայկական արտասահման (արտերկիր)»-ը, որն այնուհետև կոչվեց Սփյուռք<sup>1</sup>:

Փաստորեն, հայ գաղթաշխարհի պատմության պարբերացման խնդիրը դիտարկվել է երկու տեսանկյունից.

1. հայոց պատմության ընդհանուր համատեքստում՝ որպես հայության ենթահամակեցական միջավայր,
2. հայոց պատմության համատեքստից դուրս՝ որպես համակեցական առանձին միջավայր:

Վերոհիշյալ պարբերացումներում միայն ուշ միջնադարում է, որ հետազոտողները փոխկապակցվածություն են նկատում Հայաստանի և հայ գաղթաշխարհի պատմության միջև, մինչդեռ գաղթաշխարհն ավելի վաղ շրջանում ուսումնասիրվել է հայոց պատմության համատեքստից դուրս՝ միայն անդրադարձ կատարելով հայրենիքից հայության այս կամ այն հատվածի բռնագաղթին կամ արտագաղթին:

Վերոգրյալից ակնհայտ է, որ հետազոտողները փորձել և կարողացել են հայ գաղթաշխարհի պարբերացման հիմնահարցը լուծել իրենց կողմից կատարվող աշխատությունների բովանդակային շրջանակներում: Ընդհանուր առմամբ դա որոշ չափով լուծել է խնդիրը, սակայն բաց են մնացել մի շարք հիմնահարցեր,

<sup>1</sup> Տե՛ս В. Дятлов, Э. Мелконян, Армянская Диаспора: очерки социокультурной типологии, Е., 2009, с. 37-43.

որոնք առնչվում են գաղթաշխարհի ընդհանրական պատմությանը, դրա զարգացման հիմնական փուլերին, ազգայինի պահպանմանը և, դրանով իսկ, գաղթաշխարհի՝ դեպի ապագա նպատակաուղղվածությանը:

**3. Հայ գաղթաշխարհի պատմության հիմնական փուլերն ու պատմության պարբերացման քաղաքակրթական մոտեցումը**

Հայտնի է, որ հայ գաղթաշխարհը սկսել է ձևավորվել վաղ միջնադարում օտար նվաճողների կողմից իրականացված հայության բռնագաղթերի պատճառով, որոնք զուգահեռվել են նաև հայրենիքում օտար տիրապետության հետևանքով ստեղծված ծանր կենսապայմաններից դրդված արտագաղթերով: Եթե փորձենք այս տեսակետից ներկայացնել հայ գաղթաշխարհի պատմության ժամանակագրությունը, պետք է արձանագրենք, որ այն անցել է «Հայ գաղթաշխարհի պատմություն» եռահատորյակում ներկայացված փուլերին գրեթե համապատասխան:

Սակայն վերոհիշյալ ժամանակագրությունը չի արտացոլում հայ գաղթաշխարհի ձևավորման ու կայացման գործընթացն ամբողջությամբ, քանի որ այն սոսկ ժամանակագրական և ոչ թե բովանդակային բաժանում է: Այդ իսկ պատճառով գաղթաշխարհի բնորոշիչ զարգացումներից շատերը դուրս են մնացել այդ ժամանակագրությունից, տեղի է ունեցել ժամանակահատվածների որոշակի խճողում դրանց առանձնացման համար հիմք ծառայած ոչ համարժեք հենքերի պատճառով:

Կարծում ենք՝ վերոհիշյալ պարբերացումներից ակնհայտ է, որ բաժանման չափանիշների ընտրության հարցում հետազոտողները, բացառությամբ Վ. Բարխուդարյանի, բավարար ուշադրություն չեն դարձրել համակեցության համար հենքային նշանակություն ունեցող բաղադրիչներին: Այլ խոսքով՝ գաղթաշխարհը դիտարկվել է պատմական գործընթացի համատեքստում և կամ ըստ աշխարհագրական տարածման՝ առանց հաշվի առնելու «գաղթաշխարհ» հասկացության համակեցային բովանդակու-

թյունը, երբ էական դերակատարություն է ձեռք բերում հայկականության գործոնը, ասել է՝ համակեցության հենքային արժեքների պահպանությունը և զարգացումը: Գաղթաշխարհն անհրաժեշտ է դիտարկել ոչ թե դրա հիմնական բաղադրիչների՝ առանձին գաղթավայրերի ստեղծման և պատմական ընթացքի, այլ ընդհանրական գործընթացների, հայկականության հենքային արժեքների պահպանության և դեպի ապագա միտվածության առումով:

Ի դեպ, քաղաքակրթական իմաստով հայ գաղթաշխարհ ասելով՝ պետք է հասկանալ ոչ թե հայ գաղթավայրերի սոսկական ամբողջությունը, այլ ազգային հիմնարար արժեքների պահպանության և զարգացման միջավայրը, գաղթաշխարհի հայության հոգևոր ամբողջականությունը՝ հիմնված համակեցության այնպիսի հենքային արժեքների վրա, ինչպիսիք են անկախությունը, ազգային պետությունը, մշակույթը, լեզուն: Այսօրինակ չափորոշիչները մեծապես առնչվում են ազգի պատմական հեռանկարին, երբ առկա է անցյալ-ներկա-ապագայի ամբողջական ըմբռնումը<sup>1</sup>: Այդ իսկ պատճառով, հայ գաղթաշխարհի պատմության պարբերացումը պետք է անպայմանորեն զուգահեռվի Հայաստանի պատմության ընթացքին, շեշտը դրվի ընդհանուր հայոց պատմության զարգացումների վրա, որոնք, ի վերջո, հանգեցրին այն բանին, որ գաղթաշխարհում ծնունդ առավ Հայաստանի ազատագրության գաղափարը:

Այդ առումով խիստ կարևորվում է պատմության և դրա գիտակցման գործոնը: Սեփական պատմության անկրկնելիության գիտակցումն է ծնում հանրային-ազգային ինքնագիտակցություն, և պատմությամբ են բացատրվում ազգային ինքնուրույնությունն ու յուրահատկությունը՝ քաղաքակրթության գլխավոր բաղադրիչներից երկուսը: Այդ առումով ազգի «պատմական անհատա-

<sup>1</sup> St'u L.Bertalanffy, General System Theory. Foundations, Development, Applications, New York, 1976, p. 48-56.

կանությունը» նույնանուն է ազգային ինքնությանը<sup>1</sup>: Լիովին ընդունելի է «ես իմ անցյալն եմ» բանաձևը<sup>2</sup>: Ուստի գաղթաշխարհի հայության պատմությունն անհրաժեշտ է աղերսել Սայր Հայաստանի պատմության հետ, այդ անել ընդհանուր առմամբ և ոչ թե միայն ուչ միջնադարի հետ կապված<sup>3</sup>:

Հայտնի է, որ հայոց թագավորությունները մշտապես եղել են ազգային: Աշխարհագրական սահմանների առումով դրանք սկզբում ունեցել են մի կարևոր առանձնահատկություն՝ նույնություն հայոց լեզվի սահմաններին: Ավելին, կարելի է պնդել, որ հայկական քաղաքակրթության գլխավոր հենքերից մեկը դարեր ի վեր եղել է հայոց լեզուն, և այդ իրողությունն արձանագրված է ինչպես հայկական, այնպես էլ օտար աղբյուրներում: Հույն աշխարհագետ Ստրաբոնը, պատմելով այն մասին, որ Հայոց Արտաշես Ա թագավորը (189-160) Մեծ Հայքի թագավորությանը միացրեց (ինձ՝ վերամիավորեց) մի շարք երկրամասեր, կազմավորվեց մի թագավորություն, որտեղ բոլորը միալեզու էին (ինձ՝ խոսում էին հայոց լեզվով)<sup>4</sup>: Միալեզու Մեծ Հայքի թագավորությունը Փափստոս Բուզանդն անվանում է «երկիրն լեզուին թորգոմական աշխարհին»<sup>5</sup>, իսկ Մովսես Խորենացին նրա սահմանները նույնացնում է հայոց լեզվի սահմանների հետ («զեզերք հայկական խօսիցս», «ի ծայրս հայերէն խօսից»)՝ Հայոց լեզվի և հայոց թագավորության աշխարհագրական սահմանների նույնությունը վկայում է այն մասին, որ հայկական քաղաքակրթական միջավայրի արտահայտիչներից գլխավորը եղել է հայոց լեզուն:

Հատկապես պետք է նշել նաև քրիստոնեության մասին, որի ընդունումից հետո հայկական քաղաքակրթական միջավայրը ձեռք բերեց նաև համակեցության կրոնադավանական խիստ ուրույն դիմագիծ: Ավելին, քրիստոնեությունը՝ որպես այդ միջավայրի գլխավոր հենքերից մեկը, դարձավ քաղաքակրթության արտահանման հիմնական արժեքներից՝ կանխորոշելով նաև հարևան ժողովուրդների հոգևոր ապագան:

Ակնհայտ է, որ գաղթաշխարհի պատմության պարբերացումը պետք է անցնի նաև հայոց պետականության և հայրենիքի ազատության գաղափարի, հայոց լեզվի և քրիստոնեության հայկական դավանանքի՝ առաքելականության պրիզմայով, որը կբացահայտի գաղթաշխարհի հայության ընդհանուր ինտեգրումը ազգային կյանքում, և հայկականության պահպանման վիճակից ելնելով՝ հնարավոր կլինի գնահատել Հայաստանի պատմության մեջ գաղթաշխարհի ներդրումը:

Այլապես ինչո՞վ կարելի է բացատրել Հայաստանում պետականության անկման շրջանում նրանից դուրս հայկական իշխանությունների՝ հայկական համակեցական կառույցների ստեղծումը: Դրանցից առաջինը ձևավորվել էր դեռևս 789 թ. Համաձայնում (Համշեն), այնուհետև մեկը մյուսից հետո ծնունդ առան Գրիգոր Պահլավունու իշխանությունը Հյուսիսային Միջագետքում 1046 թ., Սամոսատի իշխանությունը, որը կործանվեց 1098 թ., Ասորիքի հյուսիսում, Կիլիկիայի արևելյան շրջաններն ընդգրկող Փիլարտոս Վարաժնունու և Գող Վասիլի իշխանությունները և Կիլիկիայում հայկական իշխանությունը Ռուբեն իշխանի գլխավորությամբ 1080 թ.: Դրանք, բացառությամբ Համշենի և Կիլիկիայի իշխանությունների, կործանվեցին XII դ. առաջին կեսին: Պատմության թատերաբեմից հեռացած այդ իշխանությունների, ինչպես նաև Կիլիկիայում և վերջինիցս հյուսիս հավաքված ստվարածավալ հայությունը հետագայում Կիլիկիայի Հայկական թա-

<sup>1</sup> Տե՛ս Գ. Люббе, Историческая идентичность, «Вопросы философии», 1994, N 4, с. 109-113.

<sup>2</sup> Տե՛ս J. Sartre, L'etre et le neant. Essai d'ontologie phenomenologique, Paris, 1943, p. 159.

<sup>3</sup> Այս հարցերի մասին մանրամասնորեն տես Ա. Ստեփանյան, Ինքնության ազգային չափումը (նախնական դատողություններ), «Ինքնության հարցեր. Տարեգիրք», Ե., 2002, էջ 18-31:

<sup>4</sup> Տե՛ս The Geography of Strabo, in three volumes, vol. II, London, 1856, XI, XIV, 5, նույնը՝ Страбон, География, в 17 книгах, перевод, статья и комментарии Г. Стратановского, М., 1964, XI, XIV, 5:

<sup>5</sup> Տե՛ս Փառատոսի Բուզանդացույ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1933, դար. Գ, գլ. ԻԳ:

<sup>6</sup> Տե՛ս Մովսիս Խորենացույ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, գիրք Բ, գլ. Գ, Ը:

գավորության ստեղծման հզոր հենք ծառայեց<sup>1</sup>: Հայաստանից դուրս, բայց հայկականության տեսլականով առաջնորդվող այդ գործընթացներն ուղղակիորեն առնչվում են համակեցական ընդհանուր միջավայրի գաղափարին:

Հետագայում այդ գաղափարն իր արտացոլումը գտավ աշխարհի այլևայլ հատվածներում, ինչպես, օրինակ՝ Ռուսիայում [Ղրիմ (որի հարավարևելյան հատվածը կոչվում էր Ծովային Հայաստան<sup>2</sup>), Նոր Նախիջևան, Արմավիր, Աստրախան], Հնդկաստանում (Մադրաս), Իրանում (Նոր Ջուղա) և Իտալիայում (Մխիթարյան միաբանություն) հայկական համակեցական միջավայրերի ձևավորման մեջ: Պատահական չէ, որ հենց այդ միջավայրերում ծնունդ առավ Հայաստանի ազատագրության գաղափարը:

Ուստի հաշվի առնելով վերոհիշյալ սկզբունքները և հայ գաղթաշխարհի պատմությունը դրանց լույսի ներքո ենթարկելով ժամանակագրական բաժանման՝ կատանանք մի պարբերացում, որում առկա են պատմական հեռանկարի հիմնական բաղադրիչները:

Նշված բաժանումը ևս հղի է բացթողումների վտանգով, քանի որ «գաղթաշխարհ-համակեցություն»-ից դուրս են մնում հայության «ցրոնքային» հատվածները, որոնք աստիճանաբար հեռացել են հայկականությունից: Մյուս կողմից, դրանց ընդգրկումը այս կամ այն պարբերացման համակարգում, հարկ է խոստովանել, ոչինչ չի ավելացնում այդ պարբերացման հիմքով գիտական ընդհանրացումների հասնելու նպատակի իրագործմանը:

Վերոհիշյալի համատեքստում հայ գաղթաշխարհն անցել է հետևյալ փուլերը:

1. Գաղթավայրերի սկզբնավորման փուլ (IV դ.-VIII դ. առաջին կես):

<sup>1</sup> Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, Ե., 1976, էջ 507-512, 674-676:

<sup>2</sup> Տե՛ս **П. Кенпен**, Крымский сборник, СПб., 1835, с. 318.

ա. Այս փուլը սկիզբ է առել IV դարում, երբ բազմահազար հայեր բռնագաղթեցվեցին և ցրվեցին Պարսկական տերության մեջ՝ Ասորիքում և Պարսից ծոցի ափերին<sup>1</sup>:

բ. Բյուզանդիայի Մավրիկիոս կայսեր (582-602) հրամանով Թրակիա տեղափոխվեցին մեծ թվով հայեր, որոնցից շատերը՝ նախարարներ և զինվորներ, ընկան կայսրության թշնամիների դեմ ճակատամարտերում<sup>2</sup>:

գ. Սոտ 616 թ. Կարին քաղաքի հայ բնակչությունը պարսից արքա Խոսրով Բ Փարվեզի (590-628) հրամանով գաղթեցվեց Համադան<sup>3</sup>:

դ. Արաբական արշավանքների շրջանում տասնյակ հազարավոր հայեր գաղթեցվեցին Հայաստանից Արաբիա<sup>4</sup>:

ե. Արաբական տիրապետության դժնդակ շրջանում երկիրը լքեցին տասնյակ հազարավոր հայեր՝ գաղթելով հիմնականում դեպի արևմուտք<sup>5</sup>:

2. Հայաստանից դուրս հայկական իշխանությունների ձևավորման փուլ (VIII դ. երկրորդ կես-XI դ.):

ա. Այս փուլը սկիզբ է առել 789 թ. հայրենիքից արտագաղթած հայության կողմից Պոնտական լեռների ծովափայաց հատվածում Համամաշենի հայկական իշխանության հիմնադրմամբ<sup>6</sup>:

բ. Հետագայում՝ X-XI դդ., մեկը մյուսի հետևից հիմնադրվում են հայկական իշխանություններ Հայաստանի հարակից երկրամասերում: Ստեղծվում են Գրիգոր Պահլավունու, Փիլարտոս Վարաժնունու, Գող Վասիլի, Սամոսատի և Կիլիկիայի հայկական իշխանությունները:

<sup>1</sup> Տե՛ս Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, դպր. Դ, գլ. ԾԵ:  
<sup>2</sup> Տե՛ս Պատմութիւն Սեբեոսի, քննական բնագիրը՝ Գ. Աբգարյանի, Ե., 2004, էջ 90-98:  
<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 146:  
<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 204-206:  
<sup>5</sup> Տե՛ս «Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 32-35:  
<sup>6</sup> Տե՛ս **Լ. Խաչիկյան**, էջեր համշինհայ պատմությունից, «ԲԵՀ», 1969, թիվ 2, էջ 115-118:

3. Հայության ներկայացուցիչների՝ օտար գահերին հաստատվելու փուլ (IX-XI դդ.):

ա. Այս փուլը սկիզբ է առել IX դ., երբ Բյուզանդիայի գահին մերթընդմերթ տիրում էին հայեր, որոնցից Բարսեղը (Վասիլ) 876 թ., բազմելով կայսերական գահին, հիմնադրեց սեփական հարստությունը<sup>1</sup>:

բ. 894 թ. Աղվանքում թագավոր հռչակվեց Համանը, որը պատմագիտության մեջ համարվում է Բագրատունի<sup>2</sup> կամ Առանշահիկ<sup>3</sup>:

գ. 899 թ. Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Կղարքք գավառի տեր Ատրնեսես Բագրատունին Հայոց Սմբատ Ա թագավորի (891-913) կողմից հռչակվեց որպես վրաց թագավոր<sup>4</sup>: XI դ. սկզբին նրա սերունդներից՝ նախապես աբխազաց թագավոր հանդիսացող Բագրատ Գ-ն ի վերջո կարողացավ հռչակվել նաև վրաց թագավոր և տիրել պապենական ոստանին՝ Կղարքքին<sup>5</sup>:

դ. 997/998 թ. Բուլղարիայում թագավոր դարձավ Սամուել Հայկազնը<sup>6</sup>:

4. Հայաստանից դուրս ազգահավաքի և հայոց անկախ պետականության վերականգնման փուլ (XI-XIV դդ.):

ա. Այս փուլում Հայաստանից շարունակվող արտագաղթ տեղի է ունենում ազգահավաք Կիլիկիայում<sup>1</sup>:

<sup>1</sup> Տես Ն. Աղոնց, Երկեր, հ. Ա, Ե., 2006, էջ 397-438, 506-514:

<sup>2</sup> Տես «Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը», ծանօթութիւններով, գրեց պրոֆ. դկտ. Յ. Մարկուարտ, գերմաներէն թարգմանեց Հ. Մ. Հապոզեան, Վիեննա, 1913, Ն. Աղոնց, Երկեր, հ. Ա, էջ 509, Ս. Բարխուդարյան, Արցախի, Շաքիի և Փառխսի իշխանությունները IX-X դարերում, «ՊԲՀ», 1971, թիվ 1, էջ 58-72:

<sup>3</sup> Տես Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Ե., 1975, էջ 75-77:

<sup>4</sup> Տես Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց, «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 471:

<sup>5</sup> Տես Ստեփանոս Տարանեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, «Մատենագիրք Հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, գիրք Բ., Ե., 2011, էջ 805, Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերտցոյ, աշխատասիրութեամբ Կ. Յուզբաշեանի, Ե., 1963, էջ 23-25, Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 82, Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Ժամանակագրական, ի լոյս ընծայեաց Բ. Պ., Ս. Պետերբուրգ, 1867, էջ 71:

<sup>6</sup> Տես Ն. Աղոնց, Երկեր, հ. Ե., Ե., 2012, էջ 418-459:

բ. 1080 թ. հիմնադրվում է Կիլիկիայի հայկական իշխանապետությունը:

գ. 1198 թ. Կիլիկիայի հայկական թագավորության հիմնադրումով, փաստորեն, վերականգնվում է հայոց անկախ պետականությունը:

5. Նոր գաղթավայրերի ձևավորման փուլ (XIV-XVII դդ.):

ա. Այս փուլում սկզբնավորվում են հայկական գաղթավայրեր Ռուսաստանում, Իրանում (Նոր Ջուղա) և Հնդկաստանում:

բ. Հայկական նոր գաղթավայրերում (Ղրիմ, Աստրախան, Արմավիր, Նոր Նախիջևան, Նոր Ջուղա, Մադրաս) սկսում են ձևավորվել հայկական համակեցական միջավայրեր:

6. Գաղթավայրերում Հայաստանի ազատագրության գաղափարի ձևավորման փուլ (XVIII-XIX դդ.):

ա. Այս շրջանում Հայաստանի ազատագրության գաղափարը ծաղկում է ապրում Հնդկաստանի և Ռուսաստանի հայ գաղթավայրերում, և մշակվում են ինչպես Հայաստանի ազատագրման ծրագրեր, այնպես էլ գալիք հայոց պետության պետական կարգի մոդելներ:

բ. XVIII դ. սկզբին Վենետիկում հիմնադրված Մխիթարյան միաբանության տպարաններում հրատարակվում և հայության շրջանում տարածվում են հիրավի խորենացիական ոգով ստեղծագործություններ՝ քարոզելով Հայաստանի ազատագրությունը:

գ. 1887 թ. ժնկում հիմնադրվում է Հնչակյան կուսակցությունը, որի հիմնական նպատակը Հայաստանն ազատագրելն էր և սոցիալիստական պետության ստեղծումը:

<sup>1</sup> Այս գործընթացի համար հիմք էր հանդիսանում այն իրողությունը, որ Կիլիկիան հնուց ի վեր հայկական իրականության մաս էր: Հայկական տարրն այստեղ զգալի դերակատարություն ուներ, որի վկայությունն Իսսի կամ Ալեքսանդրետի ծոցի՝ «Հայկական» կամ «Հայոց ծոց» անվանումն էր առնվազն IV դ. դրությամբ (ըստ այդ դարի պատմիչ Ամմիանոս Մարկելիոսի): V դ. սկզբին Կիլիկիայում հայ իշխաններին պատկանող հայկական գյուղեր կային (ըստ Հովհան Ոսկեբերանի):

դ. 1990 թ. Թիֆլիսում հիմնադրվում է Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը՝ համանման գաղափարներով:

7. Ազատագրական պայքարի փուլ (XIX դ. վերջ-1918 թ.):

ա. Այս փուլում սկսվում է հայ ազատագրական պայքարի զինված շրջանը:

բ. 1918 թ. վերականգնվում է Հայաստանի անկախությունը:

Հատկապես պետք է շեշտել նաև, որ Հայոց ցեղասպանությունը բեկունճային էր ինչպես հայոց պատմության համար ընդհանրապես, այնպես էլ գաղթաշխարհի պատմության համար՝ մասնավորապես: Հարյուր հազարավոր հայեր, մի կերպ փրկվելով մահից, հեռացան հայրենիքից, որի հետևանքով գաղթաշխարհի հայության թվաքանակը մեծապես աճեց, և ստեղծվեցին նոր գաղթավայրեր:

Ներկայացվող պարբերացումը կարող է թյուր կարծիք ձևավորել, թե այն արհամարհում է բազմաթիվ հայկական գաղթավայրերի պատմությունը, սակայն իրականում փուլային վերոհիշյալ բաժանումը կարող է և ընդգրկում է գաղթաշխարհն ամբողջությամբ՝ շեշտը, սակայն, դնելով հիմնականի՝ հայկականության, համակեցության հենքերի պահպանության և գաղթաշխարհի՝ դեպի Հայաստան միտվածության վրա: Այլապես հայապահպանության գաղափարը զրկված է գլխավորից՝ ապագայի տեսլականից, գերնպատակից, որը, ինքնըստինքյան, հայության վերջնական համախմբումն է հայրենի սահմաններում: Բոլորովին էլ պատահական չէ, որ նշված պարբերացման համաձայն՝ առաջին գաղթավայրերի սկզբնավորումից հետո Հայաստանից դուրս բնակվող հայության շուրջ 1500-ամյա ընթացքը ի վերջո նրան հանգեցրեց Հայաստանի ազատագրության գաղափարին: Այսինքն՝ բռնագաղթեցված կամ արտագաղթած հայության ուղին, դարեր առաջ սկսելով Հայաստանից, պտույտ կատարեց և նոր ժամանակներում հայի հայացքը դեպի Հայաստան դարձրեց: Դա մի յուրօրինակ հոգևոր վերադարձ էր հայրենիք:

Ամփոփելով համառոտ ներկայացնենք հայ գաղթաշխարհի պատմության պարբերացումը.

1. IV դ.-VIII դ. առաջին կես՝ գաղթաշխարհի սկզբնավորման փուլ,
2. VIII դ. երկրորդ կես-XI դ.՝ Հայաստանից դուրս հայկական իշխանությունների ձևավորման փուլ,
3. IX-XI դդ.՝ հայության ներկայացուցիչների՝ օտար գահերին հաստատվելու փուլ,
4. XI-XIV դդ.՝ հայրենիքից դուրս ազգահավաքի և հայոց անկախ պետականության վերականգնման փուլ,
5. XIV-XVII դդ.՝ նոր գաղթավայրերի ձևավորման փուլ,
6. XVIII-XIX դդ.՝ գաղթավայրերում Հայաստանի ազատագրության գաղափարի ձևավորման փուլ,
7. XIX դ. վերջ-1918 թ.՝ ազատագրական պայքարի փուլ:

Առաջարկվածը միայն հայ գաղթաշխարհի պատմության պարբերացման փորձ է, մեր դիտարկումների արդյունք: Հույս ունենք, որ սույն պարբերացումը հիմք կհանդիսանա բանավիճային առողջ քննարկման համար, որը, ի վերջո, կստեղծի պարբերացման ընդհանրական մոտեցում և հնարավորություն կտա հետազոտելու հայության՝ հայրենիքից դուրս հաստատված հատվածի պատմության այնպիսի խնդիրներ, որոնք դուրս են մնացել նախկինում կատարված պարբերացումների տրամաբանությունից:

*Arman S. Yeghiazaryan – An Attempt of Periodization of the Armenian Diaspora History* – Periodization of the history of the Armenian Diaspora is one of the most important problems of the Armenology. Earlier the issue was solved by the chronological division of the Armenian Diaspora history to the periods of the Armenian deportations and migration or studying it by the principle of geographical dispersion of Armenians abroad. Such an approach can't reflect the main developments of the Armenian Diaspora during centuries.

In the study a civilization approached periodization model is suggested. Author proposes to observe the history of the Armenian Diaspora according to the vision of historical perspective in Armenian communities abroad and by the level of

preservation of national values such as language, religion, idea of national statehood and independence of the Homeland.

Author hopes that the study will lead to scientific discussion on this issue and a general model of the periodization of the Armenian Diaspora history will be adopted at last. After the Armenian Diaspora studies can cover many issues of the Armenian Diaspora history which earlier haven't been studied.



## **ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ**

### **ՍՓՅՈՒՌՔԻ ՋԱՆՔԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՈՒ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ԲԱՆԱՉԵՎԵՐԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ**

Ինչպես հայտնի է, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում տասնամյակներ շարունակ զգալի աշխատանքներ են տարել ինչպես Սփյուռքի կոնկրետ համայնքներ ու կառույցներ, այնպես էլ առանձին անհատներ: Նրանց մասնակցությունը դրսևորվեց նաև պաշտոնական ու ոչ պաշտոնական միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բանաձևերի ընդունման գործում:

Միջազգային պաշտոնական կազմակերպություններից Հայոց ցեղասպանության հարցին առաջինն անդրադարձավ ՄԱԿ-ը: 1971 թ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը հաստատում է «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան կատարելագործելու նպատակով հետազոտություն կատարելու և զեկույցներ կայացնելու առաջարկը: Փորձագետների ենթահանձնաժողովը նշանակում է տվյալ հարցով հատուկ զեկուցողի՝ Ռուանդայի ներկայացուցիչ Նիկոդեմ Ռուհաշիանկիկոյին: 1972 թ., երբ նա առաջին անգամ իր զեկույցը ներկայացրեց ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Փոքրամասնությունների պաշտպանության և խտրականության կանխարգելման ենթահանձնաժողովի (այսուհետ՝ ենթահանձնաժողով) 25-րդ նստաշրջանին, դրանում Հայոց ցեղասպանության մասին հիշատակում չկար: Այդ մասին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կուրտ Վալտհայմին զրաժ նամակում տեղեկացնում էր հայ պատմաբան Ջավեն Մսրյանը, որը նամակներ է ուղարկում նաև ենթահանձնաժողովի նախագահ Ջորջ Բրան-

տին և անձամբ զեկուցողին: Ենթահանձնաժողովի նախագահը պատասխանում է, որ առաջարկը հաշվի է առնվել և հայերի ցեղասպանության փաստի հիշատակումը ներառվել է զեկույցի տեքստում<sup>1</sup>:

1973 թ. սեպտեմբերի 16-ին ժնկում տեղի ունեցած Ենթահանձնաժողովի 26-րդ նստաշրջանում հատուկ զեկուցող Ն. Ռուհաշի-անկիկոն ներկայացնում է իր զեկուցման նոր տարբերակը, որի 30-րդ պարբերությունում պատմական փաստերի շարքում հայերի նկատմամբ Օսմանյան կայսրությունում կատարվածը որակվում է որպես «հանցագործություն, որը համարվում է XX դարի առաջին ցեղասպանությունը»<sup>2</sup>: Ձեկուցումը արժանացավ բարձր գնահատականի և միաձայն ընդունվեց ենթահանձնաժողովի կողմից:

Ընդունված արարողակարգի համաձայն՝ զեկույցը պետք է քննարկվեր և ընդունվեր նաև Մարդու իրավունքների հանձնաժողովում, որի անդամները, ի տարբերություն Ենթահանձնաժողովի, ի պաշտոնե արտահայտում էին իրենց կառավարությունների և ոչ թե սեփական դիրքորոշումը, բայց իրավունք չունեին վետո կիրառելու հատուկ զեկուցողի հետազոտության կամ դրա առանձին դրույթների նկատմամբ:

1974 թ. մարտի 6-ին Ռուհաշիանկիկոյի զեկույցը, 30-րդ պարբերությամբ հանդերձ, ներկայացվում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի 30-րդ նստաշրջանին: Ձեկույցում Հայոց ցեղասպանության վերաբերյալ հիշատակումը հանգեցրեց թուրքական կողմի հուժկու հակազդեցության: Հակառակ հաստատված կարգի, ըստ որի՝ հատուկ զեկուցողների ուսումնասիրություններում ներկայացված դրույթները փոփոխության չէին կարող ենթարկվել, Թուրքիայի ներկայացուցիչ Օսման Օլչայը պա-

հանջեց զեկույցը վերադարձնել վերամշակման և տեքստից հանել 30-րդ պարբերությունը<sup>1</sup>: Թուրքական կողմն իր դիրքորոշումը հիմնավորում էր նրանով, թե հին վերքերը փորփրելը վտանգավոր է, ինչը կարող է ատելություն առաջացնել, և թե պատմական իրադարձությունների ամբողջական պատկերի ճշգրիտ վերականգնումն անհնար է և այլն<sup>2</sup>: Թուրքիայի այս պահանջին միացան ԱՄՆ-ի, Պակիստանի, Իտալիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Իրաքի, Իրանի, Հնդկաստանի, Ռումինիայի, Էկվադորի, Նիգերիայի պատվիրակները, իսկ ԽՍՀՄ-ի, Խորհրդային Բելառուսի և Մեծ Բրիտանիայի պատվիրակները պահանջեցին այդ հարցով դռնփակ նիստ հրավիրել<sup>3</sup>: Արդյունքում թուրքերը ԱՄՆ-ի աջակցությամբ և ԽՍՀՄ-ի ներկայացուցչի լուռ համաձայնությամբ կարողացան հասնել նրան, որ զեկույցը վերադարձվեց վերամշակման, ինչը առաջին հերթին նշանակում էր 30-րդ պարբերության վերացում<sup>4</sup>:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների վարչության տնօրեն հոլանդացի Թեո վան Բովեն, որն անձամբ մասնակցել է բոլոր քննարկումներին՝ սկզբում որպես Նիդերլանդների ներկայացուցիչ Ենթահանձնաժողովում, այնուհետև որպես նույն Ենթահանձնաժողովի անդամ, մեկնաբանելով այդ զարգացումները, ափսոսանք է հայտնում, որ թուրքական պետությունը իր արատավոր շահերը պաշտպանելու նպատակով իսկական դիվանագիտական արշավ սկսեց 1974 թ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի նստաշրջանից առաջ, ինչը նպաստեց հայ ժողովրդի պատմական ճակատագրի նենգափոխմանը<sup>5</sup>:

<sup>1</sup> Արման Գասպար, նշվ. աշխ., էջ 142:

<sup>2</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. документы и комментарий. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария д.и.н., профессор Ю.Г. Барсегов, т. 2, ч. 1, М., 2003, с. 694.

<sup>3</sup> Տե՛ս Մսրըլեան Զ., Ջանքեր՝ ՄԱԿ-ի 30-րդ պարբերության վերահաստատման ուղղությամբ, «Հայկազեան հայագիտական հանդես», հատոր ԼԲ., Պէյրոս, 2012, էջ 432:

<sup>4</sup> Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը, էջ 5:

<sup>5</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 766.

<sup>1</sup> Տե՛ս Արման Գասպար, Հայ ազատագրական պայքարն ու ահաբեկչութիւնը, Լոս Անճելէս, 1989, էջ 142:

<sup>2</sup> Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը (1984-1987թթ.), կազմող և առաջաբանի հեղինակ Լ. Ա. Բարսեղյան, Եր., 1998, էջ 5:

Փաստորեն հատուկ զեկուցողի հետազոտությունում հայերի ցեղասպանության՝ իբրև տվյալ հանցագործության բոլոր հաջորդ դեպքերի համար մոդելի հիշատակումը, որը փաստական հիմք էր ցեղասպանության մասին համաձայնագրի կատարելագործման համար, առաջացնում էր խուճապ և մերժողականություն ոչ միայն Թուրքիայի, այլև ՆԱՏՕ-ի, նրա դաշնակիցների և նույնիսկ հակառակ ճամբարի առաջատար ԽՍՀՄ-ի մոտ, որոնք, մոռանալով միմյանց միջև առկա լուրջ հակասությունները, միահամուռ միավորվում էին այդ հիշատակումը չեզոքացնելու գործում:

Հաշվի առնելով այս հուժկու հակազդեցությունը՝ դեմ արտահայտված երկրների հայկական համայնքներում սկսում են աշխատանքներ տարվել իրենց իշխանությունների դիրքորոշումների վրա ներազդելու ուղղությամբ: Բացի այդ, հայկական տարբեր համայնքներից նամակներ են հղվում ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին, պահանջում զեկույցում անպայման վերականգնել 30-րդ պարբերությունը՝ դրանց կցելով Հայոց ցեղասպանությունը հաստատող փաստագրական նյութեր:

30-րդ պարբերության շուրջ բանավեճը շարունակվեց 1975 թ. սեպտեմբերին ժնևում: Այս անգամ Ավստրիայի, Դանիայի, Մեծ Բրիտանիայի, Մեքսիկայի, Նիգերիայի, Ֆրանսիայի և Հարավսլավիայի փորձագետները արտահայտվեցին պարբերության պահպանման օգտին, սակայն որոշում ընդունվեց երեք տարով՝ մինչև Ենթահանձնաժողովի 33-րդ նստաշրջանը (1978 թ.), սառեցնել հարցի քննարկումը:

1978 թ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Ենթահանձնաժողովը կրկին անդրադարձավ 1973 թ. զեկույցին: Թուրքիան ու նրան սատարող երկրները ժամանակավորապես հասան այն բանին, որ զեկույցից ամբողջությամբ հանվեց հիմնահարցի պատմությանը վերաբերող 30-րդ պարբերությունը: Համաձայն կարգի՝ զեկույցը 1979 թ. մարտին կրկին ներկայացվեց Մարդու իրավունքների հանձնաժողով, որում հեղինակը բաց էր թողել 30-րդ պարբերությունը, ինչը բողոքի այնպիսի մեծ ալիք

բարձրացրեց մասնավորապես հայկական համայնքներում, որը թերևս սպասելի չէր զեկուցողի ու 30-րդ պարբերությունը դուրս մղելու կողմնակիցների համար:

1983 թ. մայիսի 27-ին նոր հատուկ զեկուցող նշանակվեց բրիտանական պառլամենտի նախկին պատգամավոր Բենջամին Ուայթքերը, ում հանձնարարվեց զբաղվել «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի կոմվենցիան կատարելագործելու վերաբերյալ հետազոտությամբ և ներկայացնել նոր զեկույց: 1984 թ. օգոստոսի 7-ին նա հայտարարեց, որ նախորդ զեկույցում որոշ բացեր կային՝ քաղաքական ճնշման պատճառներից ելնելով, այդ թվում հայերի ցեղասպանության հարցի հետ կապված<sup>1</sup>: Հատկանշական էր, որ նոր զեկուցողը տեղյակ էր նախորդ զեկուցողի նկատմամբ իրականացված ճնշումների մասին և հենց դա էր համարում նախկին զեկույցի գլխավոր թերությունը:

1985 թ. հուլիսի 2-ին Բ. Ուայթքերը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Ենթահանձնաժողովին ներկայացրեց նոր զեկույցը՝ ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոմվենցիան կատարելագործելու վերաբերյալ: Հեղինակը նշում էր, որ թեև ցեղասպանություն բառը համեմատաբար վերջերս է առաջացել, սակայն այն վերաբերում է նաև հին հանցագործությանը<sup>2</sup>:

Վերափոխված տարբերակի 24-րդ պարբերությունում նշվում է, որ նացիստական զազանությունները, ցավոք, չեն եղել XX դարի ցեղասպանության եզակի օրինակ: Հեղինակը այդ հանցագործության օրինակների թվին է դասել 1904 թ. գերմանացիների կողմից իրագործված հերիերների կոտորածները, 1915-1916 թթ. օսմանցիների կողմից հայերի կոտորածները և այլն<sup>3</sup>:

<sup>1</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 694.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 82:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 665-666:

1985 թ. օգոստոսի 5-30-ը ընթացած Ենթահանձնաժողովի 38-րդ նստաշրջանում կրկին սկսվեցին Հայոց ցեղասպանության շուրջ քննարկումները, երբ Բ. Ուայթբերը Հայոց ցեղասպանության մասին հիշատակող 24-րդ պարբերությամբ հանդերձ ներկայացրեց իր զեկույցը: Մահմեդական երկրների՝ Եգիպտոս, Հորդանան, Մարոկկո, Բանգլադեշ և որոշ եվրոպական երկրների մասնագետ-ներկայացուցիչները Հայոց ցեղասպանության հիշատակման պատճառով դեմ արտահայտվեցին 24-րդ պարբերությանը: Օգոստոսի 19-ին Ենթահանձնաժողովի նիստում ելույթ ունեցան նաև չորս հայեր՝ «Եկեղեցիների համաշխարհային խորհրդի» միջազգային հարցերի հանձնաժողովի ներկայացուցիչ, պրոֆեսոր Շավարշ Թորիկյանը, «Գերության դեմ մարդու իրավունքների պաշտպանության» կազմակերպության ներկայացուցիչ Հրայր Պալյանը, «Բնիկ ժողովուրդների համաշխարհային կազմակերպության» ներկայացուցիչ Հարութ Սասունյանը և «Ազգերի և ժողովուրդների միջև եղբայրական միության» միջազգային շարժման ներկայացուցիչ Ռոբերտո Մալխասյանը, որոնք պատմական փաստերի հիման վրա պաշտպանեցին Հայոց ցեղասպանության փաստի հիշատակումը զեկույցի 24-րդ պարբերությունում:

Թորիկյանը և Սասունյանը իրենց ելույթներում նաև անդրադարձ կատարեցին այն փաստին, որ ՍԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը դեռ 1948 թ. իր նիստերում անդրադարձել է հայերի կոտորածներին: Այդ քննարկումների մասին փաստերը տեղ են գտել հանձնաժողովի փաստաթղթերում, որոնք հայտնաբերվել ու առաջին անգամ շրջանառության մեջ էին դրվել Ջ. Մալրոյանի կողմից<sup>1</sup>: Ի պատասխան՝ Թուրքիայի ներկայացուցիչը կրկնեց թուրքական պաշտոնական վարկածը, համաձայն որի՝ կատարվածը ընդամենը հայկական ապստամբության ճնշում է եղել. նրա տեսակետը պաշտպանեցին նաև թուրք մասնագետ Թուրքայա Աթայովը և Պակիստանի ներկայացուցիչը:

<sup>1</sup> Տես Մալրոյան Ջ., Ջանքեր՝ ՍԱԿ-ի 30-րդ պարբերության վերահաստատման ուղղությամբ, էջ 462:

Օգոստոսի 20-ին պատասխան ելույթով հանդես եկավ զեկույցի հեղինակ Բ. Ուայթբերը, որը նշեց, որ ութ տարի զբաղվել է հայերի ցեղասպանության ուսումնասիրությամբ, հետազոտել է արխիվային փաստաթղթեր, այդ թվում՝ Օսմանյան կայսրության դաշնակից տերությունների՝ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի արխիվները, որոնք վկայում են հենց ցեղասպանության մասին, որի կազմակերպիչները դատապարտվել են հենց թուրքական ռազմական դատարանների կողմից: Ձեկուցողը եզրակացրեց, որ եթե Ենթահանձնաժողովում ելույթ ունեցող մասնագետները չպետք է քաջություն ունենան ասելու ճշմարտությունը, ուրեմն նրանց մասնակցությունը անիմաստ է, քանզի Ենթահանձնաժողովի պարտականությունն է զոհերին պաշտպանել կառավարություններից և ոչ թե հակառակը<sup>1</sup>:

Այս խոսքերին փորձեց արծագանքել Թուրքիայի ներկայացուցիչը, սակայն հույն նախագահող Էրիկա Թայետը խոսք չտրամադրեց նրան՝ հայտարարելով, որ հարցի շուրջ քննարկումներն ավարտված են: Օգոստոսի 21-ին վերջապես քվեարկվեց զեկույցն ամբողջությամբ, ինչի արդյունքում ընդունվեց 14 - «կողմ», 1 - «դեմ» և 4 - «ձեռնպահ» ձայների հարաբերակցությամբ: Ձեկույցին կողմ քվեարկեցին Արգենտինան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը, Մեքսիկան, Հարավսլավիան, Չինաստանը, Ճապոնիան, Նիգերիան, Եթովպիան, Գանան, Հնդկաստանը, Բելգիան, Կանադան և Էկվադորը: Ձեռնպահ էին քվեարկել Հորդանանի, Կուբայի, Մարոկկոյի և Բանգլադեշի ներկայացուցիչները, ևս վեց երկրների մասնագետ-պատվիրակներ քվեարկությանը չմասնակցեցին:

ՍԱԿ-ի Մարդու իրավունքի հանձնաժողովի Ենթահանձնաժողովում ձեռք բերված այս կարևոր հաջողության գլխավոր գրավականն այն էր, որ եթե 1970-ական թթ. 30-րդ պարբերության քննարկումներն ընթանում էին առանց հայերի զործուն մասնակցության, ապա թուրքական կառավարության ջանքերի շնորհիվ այդ պարբերության տապալումը 1980-ական թթ. հանգեցրեց

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 463:

Սփյուռքի ներուժի համախմբմանն ու ավելի նպատակային պայքարին, ինչի արդյունքում համասփյուռքյան միասնական ջանքերի գնով հաջողվեց 30-րդ պարբերությունը վերահաստատել 24-րդ պարբերությամբ:

Եվրախորհրդարանը հաջորդ պաշտոնական միջազգային կազմակերպությունն էր, որն անդրադարձավ Հայոց ցեղասպանության հարցին, քանզի 80-ական թվականների սկզբներին հեղեղված էր Հայկական հարցի լուծման վերաբերյալ սոցիալիստ պատգամավորների առաջարկներով:

1984 թ. հոկտեմբերի 23-ին Եվրախորհրդարանի Քաղաքական հարցերով հանձնաժողովն այդ հարցով գումարեց առաջին նիստը, իսկ 1984 թ. նոյեմբերի 26-ին որոշվեց դրա վերաբերյալ հատուկ զեկուցում լսել: Դեկտեմբերի 20-ին հատուկ զեկուցող է նշանակվում էթնիկ փոքրամասնությունների հարցերով հայտնի մասնագետ Ժակ Վանդեմյուլբրուքը (Բելգիա): Թուրքական դիվանագիտությունը ամեն ինչ արեց, որ տվյալ հարցով զեկուցող նշանակվի Քաղաքական հարցերով հանձնաժողովի թուրքամետ անդամներից որև մեկը, սակայն երբ այդ փորձերը ձախողվեցին, արդեն ձգտում էր ոչ պաշտոնական շփումներ ունենալ Վանդեմյուլբրուքի հետ<sup>1</sup>: Այդ փորձերը նույնպես տապալվեցին. զեկույցի հեղինակը փաստաթուղթը կազմելու ընթացքում տեղեկություններ ստանալու և կողմերի դիրքորոշումներին ծանոթանալու նպատակով միայն պաշտոնական հանդիպումներ ունեցավ և՛ հայերի և՛ թուրքերի հետ՝ փորձելով պահպանել անաչառությունը: Այդ իսկ պատճառով նա ենթարկվեց թուրքական պաշտոնատար անձանց և լրագրողների ուժեղ ճնշմանը: Նույնիսկ Թուրքիայի վարչապետ Թուրգութ Օզալը հանդես եկավ սպառնալից հայտարարությամբ<sup>2</sup>:

<sup>1</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 561.

<sup>2</sup> Տե՛ս Կիրակոսյան Ա., Ակնարկներ Հայկական հարցի և Եղեռնի միջազգային ճանաչման պատմությունից, Եր., 2006, էջ 184:

Չնայած այդ ճնշումներին՝ այդուհանդերձ Ժ. Վանդեմյուլբրուքը մեկ տարի անց՝ 1985 թ. դեկտեմբերին, ներկայացրեց իր զեկույցը Եվրախորհրդարանի Քաղաքական հարցերով հանձնաժողովին, որը պատմական փաստերի և թուրքական տեսակետների փոխզիջումային մի փաստաթուղթ էր:

Սակայն Եվրախորհրդարանի Քաղաքական հարցերով հանձնաժողովի անդամների մի մասը նույնիսկ նման տեսքով չհամաձայնվեց զեկուցողի արտահայտած որոշ տեսակետներին: «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» զեկուցումը Քաղաքական հարցերով հանձնաժողովը քննարկեց 1986 թ. հունվարի 22-ի նիստերում, իսկ 1986 թ. փետրվարին այն հետաձգվեց հանձնաժողովի անդամների կողմից տեքստում բազմաթիվ ուղղումներ մտցնելու պատրվակով, ընդ որում՝ 32 ուղղումներից 21-ը թուրքամետ էին և ներկայացվել էին ԳՖԳ-ի և Դանիայի պատգամավորների կողմից<sup>1</sup>:

1987 թ. ապրիլի 15-ին Եվրախորհրդարանի Քաղաքական հարցերով հանձնաժողովի անունից հատուկ զեկուցող Ժ. Վանդեմյուլբրուքը զեկույցի վերջնական տարբերակը և դրան կցված բանաձևի նախագիծը ներկայացնում է խորհրդարանին:

Պետք է նշել, որ Եվրախորհրդարանի Քաղաքական հարցերի հանձնաժողովի կողմից զեկուցողի ուսումնասիրությունում և դրան կցված բանաձևի նախագծի փոփոխություններից հետո վերջնական տեքստում ամրագրվել էին այնպիսի դրույթներ, որոնք զգալիորեն աղավաղում էին նախնական տարբերակը:

Անշուշտ, այս զարգացումներին հետևում էր նաև եվրոպական հասարակայնությունը, ինչպես նաև ֆրանսահայ համայնքը, որը փորձեց ներագդել «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևի ընդունման վրա: 1987 թ. հունիսին «Ֆրանսահայկական համերաշխություն» հասարակական կազմակերպությունը Եվրախորհրդի պատգամավորներին կոչ էր անում որպես

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 185:

ցեղասպանություն որակել բնաջնջման այն ծրագիրը, որն իրականացվել էր հայերի նկատմամբ<sup>1</sup>: Կոչի տակ ստորագրել էին մեծ հեղինակություն վայելող այնպիսի դեմքեր, ինչպիսիք են՝ գրողներ Ֆրանսուազ Սագանը, Էժեն Իոնեսկուն և Անրի Թրուայան, երգիչ Շարլ Ազնավուրը, պատմաբան Իվ Տերնոնը, Նոբելյան մրցանակի դափնեկիրներ Անդրեյ Լվոֆն ու Լուի Նոելը և շատ ուրիշներ:

Բանաձևն ի վերջո մտցվեց Եվրախորհրդարանի 1987 թ. հունիսի 15-19-ը ընթացած նիստի օրակարգ: Նիստի ընթացքում «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևի ընդունման օգտին համատեղ առաջարկությամբ հանդես եկան համայնավարական և սոցիալիստական խմբակցությունները, ինչի արդյունքում 1987 թ. հունիսի 18-ին 68 - «կողմ» և 60 - «դեմ» ձայների հարաբերակցությամբ Եվրախորհրդարանն ընդունեց «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևը: Ձայների այս հարաբերակցությունը նույնպես վկայում է, որ փաստաթղուղթն ընդունվել է լուրջ հակազդեցության պայմաններում:

Եվրոպայի հայկական համայնքների և միջազգային հանրության ճնշման արդյունքում, ի տարբերություն Քաղաքական հարցերի հանձնաժողովի բանաձևի նախագծի, Եվրախորհրդարանի կողմից ընդունած բանաձևի 2-րդ հոդվածով արձանագրվում էր, որ «Օսմանյան կայսրության մեջ հայ բնակչության հանդեպ 1915-1917 թվականներին գործադրված ողբերգական իրադարձությունները, համաձայն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թ., դեկտեմբերի 9-ին ընդունված Ցեղասպանության հանցագործությունները կանխելու և դրա համար պատժի մասին կոնվենցիայի, հանդիսանում են ցեղասպանություն»<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>2</sup> European Parliament Resolution on a political solution to the Armenian question, Doc. A2-33/87, [http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag/pcc\\_meeting/resolutions/1987\\_07\\_20.pdf](http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag/pcc_meeting/resolutions/1987_07_20.pdf)

Գնահատելով Եվրախորհրդարանի ընդունած «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևը՝ պետք է նշել, որ նաև շնորհիվ Սփյուռքի համայնքների, կառույցների ու անհատ գործիչների՝ վերջնական փաստաթղթի տեքստից հնարավոր եղավ դուրս թողնել ակնհայտ թուրքամետ որոշ ձևակերպումներ, որոնք աղավաղում էին խնդրո առարկան: Չնայած այն հանգամանքին, որ ընդունված բանաձևում նույնպես առկա են որոշ հակասական ձևակերպումներ, այդուհանդերձ այն միջպետական միջազգային կառույցի կողմից ընդունված առաջին պաշտոնական փաստաթուղթն էր, որով Առաջին աշխարհամարտի տարիների Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային կոտորածները, ըստ 1948 թ. դեկտեմբերի 9-ի ՄԱԿ-ի ցեղասպանության մասին կոնվենցիայի սահմանման, ճանաչվում էին որպես ցեղասպանություն:

Ինչ վերաբերում է ոչ պաշտոնական միջազգային կազմակերպություններին, ապա պետք է նշել, որ 1983 թ. Եկեղեցիների համաշխարհային խորհրդի առաջին քննարկումով ընդունված բանաձևից հետո՝ 1984 թ. ապրիլի 13-16-ը, Փարիզում տեղի ունեցավ մեկ այլ ոչ պաշտոնական հեղինակավոր միջազգային կազմակերպության՝ ժողովուրդների միջազգային դատարանի նիստը, որը Հայոց ցեղասպանության հարցը դարձրեց քննարկման առարկա:

Դատարանը մինչև դատավարության սկսելը քայլեր ձեռնարկեց անաչառությունը և հավասարության սկզբունքները պաշտպանելու ուղղությամբ. հատուկ նամակ հղվեց թուրքական կառավարությանը՝ առաջարկելով իր դիրքորոշումը պարզաբանող ներկայացուցիչներ կամ համապատասխան փաստաթղթեր ուղարկել: Պատասխան չստանալով՝ դատարանը որոշեց նիստերի արձանագրություններին կցել թուրքական կողմի հիմնական փաստարկները արտահայտող երկու փաստաթուղթ՝ Անկարայի «Արտաքին քաղաքականության ինստիտուտի» 1982 թ. հրատարակած «Հայկական հարց. ինը հարց, ինը պատասխան» վերնագրով գրքույկը և Անկարայի համալսարանի պրոֆեսոր Թուրքայա

Աթայովի 1984 թ. Փարիզի քրեական դատարան ներկայացրած գրավոր ցուցմունքը: Այդ երկու նյութերը հիմնականում արտահայտում էին Թուրքիայի պաշտոնական տեսակետները. ժխտվում էր Հայոց ցեղասպանությունը և հայտարարվում էր, թե Արևմտյան Հայաստանը հայերի հայրենիք չէ:

Հայկական կողմից դատարանում զեկուցումներով հանդես եկան Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը («Հայկական հարցի պատմությունը 1878-1923 թթ.») և «Զորյան ինստիտուտը» ներկայացնող ժիրայր Լիպարիտյանը («Երիտթուրքերի շարժման գաղափարախոսությունը»): Կալիֆորնիայի պետական համալսարանի պրոֆեսոր Տ. Գույումճյանը տրիբունալի դատին հանձնեց «Հայոց սեփականության բռնագրավումը և հայկական պատմական հուշարձանների ոչնչացումը որպես ցեղասպանության գործընթացի արտահայտություն» վերնագրով զեկուցումը, որում առաջին անգամ բարձրացրեց Գերմանիայի կայսերական բանկում դեպոզիտացած՝ ցեղասպանության զոհ դարձած արևմտահայերին պատկանող մոտ 30 000 կգ ոսկու հարցը<sup>1</sup>:

Բացի հայազգի մասնագետներից՝ դատարանում հանդես եկան նաև օտարազգիներ՝ անգլիացի պատմաբան Քրիստոֆեր Ուոլքերը («Հայերի ցեղասպանությանն առնչվող բրիտանական աղբյուրները»), Արևմտյան Բեռլինի համալսարանի պրոֆեսոր տիկին Տեսսա Հոֆմանը («Հայերի ցեղասպանությանն առնչվող ավստրիական և գերմանական աղբյուրները») և ֆրանսիացի հայտնի պատմաբան Իվ Տերնոնը («1915-1916 թթ. Օսմանյան կայսրությունում կատարված հայերի ցեղասպանությունը»): Վերջինս դատարանի դահլիճում տարբեր փաստական տվյալների համադրությամբ հայտարարեց, որ Արդուլ Համիդից մինչև երիտ-

թուրքեր և քեմալականներ՝ երեսուն տարիների ընթացքում, ընդհանուր առմամբ սպանվել է շուրջ երկու միլիոն հայ<sup>1</sup>:

Դատարանում հանդես եկան նաև միջազգային իրավունքի ճանաչված ու հեղինակավոր մասնագետներ, որոնք իրենց տեսակետներն ու մոտեցումները ներկայացրին հայերի զանգվածային սպանությունների վերաբերյալ: Ելույթ ունեցավ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Փոքրամասնությունների խտրականության կանխարգելման ու պաշտպանության ենթահանձնաժողովի նախկին նախագահ հոլանդացի Թեո վան Բովենը, որը մանրամասն ներկայացրեց իր հիշողությունները ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովում հայերի ցեղասպանության քննարկումների, մասնավորապես 30-րդ պարբերության շուրջ ծավալված իրադարձությունների մասին: Այնուհետև Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր Լեո Կուպերն անդրադարձավ հայերի բնաջնջման քաղաքականության վերաբերյալ «ցեղասպանություն» եզրույթի կիրառելիության հարցին<sup>2</sup>: Իսկ Լուվենի կաթոլիկ համալսարանի միջազգային իրավունքի պրոֆեսոր Ջո Վերհովենն իր «Հայ ժողովուրդը և միջազգային իրավունքը» զեկուցման մեջ անդրադարձավ հայոց ցեղասպանության՝ որպես ծանր միջազգային հանցագործության իրավական հարցերին<sup>3</sup>:

Բացի զեկուցումներից՝ դատարանը լսեց նաև Հայոց ցեղասպանությունը վերապրած հայ ականատես վկաների ցուցմունքները: Իրենց հիշողությունները ներկայացրին Ֆրանսիայում բնակվող սեբաստացի Արամ Կյուրեղյանը, ամասիացի Բաբկեն Ինջիրաբյանը, ԱՄՆ-ում բնակվող խաղբերոցի Պոլ Նահապետյանը և էսքիշեհիրցի Հայկուհի Բոյաջյանը<sup>4</sup>:

Ժողովուրդների մշտական ատյանը, ուսումնասիրելով գործի նյութերն ու կողմերի փաստարկները, որոշեց, որ Թուրքիայի

<sup>1</sup> Տես Հովհաննիսյան Ա., Քեմալ Աթաթուրքը և հայերի ունեզրկման գործընթացը, «Վեմ», Եր., 2011, թիվ 1 (33), էջ 169:

<sup>1</sup> Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը, էջ 7:

<sup>2</sup> Տես Կիրակոսյան Ա., Ակնարկներ Հայկական հարցին..., էջ 177:

<sup>3</sup> Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը, էջ 17:

<sup>4</sup> Տես Կիրակոսյան Ա., Ակնարկներ Հայկական հարցին..., էջ 177:

Հանրապետությունը համարվում է Օսմանյան կայսրության իրավահաջորդը, և դրան հակասող պատճառաբանություններով թուրքական պետությունը չէր կարող խուսափել Հայոց ցեղասպանության համար պատասխանատվությունից: Դատարանը չբավարարվեց կատարված հանցագործությունը ՄԱԿ-ի ցեղասպանության մասին կոնվենցիայի հատկանիշներով ցեղասպանություն որակելով ու դատապարտելով, այլ պնդեց այդ հանցագործության հետևանքների հաղթահարման և մասնավորապես հատուցման վրա, որի պահանջը այն ժամանակ թուրքիային կարող էր ներկայացնել ՄԱԿ-ի ցանկացած պետություն, քանի որ, դատարանի կարծիքով, կատարվածը միջազգային ծանր հանցագործություն է, որն ուղղված է ոչ միայն հայ ժողովրդի, այլև ընդհանրապես մարդկության դեմ<sup>1</sup>:

Զնայած այն հանգամանքին, որ ժողովուրդների մշտական դատարանը ոչ պաշտոնական դատական ատյան է, որի որոշումները կրում են ոչ պարտադիր, երաշխավորական բնույթ, այդուհանդերձ այս կառույցի ապաքաղաքականացված լինելու հանգամանքը նրան գերծ պահեց ազդեցություններից և ապահովեց նրա որոշման անաչառությունը: Ի տարբերություն Եվրախորհրդարանի, որը, հայերի զանգվածային սպանությունները ցեղասպանություն որակելով հանդերձ, խուսափում էր այդ հանցագործության համար պատասխանատվության ամրագրումից ու հանցագործության հետևանքների հաղթահարման հիմնահարցից, ժողովուրդների միջազգային դատարանը ամրագրում էր թուրքիայի՝ որպես հանցագործ պետության պատասխանատվությունը՝ պնդելով նաև ցեղասպանության հետևանքների հաղթահարման անհրաժեշտությունը:

Նշված միջազգային պաշտոնական և ոչ պաշտոնական կազմակերպությունների ընդունած բանաձևերն անշուշտ կարևոր տեղ են գրավում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացում: Այս կառույցների բանաձևերի

ընդունման համատեքստում փորձեցինք ներկայացնել Սփյուռքի համայնքների և առանձին գործիչների ջանքերը, որոնց շնորհիվ նաև հաջողվեց արձանագրել այդ կարևոր հաջողությունները: Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ անկախ պետականության բացակայության և ԽՍՀՄ-ի թուրքամետ պահվածքի պայմաններում Սփյուռքը, նրա կառույցներն ու առանձին գործիչները թուրքիայի և նրա դաշնակիցների դեմ տարվող անհավասար պայքարում ի վերջո հասան այն բանին, որ այդ միջազգային կառույցները ճանաչեցին ու դատապարտեցին Հայոց ցեղասպանությունը:

*Armen Marukyan – Efforts of Diaspora in the Case of Adoption of Resolutions On Recognition and Condemnation of the Armenian Genocide by International Organizations* – Recognition and condemnation of the Armenian Genocide by the international governmental and non-governmental organizations is an important component of the general process of the international recognition and condemnation of the Armenian Genocide. In this case the direct role played both diaspora communities, and the certain figures, which efforts also promoted adoption of the relevant resolutions by these organizations. It should be noted that in conditions of absence of independence and the pro-Turkish orientation of the USSR communities and figures of diaspora conducted unequal fight in the international organizations against Turkey and its allies and, finally, managed to reach a certain success.

<sup>1</sup> Տես Արման Պասպար, Հայ ազատագրական պայքարն ու անախելչությունը, էջ 147:



**ՀՈՎԴԱՆՆԵՍ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

**ՀԱՅ ԱԶԳԱՔՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԸՍՏ 1959–1989 ԹԹ.  
ՄԱՐԴԱՅԱՄԱՐՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ**

Հայրենական մեծ պատերազմը նոր իրողությունների առաջ կանգնեցրեց ԽՍՀՄ-ում բնակվող ժողովուրդներին, այդ թվում՝ հայությանը:

Պատերազմի նախօրեին ԽՍՀՄ ամբողջ հայ բնակչության գրեթե կեսը ապրում էր Հայկական ԽՍՀ-ում, մյուսը կեսը՝ միութենական այլ հանրապետություններում:

Մեծ հայրենականին Հայկական ԽՍՀ-ից բանակ զորակոչվեց շուրջ 300 հազ., միութենական հանրապետություններից՝ մոտ 200 հազ. հայ:

Մեծ հայրենականում հայության կրած վիթխարի զրկանքները՝ սովը, հիվանդությունները, զանգվածային աքսորը Ղրիմից և Հյուսիսային Կովկասից դեպի Միջին Ասիա, Ալթայ, Սիբիր, նկատելի փոփոխություններ մտցրին միութենական հանրապետությունների և առանձին երկրամասերի հայության թվաքանակի ու տեղաբաշխման մեջ:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին նկատելիորեն տուժեցին ԽՍՀՄ հայկական այն համայնքները, որոնք հայտնվեցին ֆաշիստների զավթած շրջաններում<sup>1</sup>, հայ բնակչությունը ենթարկվեց բռնությունների, տարհանման և աքսորի: Ուկրաինական ԽՍՀ, Բելոռուսական ԽՍՀ և ՌԽԴՄՀ առանձին տարածաշրջանների՝

ֆաշիստական օկուպացիայի տակ հայտնված հայությունը կարևոր մասնակցություն ունեցավ պարտիզանական և թիկունքի պայքարին, կրեց զգալի կորուստներ:

Ղրիմահայությունը պատերազմի տարիներին սաստիկ տուժեց ոչ միայն ֆաշիստական օկուպացիայի հետևանքով, այլև դարձավ ստալինյան բռնության զոհը՝ արմատախիլ լինելով հայրենի Ղրիմից: Միայն 1950-ական թթ. աքսորյալներն արդարացվեցին, և կատարվեց մասնակի վերադարձ:

Ղրիմը 1954 թ. ՌԽԴՄՀ-ից տեղափոխվեց Ուկրաինական ԽՍՀ կազմ, իսկ թերակղզու հայությունը հաջորդ համամիութենական մարդահամարներում արդեն ներկայացվում է Ուկրաինական ԽՍՀ հայության ընդհանուր թվաքանակի մեջ:

1959 թ. համամիութենական մարդահամարի արդյունքները կարևոր նշանակություն ունեին. դա առաջին մարդահամարն էր հետպատերազմյան շրջանում, որում ազգագրական նոր տվյալներ էին նշված<sup>1</sup>:

Պատերազմի հետևանքները ԽՍՀՄ-ի համար այնքան ծանր էին (ժողովրդագրական պատկերի բարդ իրավիճակ, սով, ավերված տնտեսություն և այլն), որ թույլ չտվեցին հերթական մարդահամարն անցկացնել ավելի վաղ՝ 1949 թվականին:

Մարդահամարի անցկացումը 1959 թ. պայմանավորված էր ոչ միայն տնտեսական և կազմակերպական խնդիրներով, որոնք առկա էին հետպատերազմյան տարիներին, այլ նաև նպատակ էին հետապնդում թաքցնելու այն հսկայական մարդկային կորուստները, որ կարող էր արձանագրել մարդահամարը: Ակնհայտ է, որ հաշվի առնելով նախորդ մարդահամարների քաղաքական նշանակության փորձը՝ նոր մարդահամարի արդյունքները դժվար էր օգտագործել քարոզչական նպատակներով, ուստի և Ի. Ստալինը մերժել էր մարդահամար անցկացնել 1949 թվականին:

<sup>1</sup> Ств Александрия О., Участие армян союзных республик в борьбе с фашизмом на оккупированных территориях в годы Великой Отечественной войны, Актуальные проблемы Второй мировой и Великой Отечественной войн (к 65-летию великой победы), Минск, Беларуская навука, 2010, с. 385-386.

<sup>1</sup> [http://demoscope.ru/weekly/ssp/sng\\_nac\\_59.php?reg=8](http://demoscope.ru/weekly/ssp/sng_nac_59.php?reg=8)

Մարդկային հսկայական կորուստներից, սեռատարիքային կազմի փոփոխություններից բացի՝ նկատելիորեն փոխվել էին նաև հԱՅՍ սահմանները: Ուկրաինական հԱՅ-ին էին միացվել Արևմտյան և Անդրկարպատյան Ուկրաինան, Բելոռուսական հԱՅ-ին՝ Արևմտյան Բելոռուսիան:

Դեռևս 1940 թ. հԱՅՍ կազմ էին ներառվել Մերձբալթյան երկրները՝ Լիտվական, Լատվիական և Էստոնական հԱՅ-ները, կազմավորվել էր նաև Մոլդովական հԱՅ-ն: Նոր մարդահամարի անցկացումն անհրաժեշտ էր նաև այլ գործընթացներ վեր հանելու առումով:

Այս համատեքստում կարևոր էր դառնում նաև բնակչության տեղաբաշխման շրջանների փոփոխության իրողությունը, նոր տարածքների շարունակական յուրացումը Ղազախստանում, Սիբիրում, Հեռավոր Արևելքում:

Բացի դրանից՝ հետպատերազմյան տարիներին փոփոխվեց հԱՅՍ քաղաքաբնակ և գյուղաբնակ բնակչության թվային հարաբերակցությունը, որի կարևոր պատճառներից էր նաև հետպատերազմյան շրջանում ավելի քան 1.500 քաղաքային նոր բնակավայրերի և ավանների ձևավորումը:

1959 թ. համամիութենական մարդահամարի արդյունքներով՝ հԱՅՍ ամբողջ հայ բնակչության թվաքանակը կազմում էր 2.786.912 մարդ<sup>1</sup>, որից Հայկական հԱՅ-ում՝ 1.551.610 մարդ կամ հԱՅՍ հայության 55.7%-ը:

Մարդահամարի տվյալներով՝ Հայկական հԱՅ-ից հետո հայ բնակչության թվակազմով առանձնանում էին Վրացական հԱՅ-ն (442.916<sup>2</sup>), Ադրբեջանական հԱՅ-ն (442.089), Ռուսաստան (255.978), Ուզբեկական հԱՅ-ն (27.370), Ուկրաինական հԱՅ-ն (28.024), Թուրքմենական հԱՅ-ն (19.696), Ղազախստանական հԱՅ-ն

(9.248): Մարդահամարի տվյալները Բելոռուսական հԱՅ-ում արձանագրել են 1.751, Մոլդովական հԱՅ-ում՝ 1.218, Տաջիկական հԱՅ-ում՝ 2.878, Կիրգիզական հԱՅ-ում՝ 1.919 հայ բնակիչ:

1959 թ. համամիութենական մարդահամարով առաջին անգամ հայ ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներ էին առկա Մերձբալթյան խորհրդային հանրապետություններում (միասին՝ 2.179 հայ): Լիտվական հԱՅ-ում բնակվում էին 471, Լատվիական հԱՅ-ում՝ 1.060 և Էստոնական հԱՅ-ում՝ 648 հայեր:

Համամիութենական հաջորդ մարդահամարն անցկացվել է 1970 թ., որի նպատակը հԱՅՍ «զարգացած սոցիալիզմի» փուլի ժողովրդագրական, տնտեսական, կրթական և այլ ասպարեզների վիճակագրական պատկերը տալն էր:

1970 թ. համամիութենական մարդահամարն արձանագրել է հԱՅՍ և միութենական հանրապետությունների հայ ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ նոր պատկեր (տես աղյուսակ 1):

Ակնհայտ է, որ հԱՅՍ հայ ազգաբնակչության թվաքանակը, նախորդ մարդահամարի թվական տվյալների հետ համամետաժ, զգալիորեն աճել էր (772.239 մարդով), ընդ որում՝ ոչ միայն բնական աճի, այլ նաև սփյուռքահայ զանգվածների՝ դեպի Հայկական հԱՅ շարունակվող ներգաղթի շնորհիվ: 1959 թ. համամիութենական մարդահամարի համեմատ՝ Հայկական հԱՅ-ից դուրս բնակվում էր հԱՅՍ հայության 38 %-ը:

1970 թ. մարդահամարի արդյունքներով՝ հԱՅՍ տարածքում Հայկական հԱՅ-ից հետո հայ բնակչության թվաքանակով երկրորդը Ադրբեջանական հԱՅ-ն էր: Այնտեղ հԱՅ-ում հայ բնակչությունը, նախորդ մարդահամարի համեմատ, աճել էր ավելի քան 40 հազ. մարդով, իսկ Վրացական հԱՅ-ում՝ ընդամենը 9.393-ով:

<sup>1</sup> [http://demoscope.ru/weekly/ssp/sng\\_nac\\_59.php?reg=8](http://demoscope.ru/weekly/ssp/sng_nac_59.php?reg=8)  
<sup>2</sup> Տե՛ս Մինասյան Մ., Էթնիկական փոքրամասնությունները Գրուզիայում, ինտեգրացիայի պոտենցիալը նախադրյալների վիճակագրական պատկերը տալն էր: Երևան, 2006, թ. 10:

Հայության թվաքանակը, տեղաբաշխումն ու տոկոսային կշիռը միութենական հանրապետություններում՝ ըստ 1970 թ. համամիութենական մարդահամարի<sup>1</sup>

աղյուսակ N 1

	Թվաքանակը	%-ին հարաբերությունը
ԽՍՀՄ, որից՝	3.559.151	100
1. Հայկական ԽՍՀ	2.208.327	62.0
2. Ադրբեջանական ԽՍՀ	483.520	13.6
3. Վրացական ԽՍՀ	452.309	12.7
4. ՌԽԴՄՀ	298.718	8.4
5. Ուզբեկական ԽՍՀ	34.174	1.0
6. Ուկրաինական ԽՍՀ	33.439	0.9
7. Թուրքմենական ԽՍՀ	23.054	0.6
8. Ղազախական ԽՍՀ	12.814	0.4
9. Տաջիկական ԽՍՀ	3.787	0.1
10. Կիրգիզական ԽՍՀ	2.688	0.1
11. Բելոռուսական ԽՍՀ	2.362	0.07
12. Լատվիական ԽՍՀ	1.511	0.04
13. Մոլդովական ԽՍՀ	1.336	0.04
14. Էստոնական ԽՍՀ	604	0.02
15. Լիտվական ԽՍՀ	508	0.01

1970 թ. ՌԽԴՄՀ հայ ազգաբնակչության թվաքանակը, նախորդ մարդահամարի համեմատ, գրանցել էր հայության աճ 42.740

մարդով կամ 16.7 %-ով: Այստեղի հայության 33 %-ը բնակվում էր Կրասնոդարի երկրամասում, շուրջ 18 %-ը՝ Ռոստովի մարզում: Այս երկու վարչական միավորների հայությունը միասին ռուսահայության կեսից ավելին էր: Հատկանշական է, որ Հյուսիսկովկասյան տարածաշրջանի բոլոր վարչատարածքային միավորներում առկա էր ստվար հայ բնակչություն, ընդ որում՝ ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային շրջաններում: Այսպես, օրինակ՝ 1970 թ. Կովկասի Հանքային Ջրերի ագլոմերացիային բնորոշ էր քաղաքաբնակ հայության բարձր տոկոսային կշիռը<sup>1</sup>: Սոսկվայում կենտրոնացած էր ՌԽԴՄՀ հայության 8.5 %-ը, որը նույնպես զգալիորեն բարձր էր նախորդ մարդահամարների ցուցանիշներից:

Ուկրաինական ԽՍՀ-ում հայ ազգաբնակչությունը, նախորդ մարդահամարի համեմատ, արձանագրել էր ավելի քան 19 % աճ՝ կազմելով 33.439 մարդ, որից 9.24 %-ը<sup>2</sup> բնակվում էր Ղրիմում: Ուկրաինական ԽՍՀ-ում ստվար հայ բնակչություն ունեին Դոնեցկի ու Խարկովի մարզերը: Ուկրաինայի հայության զերակշիռ մասի համար մայրենի լեզու էր ռուսերենը (58.5 %), 38.4 %-ի համար՝ հայերենը, 2.5 %-ի համար՝ ուկրաիներենը:

1970 թ. մարդահամարով՝ հայ ազգաբնակչության թվաքանակի նկատելի աճ էին արձանագրել միջինասիական բոլոր հանրապետությունները, ուր բնակվում էր 76.517 հայ: Ստվար հայ բնակչություն ունեին Ուզբեկական, Թուրքմենական և Ղազախական ԽՍՀ-ները: Միջինասիական հանրապետությունների հայ բնակչության ճնշող մասը քաղաքաբնակ էր: Ուզբեկական ԽՍՀ 34.174 հայ բնակիչների 94.5 %-ը քաղաքաբնակ էր, ընդ որում՝ Տաշքենդում բնակվում էր ավելի քան 13 հազ. հայ: Քաղաքաբնակ էր Թուրքմենական ԽՍՀ հայ բնակչության 97.4 %-ը, իսկ միայն մայրաքաղաք Աշխաբադում բնակվում էր թուրքմենահա-

<sup>1</sup> Итоги Всесоюзной переписи населения 1970 года, том IV, Национальный состав населения СССР, союзных республик, краев, областей и национальных округов, Статистика, М., 1973, с. 324.

<sup>1</sup> Տե՛ս Բելոզերով Բ., Этническая карта Северного Кавказа, М., 2005, с.115.

<sup>2</sup> Տե՛ս Բեդարский И. Г., Атлас "Крым. Армяне", Армянское население Крыма с древних времен до наших дней, Симферополь, 2008, с. 36.

յության կեսից ավելին: Գյուղաբնակ հայության համամեծատարար նկատելի ցուցանիշ ուներ Ղազախական ԽՍՀ-ն (հանրապետության հայության 24.5%-ը): Կիրգիզական ԽՍՀ-ում այդ ցուցանիշը 52 % էր:

1970 թ. Ադրբեջանական ԽՍՀ-ում և Վրացական ԽՍՀ-ում միասին բնակվում էր 935.829 հայ: Ադրբեջանական ԽՍՀ մայրաքաղաք Բաքվում (քաղխորհրդին ենթակա բնակավայրերով հանդերձ) բնակվում էր 207.464 հայ կամ ադրբեջանահայության 42.9 %-ը:

ԼՂԻՄ-ում բնակվում էր Ադրբեջանական ԽՍՀ ամբողջ հայության 25 %-ը, իսկ Նախիջևանի ԻԽՍՀ-ում հայ բնակչության թվաքանակը շարունակում էր նվազել՝ ընդամենը 5.828 մարդ:

Վրացական ԽՍՀ հայության շուրջ 1/3-ը կամ 150.205 մարդ բնակվում էր Թբիլիսիում: Արխազական ԻԽՍՀ-ում բնակվում էր Վրացական ԽՍՀ հայության 16.5 %-ը, Աջարական ԻԽՍՀ-ում՝ 3.4 %-ը: Վիրահայության 7.1 %-ի համար մայրենի լեզու էր վրացերենը, որը բարձր ցուցանիշ էր:

Հարկ է նկատել որ, 1970 թ. մարդահամարը արձանագրել է հետաքրքիր թվային տվյալներ նաև հայության սեռատարիքային կազմի, կրթության, ամուսնացած հայ քաղաքացիների վերաբերյալ (տես աղյուսակ 2):

1979 թ. ԽՍՀՄ-ում բնակվող հայությունն իր թվաքանակով երկրի էթնիկ խմբերի մեջ բացարձակ տվյալներով 8-րդն էր<sup>1</sup>: Դա ամբողջ ԽՍՀՄ բնակչության 1.58%-ն էր:

Հայկական ԽՍՀ-ում բնակվում էր ԽՍՀՄ ամբողջ հայության 65.6%-ը, միութենական մյուս հանրապետություններում միասին՝ շուրջ 34.4%-ը:

Մերձբալթյան հանրապետություններում բնակվում էր ԽՍՀՄ ամբողջ հայության ընդամենը 0.08%-ը (3.713 մարդ), իսկ միջինասիական հանրապետություններում՝ 2.19%-ը (91.147 մարդ):

<sup>1</sup> СССР в цифрах в 1984 году, М., 1985, с.12.

Հայության թվաքանակը, տեղաբաշխումն ու տոկոսային կշիռը միութենական հանրապետություններում՝ ըստ 1979 թ. համամիութենական մարդահամարի

աղյուսակ N 2

	Թվաքանակը	ԽՍՀՄ-ում %-ով	հանրապետ. %-ով
<b>ԽՍՀՄ, որից՝</b>	<b>4.151.241</b>	<b>100</b>	1.58
1. Հայկական ԽՍՀ	2.724.975	65.6	89.7
2. Ադրբեջանական ԽՍՀ	475.486	11.4	7.9
3. Վրացական ԽՍՀ	448.000	10.8	8.97
4. ՈւսՂՍՀ	364.570	8.8	0.26
5. Ուզբեկական ԽՍՀ	42.374	1.0	0.27
6. Ուկրաինական ԽՍՀ	38.646	0.9	0.07
7. Թուրքմենական ԽՍՀ	26.605	0.6	0.96
8. Ղազախական ԽՍՀ	14.022	0.3	0.09
9. Տաջիկական ԽՍՀ	4.861	0.1	0.12
10. Կիրգիզական ԽՍՀ	3.285	0.07	0.09
11. Բելոռուսական ԽՍՀ	2.751	0.06	0.02
12. Լատվիական ԽՍՀ	1.913	0.04	0.07
13. Մոլդովական ԽՍՀ	1.953	0.04	0.04
14. Էստոնական ԽՍՀ	845	0.02	0.05
15. Լիտվական ԽՍՀ	955	0.02	0.02

Անդրկովկասյան հանրապետություններում՝ Հայկական, Ադրբեջանական և Վրացական ԽՍՀ-ներում, բնակվում էր ամբողջ ԽՍՀՄ հայ ազգաբնակչության 87.8%-ը (3.648.461 մարդ):

Համամիութենական վերջին մարդահամարը անցկացվել է

1989 թ. հունվարի 12-19-ը՝ քաղաքացիների փաստական բնակության վայրի հարցմամբ: Մարդահամարի հարցումը և տվյալների գրանցումն իրականացվել էին մարդահամարների անցկացման համար հատուկ ուսուցում ստացած մասնագետների կողմից: Ընդ որում, այս մարդահամարի արդյունքների մշակումը, դասակարգումը և վերջնահաշվարկն իրականացվել էին գաղտնիության պայմաններում (տե՛ս աղյուսակ 3)<sup>1</sup>:

1989 թ. համամիութենական մարդահամարը, նախորդի համեմատ, արձանագրել է ԽՍՀՄ հայ բնակչության թվաքանակի աճ 471.991 մարդով:

Հայության թվաքանակի նկատելի աճ է արձանագրվել ՌԽՂՄՀ-ում. այստեղ բնակվող շուրջ 532 հազ. հայերից Հյուսիսային Կովկասում տեղաբաշխված էր 355.6 հազարը կամ հանրապետության հայության 66.7%-ը, ընդ որում՝ նրանց գերակշիռ մասը (67%) բնակվում էր քաղաքներում<sup>2</sup>: Միութենական մայրաքաղաք Մոսկվայի հայ ազգաբնակչության թվաքանակը մարդահամարից մարդահամար զգալի աճ է արձանագրել: Երեսուն տարում (1959–1989 թթ.) Մոսկվայի հայությունն աճեց 2.5 անգամ՝ կազմելով շուրջ 43.5 հազ. մարդ<sup>3</sup>:

ՌԽՂՄՀ Կրասնոդարի երկրամասի հայերի թիվն զգալիորեն աճել էր՝ 1979 թ. 120.8 հազարից 1989 թ. հասնելով 182.2 հազ. մարդու (այդ թվում՝ Ադղեայում՝ 10.4 հազ.): 1989 թ. մարդահամարի տվյալներով՝ տեղի հայության 25.4 %-ն ուներ բարձրագույն, թերի բարձրագույն կամ միջին մասնագիտական, 58.6 %-ը միջնակարգ կամ թերի միջնակարգ, 11.3 %-ն՝ տարրական կրթություն: Այս ցուցանիշը քաղաքային բնակավայրերում կազմում էր համապատասխանաբար 31.3, 55.6, և 9.1 %, գյուղերում՝ 17.3, 62.7 և 14.3 %:

<sup>1</sup> Տե՛ս Беднарский И. Г., ցվ. աշխ., էջ 38:

<sup>2</sup> Տե՛ս Тер-Саркисянц А., Армяне. История и этнокультурные традиции, М., 1998, с. 357.

<sup>3</sup> Տե՛ս Арутюнян Ю., Об армянской диаспоре в России. Этносоциологическое исследование армян Москвы и Краснодара, Е., с. 15.

Հայության թվաքանակը, տեղաբաշխումն ու տոկոսային կշիռը միութենական հանրապետություններում՝ ըստ 1989 թ. համամիութենական մարդահամարի<sup>1</sup>

աղյուսակ N 3

	Թվաքանակը	ԽՍՀՄ-ում %-ով	հանր. բն. մեջ %-ով	դինամիկ. 1979 թ. համեմատ %-ով
<b>ԽՍՀՄ, որից՝</b>	<b>4.623.232</b>	<b>100</b>	<b>1.6</b>	<b>111.4 (+)</b>
1. Հայկական ԽՍՀ	3.083.616	66.7	93.30	113.2 (+)
2. Ադրբեջանական ԽՍՀ	390.505	8.4	5.56	82.1 (-)
3. Վրացական ԽՍՀ	437.211	9.5	8.09	97.6 (-)
4. ՌԽՖՍՀ	532.390	11.5	0.36	146.0 (+)
5. Ուզբեկական ԽՍՀ	50.537	1.1	0.25	119.3 (+)
6. Ուկրաինական ԽՍՀ	54.200	1.2	0.10	140.2 (+)
7. Թուրքմենական ԽՍՀ	31.829	0.7	0.90	119.6 (+)
8. Ղազախական ԽՍՀ	19.119	0.4	0.11	136.4 (+)
9. Տաջիկական ԽՍՀ	5.651	0.1	0.11	116.3 (+)
10. Կիրգիզական ԽՍՀ	3.975ԱԱ	0.1	0.09	121.0 (+)
11. Բելոռուսական ԽՍՀ	4.933	0.1	0.04	179.3 (+)
12. Լատվիական ԽՍՀ	3.069	0.07	0.11	160.4 (+)
13. Սոլդովական ԽՍՀ	2.873	0.06	0.06	147.1 (+)
14. Էստոնական ԽՍՀ	1.669	0.04	0.10	197.5 (+)
15. Լիտվական ԽՍՀ	1.655	0.04	0.04	173.3 (+)

Կրասնոդարի երկրամասի քաղաքների ժամանակակից հնաբնակ

<sup>1</sup> Национальный состав населения РСФСР по данным Всесоюзной переписи населения 1989 г., М., 1990, с. 5.

հայության շրջանում զգալի էին ծառայողներն ու մտավորականությունը: 1970-1980-ական թթ. երկրամասում վերաբնակվածների շրջանում գերակշռում էին ծեռներեցները: Հնաբնակ հայերը ապրում էին ավելի քան 100 գյուղական վայրերում (չհաշված արդեն նախկին 74 գյուղերն ու խուտորները), Անապայի, Գորյաչի Կլուչի, Բելորեչենսկի, Ապշերոնսկի, Տուապսեի, Լազարևսկի, Խոստիանսկի և Աղլերի շրջաններում:

Կրասնոդարի երկրամասում համշենահայերի համախումբ տեղաբաշխումը հատկապես գյուղական վայրերում և (թեև ներսում առկա էր բաժանումը տրապիզոնցիների, օրդուցիների և ջանիկցիների՝ այն վայրերի անուններով, որտեղից տեղափոխվել էին) շարունակվող մեկուսացումը հիմնական էթնիկ միջուկից՝ Հայաստանի հայ բնակչությունից, նպաստեցին նրանց յուրահատուկ էթնոշակութային կոնսերվացմանը՝ որպես հայ էթնոսի պատմաազգագրական խմբերից մեկը: 1989 թ. մարդահամարով Կրասնոդարի երկրամասի հայության 75.2 %-ն իր մայրենի լեզուն էր համարում ազգայինը, 24.7%-ը՝ ռուսերենը: Քաղաքաբնակ հայերի միջավայրում հայերենը մայրենի լեզու էր 68.2%-ի, գյուղաբնակների՝ 84 %-ի համար:

1989 թ. մարդահամարով Չեչենա-Ինգուշական ԻԽՍՀ-ում բնակվում էր 14.824 հայ, որոնց 97.4%-ը բնակվում էր քաղաքներում, հիմնականում՝ Գրոզնիում (1959 թ. 11.533): Այստեղ բնակվող հայության 73.2 %-ը մայրենի լեզու էր համարում հայերենը, 26.7 %-ը՝ ռուսերենը:

1990-ական թթ. սկզբից, Չչենիայում ռազմական իրադարձությունների ծավալմանը զուգընթաց, տեղի հայությունը հեռացավ հիմնականում Ստավրոպոլի երկրամաս<sup>1</sup>:

Համամիութենական վերջին մարդահամարն արձանագրեց հայության թվաքանակի կտրուկ անկում Ադրբեջանական ԽՍՀ-ում: Հետագայում դա վերածվեց այդ հանրապետությունից հայության

արտահոսքի և բռնագաղթի՝ պայմանավորված ԼՂ-ում ազգային-ազատագրական պայքարով:

Վրացական ԽՍՀ հայության թվաքանակը նույնպես նվազեց, որը հանրապետությունից հայության շարունակական արտահոսքի և մասամբ նաև ծուլման արդյունք էր:

Միութենական մյուս բոլոր հանրապետություններում հայ ազգաբնակչությունն արձանագրել էր թվաքանակի կայուն աճ:

Ընդհանուր առմամբ 50 տարվա ընթացքում՝ 1939-1989 թթ., ԽՍՀՄ հայ ազգաբնակչության թվաքանակը ավելի քան կրկնապատկվել էր (2.152.860 հայ՝ 1939 թ., 4.623.232 հայ՝ 1989 թ.), իսկ Հայկական ԽՍՀ-ում՝ գրեթե եռապատկվել (1.061.997 հայ՝ 1939 թ., 3.083.616 հայ՝ 1989 թ.):

ԽՍՀՄ փլուզման նախօրեին այստեղ բնակվում էր աշխարհասփյուռ հայության գերակշիռ մասը, իսկ ԽՍՀՄ փլուզումից հետո էլ նախկին խորհրդային հանրապետությունների հայ ազգաբնակչության թվաքանակը կտրուկ մեծացավ, որը հետևանք էր ՀՀ սոցիալ-տնտեսական դժվարին իրավիճակով պայմանավորված արտագաղթի:

**Hovhannes Aleksanyan – Armenian population of Soviet republics according to the censuses of 1959-1989** – The Armenian population of USSR continued living in all the Soviet republics after the Great Patriotic War (World War II). The dynamics of the postwar growth of Armenian population in the USSR, the area of their distribution, the ratio of urban to rural population can be traced through the reports of the Soviet population censuses of 1959-1989.

The data, compiled from the said censuses, except for the Armenian SSR, where 66.7 % (3.083.616 people) of Armenian population of the USSR (4.623.232 Armenians) was living as of 1989, a large numbers of Armenians were residing compactly in the Georgian SSR (437.211 people), the RSFSR (532.390 people), the Azerbaijani SSR (390.505 people), the Ukrainian SSR (54.200 people), the Uzbek SSR (50.537 people), and the Turkmen SSR (31.829 people).

<sup>1</sup> Ст в Белозеров В., 624. աշխ., էջ 293:

## ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱԼ

**ՀԱՅԵՐԸ ՉԺՅ-ՈՒՄ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ 21-ՐԴ ԴԱՐԻ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ**

Չինաստանը և ճապոնիան թեև 20-րդ դարի երկրորդ կեսին հասել են սոցիալ-տնտեսական նշանակալից վերելքի և կարևոր դիրք գրավել աշխարհաքաղաքական առումով, այդուհանդերձ դեպի այս երկրներ օտարերկրացիների զանգվածային ներգաղթեր տեղի չեն ունենում: Ազգային առումով միատարր այս երկրներում 20-րդ դարի վերջին, 21-րդ դարի սկզբին տարերայնորեն բնակություն են հաստատում ամենատարբեր էթնիկ խմբերի ներկայացուցիչներ, որոնք, սակայն, չեն ստեղծում համայնքներ: ՉժՅ-ում և ճապոնիայում ժամանակ առ ժամանակ կայք են հաստատում նաև հայ ժողովրդի զավակները՝ ամենատարբեր երկրներից, հիմնականում՝ ժամանակավորապես, հազվադեպ՝ մշտական (վերջինները գլխավորապես վերաբերում են տեղացիների հետ ամուսնացողներին): Համայնքներ չկազմավորելու պատճառով 20-րդ դարի երկրորդ կեսից Չինաստանում և ճապոնիայում բնակվող հայերի պատմությունը եղել և մնում է անհատների պատմություն:

**Հայերն արդի Չինաստանում**

Հին և հարուստ պատմամշակութային առնչություններ հայությունն ունեցել է հատկապես Չինաստանի հետ, որտեղ հայ բնակիչներ առաջին անգամ հայտնվել են դեռևս վաղ միջին դարերում: 20-րդ դարի առաջին քառորդին հայկական փոքր համայնքներ են հաստատվել Չինաստանի մի շարք քաղաքներում, երբ Ռուսաստանի հոկտեմբերյան հեղաշրջման և Մեծ եղեռնի հե-

տևանքով բազմաթիվ հայեր փախել են Չինաստան՝ հիմնականում այնտեղից ԱՄՆ մեկնելու վերջնական նպատակով, սակայն շատերը ստիպված մնացել են: Այդպիսով, Չինաստանը մտել է հայ Սփյուռքի աշխարհագրական տիրույթ, իսկ չինաբնակ հայերը՝ Չինաստանի գաղթականների պատմության մեջ: Նրանք մեծ մասամբ եղել են Արևելյան Հայաստանի տարբեր գավառներից և Կովկասի հայաբնակ վայրերից. լինելով ռուսախոս և մշակութապես ռուսներին մոտիկ՝ ընկալվել են որպես ռուս գաղթականության մի ճյուղը՝ պահպանելով հանդերձ իրենց աշխարհիկ և հոգևոր անկախությունը: Հայերը հիմնականում բնակվել են Չինաստանի հյուսիսի, Սանջուրիայի քաղաքներում, ապրել ազգային կյանքով, մասնավորապես հարբին քաղաքում հիմնել են ազգային կազմակերպություններ, եկեղեցի և դպրոց: Նախաժողովրդական ժամանակաշրջանի Չինաստանում տեղի բնակիչները բավականաչափ բարեկամաբար են տրամադրված եղել օտարերկրացիների հանդեպ՝ նպաստելով նրանց գործ հիմնելուն և ինքնաբավ լինելուն: 1931-ի տվյալով չինաբնակ հայերի ընդհանուր թիվը եղել է 579<sup>1</sup>: Երկրորդ աշխարհամարտի տարիներին ճապոնացիները, գրավելով Չինաստանը, հայերին համարել են թշնամիներ և շատերին արգելափակել համակենտրոնացման ճամբարներում, որտեղ նրանցից շատերը զոհվել են: Հետագայում՝ ՉժՅ-ի հռչակումից հետո, երկրում մնացած հայերն ամբողջովին հեռացել են Չինաստանից՝ ցրվելով տարբեր երկրներ (հիմնականում ԱՄՆ):

Այդպիսով, 20-րդ դարի առաջին կեսին հայկական սակավաթիվ ներկայությունը Չինաստանում ավարտվել է: Ժողովրդական Չինաստանում հայեր չեն ապրել, երբեմն հատուկեմտ հայեր մեկնել են ժամանակավոր աշխատանքի: Այսպես, 1959–1961 թթ. Պեկինում ընտանիքով բնակվել են պոլսահայ նկարիչ, Թուրքիայի կոմունիստական կուսակցության անդամ, ժաք Իծալյանը (1922–1978) և նրա եղբայրը՝ թուրքագիր գրող Վարդան Իծալյանը:

<sup>1</sup> Տես Հայերը Սանջուրիոյ մէջ, «Յառաջ», Փարիզ, 6.02.1931:

Նրանք միասին աշխատել են չինական ռադիոյի թուրքական բաժնում: Ժաք Իհմայանը հաճախել է Պեկինի կերպարվեստի ակադեմիայի դասընթացներին, ուսումնասիրել չինացի վարպետների աշխատանքը, չինական դասական նկարչության ավանդական տեխնիկան: Ժաք Իհմայանի գծանկարչական աշխատանքների մի շարք կատարված է չինական ավանդական կերպարվեստի ոճով, բրնձից պատրաստված թղթի վրա: Ինչպես չինացի շատ նկարիչներ, նա ևս ունեցել է սեփական անվանական կնիք: Չինաստանում մշակութային հեղափոխության սկսվելու հետ Իհմայանները տեղափոխվել են Մոսկվա:

ՉԺՀ-ից դուրս չինական տարածքներից Հոնկոնգում և Թայվանում հիմնականում ժամանակավորապես բնակվել են հատուկ ենտ հայեր: 1986–2006 թթ. Թայվանում են բնակվել Երևանի ֆիզիկայի ինստիտուտի երբեմնի աշխատակիցներ, ազգությամբ չինացի Յան Շին և իր հայուհի կինը՝ Սիլվա Յանը (ծնյալ Մաթևոսյան): Այստեղ Յան Շին եղել է Տամկանգի համալսարանի դեկան և ֆիզիկայի պրոֆեսոր, իսկ Սիլվա Յանը հաղորդումներ է վարել «Ազատ Չինաստան» ռադիոկայանով:

Ի դեպ, Հոնկոնգում մինչ օրս գործում է «Արմենիա» հյուրանոցը (Ֆա-Յունեն փողոց, թիվ 63Ա-65):

20-րդ դարի վերջին՝ ԽՍՀՄ փլուզումից և ՉԺՀ-ի տնտեսական աճից հետո, չինական մեծ ու փոքր տարբեր քաղաքներում հաստատվել են հայեր այլևայլ երկրներից, նաև Հայաստանից: ՀՀ-ի և ՉԺՀ-ի միջև բարձրագույն կրթության բնագավառում ստորագրված միջպետական համաձայնագրի շնորհիվ 1999-ից չինական բուհերում պարբերաբար ուսանում են շուրջ երկու տասնյակի հայաստանցի երիտասարդներ՝ մասնագիտանալով հիմնականում կառավարման, տնտեսագիտության և քաղաքագիտության մեջ: Այդ համաձայնագրի շնորհիվ կատարվում է ուսանողների փոխանակում, Չինաստանի տրամադրած կրթաթոշակներով հայտարարվում է մրցույթ՝ այդ երկրում ուսումը շարունակելու համար: 2009-ի տվյալով՝ Չինաստանում ուսանող տասը

հայաստանցիների մեծ մասը սովորել է տնտեսագիտություն, երկուսը՝ բժշկություն: Ի դեպ, 2006-ին Չինաստանում սովորող օտար ուսանողների մեջ հայաստանցիները համարվել են լավագույնները<sup>1</sup>:

Չինաբնակ հայերը տարբեր առիթներով հաճախ հավաքվում են զանազան քաղաքներում, ունեն իրենց միավորող սեփական համացանցային կայքէջը՝ <http://www.chinahay.com>: Ըստ այս աղբյուրի՝ 2009 թվականին Չինաստանում բնակվում է մոտ 200 հայ՝ 20 տարբեր քաղաքներում: Չինաբնակ հայերն ապրում և ուսանում են հիմնականում Պեկինում և ծովափնյա քաղաքներում (Շանհայ, Շյուանձոու, Շենձեն, Հոնկոնգ): Հայերն այստեղ են եկել Ֆրանսիայից, Ավստրալիայից, Կանադայից, Արգենտինայից, ԱՄՆ-ից, Անգլիայից, Ռուսաստանից, Լիբանանից, Սիրիայից և Հայաստանից: Նրանք ընդգրկված են հանրային կյանքի տարբեր բնագավառներում՝ նորաձևություն, ոսկու առևտուր, փաստաբանություն, մշակույթ և այլն:

Չինահայության վերջին տասնամյակների վերաբերյալ տվյալներ է տալիս սփյուռքահայ գրող Թորոս Թորանյանն իր «Ուղեորություն դեպի Թայվանտ ու Չինաստան» գրքում: Ըստ նրա՝ Հոնկոնգի հայերի թիվը մոտ տասն է, որոնց մեջ առանձնանում է իր հյուրընկալը՝ գործարար Ջեք Մաքսյանը (հայկական անունով՝ Հակոբ Մխայան), որը բնակվում է Հոնկոնգում ու Շանհայում, և որին էլ նվիրված է գիրքը: Թորանյանը բազմիցս նշում է ծնունդով բեյրութի Հակոբի և նրա չինուհի կնոջ՝ Ջուլիի մարդկային արժանիքները, թե ինչպես են նրանք կարողանում իրենց շուրջը համախմբել Ծայրագույն Արևելքի հայ բնակիչներին՝ Բանգկոկում, Հոնկոնգում թե չինական այլ քաղաքներում: «Բարեկամս Յակոբ Մխսեանը, գործատեղի մը եւ տուն մը ունի Հոնկ Զոնկի մէջ ֆիլիփինցի ծառայով: Սքանչելի չինացի հայասեր ու հայամօտ կին մը ունի, որ կը հասկնայ եւ քիչ մըն ալ կը խօսի հայերէն,

<sup>1</sup> Ռ. Պողոսյան, Սփյուռքի դպրոցներում հայ աշակերտների թիվը տարեցտարի նվազում է, «Ազգ», Եր., 24.06.2006:



նոյնիսկ հայերեն երգեր ալ գիտե: Տուն մը եւ աշխատանքի այլ կեդրոն մը ունի Շանկիայի մէջ ու տուն մը՝ Լիբանանի: Բայց տուն մը չունի Հայաստանի մէջ: Իր ունեցածները ի՞րն են արդեօք. կը խորհիինք... ու կը յիշենք որ նոյն Յակոբը սքանչելի գրասենեակ մը ունէր Պէյրուսի Պապ Իտրիս պողոտային վրայ: Բայց առաւօտ մը արթնցաւ Յակոբ ու տեսաւ միայն աւերակները իր հարստութեան... Բարեկամս՝ Յակոբը, մէկ հարստութիւն ունէր եւ ունի՝ այսօր ալ, անկապտելի հարստութիւն մը՝ իր աշխատասիրութիւնը: Այլապէս զերոյէն սկսելով, Հոնկ Բոնկ մեկնելով նոր տուն ու աշխատավայր չէր կրնար ունենալ: Յակոբը իր ունեցածէն տուած է ու կու տայ ազգին. շատ անգամ անհաշիւ կու տայ իմ-նաւորելով հայու իր կեցուածքը երկրին ու սփիւռքին հանդէպ»<sup>1</sup>:

Մաքսյան ընտանիքից Բաֆֆի Մաքսյանը կամ Ռաֆայել Մաքսը (ծն. 1977) աշխատում է Հոնկոնգի Key & Lock Systems ընկերությունում: Տնօրինում է «Անուշ» անվամբ տպագրական ֆիրման: Կինը չինուհի Թրադա Մաքսյանն է, ունի երկու դուստր՝ Կալիստա Անուշ և Լուսին:

Հոնկոնգաբնակ հայերի մեջ Թորանյանը հիշել է նկարչուհի Սյուզան Աճեմյան-Քուին (ծն. 1967, Բեյրութ): Վերջինս թեև մանկուց հիվանդացել է ոտքերի անշարժությամբ, սակայն ոգու մեծ կորովի շնորհիվ կարողացել է մասնագիտանալ նկարչության մեջ, իսկ բարձր գաղափարականի տեր չինացի ամուսնու շնորհիվ՝ ունենալ նաև անձնական երջանկություն: Սյուզանը 1985–1988 թթ. ուսանել է Լիբանանի Գեղարվեստի հաստատությունում: 1989–1991-ին Բեյրութում հաճախել է դիզայնի, 1992–1994-ին հեռակա Լոնդոնի երգիծանկարչության դասընթացներին: Ունեցել է անհատական ցուցահանդեսներ Լիբանանում, Անգլիայում և ԱՄՆ-ում: Ամուսնացել է նկարիչ, Հոնկոնգի գեղարվեստի համալսարանի դասախոս Մուն Շիու (Քրիստոֆեր) Քուի հետ և հաստատվել Հոնկոնգում<sup>2</sup>:

<sup>1</sup> Թ. Թորանյան, Ուղեորութիւն դէպի Թայլանտ ու Չինաստան, Հալեպ, 2004, էջ 193:  
<sup>2</sup> Նույն տեղում, էջ 71-78, 196:

Դարձյալ Թորանյանի վկայությամբ՝ Շանհայում բնակվում են հինգ հայ՝ Հայաստանից արտագաղթած Արտաշ Հարությունյանը, Արմեն Մաճառյանը և Ջորջը, բեյրութցի Սարո (Սարհատ) Յուրյուկյանը, որն աշխատում է տեղի առևտրական մի ընկերությունում, և ծնունդով բաղդադցի Ջորջ Հայեք Ալաճաճյանն ընտանիքով, որի մեծ դուստրն անգլերենի դասախոս է<sup>1</sup>: Պեկինի համալսարանի չինարենի և գրականության բաժնի շրջանավարտ Արտաշ Հարությունյանը Շանհայում աշխատում է «Արարատ» անունով ռեստորան-կաբարետում<sup>2</sup>: Շանհայում ընտանիքով բնակվում է ինժեներ Հովհաննես Մետրոպոլիտանը, որը երկրաշարժակալուն շինարարության տեխնոլոգիաների մասնագետ է<sup>3</sup>:

Չինաբնակ հայերից Թորանյանը հանդիպել է նաև հետևյալ անձանց՝ Հոնկոնգում բնակվող առևտրական Արա Սապունճյան<sup>4</sup>, Ծյուանճոուում բնակվող մարաշցի ծնողների զավակ Երջանիկ Սամուելյան (ծնված Իտալիայում, ապրած Ֆրանսիայում, Լիբանանում և ԱՄՆ-ում), որը Ծյուանճոուում բացել է կոշիկի գործարան 980 չինացի բանվորներով՝ տարեկան արտադրելով երեք միլիոն կոշիկ<sup>5</sup>, նաև Պեկինում բնակվող մի լուսանկարչի, որի հայրը եղել է բաղդադցի իտալացի, մայրը՝ երևանցի հայուհի Թրվանտա Սարգսյանը<sup>6</sup>:

Չինաստանում ապրող հայազգի գործարարներից հիշենք նաև հետևյալ անունները: 1986-ից Չինաստանում և 2004-ից նաև Մոնղոլիայում է աշխատում ֆրանսահայ գործարար Ժիրայր Լուսինյանը: Վերջինս մասնակցել է հայ-չինական առաջին միջպետական հանդիպմանը 1991-ին: Նրա դուստրը՝ չինացու հետ ամուսնացած Կարինե Սյինե, աշխատում է Պեկինում Ֆրանսիայի դեսպանատանը որպես տնտեսական առաքելության սպառողա-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 134, 148:  
<sup>2</sup> Նույն տեղում, էջ 134, 158:  
<sup>3</sup> Վկայությունը՝ Վազգեն Էսերճյանի (21.09.2007 թվակիր էլեկտրոնային նամակում):  
<sup>4</sup> Թ. Թորանյան, նշվ. աշխ., էջ 73:  
<sup>5</sup> Նույն տեղում, էջ 109:  
<sup>6</sup> Նույն տեղում, էջ 101:

կան միջոցների սեկտորային կցորդ<sup>1</sup>: Ծնունդով լիբանանահայ գործարար Տիգրան Գյուլեթյանը, որը բնակվել է Մոնրեալում, իսկ այժմ Պեկինում: Այստեղ նա տնօրինում է «Արմենի ինթեր-նեշնըլ» ընկերությունը, որը ներմուծում է կանադական էլեկտրական ջերմացուցիչներ և այլ ապրանքներ: Ծնունդով Փարիզից Միհրան Փափազյանը 2006 թվականին հայուհի կնոջ թամարի և Նարեկ որդու հետ հաստատվել է Չինաստանում: Շենճենում և Յոնկոնգում հիմնել է «Բիհուա գրուպ» առևտրական ընկերությունը: Կանադահայ Հենրի Արսլանյանն աշխատում է ֆինանսական ծառայություններ կատարող «UBS» ընկերության Յոնկոնգի մասնաճյուղում:

Չինական գիտության և կրթության բնագավառներում աշխատում են հետևյալ հայորդիները: 2003-ից Ծյուանճոուում է բնակվում ծնունդով երևանցի Կոնստանտին Ալթունյանը (ծն. 1979): Նա ավարտել է Պեկինի մանկավարժական համալսարանի պատմության բաժինը: 2005 թվականից Ալթունյանը փորձում է միավորել Չինաստանի հարավում ապրող ռուսներին, հիմնադրել է և նախագահում է Ծյուանճոուի ռուսական ակումբը: Նա նաև Չինաստանի ռուս հայրենակիցների համադրող խորհրդի անդամ է<sup>2</sup>: 2012-ից Նանծինի համալսարանում չինարեն և միջազգային հարաբերություններ ուսանող Միեր Սահակյանը ստեղծել է <http://chinastan.org/> հայերեն կայքէջը Չինաստանի մասին: Ծնունդով գյումրեցի Ալբերտ Ոսկանյանը գիտահետազոտական աշխատանք է կատարում Յոնկոնգի համալսարանի ասպիրանտուրայում՝ նանկառուցվածքային նյութերի ստացման ուղղությամբ: Երևանցի Գևոր Գրիգորյանը (ծն. 1989), ով ուսանել է Նանծինի Հոհայի համալսարանում, 2012-ից աշխատում է Թի Սի Սի Նոր էներգիայի և մեխանիզմների ընկերության Նանծինի մասնաճյուղում: Նույնպես Հայաստանից արտագաղթած Սարգիս

Սաքանյանն ավարտել է Պեկինի համալսարանը: Դասավանդել է Պեկինի Միջազգային դպրոցում, ներկայումս (2013) նա Սուճոուի էթնոհաուզ միջազգային դպրոցի փոխտնօրենն է և միջին դասարանների համակարգողը:

Սակավաթիվ հայեր մասնակցում են նաև չինական մշակութային կյանքին: Երևանցի Վանուշ Բաբայանը (ծն. 5.11.1981) մոդեռն բալետ է դասավանդում չինական Դալիան քաղաքի Սյուե Ռոն Հուա միջազգային պարերի դպրոցում, որի փոխտնօրենն է և գլխավոր բալետմայստերը: Այստեղ բեմադրել է վարիացիաներ և պա-դե-դեներ դասական երկացանկից («Մարդուկ-Ջարդուկը», «Կարապի լիճը», «Դոն Կիխոտ», «Ճայը») և մյուզիքլներից («Սառած զգացումներ», «Փարիզի Աստվածամոր տաճարը», «Կատուներ»), «Թոմն ու Ջերին» մանկական ներկայացումը: Բեմադրել է նաև դասական և ժողովրդական (ռուսական, ուկրաինական, հունական, հայկական) պարեր: Վանուշ Բաբայանը տարիներ շարունակ ունեցել է հայ, ռուս և չինացի բազմաթիվ աշակերտներ, որոնց մի մասը նվիրվել է պրոֆեսիոնալ բեմին: Վանուշն իր աշակերտների հետ եղել է Չինաստանի զանազան զավառներում ներկայացնելով աշխարհի ժողովուրդների պարեր և բալետային համարներ: Ի դեպ, Սյուե Ռոն Հուա միջազգային պարերի դպրոցը Վանուշի շնորհիվ 2010-ից համագործակցում է Երևանի մշակութի համալսարանի հետ:

Շանհայում 2008-ից գործող «Օփենֆինալ» անկախ կինոստուդիայի համահիմնադիր է Ռուբեն Գասպարյանը կամ Ռուբեն Գինին (ծն. 1985, Երևան): Նա ռեժիսուրա է ուսանել Մոսկվայի կինեմատոգրաֆիայի ինստիտուտում: 2004-ից բնակվում է Չինաստանում: «Օփենֆինալ» կինոստուդիայում նկարահանվել են «Համազգային մշակութային ֆորումը» (2008), «Աշխարհի քաղաքները. Շանհայ» (2008–2011), ավելի քան 20 գովազդային նախագծեր: Իր եվրոպական արտաքինի շնորհիվ Ռուբենը հրավերներ է ստացել նաև նկարահանվելու չինական ֆիլմերում: 2012-ին Ռուբեն Գինին կատարել է ամերիկացի Չարլզ Թեյլորի դերը «Պաշտպանները» հեռուստաֆիլմում: 2013-ին էկրան են

<sup>1</sup> Աճմանական նամակագրություն ժրգայր Լուսինյանի և Կարինե Սյեի հետ (2006, նոյեմբեր):

<sup>2</sup> Русские в Китае, под общ. ред. и предисл. А. А. Хисамутдинова, Шанхай, изд. Координационного совета соотечественников в Китае и Русского клуба в Шанхае, 2010, с. 538.

բարձրացել երկու ֆիլմ նրա մասնակցությամբ, որոնցից մեկում կատարել է ռուս Անդրեյ Բրյուտինի, իսկ մյուսում՝ Ստալինի կապավոր Սերյոժայի դերերը: Նա ծայնագրվել է նաև Դիսնեյի երկու մուլտիպլիկացիոն կինոնկարների չինարեն կրկնօրինակման համար: Ռուբեն Գինին 2011 թվականին ձեռնարկել է հայ-չինական պատմական կապերի մասին լայնակտավ վավերագրական ֆիլմի նկարահանումները:

Առհասարակ, հետաքրքրական է, որ Չինաստանում ուսանող հայաստանցիներից շատերը նկարահանվում են չինական ֆիլմերում՝ որպես ժամանց ու գումար վաստակելու միջոց: Ի տարբերություն արևմուտքի ուսանողների՝ հայ (նաև ռուս) ուսանողները հաճույքով են ընդառաջում չին կինոգործիչների հրավերներին՝ եվրոպացիների դերերով հանդես գալու չինական կինոնկարների զանգվածային տեսարաններում՝ թե՛ վայելելու իրենց էկրանին տեսնելու բերկրանքը և թե՛ ազատ ժամանակ որոշ գումար աշխատելու համար: Հետաքրքիր է, որ եթե արևմտյան ֆիլմերում հայերը կատարել են մերձավորարևելյանների դերեր, ապա չինական ֆիլմերում հանդես են գալիս եվրոպացիների դրվագային և երկրորդական դերերով: Սակայն նրանցից մեկին վիճակվեց կարճ ժամանակահատվածում գլխավոր դերեր կատարել չինական էկրանին: Երևանցի Լիանա Եղիգարյանը (ծն. 1976) 1994–1996 թթ. ուսանել է Պեկինի չինարենի և մշակույթի համալսարանում, դեռևս ուսումնառության տարիներին չինարեն է թարգմանել Հովհաննես Թումանյանի «Ախթամարը» (հետագայում չինարեն է թարգմանել Թումանյանի «Բարեկենդանը» հեքիաթը, էլդա Գրինի «Ձեռքերը» պատմվածքը և Հրանտ Մաթևոսյանի պատմվածքները, որոնք տակավին անտիպ են): Չինարենի ուսուցմանը զուգահեռ՝ Լիանա Եղիգարյանը նկարահանվել է չինական բազմաթիվ կինոնկարներում, մասնակցել թատերական ներկայացումների: Հեռուստատեսային վեց ֆիլմաշարում Լիանան հանդես է եկել գլխավոր դերերով՝ Գերմանիայի արքայադուստր Ֆելիսիա (Վան Չըն Լինի «Չինական դինաստիայի սուրհանդակը», 1997), Քեթի (Շի Չըն Ֆընի «Արտակարգ գործ»,

1999), ամերիկուհի (Յե Չին Սինի և Վան Յան Անի «ճուն Գուան Ցուն փողոցը»), հոլանդացի գնդապետի նշանած («Թայվանցի հերոս ճըն Չըն Գուն», 2000), Ջեսի (Վան Լոնի «Հնաոճ կայսրը», 2001) և Ջենի (Բայ Խոնի «Վաղ թառամած ծաղիկը», 2001): Այս կինոնկարներից բացի՝ Լիանան նկարահանվել է ու-շուի մի հատուկ ծրագրում: Օրը երեք անգամ չինական Սի Սի հեռուստակայանը ցուցադրել է պա-գուա-ճան կոչվող ու-շուի տարատեսակի մի հաղորդում, որտեղ Լիանան կատարել է իր չինացի մարզչի ցուցմունքները:

Կինոյում և թատրոնում Լիանա Եղիգարյանը հանդես է եկել չինացի մի շարք նշանավոր դերասանների հետ: Մակագրերում նա երբեմն գրվել է միայն իր անվամբ, որ չինարեն հնչում է Լիեննա: Հեռուստակինոյից բացի՝ Լիանան և քույրը՝ Մարինան, հանդես են եկել գովազդներում և հեռուստաշոուներում՝ որպես հաղորդավարուհի, ասմունքող, երգչուհի և պարուհի: Չինական և հայկական երգերի կատարումներով մասնակցել են բազմաթիվ միջոցառումների, որոնց ժամանակ Լիանան նաև քանոնով կատարել է հայկական և ուլդուրական մեղեդիներ: Նրանց Չինաստանում ճանաչել են որպես «Յամենիյա ծիմենյ խուա», այսինքն «հայ ծաղիկ քույրիկներ»... Մարինան հանդես է եկել նաև չինական ծին-ժյույ օպերայում: Չինական մամուլը բազմիցս գրել է Եղիգարյան քույրերի մասին: «Չինարենի իր հրաշալի իմացությամբ Լիանան ներկայացնում է դերակատարման արտասահմանյան ոճ, կարողանում է իր դերերով պատկերել տվյալ երկրի աղջիկների (Իտալիա, Իսպանիա, Ֆրանսիա, Ամերիկա, Ռուսաստան և այլն) կերպարներ», – գրել է «Չին ծի թըն» («Բողբեր») ամսագիրը<sup>1</sup>:

Ներկայումս (2013) Լիանա Եղիգարյանն ամուսնու և զավակների հետ բնակվում է Պաղեստինում, կազմում է չինարեն-հայերեն բառարան:

<sup>1</sup> Թոն Չյուն, Կարիք չունեն հովանավորի, «Չին ծի թըն», Պեկին, 2001, թ. 8, էջ 59 (չինարեն): Լիանա Եղիգարյանի մասին մանրամասն տես մեր «Հայերը համաշխարհային կինոյում» աշխատությունում (Եր., 2004, էջ 572-573):

Չինաստանում գործել են նաև ջութակահար Սերգեյ Գևորգյանը, որ դասավանդել է Ծյուանծոուի կոնսերվատորիայում, նաև հեծանվասպորտի մարզիչ Ալբերտ Սոլոյանը: Երևանցի բուժքույր Նունե Միլիտոնյանն իր աշխատավայրում ծանոթացել է չինացի Դեն Սյունգանի հետ, ամուսնացել, ունեցել երկվորյակ դուստր, ապա տեղափոխվել Չինաստան: Ութ տարի նրանք բնակվել են Սյունգանի ծննդավայրում՝ ճանճյաճուան գյուղում (տիբեթյան Շանդունգ նահանգ): Այնուհետև ընտանիքը տեղափոխվել է Ջունչեն քաղաքը, որտեղ Նունեն բացել է իր անվամբ ռուսական ռեստորան-բար: Նունեի և Սյունգանի (հայկական ծնով՝ Սուրիկ) երջանիկ սիրո մասին է պատմում Բենիամին Գևորգյանի «Հեռու-մոտիկ» վավերագրական կինոնկարը (2007, «Հայկ» կինոստուդիա):

Ժամանակ առ ժամանակ Չինաստանում գործնական կապերով լինում և պաշտոնավարում են տարբեր երկրների հայազգի գործիչներ՝ գործարարներ, պետական գործիչներ, օրինակ՝ կանադահայ գործարար Արփինե Մանոյանը (ծնունդով Պաղեստինից), Չինաստանում Թուրքմենստանի դեսպան, Թուրքմենիայի երբեմնի արտաքին գործերի նախարար, մոր կողմից հայ Բորիս Շահմուրադովը (2001-ի տվյալով), որը տիրապետել է հայոց լեզվին և համագործակցել է Չինաստանում Հայաստանի դեսպանատան հետ<sup>1</sup>:

2009-ի դեկտեմբերին Պեկինում Հայաստանի դեսպանատան նախաձեռնությամբ տեղի է ունեցել չինաբնակ հայերի ընդունելություն-հավաք, որին մասնակցել են հայեր Պեկինից, Շանհայից, Հոնկոնգից և այլ քաղաքներից: Դեսպան Արմեն Սարգսյանը կարևորել է Չինաստանում ապրող հայերին միմյանց կամրջելը: Միջոցառումը եզրափակվել է համերգով, որի ընթացքում կատարվել են նաև հայկական երգեր ու պարեր<sup>2</sup>:

2010 թ. հուլիսի 9-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությամբ Չինաստանի հայ համայնքը սեփական հողի վրա ականատես է եղել պատմական կնունքի: Հրավիրվել է հնդկահայոց հոգևոր հովիվ, Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ հոգեշնորհ Տ. Խորեն արքեպ Յովհաննիսյանը՝ կատարելու մկրտության խորհուրդը: Այն տեղի է ունեցել Հարավային Չինաստանի Շենճեն քաղաքում՝ մոտ քառասուն հայորդիների մասնակցությամբ: Տեղի է ունեցել Ֆրանսիայից Չինաստան տեղափոխված գործարար ամուսիններ Հարություն Սերտի և Լիզա Չաթիկոզյու-Սերտի զավակների՝ Ընծայի եւ Ահարոնի մկրտությունը: Չունենալով հայկական եկեղեցի՝ Սերտ ընտանիքը մկրտության առիթով իր օջախը վերածել է եկեղեցու<sup>1</sup>:

2012-ի հունիսի 18-ին Շանհայում կայացել է միջազգային մեծ ճանաչում ունեցող բարեգործական հեղինակավոր գալա համերգ, որին մասնակցելու նպատակով Չինաստան է հրավիրվել Շառլ Ազնավուրը: Հունիսի 19-ին Չինաստանում ՀՀ դեսպանության նախաձեռնությամբ կազմակերպվել է Ազնավուրի հանդիպումը շանհայաբնակ հայության հետ: Դեսպան Արմեն Սարգսյանը հյուրին ներկայացրել է հավաքին ժամանած շուրջ 20 երիտասարդ հայերի, իսկ Ազնավուրը խոսել է Հայաստանի, հայապահպանման հարցերի մասին:

2013 թվականի ապրիլի տվյալով՝ Դիմագրքի (Facebook) չինաբնակ հայերի խմբում (Chinahay), ի թիվս որոշ վերոհիշյալ անունների, գրանցված են նաև երևանցիներ Մարինե Եղիզարյանը, Աննա Յովհաննիսյանը, Լուսինե Սարգսյանը (Պեկին), ֆրանսահայ Վազգեն և Միհրան Փափազյանները, լիբանանահայեր Վարուժ Բեջեյանը և «Քրիեթիվ փըրլ» ֆիրմայի աշխատող Հակոբ Ջոզեֆ Ափիկյանը, երևանցի Էդգար Տերյանը, մոսկվացի Ռուզաննա Սարիբեկյանը (Շենճեն), Փիթեր Բասմաջյանը, Լարա Վարժապետյանը, ամերիկահայեր Ռամելա Ուզունյանը, Նիքոլաս Թոփչյանը, վրացահայ Սոֆի Բեժանովան (Հոնկոնգ), Արթին

<sup>1</sup> Թ. Թորանեան, Ուղեւորութիւն դէպի Թայլանտ ու Չինաստան, Հայկա, 2004, էջ 116:

<sup>2</sup> Չինաստանում հայերը հանդիպել են իրար, «Ազգ», 16. 12. 2009:

<sup>1</sup> Տես պատմական կնունք Չինաստանում, «Ազգ», 21. 07. 2010:

Գրիգոր Թոմաս Սարգսյանը, երևանցիներ Արևիկ Սարգսյանը և Ռուզաննա Սգերյանը (Ծյուրանճոու), Սաշա Ասքիջյանը, լուսանկարիչ Ժիրո Չալիկյանը (Շանհայ), քեսարցի Պետո Սեգյանը (Յիվու, ճեծյան), երևանցի Դավիթ Քարտաշյանը (Չանգչա, Հարավկենտրոնական Չինաստան), ինչպես նաև երևանցի Լուսինե Սաֆարյան Ֆուև և այլք<sup>1</sup>:

Անշուշտ, չինաբնակ հայերը մաս են կազմում երկրում բնակվող օտարերկրացիների համայնքի, ոչ թե ազգային փոքրամասնությունների (ինչպիսիք դարակեսին արդեն համարվում էին Չինաստանում ծնված ռուսները):

Չինաստանի անախընթաց տնտեսական վերելքը առիթ է տալիս ենթադրելու, որ առաջիկա տարիներին հայ համայնքն այնտեղ ևս մեծանալու է, թեև կառավարությունն օտարերկրացիներին քաղաքացիություն չի շնորհում...

### Հայերը ճապոնիայում

Հայտնի է, որ ճապոնիայի կայսրությունը դարեր շարունակ եղել է փակ երկիր, որտեղ առաջին օտարերկրացիները սկսել են հաստատվել միայն 19-րդ դարի վերջին: Նրանց մեջ եղել են նաև հատուկենտ հնդկահայ վաճառականներ, որոնցից էր հետագայում ճանաչված գրող և հանրային գործիչ Դիանա Աբգարը (1859–1937), որը 1910-ականների վերջին մեծապես օժանդակել է Մեծ եղեռնից և ռուսական հեղաշրջումից հետո ԱՄՆ փախչող և ճապոնիայում ժամանակավորապես ապաստանած հայ գաղթականներին: 1918 թվականի տվյալով ճապոնիայում (Յոկոհամայում) ապրող հայերի թիվը եղել է 13՝ գաղթականներին չհաշված<sup>2</sup>:

1933 թ. տվյալով՝ ճապոնիայի Տոկիո, Կոբե և Յոկոհամա քաղաքներում ապրել է 35 հայ<sup>1</sup>:

1922-ին Հայ ազգային պատվիրակությունը տեղեկություններ է հավաքել տարբեր երկրների հայերի վերաբերյալ՝ նշելով նրանց բնակավայրը և հասցեն: ճապոնիայի հայերի մեջ ընդգրկված են եղել Դիանա Աբգարը, պարոն Ջ. Փափազյանը (Յոկոհամա), Մ. Կ. Մարդինը (Կոբե), Մ. Կարապետյանը և Մ. Հակոբյանը (Չեն Չուն)<sup>2</sup>: 20-րդ դարի առաջին կեսին ճապոնիայում հաստատվել են հատուկենտ հայեր և հայազգիներ, հիմնականում՝ ճապոնացիների հետ ամուսնություններ կնքածներ՝ Ղևենյաններ, Շաղոյաններ, Էսոյաններ, Ազատյաններ, գործարար Լևոն Սեֆերյան, օպերային երգի ուսուցչուհի Օլգա Կարասուլովա (Կարասուլյան, 1886-1977), պատմաբան Բեկ-Ավշարով (բուրդ՝ Տոկիո), Հարությունյան (Կոբե), տիկին Ակաջո (Յոկոհամա)<sup>3</sup>: 1951 թվականի տվյալով ճապոնիայում ապրել է 5-6 հայ ընտանիք, 1960-ի տվյալով 10 հայ ընտանիք, 35 անձ, Տոկիո, Յոկոհամա և Տոտե քաղաքներում, հիմնականում՝ առևտրականներ<sup>4</sup>: 1958-ին ճապոնիա է այցելել հայտնի հոգևորական գործիչ Դերենիկ Եպիսկոպոս Փոլատյանը: Նա նշել է, որ գրեթե հայ չի մնացել այդ երկրում. վերջին արտագաղթողներն են եղել Վահան և Շուշան Արթուն (Հարությունյան) ամուսինները, որոնք 1957-ի սկզբին իրենց զավակի հետ հաստատվել են Սիդնեյում: Նա նշել է, որ Տոկիոյում Հայկ Իփեքճյանը և իր եղբայրն ունեցել են առևտրական մասնաճյուղ, որտեղ, սակայն, ոչ մի հայ չի աշխատել<sup>5</sup>:

Երգչուհի Գոհար Գասպարյանը, 1957-ին այցելելով ճապոնիա, վկայել է, որ երևանում ճապոնիայի Մացույամա քաղաքից իր հետ ծանոթացած մի ճապոնուհուց ստացել է նամակ, որը ստո-

<sup>1</sup> Տե՛ս <http://www.facebook.com/groups/chinahay/members/> (այցելությունը կատարվել է 2013-ի ապրիլի 30-ին):

<sup>2</sup> Ծիածան, Տիկին Աբգար տիպար ազգասեր մը, «Ազգ», Բոսթոն, 26. 03. 1918:

<sup>1</sup> Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ՊՖՆՈՂ 409, ցուցակ 1, գործ 4732, էջ 4:

<sup>2</sup> ՀԱԱ, ՊՖՆՈՂ 1412, ցուցակ 1, գործ 1412, վավերագիր 9:

<sup>3</sup> Vartkes Surabian and Daniel H. Terharian. Armenians in Japan, "Hairenik Weekly", 12. 09. 1958.

<sup>4</sup> «Հայաստանի կոչնակ», 2. 07. 1960, էջ 643:

<sup>5</sup> Դերենիկ Եպիսկոպոս, Հայեր Ծայրագոյն Արեւելքի մէջ, «Արեւ», Գահիրէ, 9. 08. 1958:

րագրված է եղել հայատառ՝ Սաքանյան ազգանվամբ («Թե ինչ առեղծված է դա, չեմ կարողանում պարզել»<sup>1</sup>): Իր երկրորդ այցի ժամանակ՝ 1964-ին, Կոբե քաղաքում տեղեկացել է, որ քաղաքում կա մի հայ ընտանիք և հանդիպել է նրանց: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ մի հայ զինվոր գերի է ընկել և ամուսնացել ճապոնացի բուժքրոջ հետ: Նա ունեցել է չորս որդի՝ արտաքինից իսկական ճապոնացիներ, որոնք, սակայն, շատ լավ հայերեն են խոսել<sup>2</sup>: Իսկ Հոկայդո կղզում Գոհար Գասպարյանը մտել է միակ ռուսական թեյարանը, որի տերը հայ է եղել<sup>3</sup>:

21-րդ դարի սկզբին ճապոնիայում բնակվող հայերի թիվը մոտավորապես 50-60 է: Նրանց մեծ մասը բնակվում է Տոկիոյում և շրջակայքում<sup>4</sup>: Կան արտագաղթածներ Հայաստանից, Իրանից, Միջին Արևելքի երկրներից: Մի մասը ճապոնացիների հետ ամուսնացած հայուհիներ են: 1999-ին ճապոնաբնակ 15 հայ մասնակցել են կաթողիկոսական ընտրություններին:

Քաղաքագետ, Տոկիոյի Յամանաչի Գակույին համալսարանի պրոֆեսոր Կոնստանտին Սարկիսովի անունը տասնամյակներով կապված է եղել այդ երկրի արտաքին և ներքին քաղաքականությանը: Սարկիսովը ծնվել է Երևանում, ավարտել է Սանկտ Պետերբուրգի համալսարանի ճապոնական բանասիրության բաժինը: Երկար տարիներ եղել է Ռուսաստանի գիտությունների ակադեմիային կից Եվգենի Պրիմակովի ղեկավարած արևելագիտության ինստիտուտի փոխնախագահը: Ռուսաստանի ճապոնա-

<sup>1</sup> Արարատյան դաշտավայրից Ֆուժի լեռան ստորոտը, «Սովետական արվեստ», 1959, թ. 2, էջ 59:  
<sup>2</sup> Տե՛ս Ն. Հովհաննիսյան, Մ. Ամիրխանյան, Ռ. Կարապետյան, Հայաստան-ճապոնիա: Քաղաքական, տնտեսական, մշակութային և գիտական հարաբերություններ, Եր., 2005, էջ 118:  
<sup>3</sup> Պատասխանում է Գոհար Գասպարյանը..., «Ոզնի», Եր., 1984, թիվ 5:  
<sup>4</sup> Իրականությանը չի համապատասխանում Ռիչարդ Հովհաննիսյանի նշումը, որ «Այսօր հայեր չկան Չինաստանում, չնայած մոտ հազար հայ ցրված են ճապոնիայում, Հոնկոնգում և Ֆիլիպիններում՝ առանց կազմակերպված համայնքային կյանքի» (Richard G. Hovhannisian, The Armenian People From Ancient to Modern times, Volume II: ... 1997, p. 430):

գետների ընկերակցության առաջին նախագահն է: Հեղինակ է ճապոներեն և անգլերեն բազմաթիվ գրքերի, հոդվածների, գիտական աշխատությունների: Աշխարհի հեղինակավոր ամբիոններից հանդես է գալիս ռուս-ճապոնական քաղաքական ներկա խնդիրների վերաբերյալ դասախոսություններով: Բազմիցս անդրադարձել է Պորտսմութի պայմանագրին և Ռուսաստանի ու ճապոնիայի միջև խաղաղ համաձայնության խնդրին: Ի դեպ, իր դասախոսությունների ընթացքում ուսանողներին երբեմն պատմում է նաև Հայաստանի և հայերի մասին<sup>1</sup>:

1990-ից ճապոնիայում է աշխատում ծնունդով երևանցի, մաթեմատիկոս, պրոֆեսոր Հրանտ Պողոսյանը: Նա խորհրդային առաջին գիտնականն է, որի հետ ճապոնական բուհը ցմահ պայմանագիր է կնքել: Պողոսյանը դասախոսում է ճապոնիայի հինգ լավագույն բարձրագույն ուսումնական հաստատություններից մեկում՝ Տոկիոյի միջազգային քրիստոնեական համալսարանի մաթեմատիկայի և ինֆորմատիկայի բաժնում: Նա նաև ղեկավարում է Տոկիոյի հայ-ճապոնական ընկերակցությունը: Տարիներ շարունակ Հրանտ Պողոսյանը օգնել է Հայաստանի և ճապոնիայի միջև տնտեսական և մշակութային կապերի հաստատմանը<sup>2</sup>:

Երևանցի Արամ, Արմեն և Լևոն Սարգսյան եղբայրները 10 տարեկանից ինքնուրույն սովորել են ճապոներեն և չինարեն, 1988-ի երկրաշարժից հետո որպես թարգմանիչ աշխատել Հայաստան օգնության եկած ճապոնացիների և չինացիների հետ, կատարել թարգմանություններ և կազմել հայերեն-ճապոներեն ու ճապոներեն-հայերեն փոքրիկ բառարան (մնացել է անտիպ): Սարգսյան եղբայրներն այժմ բնակվում են ճապոնիայում և Չինաստանում:

<sup>1</sup> Տե՛ս Մ. Գասպարյան, Տոկիոյի համալսարանի հայ պրոֆեսոր Կոնստանտին Սարկիսովի՝ հետերկրաշարժյան ճապոնիայի մասին, «Ազգ», 16. 04. 2011:  
<sup>2</sup> Նրա մասին մանրամասն տե՛ս Ա. Григорян, Сэнсэй, "Ереван". 2010, ноябрь, էջ 75-79, Mami Maruko, Envoy acts as bridge between Japan, Armenia, "The Japan Times", 20. 11. 2012:

Կոչիի համալսարանում աշխատում է գիտությունների թեկնածու Լիլիթ Վարդանյանը, որն ատենախոսություն է պաշտպանել ՀՀ ԳԱԱ հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտում:

Երևանցի Աստղիկ Հովհաննիսյանն ուսանել է Տոկիոյի համալսարանում, այնուհետև՝ Հիտոցուրաշիի համալսարանի ասպիրանտուրայում: Ուսումնասիրությունների ոլորտն ընդգրկում է ճապոնական գրի բարեփոխումները, արդիականացումը և արդիականությունը ճապոնիայի պատմության մեջ, ճապոնական ազգային լեզվի, գրական համակարգերի, ազգային ինքնության և ազգայնականության ձևավորումը:

Հետաքրքրական է, որ որոշ հայերի ճապոնիա է բերել տեղական կրոնափիլիսոփայական ուսմունքների մեջ խորանալու ձգտումը: Ծնունդով եգիպտահայ Վազգեն Էքսերճյանը յոզայի և անգլերենի ուսուցիչ է աշխատում Օսակայում: Ծնունդով բեյրութցի ամերիկահայ Վարանդ Արսլանյանը (ծն. 1979) ԱՄՆ-ում կրոնագիտական կրթություն ստանալուց հետո հաստատվել է ճապոնիայում և ուսանելով ձեն բուդդիզմ՝ դարձել է Շոգենջի վանքի վանական<sup>1</sup>:

ճապոնիան դեպ իրեն է ձգել նաև հայազգի պարողներին: 2005-2011 թթ. Տոկիոյի երկու բալետային դպրոցում դասավանդել է ծնունդով երևանցի պարուհի և պարուսույց ժաննա Մուրադյանը<sup>2</sup>: 2008 թվականից Տոկիոյի «Disney Sea» թատրոնում հանդես է գալիս մոսկվացի պարուհի Անաստասյա Շիլաջյանը: Բալետի պարող ծնունդով երևանցի, Ազատ Ղարիբյանը, որ տարիներ շարունակ աշխատել է Գերմանիայում, ամուսնանալով ճապոնացի պարուհու հետ (Նահո Ջո Ղարիբյան) և հաստատվելով ճապոնիայում, 2011-ի հոկտեմբերին հիմնել է «Ղարիբյան բալետի ակադեմիան» Ֆուկուոկա քաղաքում:

<sup>1</sup> Տե՛ս Tamar Kevonian, In search of Zen, Yerevan, July-August, 2011, p. 42-45.

<sup>2</sup> Արա հետ մեր հարցազրույցը տե՛ս Ա. Բախչինյան, Սենսեյ Ջաննա. «Երազում եմ այն օրվա մասին, երբ մեր երիտասարդները չեն հեռանա Հայաստանից», «Հայաստանի գրուցակից», եր., 14. 01. 2011:

Երգահան Սարկ Արամյանը բնակվել է մի շարք երկրներում՝ Սաուդյան Արաբիայում, ճապոնիայում, Ֆիլիպիններում և Անգլիայում՝ մինչև Լոս Անջելեսում հաստատվելը: Ժամանակակից ճապոնական պոպ երաժշտության աստղերի մեջ կա նաև հայ-ճապոնական ծագումով մի երգչուհի՝ Ստեֆանին: Նա ծնվել է 1987-ին ԱՄՆ-ում հայորդի Ջեյմս Թոփայլանի և ճապոնուհի Կեյկոյի ընտանիքում: 14 տարեկանից բնակվում է ճապոնիայում: 2007 թվականին Ստեֆանին մրցանակ է շահել ճապոնական երգի 40-րդ մրցանակաբաշխությունում «Լավագույն նոր երգիչ» անվանակարգում: 2011-ի տվյալով՝ նա թողարկել է երկու ալբոմ՝ «Ստեֆանի» և «Իմ ձայն գույները»: Հանդես է եկել նաև որպես դերասանուհի, նկարահանվել «Հպարտություն» և «Ամեն ինչ լավ է» ֆիլմերում<sup>1</sup>:

Տոկիոյում գործող ճապոնա-հայկական բարեկամության ընկերության նախագահ Հիդեհարու Նակաձիմայի կինը՝ Կավասակիի բնակչուհի, ծնունդով երևանցի Սելանյա Բաղդասարյան-Նակաձիման, երևանի պետական շրջանավարտ է, դասեր է տալիս հայերեն սովորել ցանկացող ճապոնացիներին: Տարեկան 7-8 անգամ լույս է ընծայում «Արարատ» և «Արաքս» լրատվական ճապոներեն թերթիկները Հայաստանով հետաքրքրվող ճապոնացիների համար: Այս ընկերության փոխնախագահը 2006 թվականի տվյալով Մասանորի Կոյաման է, խորհրդականներից են Կիտասատո, Հոհոկու և Աիչի Սանգյո համալսարանների պրոֆեսորներ Հարուո Օգուրան, Սեիչի Կիտագավան և Հիրայոշի Սեգավան<sup>2</sup>:

Մի առիթով վերոհիշյալ Սելանյա Բաղդասարյանը վկայել է, որ «ճապոնիայում մեր հայրենակիցներ քիչ են, հիմնականում կանայք են, որ ամուսնացել են ճապոնացիների հետ: Հենց նրանք էլ ձգտում են պահպանել միաժամանակ թե՛ ճապոնական և թե՛

<sup>1</sup> Տե՛ս Khachatur Melekyan, The Armenian Princess of J-Pop, "Yerevan", July-August, 2011, p. 34-39.

<sup>2</sup> Հ. Ծ., «Հայաստանյան ֆիլմերի ընտրանի» ճապոնիայում, «Ազգ», 24. 06. 2006:

հայկական ավանդույթները: ճապոնա-հայկական ընտանիքների մեծ մասը շատ երիտասարդ է... Նոր Տարուն և Սուրբ Ծնունդին հայուհիներն անպայման պատրաստուն են տղմա, փախլավա, տարի: Մենք անպայման բաժակ ենք բարձրացնում, որ եկող տարին բարի լինի, և երգում ենք մեր երգերը, որոնք մեզ հիշեցնում են այնքան հեռավոր դարձած մեր հայրենիքը»<sup>1</sup>:

ճապոնաբնակ հայերը ողջ ճապոնացի ժողովրդի հետ կիսել են 2011 թվականի մարտի 11-ի սարսափելի երկրաշարժը և ցունամին: ճապոնիայում Հայաստանի դեսպան Արսեն Առաքելյանը Հայաստանի արտաքին գործերի նախարարությանը տեղեկացրել է, որ ճապոնիայում գտնվող 30 հայաստանցիները չեն վնասվել:

Վերջում նկատենք, որ թե Չինաստանի, թե ճապոնիայի հայերի համար յուրատեսակ համախմբող կենտրոններ են Պեկինում և Տոկիոյում գործող ՀՀ դեսպանատները, որտեղ հայրենակիցները հավաքվում են պետական և ազգային տոների ժամանակ և այլևայլ առիթներով:

Ամփոփելով նշենք, որ բարձր զարգացում և ողջ աշխարհի համար հատուկ տարաշխարհիկ գրավչություն ունեցող հեռավորարևելյան այս պետությունները՝ Չինաստանը և ճապոնիան, վերջին տասնամյակներում տարբեր երկրների հայրողիների հյուրընկալելով հանդերձ, չունեն մոտ ապագայում հայազաղութներ ունենալու հեռանկարը՝ աշխարհագրական հեռավորության, լեզվամշակութային խիստ տարբերությունների, այդ երկրների՝ ներգաղթողների հանդեպ որդեգրած հատուկ քաղաքականության և մի շարք այլ պատճառներով:

**Artsvi Bakhchinyan – Armenians in the People's Republic of China and Japan at the Turn of the Twenty-First Century** – The Armenian people have maintained historical and cultural relations with China since ancient times and with Japan since the end of the nineteenth century.

Armenians in China number about 200. They live in Hong Kong, Beijing, Shenzhen, and Shanghai, most of them on a temporary basis. They hail mainly from Armenia, as well as from the Middle East, Europe and the U.S. After Armenia's independence in 1991, an inter-governmental agreement between Armenia and China allowed Armenian young people opportunities to study in Chinese universities on scholarships granted by the Chinese state. Many of them remained in China, working in business, science, and education. Some of them are involved in arts: Liana Yedigaryan has performed as an actress in Chinese TV films and Ruben Gini has shot documentaries. Armenians in China are making efforts to organize themselves as a community; they have already established their Internet webpage, [www.chinahay.com](http://www.chinahay.com)

Currently there are fifty to sixty Armenians in Japan. Most of them are originally from Armenia and live in Tokyo and surroundings, where they are involved in science and culture.

Armenian life in current China and Japan is a life story of individuals. Although there are not organized communities, the embassies of the Republic of Armenia in Beijing and Tokyo function as a sort of unifying centers for Armenians living in those countries.

<sup>1</sup> От моря до моря, "Ереван", 2006, январь-февраль, с. 36.



**ԵՐԿՈՒ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ԶԱՂԱՔԱԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1985 թվականին Մ. Գորբաչովը, իշխանության գալով, որոշեց նախաձեռնել երկրի «վերակառուցման» քաղաքականությունը, որով պետք է բարեփոխման ենթարկվեր խորհրդային Միության ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև հասարակական-քաղաքական կյանքը: «Վերակառուցման» քաղաքականության պայմաններում էլ 1988 թվականին վերսկսվեց Արցախյան շարժման նոր փուլը: Խորհրդային Միությունում տեղի ունեցող դեմոկրատական փոփոխությունները, ինչպես նաև Արցախը խորհրդային Հայաստանին վերամիավորելու համար սկսված համազգային պայքարը, 1988 թվականի դեկտեմբերյան ավերիչ երկրաշարժի հետևանքները վերացնելու համահայկական ջիգերը հիմք դրեցին Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների ակտիվացմանը և սերտացմանը: Փաստորեն, 1988 թվականը վստահաբար կարելի է համարել Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների արդի շրջանի սկիզբը: Եթե մինչ այդ Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները սահմանափակվում էին միայն մշակութային շփումներով, ապա 1988 թվականից հետո հայկական սփյուռքը Հայաստանի քաղաքական կյանքին մասնակցելու հայտ ներկայացրեց հատկապես համազգային բնույթի խնդիրների մասով: 1988 թվականից սկսած՝ հայկական սփյուռքը ոչ միայն իր ներուժը շարունակում էր օգտագործել Ցեղասպանության միջազգային ճանաչման հասնելուն, այլև ակտիվ աշխատանքներ էր տանում Արցախյան խնդրի արդարացի լուծման համար:

Այդ ժամանակաշրջանում էր, որ սփյուռքյան ավանդական կուսակցություններից Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը և Ռամկավար ազատական կուսակցությունը առաջին անգամ փորձ արեցին, շրջանցելով Մոսկվան, կապ հաստատել Հայաստանի կոմունիստական կուսակցության հետ: Սփյուռքյան քաղաքական այս կառույցները նամակներով դիմեցին խորհրդային Հայաստանի ղեկավարությանը՝ ի դեմս ՀԿԿ առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանի, և առաջարկեցին, ինչպես հնչակյանների նամակում է նշվում, «...կապերը Մայր Հայրենիքին հետ աւելի սերտացնել եւ զանոնք հասցնել աւելի բարձր մակարդակի...»<sup>1</sup> և ունենալ որոշակի մասնակցություն համազգային նշանակության հարցերի որոշման մեջ, գոնե, ռամկավարների բնորոշմամբ, «խորհրդակցական իրաւունքով»<sup>2</sup>: Նման դիմումը աննախադեպ էր, քանզի մինչ այդ արտասահմանյան բոլոր կուսակցությունների հետ խորհրդային Միության անունից հարաբերություններն իրականացնում էր խորհրդային Միության կոմունիստական կուսակցությունը իր համապատասխան կառույցներով: Իսկ հայկական սփյուռքի հետ խորհրդային Հայաստանի հարաբերություններն «իրագործվում էին Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի խողովակով»: Փաստորեն, մինչև 1988 թվականը խորհրդային Հայաստանը Սփյուռքի հետ ուղղակի հարաբերվելու իրավունք չուներ, հատկապես եթե այդ հարաբերությունները վերաբերում էին քաղաքական հարցերին:

ՀԿԿ կենտկոմ ռամկավարների կողմից գրությունն ուղարկվել է 1988 թվականի դեկտեմբերի 5-ին, իսկ հնչակյանների կողմից՝ 1989 թվականի մայիսի 1-ին: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ եթե Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության գրությունը կուսակցության կենտրոնական վարչության անունից է, ապա ռամկավարներինը՝ այդ կուսակցության Ամերիկյան արևմտյան շրջանային վարչության կողմից է, ինչը, բնականա-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 33, թ. 258:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 33, թ. 237:

բար, խոսում է Ռամկավար-ազատական կուսակցության տվյալ ժամանակշրջանում ոչ այնքան միասնական լինելու և առանձին կառույցների ինքնուրույն գործելու մասին: Այդ հանգամանքը աննկատ չի մնացել Խորհրդային Հայաստանում, և Կ. Դալլաբյանը ՀԿԿ կենտկոմ ուղղած նշված նամակների վերաբերյալ զեկուցագրի մեջ կուսակցական ղեկավարության ուշադրությունը հրավիրում է այդ հարցին՝ նշելով. «ՌԱԿ-ը ներկայումս տարանջատ կազմակերպությունների մի համախումբ է, որոնցից յուրաքանչյուրը յուրովի է հասկանում և մեկնաբանում այդ կուսակցության ծրագիրը, ստրատեգիան և տակտիկան: Փաստորեն գոյություն ունի մի քանի ՌԱԿ՝ Մերձավոր Արևելյան, Եվրոպական, Հյուսիսամերիկյան և Հարավամերիկյան»<sup>1</sup>:

ՀԿԿ կենտկոմ հայկական ավանդական երկու կուսակցությունների նամակներում արված առաջարկների մասին համապատասխան կարծիք ստանալու համար կենտկոմի գաղափարախոսական բաժինը դրանք ուղարկեց մի շարք հաստատությունների՝ Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտե, Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտ և կոմունիստական կուսակցության պատմության մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղ: Նված կառույցներն իրենց եզրակացություններում թեև որոշ վերապահումներով, այնուամենայնիվ դրական են գնահատում Սփյուռքի քաղաքական կուսակցությունների հետ հարաբերություններ հաստատելու գաղափարը, նաև դրական կարծիք հայտնում ռամկավարների դիմումում արժարված մի շարք առաջարկությունները կյանքի կոչելու, մասնավորապես ռամկավար գործիչների աշխատությունների հրատարակման վերաբերյալ հարցերին<sup>2</sup>: Սակայն պետք է նշել, որ Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի և Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի կողմից ներկայացված եզրակացություններն ավելի զուսպ էին և անգամ խուսափողական՝ ի տարբերություն կոմունիստական կու-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 33, ք. 247:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 33, ք. 268:

սակցության պատմության Սարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի ներկայացրածի: Օրինակ, եթե Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն Հ. Ավետիսյանը կուսակցական ղեկավարությանը առաջարկում էր «...կենտկոմում ստեղծել սփյուռքահայ քաղաքական կուսակցությունների և հասարակական հոսանքների ուսումնասիրության հանձնաժողով, որի վրա դնել տեսակետների մշակաման և ՀԿԿ կենտկոմի ու կառավարության համար երաշխավորությունների և առաջարկությունների նախապատրաստման հարցերը»<sup>1</sup>, ապա Սարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրեն Հ. Սիմոնյանը ուղղակի նշում էր, որ «Վաղուց հասունացել է ոչ միայն ՌԱԿ-ի, այլև սփյուռքի մյուս քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների հետ սերտ հարաբերություններ հաստատելու հարցը: Պետք է վճռապես հրաժարվել անցյալի ստերեոտիպերից, սփյուռքահայությանը դիտել որպես հայ ժողովրդի միասնական օրգանիզմի անբաժան մասը»<sup>2</sup>:

1988 թվականին հաջորդած տարիներին սփյուռքային քաղաքական կազմակերպություններն աստիճանաբար սերտացրեցին իրենց հարաբերությունները հայրենիքի հետ՝ ակտիվ մասնակցություն ունենալով արցախյան շարժմանը, երկրաշարժի հետևանքների վերացմանը, իսկ երկրի անկախացումից հետո՝ հայրենիքի վերաշինման գործին: Սոցիալ-դեմոկրատական հնչակայան և Ռամկավար ազատական կուսակցությունները հայրենիքում վերջնականապես հաստատվեցին 1991 թվականին և պաշտոնական գրանցում ստանալուց հետո փորձեցին ակտիվ մասնակցություն ունենալ նաև արդեն անկախ Հայաստանի ներքաղաքական կյանքին<sup>3</sup>:

Ստորև հրապարակման ներկայացվող երկու փաստաթղթերը Հայրենիք-Սփյուռք արդի շրջանի սկզբանավորման և Հայրենիք-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 33, ք. 268:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 33, ք. 269:

<sup>3</sup> Զ. Պետրոսյան, Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1988-2001 թթ., Երևան, 2011 էջ 14-17:

Սփյուռք քաղաքական հարաբերությունների ձևավորման ժամանակաշրջանի պատմության համար խիստ կարևոր վկայություններ են, ուստի դրանց հրապարակումը կնպաստի Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների պատմության լուսաբանմանը:

Փաստաղթերը տպագրվում են առաջին անգամ: Կատարել ենք որոշ կետադրական, ուղղագրական շտկումներ:

N 1

ՈԱՄԿԱՎԱՐ ԱԶՍԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ  
ARMENIAN DEMOCRATIC LIBERAL ORGANIZATION

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՍՏԵԱՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ  
WESTERN DISTRICT COMMITTEE OF AMERICA  
1901 N. ALLEN AVE., ALTADENA CA 91001

Դեկտեմբեր 5, 1988, Լոս Անճելըս  
Մեծայարգ Սուրեն Յարութիւնեան<sup>1</sup>

Առաջին քարտուղար  
Հայաստանի Համայնավար Կուսակցութեան Կենտկոմի

Վարդգէս Համազասպի Պետրոսեանի<sup>2</sup> օգտաշատ այցելութիւնը Լոս Անճելըս առիթ ստեղծեց կրկին անգամ շփում հաստատելու Խորհրդային Հայաստանի ամէնէն վաւերական մտաւորականներէն մէկուն հետ, եւ բազմաթիւ պաշտօնական եւ անպաշտօն հանդիպումներու ընթացքին քննարկելու եւ վերլուծելու հարցեր, որոնք սերտօրէն կ'աղերսուին ընդհանրապէս սփյուռքահայ բայց մասնաւորաբար լոս անճելըսահայ հասարակական կեանքին եւ Հայրենիք-Սփյուռք իսկական յարաբերութիւններուն:

Արծարծուած, քննարկուած եւ վերլուծուած հարցերու եզրայանգումները առաւել եւս շեշտեցին ձեզի անմիջականօրէն կապ հաստատելու անհրաժեշտութիւնը, մանաւանդ ստանալով Վարդ-

գէս Պետրոսեանի հաւաստիացումը որ այսօրինակ գրութիւն մը պիտի արժանանար ձեր բարիացական ուշադրութեան:

Հարկ է թերեւս յիշել որ Ռամկավար Ազատական Կուսակցութեան ղեկավար շրջանակները միշտ ալ հաւատք եւ հիացում ունեցած են Վարդգէս Պետրոսեան գրողին եւ մտաւորականին հանդէպ, բայց մանաւանդ վստահութիւն՝ իր վարչական կարողութիւններուն եւ իմացական պարկեշտութեան հանդէպ, միաժամանակ բարձրօրէն գնահատելով Սփյուռքը իրապաշտ կերպով ճանչնալու իր ճիգերն ու նախանձախնդրութիւնը: Պատահական չէր հետեւաբար, որ կուսակցութեան Միացեալ Նահանգներու Արեւմտեան Շրջանի ղեկավարութիւնը իրագործեց Պետրոսեանի այցելութիւնը դէպի Մ. Նահանգներ, զինք հրաւիրելու ցուցմունք տալով կուսակցութեանս մշակութային արտայայտութիւնը հանդիսացող Թէքեան Մշակութային Միութեան:

Հինգ շաբաթներ տեւող սպառնիչ, բայց հոգեկան լիցքաւորում պարգեւող ամենօրեայ իր հանդիպումները եւ տեսակցութիւնները լոս անճելըսահայ գաղութի կուսակցական, միութենական, կրթական եւ մշակութային բոլոր միութիւններու ղեկավարութիւններուն հետ եւ անոնց ընթացքին իր արտայայտած գերազանցապէս հաւասարակշռուած գաղափարները, զգացումները, տեսակետները եւ մտորումները առաւել եւս համոզեցին մեզ թէ հիանալի որոշումով մը Վարդգէս Պետրոսեանին վստահուած է Հայաստանի Մշակոյթի Հայկական Ֆոնտը գլխաւորելու շատ պատասխանատու պաշտօնը:

Խորհրդային Հայաստանի պատմութեան անկիւնադարձային այս օրերուն, մեզ խորապէս կ'ոգելորէ եւ կը գօտեպնդէ այն իրողութիւնը որ ձեր ղեկավարութիւնը կը վայելէ հայրենի պետութիւնը: Այս տարվան Մայիս 23-ին Հայաստանի համայնավար կուսակցութեան Կենտկոմի կատարած բախտորոշ եւ խոհեմ ընտրութենէն ետք<sup>3</sup>, Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը հպարտութեամբ ողջունեց ձեր ղեկավարութեան օրով՝ Հունիս 15-ին, Հայաստանի Գերագոյն Սովետին առած պատմական որոշումը՝

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Խորհրդային Հայաստանին վերակցումը պահանջող: Կուսակցությունը մեծ զոհունակությամբ հետևելեցավ ձեր Յուլիս 18-ին գլխավորած պատուիրակության խիզախ, ազգաշունչ և քաղաքական հասունությամբ յագեցած ելույթներուն՝ Խորհրդային Միության Գերագոյն Սովետի Նախագահության Նիստի ընթացքին<sup>4</sup> եւ մանաւանդ ոգեւորությամբ ողջունեց եւ սփիւռքահայութեան փոխանցեց իմաստը ձեռք բերուած յաջողութեան՝ Լեռնային Ղարաբաղի հարցով նախապէս (Մարտ 23) առնուած որոշումը<sup>5</sup>, որպէս վերջնական եւ վախճանական ընդունիլ չտալու:

Ձեր նախաձեռնությամբ, Նոյեմբեր 22-ին, օրինականացումը Ապրիլ 24-ը պաշտօնական Սուգի Օր յայտարարելու՝ Խորհրդային Հայաստանէն ներս<sup>6</sup>, ոչ միայն կը նկատեն բարոյական սփոփանք մը, այլ՝ քաղաքական հեռահաս նշանակութիւն ունեցող որոշում մը եւ իրատեսութեն կ'ակնկալենք, որ ան դառնայ նախաքայլը Հայկական Ցեղասպանութեան պաշտօնական ճանաչումին՝ Խորհրդային Միության Գերագոյն Սովետի Նախագահութեան կողմէ:

Մեկնելով այն իրողութենէն որ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը Խորհրդային Հայաստանի գոյառումէն ի վեր անվերապա հօրէն կը դաւանէ թէ Հայրենիքը միակ խարիսխն է համահայկական մեր բոլոր քաղաքական հեռահաս ծրագիրներու իրագործումին, մեկնելով այն իրողութենէն որ Կուսակցութիւնս աներեր պահած է իր այդ հաւատքը թէ՛ Խորհրդային Հայաստանի եւ թէ՛ Սփիւռքի քաղաքականօրէն ալելոծ եւ տազնապալի տարիներուն եւ մեկնելով պատմական այն փաստէն որ Ռամկավար Ազատական Կուսակցութեան տասնամեակներու վրայ տարածուած հայրենամուէր գործունէութեան անմիջական արդիւնքն է սփիւռքահաւութեան լայն զանգուածներու հայրենասիրութեամբ տոգորուած մնալը, հայրենիքի գաղափարով ապրիլն ու տելելը, մասնաւորաբար այնպիսի ժամանակներու, երբ հայրենասիրութեան արտայայտութիւնը վտանգ կը սպառնար Կուսակցութեան ղեկավարութեան, ներկայիս ստեղծուած բարենպաստ պայմանները

իրաւունք կու տան մեզի ակնկալելու որ առաւել եւս զործնական դրսեւորում ստանան մեր կապերն ու յարաբերութիւնները Խորհրդային Հայաստանի կառավարութեան հետ:

1. Հրապարակայնութեան եւ ազատականութեան ստեղծած թարմ մթնոլորտին մէջ վստահաբար պիտի զարգանան սփիւռքահայութեան վերաբերող հին հարցերու վերատեսութիւններ եւ նոր իրավիճակներու արժեւորումներ: Առ այդ, Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը արդարօրէն կ'ակնկալէ որ Խորհրդակցական իրաւունքը չզլացուի իրեն, հնարաւորութիւններու ընձեռած առաւելագոյն մակարդակով:

2. Կուսակցութիւնս տազնապեցնող երեւոյթներէն մէկը եղած է, անցնող տասնամեակներուն սփիւքահայ պայմաններուն յարմարեցուած գործունէութիւն միայն զարգացնել ի նպաստ հայկական հողային պահանջատիրութեան: Բարեբախտաբար պատմութիւնը կու գայ հաստատելու, որ խոհեմ եւ իրապաշտ եղած են կուսակցութեանս առած որոշումները եւ ծաւալած գործունէութիւնը Սփիւռքի տարածքին. բայց հանդուրժելի չէ այլեւս որ հայկական կուսակցութիւն մը որոնէ գործունէութեան ուղիներ հայկական պետութեան քաղաքական հեռահաս ծրագիրներէն տարանջատ: Արդար է ակնկալել հետեւաբար, որ Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը, ըստ հնարաւորի, տեղեակ պահէ մեզ հողային պահանջատիրութեան հետապնդումին ի խնդիր եւ համազգային այլ մտահոգութիւններու վերաբերեալ առնուելիք որոշումներուն, կամ առնուազն, որոշումները առնուելէ անմիջապէս ետք, որպէսզի սփիւքահայ քաղաքական գործունէութիւնը լրացուցիչ մէկ օղակը հանդիսանայ Հայաստանի կառավարութեան նախաձեռնելիք համահայկական ծրագիրներու շղթային:

3. Հայ ժողովուրդի վերջին հարիւրամեակի պատմութեան ցարդ Հայաստանի մէջ որդեգրուած կարգ մը մեկնաբանութիւնները վերատեսութեան ենթարկելու մտածումը ողջունելի կը գտնենք ոչ միայն այն պատճառով, որ ճշմարտութեան վրայ հիմնուած պատմագիտութիւնն է, որ պէտք է փոխանցուի գալիք սերունդ-

ներուն, այլ որովհետև կարգ մը անհրաժեշտ սրբագրություններ էապես կը մեղմեն այն անհարկի լարուածութիւնը, որ բւերա-ցուցած է Սփյուռքահայ քաղաքական մտածողութիւնը, եւ որ երկփեղկուած վիճակի մը մատնած է Սփյուռքը:

Անվերապահ կերպով համակարծիք ենք որ ի վերջոյ հրատարակութեան պիտի արժանանան գործերը այնպիսի մտաւորականներու, որոնց կուսակցական պատկանելիութիւնը գլխաւոր խոչընդոտն էր ցարդ: Տեղին կը համարենք ձեր ուշադրութեան յանձնել, որ խանդավառ այս նոր մերձեցումը չկատարուի ի հաշիւ ռամկավար ազատական ղեկավար մտաւորականներու գործերու արժեւորումին եւ հրատարակութեան: Արդարացուցիչ պիտի չգտնէինք, որ Հայաստանի մէջ անտիպ մնային Մկրտիչ Փորթուգալեանի, Արփիար Արփիարեանի, Արմենակ Եկարեանի, Սիիրան Տամատեանի, Վահան Թէքեանի, Արտակ Դարբինեանի եւ Գերսամ Ահարոնեանի եւ ուրիշներու քաղաքական-հրապարակագրական արժէքաւոր ստեղծագործութիւնները:

4. Պատմական անհրաժեշտ ուղղումներու ծիրէն ներս կարելոր կը համարենք նաեւ արժանի եւ հրապարակային ճանաչումը Ռամկավար Ազատական Կուսակցութեան որպէս սփյուռքահայ ինքնուրոյն եւ որոշակի քաղաքական միաւոր: Պատշաճ պիտի չըլլար շարունակել խոցելի սովորութիւնը Ռ. Ա. Կուսակցութիւնը դասելու «Սփյուռքահայ առաջադիմական, բարեսիրական եւ հայրենակցական» կազմակերպութիւններու անդիմազիծ շարքին: Ի վերջոյ, հարկ է թերեւս նշել թէ Ռ. Ա. Կուսակցութիւնը կը հրատարակէ 12 պաշտօնաթերթեր, եւ իր քաղաքական գործունէութեան կողքին կը ղեկավարէ մշակութային միութիւններու, վարժարաններու, երիտասարդական կազմակերպութիւններու մեծ ցանց մը ամբողջ Սփյուռքի տարածքին:

5. Մեր համոզումն է թէ աւելի արդիւնաւետ պէտք է դառնան եւ կրնան դառնալ ՌԱ Կուսակցութեան ճիգերը, հայրենիքին եւ հայ ժողովուրդին ծառայելու, մասնաւորաբար խորհրդային Հայաստանի մէջ արտասահմանեան դրամազուլիսն ներդրումներու

առնչութեամբ եւ գիտական փորձառութեան փոխանակութեան հարցերով:

Առ այդ, կը խորհիմք որ յարմար պահն է, մեր ժողովուրդի կեանքի այս հանգրուանին, նկատի ունենալ հետեւեալ թելադրութիւնները.

ա. Ռամկավար ազատական մամուլը շուտով իրաւունք ստանայ մնայուն թղթակից պահելու խորհրդային Հայաստանի մէջ արձանագրուած զարգացումներու առիթով սփյուռքահայութեան ունեցած մտահոգութիւններու առնչութեամբ:

բ. Սփյուռքահայութիւնը եւ հայրենի ղեկավարութիւնը յուզող հարցերու շուրջ յաճախակի խորհրդակցութիւններու դրութիւն մը ստեղծել Ռամկավար Ազատական Կուսակցութեան ղեկավարութեան հետ: Շօշափելի արդիւնաւետութեան հասնելու ակնկալութեամբ, մասնաւորաբար ձեր լայնախոհ ղեկավարութեան ապաւինելով, փափաքելի պիտի ըլլար, որ այդ խորհրդակցութիւնները լաւագոյնս ծառայէին մեր համազգային խնդիրներու լուծումին:

գ. Փափաքելի պիտի ըլլար սփյուռքահայ մամուլը, բայց մասնաւորաբար ռամկավար ազատական թերթերը լայն չափով տրամադրելի դարձնել հայրենի մտաւորականութեան, եւ ըստ կարելուոյն ապահովել անոնց վաճառքը խորհրդային Հայաստանի մէջ:

դ. Հայրենիք-Սփյուռք գործնական յարաբերութիւններու ամրապնդումի նախանձախնդրութեան ծիրէն ներս նկատի պէտք է ունենալ նաեւ, որ Սփյուռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէն հազուադէպօրէն տարբերիլ սկսած է հիւրեր ընդունելու եւ առաքելու պարտականութիւնը ստանձնած մարմինէ մը: Կապի Կոմիտէի... աշխատանքի ձեւի վերակազմակերպումը անհրաժեշտ սկսած է դառնալ այլեւս: Մտահոգիչ դառնալ սկսած են պարագայական, քմահաճ եւ շահադիտական մղումով կատարուած գործուղումները Հայաստանէն դեպի Լոս Անճելըս: Մեզի համար լուրջ մտավախութիւն է անծրագիր գործուղումներու յառաջացնելիք հիասթափութիւնը մեր գաղութէն ներս, հետեւա-

բար պիտի խնդրենք որ ձեր ազնիւ միջամտութեամբ սրբագրուէր այս անփութութիւնը: Նորահաստատ Մշակոյթի Հայկական Ֆոնտին եւ Կապի Կոմիտէին առաքելութիւնները ամենաբարենպաստ արդիւնաւորուով պսակելը, վստահ ենք, առաջնահերթ նախանձախնդրութիւն է հայրենի կառավարութեան:

Անտեղի չենք համարեր ոչեւ թե այս մտահոգութիւնները կը բաժնենք ձեզի հետ որովհետեւ համոզուած ենք, որ ոչ միայն Հայաստանի ժողովուրդին ազգային, տնտեսական, ընկերային եւ կենցաղային հարցերը լուծելու ծանր պատասխանատուութիւնը ստանձնած եք, այլև հայ ժողովուրդի կարելոր մէկ զանգուածին՝ սփյուռքահայութեան, ազգային մտահոգութիւնները եւս բառնալու նախանձախնդրութիւնը առաջնահերթ է ձեզի համար: Գոհունակութեամբ կ'ուզենք հաստատել որ Արցախի տագնապի հոգեխռով այս օրերուն, սփյուռքահայ քաղաքական գրեթէ բոլոր հոսանքները եւ, մասնաւորաբար Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը, անվերապահօրէն թիկունք կը կանգնին ձեր գլխաւորած հայրենի ղեկավարութեան, հաւատալով որ ազգամիջեան այս տագնապը բարւոք լուծման մը կը յանգի, միաժամանակ երաշխաւորելով պատմական արդարութեան յաղթանակը:

Անկեղծ յարգանքներով եւ յաջողութեան բարենաղթութիւններով

ՈԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԵՒ ԳԱՆԱՏԱՅԻ  
ԱՐԵՒՍՏԵԱՆ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ

Ֆոնդ 1, ցուցակ 87, գործ 33, թթ. 236-238, բնագիր, մեքենագիր

N 2

ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
S. D. HUCHAKIAN PARTY  
ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ  
CENTRAL COMMITTEE

1 Սայիս, 1989

Պէյրութ

Յարգելի

ընկ. Սուրէն Յարութիւնեան

Խ. Հայաստանի Կոմունիստ

Կուսակցութեան Ա. Քարտուղար

Երեւան

Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութիւնը, լիազօրուած կուսակցութեան ԺԴ. համագումարէն, եւ փոխադարձ կապերու սերտացման փափաքով, կ'ուզէ ունենալ պաշտօնական հանդիպում մը Խ. Հայաստանի Կոմունիստ Կուսակցութեան Կենդկոմին հետ հետեւեալ օրակարգով.

Ա. - Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան փոխյարաբերութիւնը Խ. Հայաստանի եւ այդ գծով Խ. Միութեան Կոմկուսի եւ կառավարութեանց հետ:

Բ. - Հայրենիք – Սփիւռք կապերու ներկայ վիճակը եւ մեր ժողովուրդի համազգային խնդիրները:

Գ. - Համազօրծակցութիւն եւ աշխատանքի ներդաշնակում ընդհանուր նպատակներու շուրջ:

Յայտնենք թէ այս նպատակով ունեցած ենք յատուկ հանդիպում Լիբանանի մօտ Խ. Միութեան դեսպան Վ. Քոլոթշայի հետ, պարզած անոր մեր ցանկութիւնն ու ակնկալութիւնները եւ յանձնած իրեն յուշագիր մը, որուն պատճէնը կը յղենք ձեզի:

Յուսալով, որ մեր առաջարկութիւնը դրական պատասխան կը գտնէ ձեր մօտ, մեր կողմէ նպատակայարմար կը սեպենք որ հանդիպումը տեղի ունենայ Երեւանի մէջ, որքան հնարաւոր է շուտ:

Մեր պատուիրակութիւնը պիտի բաղկանայ՝ Ընկ. Ժիրայր Նայիրի /Թօսունեան/, Պէպօ Սիմոնեան /Պետրոս Գալայճեան/, Վահրիճ Եւրեճեան, Աւետիս Տէմիրճեան եւ Տիրան Ակինեան:

Սպասելով ձեր դրական ընդառաջումին՝ ընդունեցէք մեր ընկերական ջերմ ողջոյններն ու յաջողութեան մաղթանքները:

ի դիմաց՝

Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան  
Կեդրոնական վարչութիւն

Ատենադպիր  
Ատենապետ

Պէպօ Սիմոնեան  
Ժիրայր Նայիրի

Նօթեր  
Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան  
Պատմական Անցեալի, ներկայ Գոյավիճակի  
եւ Ապագայի Առաջադրանքներու Շուրջ

Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւնը հիմնուած է շուրջ հարիւրամեակ մը առաջ, 1887-ին: Ան եղած է հայ ժողովուրդի յեղափոխական առաջին կուսակցութիւնը, որ Մարքսիզմն ու Գիտական Սոցիալիզմը իր ազգային եւ ընկերային գաղափարախօսութեան հիմք դաւանած է, դառնալով այդ գաղափարներու առաջին տարածիչն ու կենսագործողը հայ իրականութեան եւ Փոքր Ասիոյ մէջ: Կապ պահած է Եւրոպայի եւ յատկապէս Ռուս յեղափոխա-

կան եւ Սոցեալ-Դեմոկրատական հոսանքներու եւ անոնց առաջնորդներուն հետ ինչպէս՝ Գեղցեճի, Պլեխանովի ու Լենինի հետ, մասնակցելով Բ. եւ Գ. Միջազգայնականներուն, որոնց արխիւներուն մէջ, Ս.Դ.Հնչակեան կուսակցութիւնը կը նկատուի որպէս «Մարքսիզմի հնագոյն ջոկատներէն մէկը»:

Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան հիմնական նպատակը եղած է իրականացնել հայութեան եւ Հայաստանի ազգային ազատագրութիւնը թրքական (սուլթանական) եւ Ռուսական (ցարական) լուծէ, եւ իր ազգային ու հողային միութիւնը վերագտած Հայաստանի մէջ հիմնել ընկերվարական պետութիւն:

Կուսակցութիւնը իր յեղափոխական սթրատեժին հիմնած է դասակարգայնութեան, ժողովուրդներու բախտակցութեան, ազգային ինքնորոշումի, ցեղային, կրօնական եւ մշակութային ինքնորոշութեանց հանդէպ հանդուրժողութիւն ցուցաբերելու եւ փոխադարձ յարգանքի վրայ, առաջնորդուած ինտերնասիոնալիզմի ոգիով, հայ ժողովուրդի ազատագրութիւնը չ'անջատելով լծակից ուրիշ ժողովուրդներու պայքարէն, իր ինչպէս եւ բախտակից ժողովուրդներու ազատագրութեան երաշխիք ընդունելով համաժողովրդական պայքարը ընդդէմ հասարակաց թշնամիին:

Ս.Դ. Հնչակեան կուսակցութիւնը հայ ժողովուրդի ազատագրութիւնը սերտօրէն կապած է Ռուս յեղափոխական եւ յատկապէս Սոցիալ-Դեմոկրատական շարժումի ճակատագրին: Կովկասի մէջ, սերտ գործակցութիւն ստեղծած է Ռուս եւ այլ յեղափոխական ուժերու հետ, ընդդէմ ցարական եւ պուրժուական կարգերուն, իր պայքարը հիմնելով դասակարգայնութեան վրայ: Իսկ Թուրքիայէ ներս, գտնուելով հասարակական ուրիշ պայմաններու մէջ, շարժումին անմիջական նպատակ եղած է հայ ժողովուրդի փրկութիւնը թրքական լուծէ, եւ իր պայքարը հիմնած է ազգային ազատագրութեան վրայ, ջանալով ստեղծել միութիւն ոչ միայն հայութեան ներս, այլեւ ազատագրական ընդհ. պայքարի մէջ, աշխատելով ներգրաւել թրքական (Սուլթանական եւ Իթթի-

հատական) բռնատիրութեան ենթակայ բոլոր ազգութիւնները, թուրք շահագործող բանուորա-գիւղացիութիւնը ներառեալ:

Կովկասի եւ Արեւելեան Հայաստանի մէջ, Հնչակեան կուսակցութիւնը իր համեստ մասնակցութիւնը բերաւ յեղափոխական-ազատագրական շարժման յաղթանակին, եւ Խ.Հայաստանի ստեղծումը սեպեց իր հիմնական նպատակին մասնակի իրականացումը: Արեւմտեան Հայաստանի մէջ սակայն, թուրք ռասիստ-նացիոնալիստներու կողմէ եւ Արեւմտեան կայսերապաշտ տէրութիւններու օգնութեամբ Ա. Աշխարհամարտին գործուած ցեղասպանութիւնը ոչ միայն վիժեցուց Հնչակեան կուսակցութեան ազատագրական պայքարը, այլեւ բնաջինջ ըրաւ Արեւմտահայութեան մեծ մասը, մնացեալ փոքր հատուածն ալ հայրենագրկելով զայն դարձուց գաղթական, աշխարհի տարբեր մասերուն վրայ:

Ս.Գ. Հնչակեան կուսակցութիւնը նկատելով, որ իր հիմնական նպատակը իրականացած է Խ. Հայաստանի գոյառումով, 1924 թիւն սկսեալ, վերջ տուած է իր գոյութեան այնտեղ ու Կովկասի մէջ: Սակայն իր գործունէութիւնը կը շարունակէ հայկական Սփյուռքի մէջ, ըլլալով սփիւռքահայ աշխատաւորութեան եւ հայրենասէր մանրպուրժուագիայի ներակայացուցիչը, գործելով աւելի շատ ազգային ու միջազգայնական գաղափարները, ամենասերտ կապ պահելով Մայր Հայրենիք Խ. Հայաստանի հետ, Հայ-Սփիւռքը տոգորելով խորհրդային հայրենասիրութեամբ եւ զինք ամփոփելով Խ. Հայաստանի շուրջ, ասոր գորացումն ու բարգաւաճումը ցանկանալով, զինք ամբողջական ու ընկերվարական Հայաստանի կորիզ ու մեկնակէտ ընդունելով:

Այսօր Ս.Գ. Հնչակեան կուսակցութիւնը կը գործէ շուրջ տասն հինգ երկիրներու մէջ, կեդրոնացեալ ընդհ. ղեկավարութեան մը ներքեւ, որ ունի իր շրջանային ղեկավար մարմինները: Այս գործունէութիւնը ազգային, քաղաքական, դասակարգային, մշակութային եւ ընկերային է միաժամանակ: Կ'ընդգրկէ ոչ միայն տարբեր երկիրներու հայկ. գաղութներու լայն զանգուածներ, որոնք իրենց ապրած երկիրներու հպատակներ են, այլեւ տեղական ոչ-

հայ շրջանակներ, որոնց յառաջդիմական-դեմոկրատ հոսանքներուն հետ բարեկամական կապ ու գործակցութիւն ունի մեր կուսակցութիւնը, համաձայն իր ընկերային դաւանանքին եւ սոցիալիստական սկզբունքներուն, գործապէս կը նպաստէ այդ երկրներու յառաջադիմութեան, ամէն մարզի մէջ իր միջոցներու ներած չափով:

Ազգային պիտակ ունենալով հանդերձ Ս.Գ. Հնչակեան կուսակցութիւնը ունի գործունէութիւն մը, որ կը մերժէ ազգային սահմանափակութիւնը, կը կազմէ դրական գործօն մը իր գտնուած երկիրներու ընդհ. կեանքի մէջ, ներշնչուած ինտերնասիոնալիզմի ոգիով, նեցուկ կանգնելով ազգային ու ընկերային ազատագրական պայքարներուն, ժողովուրդներու միջեւ բարեկամութեան եւ գործակցութեան ստեղծումը ջատագովելով, պայքարելով յետադիմութեան եւ կայսերապաշտութեան դէմ, խաղաղութեան պաշտպանութեան ի նպաստ դիրքորոշուելով ամէն տեղ: Ինչպէս մեր օրերու Լիբանանի մէջ, որուն միութեան, գերիշխանութեան ու հողային ամբողջականութեան պաշտպանութեան ի նպաստ կը գործէ Հնչակեան կուսակցութիւնը, պահանջելով իսրայէլեան նախայարձակ ուժերու հեռացումը Լիբանանէն, եւ քաղաքական լուրջ բարենորոգումներու իրականացումը երկրին մէջ:

Ամէն տեղ, ուր ներկայ է, կուսակցութիւնը իր գործունէութիւնն ու պայքարը կ'ընթացնէ քաղաքական աշխատանքով, մամուլի, ռատիոյի եւ բեմական քարոզչութեամբ, մարզական, մշակութային ու կրթական հաստատութեանց եւ միութիւններու ձեռնարկներով եւ մասսայական ընկերային բնոյթի ուրիշ շարժումներով:

Հայ Սփիւռքի մէջ Ս.Գ. Հնչակեան կուսակցութիւնը կը գործէ ազգային եւ միջազգային գետնի վրայ ու նպատակներով, որոնք հայրենասիրական ու յառաջդիմական բնոյթի ունին եւ կը ծառայեն թէ՛ հայ ժողովուրդի եւ թէ՛ տեղացի ժողովուրդներու շահերուն:

Կուսակցութիւնը կը գործէ հայ սփիւռքի բազմաթիւ երկիրներու մէջ: Ունի բազմատասնեակ հազար շարքային եւ համակիր ան-



դամներ, տասը կուսակցական մամուլ-օրկան, որոնք լոյս կը տեսնեն տարբեր երկիրներու մէջ:

Կուսակցութիւնը ինքզինք կը նկատէ մէկ օղակը համաշխարհային առաջդիմական շարժումին:

Միջազգային դրութեան վերջին տարիներու վտանգաւոր զարգացումները սակայն, կը պատճառեն լուրջ մտահոգութիւն ինչպէս աշխարհի բոլոր խաղաղասէր ժողովուրդներուն, յառաջդիմական ու դեմոկրատ կուսակցութեանց ու մարդոց, նոյնպէս եւ Հնչակեան կուսակցութեան:

Միջազգային կայսերապաշտութիւնը այսօր լրջօրէն կը սպառնայ ժողովուրդներու եւ պետութեանց խաղաղ, ազատ ու ինքնավարութեան ձգտող կեանքին, կ'արգելակէ անոնց յառաջընթացքը, միջամուխ կ'ըլլայ անոնց ներքին գործերուն, նախայարձակումներով կը բռնաբարէ անոնց գերիշխանական իրաւունքները, կը վտանգէ համաշխ. խաղաղութիւնը:

Ս.Դ. Հնչակեան կուսակցութիւնը հայ ժողովուրդի ճակատագիրը չի բաժներ ուրիշ ժողովուրդներու ճակատագրէն: Բոլոր ժողովուրդները աշխարհի բախտակից են իրարու եւ կապուած մէկը միւսին իրենց հասարակաց շահերով: Այս շահերը, ըլլան ազգային թէ ընկերային, կրնան ապահովուիլ միայն աշխարհի բոլոր ժողովուրդներու միացեալ պայքարով յանուն խաղաղութեան, ազատութեան եւ դեմոկրատիայի, ընդդէմ միջազգային յետադիմութեան:

Այս սկզբունքն թելադրուած ըլլալով է որ Ս.Դ.Հ.Կ. – ն ինչպէս ըրած է ցարդ, նոյնպէս ալ այսօր ու ապագային, բարեկամական կապ ու գործակցութիւն պիտի ստեղծէ, պիտի պահէ իր գտնուած շրջաններու ազատատենչ, խաղաղասէր ու դեմոկրատական ուժերուն հետ, իր նպաստը բերելու համար խաղաղութեան ու արդարութեան դասի յաղթանակին:

Այս գծով ցայտուն օրինակ մըն է միայն Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան ունեցած սերտ գործակցութիւնը Լիբանանի Ընկերվա-

րական-Յառաջդիմական կուսակցութեան, ինչպէս նաեւ յառաջդիմական տարբեր կուսակցութիւններու եւ ուժերու հետ:

Ճնշումի, կազմալուծման եւ նորատեսակ ցեղասպանութեան ենթակայ է նաեւ Սփյուռքի մէջ հայ ժողովուրդը, որուն բնական հայրենադարձութիւնը հանդէպ է. Հայաստանին, իր ազգային ինքնութեան կառչած մնալը, համոզուած ըլլալը, որ հայկական հանրապետութեան մաս կազմելը է. Միութեան ինքնին բախտաւորութիւն է եւ երաշխիք հայ տարագիր ժողովուրդի ազգային տենչերու իրականացման համար միջազգ. իրադրութեան ընծայած մէկ յարմար պատեհութեամբ, իր դէմ գործուած պատմական անարդարութիւնը դարմանելու ուղղութեամբ գործելը եւ վերջապէս իր բնածին ազատասիրութիւնն ու արդարամտութիւնը չեն հանդուրժուիր միջազգ. թէ տեղական յետադիմութեան կողմէ: Եւ հայութիւնը այս իսկ պատճառներով՝ ենթակայ է հալածանքի ու թշնամական վերաբերումներու, յատկապէս Միջին Արեւելքի մէջ:

Սփյուռքահայութեան եւ իր գտնուած երկիրներու ժողովուրդներու շահերուն հաւատարիմ Ս.Դ. Հնչակեան կուսակցութիւնը խորապէս մտահոգ է անշուշտ, ի տես այս վիճակին, որ իր առաքելութիւնը կը դժուարացնէ: Հայ-Սփյուռք պահպանումը միջազգ. յետադիմութեան քայքայիչ աշխատանքներուն դէմ, այս պարագային կը վերածուի հակա-իմբերիալիստական պայքարի առաջադրանքի մը, ըստ էութեան արդարացի ու յառաջդիմական, որուն անտարակոյս, իր ակտիւ մասնակցութիւնը պարտի բերել հայութեան Մայր Հայրենիք է. Հայաստանը, որ սփիւռքահայութեան ճակատագրին տէր կենալու բարոյական պարտաւորութիւնը ունի, եւ պարտի հայրենասէր հայ-սփիւռքի գոյութեան պաշտպանութիւնը դնել պետական մակարդակի վրայ, ինչպէս որ, օրինակի համար, Թուրքիա եւ զինք հովանաւորող Ամերիկան իրենց հակահայ պայքարը պետական մակարդակով կը մղեն այսօր:

Մեկնելով այս վիճակէն Հնչակեան կուսակցութիւնը կը գտնէ, որ կուսակցութիւնը, մասնաւորաբար սփիւռքահայ ժողովուրդի բազմակողմանի շահերուն եւ ընդհանրապէս իր գաղափարախո-

սուբենեն բխող առաջադրանքներուն՝ խաղաղութան, ազատութեան, ժողովուրդներու բարեկամութեան ու ընկերային արդարութեան իտեալին կարենալ աւելի արդիւնաւետութեամբ ծառայելու համար անհրաժեշտ է, որ իր կապերը Մայր Հայրենիքին հետ աւելի սերտացնէ եւ զանոնք հասցնէ աւելի բարձր մակարդակի, որպէսզի խորհրդակցաբար եւ միացեալ ճիգերով դարձան գտնուի վերագրեալ մտահոգութեանց: Նկատելով, որ ցարդ կուսակցութեան ունեցած կապերով, որոնք մշակութային եղած են առաւելաբար, անհնար է լրջօրէն ու ազդու կերպով մը սփիւռքահայութեան հայրենասիրական օրիանթասիտնը պաշտպանել: Նոյնպէս դժուար է փոխարաբերութիւններու ցարդ եղած բնոյթով եւ տարողութեամբ հակադրուիլ կայսերապաշտ դաւերուն, որոնց նպատակը մեր ժողովուրդը իր պատմական ու մշակութային ժառանգութենէն զրկելով իր ազգային միութեան վերստեղծումը ծախողցնելն է:

Մեկնելով ուրեմն այս ընդհանուր մտահոգութիւններէն, եւ հասարակաց նպատակներուն աւելի արդիւնաւետութեամբ ծառայելու անկեղծ տրամադրութենէ մղուած, կը ցանկանք կապերու եւ գործակցութեան խորացումն ու ընդլայնումը Մայր Հայրենիքէ հ. Հայաստանի Կուսակցութեան հետ, որ մէկ օղակը կը կազմէ հ. Միութեան համայնավար կուսակցութեան, լիայոյս որ մեր ցանկութիւնները կը փոխադարձուին եւ գործնական քայլեր կ'առնուին անոնց ուղղութեամբ, մօտիկ ապագայի մէջ:

Մեզի համար հաճելի է յիշել որ Ա.Դ. Հնչակեան կուսակցութիւնը եղած է Ռուսիոյ նախկին Սոցեալ-Դեմոկրատ կուսակցութեան հնագոյն զինակիցը եւ անոր հետ մարտնչողը Չարի ինքնակալութեան ու ասոր յաջորդած պուրժուա-դեմոկրատական վարչածեի տապալման ու խորհրդային կարգերու հաստատման մէջ նախկին կայսրութենէն ներս:

Եւ մեր օրերուն, մեծ վերափոխութիւններու ժամանակահատուածին մէջ, երբ հ. Միութեան Կուսակցութիւնը բարեկամական ու գործակցական կապեր կը հաստատէ աշխարհի Սոցեալ-Դեմո-

կրատական կուսակցութիւններու հետ, հանդիպումներ կայացնելով Մոսկուայի մէջ, զարմանք կրնայ պատճառել այդ հաւաքներէն բացակայիլը Ռուսաստանի Սոցեալ-Դեմոկրատ բանուորական կուսակցութեան առաջին օրերու դաշնակիցին, որ ներկայութիւն ունի եւ կը գործէ այսօր աշխարհի տասնհինգ երկիրներու մէջ:

Մեր կողմէ խիստ ցանկալի է որ օր առաջ դարձանուի այս վիճակը:

*Ֆոնդ 1, ցուցակ 87, գործ 33, թթ. 252-259, բնագիր, մեքենագիր*

**Ծանոթագրութիւններ**

1. Սուրեն Գուրգենի Հարությունյանը 1988-1990 թթ. եղել է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարը: Մինչ այդ եղել է ՀամԼԿԵՄ Կենտկոմի քարտուղար, ԽՄԿԿ Կենտկոմի ապարատի սեկտորի վարիչ, Հայկական ԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի անդամ: Ավելի ուշ զբաղեցրել է դիվանագիտական տարբեր պաշտոններ՝ այդ թվում լինելով ԽՍՀՄ զլխավոր հյուպատոս Սարոկկոյում, Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Բելառուսի Հանրապետությունում
2. Վարդգես Համազասպի Պետրոսյան (1932-1994 թթ.) - արծակագիր, դրամատուրգ, հրապարակախոս, հասարակական գործիչ, 1952 թվականից եղել է ԽՍՀՄ գրողների միության անդամ: Տարբեր ժամանակներում ընտրվել է Գերագույն խորհուրդների պատգամավոր՝ ԴԽՍՀ (1975-85), ԽՍՀՄ (1984-1989) և ՀՀ (1990-1994): 1981-1988 թթ. ղեկավարել է Հայաստանի գրողների միությունը, 1988-1994 թթ.՝ Հայաստանի մշակույթի ֆոնդը:
3. 1988 թվականի մայիսին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար դարձավ Սուրեն Հարությունյանը՝ փոխարինելով Կարեն Դեմիրճյանին:
4. Խոսքը վերաբերում է 1988 թվականի փետրվարի 20-ի ԼԴԽՄ մարզ-խորհրդի 20-րդ գումարման նստաշրջանում ընդունված որոշմանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի անդրադարձին, երբ 1988 թվականի հունիսի 15-ին ԴԽՍՀ Գերագույն խորհուրդը համաձայնություն տվեց մարզը Հայաստանի կազմի մէջ մտցնելուն և հարցը դրականորեն լուծելու

խնդրանքով դիմեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդին: Սակայն, ինչպես գիտենք, ԽՍՀՄ բարձրագույն իշխանությունները հուլիսի 18-ին մերժեցին ԼՂԻՄ մարզխորհրդի և Հայաստանի Գերագույն խորհրդի նստաշրջանների ընդունած որոշումները:

5. Խոսքը 1988 թվականի մարտի 23-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության ընդունած «Լեռնային Ղարաբաղում, Ադրբեջանական և Հայկական ԽՍՀ-ներում ստեղծված իրավիճակի առթիվ միութենական հանրապետությունների դիմումների կապակցությամբ միջոցառումների մասին» հայտնի որոշման մասին է, որից հետո Երևանում ցույցերն ու միտինգներն արգելելու և բռնկված համազգային շարժումը ճնշելու համար խորհրդային իշխանությունները զորքեր մտցրին Երևան:
6. 1988 թվականի նոյեմբերի 22-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը ընդունել է 1915-ի Հայոց ցեղասպանությունը դատապարտող օրենք, որով ապրիլի 24-ը հայտարարվել է Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օր, և այդ օրը համարվել է ոչ աշխատանքային:

**Edgar Hovhannisyan – *Two documents about the history of beginning of political relationships of Armenia-Diaspora*** – Presented documents are letters which were sent to the first secretary of Armenia communist party S.Arutyunyan from Armenian Democratic Liberal Party and Social Democrat Hunchakian Party.

In these letters these parties first time bypassing the central Soviet government and party organizations have suggested to leadership of Armenia for establishing political relationships.

These documents are being published for the first time. These documents are important evidences about history of the beginning of political relationships of Armenia-Diaspora and about new stage of formation of the Armenia-Diaspora relationships.

## **ՆԱՐԻՆԵ ԵՐԱՆՈՍՅԱՆ**

### **ԵԳԻՊՏՈՍԻ «ԱԼ-ՄՈՒԲԱԹԹԱՄ» ՕՐԱԹԵՐԹԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԵՎ ՀԱՅ ԳԱԴԹԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (1889-1896 թթ.)**

XIX դարի վերջին քառորդը Եգիպտոսի հասարակական-քաղաքական մտքի զարթոնքի շրջան էր, որի դրսևորման և քարոզչության հիմնական ասպարեզը պարբերական մամուլն էր: Այդ պատճառով Եգիպտոսի հայրենասիրական-ազգայնական շարժման պատմությունը պարբերացնելիս եգիպտացի պատմաբաններն այդ շրջանն անվանել են «պարբերական մամուլի ժամանակափուլ»<sup>1</sup>: Ժամանակի մամուլը և պատմագրական միտքը վկայում են Օրաբիի ապստամբությունից հետո՝ 1880-ականների սկզբին<sup>2</sup>, մտավորական շրջանակներում տիրող հուսալքման ու անկունային տրամադրությունների մասին: Ազգային-հայրենասիրական մղումները վերստին ակտիվանում են Եգիպտոսում Մեծ Բրիտանիայի հաստատվելուց հետո միայն:

Եգիպտոսում 1882 թ. հաստատված բրիտանական ներկայությունը խթան էր ազգային գիտակցության, միասնական հայրենիք ունենալու գաղափարների ձևավորման համար, որոնք նախևառաջ միտված էին ձերբազատելու երկիրն օտարներից:

---

<sup>1</sup> Եգիպտոսի պարբերական մամուլի հետազոտող Աբդ Ալ-Լատիֆ Համզայի գնահատմամբ՝ պարբերական մամուլի դերը ազգային գաղափարախոսության ձևավորման և մատուցման հարցում անփոխարինելի էր. «Եգիպտոսի պարբերական մամուլը երկրի պատմության համար առավել կարևոր դերակատարություն ունեցավ, քան բանակը, իսկ Եգիպտոսի քաղաքական պատմության համար՝ ավելի մեծ նշանակություն, քան որևէ ներկայացուցչական խորհուրդը». տե՛ս عبد اللطيف حمزة، أدب المقالة، ص. 42-39، القاهرة، 1950، ج. 1، الصفحة. (Աբդ Ալ-Լատիֆ Համզա, Լրագրողական հոդվածի մշակույթ, Կահիրե, 1950, էջ 39-42):

<sup>2</sup> Օրաբիի ապստամբության մասին մանրամասն տե՛ս Cromer, Modern Egypt, London, 1908, էջ 175-193, Лудков В., Новая история арабских стран, М., 1963, էջ 186-196:

Ազգային քաղաքական ուղենիշների ձևավորման այդ փուլում եգիպտական հասարակական կարծիքը, ինչպես ժամանակի միջազգային այլ քաղաքական հիմնախնդիրների դեպքում, այնպես էլ Արևմտյան Հայաստանում հաստատված կացության մեկնաբանման և արժևորման պարագայում, մեծապես պայմանավորված էր մեծ տերությունների քաղաքականությանը տված սեփական գնահատականով:

Օրաթերթի էջերում խնդրի արծարծումը մեկնաբանելու տեսանկյունից կարևոր է ներկայացնել դրա հիմնադրման պատմությունը և քաղաքական դիրքորոշումը. այն է՝ պարզել պարբերականի անմիջական կախվածության աստիճանը ժամանակի հասարակական-քաղաքական իրավիճակի թելադրած առաջնահերթություններից:

XIX դարավերջին Եգիպտոսում հասարակական միտքն առաջնորդում էր «Ալ-Աիրամ» (բուրգեր) օրաթերթը<sup>1</sup>: Հատկապես դրան հակակշռելու նպատակով էլ հիմնադրվեց բրիտանամետ «Ալ-Մուքաթթամը» (Կահիրեում գտնվող բլրաշարքի անվանում, որի քարերով, ըստ ավանդության, կառուցված են երեք հայտնի ամենամեծ բուրգերը)<sup>2</sup>, բրիտանական կառավարության հանձնարարականով և ֆինանսավորմամբ:

Բրիտանական կառավարությունը, որն ուշիուշով հետևում էր երկրում ընթացող խորքային գործընթացներին, իհարկե ժամա-

<sup>1</sup> Պարբերականի գաղափարական ուղղվածության և հայերին վերաբերող հոդվածների մասին տե՛ս . 9-7 . ص. القاهرة 2006, محمد رفعت الإمام. الأهرام المصرية والقضية الأرمنية 1923-1878, Մուհամմեդ Ռիֆաթ ալ-Իսամ, Հայկական հարցը և եգիպտական «Ալ-Աիրամը», Կահիրե, 2006, էջ 7-9, Երանոսյան Ն., Արևմտյան Հայաստանի բարենորոգումների խնդրի լուսաբանումը եգիպտական «Ալ-Աիրամ» օրաթերթում 1894-1896 թվականներին, Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), Եր., ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2012, էջ 128-142:

<sup>2</sup> Պարբերականի հիմնադրման մասին հետազայում հրատարակիչները գրել են, որ Շամից (Մեծ Սիրիա) իրենց Եգիպտոս են հրավիրել՝ «Ալ-Մուքաթթաֆի» հիմնադրման համար, իսկ որոշ ժամանակ անց առաջարկել են հրատարակել ևս մեկ թերթ: Իրենք առաջարկել են պարբերականը կոչել «Ալ-Իսլահ» (բարեփոխում), սակայն դա մերժվել է ներքին գործերի նախարարության կողմից, որից հետո առաջարկել են այն անվանել «Ալ-Մուքաթթամ» բլրաշարքի անունով:

նակին գիտակցեց այնտեղ սեփական քաղաքական շահերի խոսափողն ունենալու անհրաժեշտությունը: Դա այն զեմքն էր, որի միջոցով հնարավոր էր ազդել հանրության մտածողության վրա, յուրաքանչյուր մտահղացում ներշնչել հասարակությանը՝ արագորեն սովորացնելով համակիրների շարքերը:

Կարճ ժամանակում հիմնադրվեցին բրիտանական կողմնորոշում ունեցող մի շարք պարբերականներ, որոնք կոչված էին եգիպտական ազգայնական գաղափարներն արծարծող, ֆրանսամետ կամ օսմանյան իշխանություններին հարող մամուլին հակադարձելու իրենց իսկ զեմքով և սեփական առաջնայնությունները հանրությանը մատուցելու Մեծ Բրիտանիային հարմար գունդերանգով<sup>1</sup> (մինչ այդ բրիտանական կառավարությունը Եգիպտոսի ընդդիմադիր մամուլի դեմ պայքարում ահաբեկման ու պատժելու քաղաքականություն էր վարում՝ գերադասելով գրաքննության օսմանյան տարբերակը):

«Ալ-Մուքաթթամի» հիմնադրումը հանձնարարվեց Ֆարիս Նիմրին, Յակուբ Սառուֆին և Շահեն Մակարիուսին, որոնց ընտրությունը պատահական չէր. հաշվի էր առնվել նրանց փորձը գիտական ու գրական պարբերականների հրատարակման գործում (Եգիպտոսի «Ալ-Մուքաթթաֆ»<sup>2</sup> (Հատընտիր) գիտական առաջին ամսագրի հրատարակիչները ևս նրանք էին): Երեքն էլ կրթություն էին ստացել Բեյրութում և հայտնի էին իրենց արևմտամետ հայացքներով: «Ալ-Մուքաթթամը» սկսեց լույս տեսնել 1889 թ. փետրվարի 14-ից որպես շաբաթաթերթ, սակայն վեց շաբաթ անց վերածվեց օրաթերթի: Սկզբում թերթը հազեցած էր քաղաքական, տնտեսական, ռազմա-

<sup>1</sup> Անգլիայի ջանքերով սկսեց արաբերենով լույս տեսնել «Թայմ» պարբերականը (1889 թ.), Կահիրեում հիմնադրվեց «Ալ-Ալլամ» (լրատու) պարբերականը՝ Մուհամմեդ Բայրամ Թունիսցու խմբագրությամբ: Վերջինս Կ. Պոլիս էր գաղթել Թունիսում Ֆրանսիայի հաստատվելու ժամանակ, իսկ հետո՝ 1884 թ., տեղափոխվել էր Կահիրե: Ի դեմս նրա՝ բրիտանացիները վստահելի հեներան էին տեսնում Եգիպտոսում ֆրանսիական կառավարության վարած քաղաքականությանը դիմակայելու խնդրում:

<sup>2</sup> «Ալ-Մուքաթթաֆը» նշված երեք լրագրողների կողմից հիմնադրվել էր Բեյրութում 1876 թ., սակայն երբ սաստկացան օսմանյան քաղաքական ճնշումները և գրաքննությունը, նրանք գաղթեցին Եգիպտոս և այն վերահրատարակեցին Կահիրեում 1884 թ. (տե՛ս Ami Ayalon, The Press in The Arab Middle East, New York, 1995, էջ 53):

կան և առևտրական լրատվությամբ: Այն երբեմն ուղղակիորեն սնվում էր Reuter և Havas լրատվական գործակալություններից, ինչպես նաև օգտագործում էր երկրի տարբեր մարզերից սեփական թղթակիցների ուղարկած հեռագրերը, Օսմանյան կայսրության ու միջազգային մամուլը: Նրա հավելվածը տրամաբանական բնույթ ուներ, հետևողական էր վերնագրերի, ենթավերնագրերի և բաժինների համակցվածության հարցում: Թերթի առաջին համարներում մասնավոր և պաշտոնական գովազդներն ամբողջական սյունակներ էին զբաղեցնում, իսկ արդեն երրորդ ամսից դրանք անցան նաև հաջորդ էջ: 1892 թ. Եգիպտոս այցելած մի անգլիացի ճանապարհորդի վկայությամբ՝ այդ պարբերականը եղել է Ալեքսանդրիայից մինչև Սուդան ընկած բոլոր սրճարաններում<sup>1</sup>: Պարբերականը շուտով դարձավ ամրապնդող օղակն այն շրջայի, որը ստեղծված էր Եգիպտոսի հասարակական կարծիքի շուրջ:

Մեծ տերությունների դիվանագիտական պայքարում Օսմանյան կայսրության նկատմամբ ճնշում գործադրելու հիմնական լծակներից էր Արևմտյան Հայաստանում կայսրության կողմից բարենորոգումների իրականացման խնդիրը: Բեռլինի 1878 թ. վեհաժողովից (Հայկական հարցի միջազգայնացումից) հետո՝ XIX դարի 70-80-ական թվականներին, այն առավել հմտորեն օգտագործում էր Մեծ Բրիտանիան, որի հեռահար ծրագիրն էր Հայկական հարցի շահարկմամբ նվաճել Կիպրոսն ու Եգիպտոսը: Սակայն 90-ական թթ., երբ Անգլիան Եգիպտոսում արդեն հաստատուն դիրքեր ուներ, նրա եռանդն այդ հարցում նվազել էր: Օսմանյան կառավարությունը՝ սուլթան Աբդուլ Համիդի գլխավորությամբ, գիտակցում էր Հայկական հարցի կարևոր դերը մեծ քաղաքականության մեջ և որոշել էր վերջ տալ դրան՝ խնդրահարույց ազգային տարրը վերացնելու ուղին ընտրելով: Այդ որոշման գործնական իրականացումը 1894-1896 թթ. հայերի կոտորածներն էին<sup>2</sup>,

<sup>1</sup> Տե՛ս Ami Ayalon, նշվ. աշխ., էջ 57:

<sup>2</sup> Հայոց պատմություն, հատոր III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես-1918 թ.), Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես - XIX դարի վերջ), Եր., 2010, էջ 506-538:

որոնց հաջորդեց բարենորոգումներ պահանջող եվրոպական տերությունների միջամտության մեկ այլ ձև՝ այս անգամ 1895 թ. Մայիսյան բարենորոգումների ծրագրի տեսքով: Օսմանյան կառավարության համար դա ևս խոչընդոտ չէր շարունակելու կոտորածները հատկապես Եվրոպա-Ռուսաստան դեռևս տարտամ դաշնակցության պայմաններում:

Համաշխարհային հասարակական-քաղաքական միտքը և պարբերական մամուլը անդրադարձել են նշված իրադարձություններին: Դրանից անմասն չի մնացել նաև «Ալ-Մուքաթթամը»:

Հատկապես արժեքավոր են «Ալ-Մուքաթթամի» այն հրապարակումները, որոնք առնչվում են արևմտահայերի կոտորածներին և արևմտահայ գաղթականությանը<sup>1</sup>:

1894-1896 թթ. և մինչ այդ օսմանյան կառավարության կողմից հայերի նկատմամբ պարբերաբար իրականացվող կոտորածներն ու բռնությունները կանխամտածված բնույթ ունեին: Այդ առնչությամբ պարբերականը հստակ դրսևորել է իր վերաբերմունքը՝ շեշտելով. «Օսմանյան կառավարությունը մասնակցել է հայերի կոտորածների դավադրությանը՝ հայերի դեմ կատարվող բռնություններին վերջ տալու և ջարդերն արգելելու փոխարեն»<sup>2</sup>: Սակայն բավականաչափ հիմքեր չգտնելով Օսմանյան կառավարության նման պահվածքն արդարացնելու համար՝ փաստում է. «Անկախ այն պարագայից, թուրքիան այդպես վարվել է իր քաղաքական քնահաճույքից թե թուլությունից դրդված, դա մի պետություն է, որը խոստմնազանց է եվրոպական տերությունների, հատկապես՝ Անգլիայի նկատմամբ»<sup>3</sup>:

Հատկանշական է, որ «Արտաքին իրադարձությունների ամփոփում» խորագրի տակ դեռևս 1889 թ. «Ալ-Մուքաթթամը» վանի

<sup>1</sup> Յավդը, մեր տրամադրության տակ չունենք պարբերականի՝ 1894-95 թթ. լույս տեսած համարները, որոնցում վստահաբար նյութն ավելի հարուստ կլիներ: Այդ մասին են փաստում արաբերեն այլ պարբերականների կողմից «Ալ-Մուքաթթամին» արված երումները:

<sup>2</sup> «Ալ-Մուքաթթամ», 1896, 22 հոկտեմբեր:

<sup>3</sup> Նույն տեղում:

շրջակա գյուղերում հայերի նկատմամբ իրականացված ոտնձգությունները համարում է Օսմանյան կայսրության ասիական մասի<sup>1</sup> կարևորագույն իրադարձություն:

Նշված հոդվածում նկարագրվում է ջարդերի ընթացքը, որոնք ուղեկցվել էին գյուղերի հրկիզմամբ և անմարդկային վայրագություններով. «Այրվել են մի քանի հայկական գյուղեր, պատվագրվել են հայ աղջիկներ»<sup>2</sup>: Հաջորդ տողերը հայտնում են քրդերին հայերի դեմ սադրելու և նրանց՝ հայությանը ոչնչացնելու միջոց դարձնելու սուլթանական իշխանության մտահոգացման մասին: Կատարվածի պատճառը, ըստ պարբերականի, քրդերի թշնամական վերաբերմունքն էր հայերի նկատմամբ: Պարբերականը հաջորդիվ տեղեկացնում է, որ դրանից հետո հայերի շրջանում հուզումներ են առաջացել, նրանք բողոք են ներկայացրել Բ. Դռանը՝ հայտնելով, որ կմիանան Ռուսաստանին, եթե չապահովվի իրենց պաշտպանությունը քրդերից: Արդյունքում կառավարությունը ձեռքակալել է խռովարարներին և ոստիկաններ ուղարկել՝ խուզարկելու Վանի շրջակայքում գտնվող բնակավայրերն ու եկեղեցիները: Լուրեր են պտտվել նաև այն մասին, որ քրդերը հատուցել են իրենց կողմից հայերին պատճառած նյութական վնասը<sup>3</sup>:

1896 թ. ընթացքում մեծ տերությունները դադարել էին բողոքի հայտագրեր ներկայացնել Բ. Դռանը, այնուամենայնիվ օսմանյան կառավարությունը շուտով գտնում է նոր առիթ՝ ջարդերը վերսկսելու համար: Այդ ժամանակ հնչակյան կուսակցությունը պառակտման եզրին էր, իսկ ՀՀԴ կուսակցությունը որդեգրել էր

«զուգակցված հարվածների» մարտավարությունը՝ Արևմտյան Հայաստանում կամ Կ. Պոլսում միաժամանակյա կամ իրար հաջորդող խոշոր գործողությունների գործելաոճը: ՀՀԴ գործիչների կարծիքով՝ դա արտաքին միջամտության հնարավորություն էր ապահովելու: Այդ ծրագրի գործնական իրագործման փուլը դարձավ 1896 թ. օգոստոսի 14 (26)-ի առավոտյան Բաբկեն Սյունիի գլխավորությամբ 26 հոգուց բաղկացած հայ զինյալների մի խմբի կողմից (հիմնականում ՀՀԴ անդամներ) Օսմանյան բանակի գրավումը: Նրանք սպառնում էին պայթեցնել շենքը, եթե սուլթանը միջոցներ չձեռնարկեր Արևմտյան Հայաստանում կոտորածները դադարեցնելու և բարենորոգումներ իրագործելու ուղղությամբ:

Այս իրադարձությունը, ինչպես և դրան հաջորդած ՀՀԴ կողմից տերությունների դեսպանություններին և օսմանյան իշխանություններին ներկայացրած շրջաբերականը բազմակողմ և շարունակական արծարծման առարկա են դարձել «Ալ-Մուքաթթամի» էջերում: Տարբեր հրապարակումներում լայնորեն, ամենայն մանրամասնությամբ լուսաբանվել է բանակի գրավումը: Անդրադառնալով ՀՀԴ գործելաոճին՝ պարբերականը հայտնում է, որ ՀՀԴ-ն Կ. Պոլսում ունի տարբեր խմբեր, որոնց անդամները չեն ճանաչում այլ կազմավորումների անդամներին և ոչ էլ կենտրոնական խմբավորման անդամներին, որի կողմից հիմնական հրահանգներն են ստանում: Այլ կազմակերպությունների շարքում հիշատակելով «Խուճապ», «Դրոշակ», «Կայծակ» անունները՝ պարբերականը վերջին երկուսը համարում է նոր հիմնածներից, որոնց կազմում կային 200 հոգի: ««Խուճապը» անցյալ տարի կազմակերպեց Բաբը Ալիի դիմաց տեղի ունեցած ցույցը: «Դրոշակ» խումբն այս տարի հարձակում է կատարել Օսմանյան բանակի վրա: Մնացած երեք խմբերը դեռ չեն կատարել իրենց առաջադրանքները: Խմբերի յուրաքանչյուր անդամ գիտի և կողմ է այն կարծիքին, որ եվրոպական երկրներից լավ բան հարկավոր չէ ակնկալել, և հույսը պետք է դնել սեփական ուժերի վրա: Նրանք երդվել են ավերել Օսմանյան կայսրությունը կամ ստիպել եվրո-

<sup>1</sup> Նկատենք, որ հոդվածում նշված տարածքներն այդպես են կոչվում, չնայած համիդյան շրջանում համաթուրքականության քարոզչության ազդեցությամբ ձևավորվող պետականության գաղափարախոսության հիմքերից մեկի համաձայն՝ արդեն շրջանառվում էր «թուրքական Անատոլիա» տեղանունը: Ըստ դրա՝ ընդունված «Փոքր Ասիա» եզրույթը փոխարինվում էր «Անատոլիա» բառով և ներկայացվում որպես բացառապես օսմանյան թուրքերին պատկանող թուրքական հայրենիքի մի կարևորագույն տարածաշրջան: Արաբական ազդեցիկ մի շարք այլ պարբերականներ, գիտակցաբար կամ անգիտությամբ, կրկնում էին թուրքական շրջանավոր տեսակետը:

<sup>2</sup> «Ալ-Մուքաթթամ», 1889, 15 մայիս:

<sup>3</sup> Տես նույն տեղը:

պային, հակառակ նրա ցանկության, միջամտել իրենց խնդրին և բարելավել իրենց ազգի վիճակը և չեն նահանջի իրենց վճռից, եթե նույնիսկ ոչնչանան մինչև վերջին մարդը»<sup>1</sup>:

Օսմանյան բանկի վրա կատարված հարձակումը դարձավ կոտորածների ու թալանի մի նոր ակիբի սանձագերծման առիթ:

«Մեղավորների դատավարությունը Կոստանդնուպոլսում» խորագրի տակ զետեղված է տեղեկություն թուրքական դիվանագիտական բոլոր կառույցներին հասցեագրված օսմանյան կառավարության որոշման մասին, ըստ որի՝ Կ. Պոլսի դեպքերին առնչություն ունեցող բոլոր ապստամբները, առանց որևէ բացառության, պետք է կրեն իրենց պատիժը: Հրապարակումն ավարտվում է հետաքրքիր մի փաստի շեշտադրմամբ. «Պատժվելու են նաև այն ոստիկանները, որոնք անփութություն են դրսևորել իրենց աշխատանքում և ոչինչ չեն ձեռնարկել դեպքերը կանխելու նպատակով»<sup>2</sup>:

Մեր համոզմամբ՝ այս տողերը մեկ անգամ ևս հաստատում են<sup>3</sup>, որ թուրքական իշխանությունները, նախապես տեղեկացված լինելով կազմակերպվող հարձակման մասին, չեն միջամտել՝ հակահայկական տրամադրությունները սրելու նպատակով: Ոստիկանների մի մասը, նախապես այդպիսի հրահանգ ստացած լինելով, չի խոչընդոտել հայերին, իսկ իշխանությունն ուղղակիորեն հրամայել էր չմիջամտել անկարգություններին՝ այնուհետև քավության նոխազ դարձնելով հանցակիցներին:

«Լուրեր Եվրոպայի փոստից» հոդվածում Կ. Պոլսի դեպքերին

<sup>1</sup> Նույն տեղում, 1896, 2 հոկտեմբեր:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Ֆրանսիացի պատմաբան Ա. Վանդալի կարծիքով՝ սուլթանը, 1896 թ. Օսմանյան բանկի վրա մի խումբ դաշնակցականների կատարելիք հարձակման մասին տեղեկացված լինելով հանդերձ, սպասել է, որ դա օգտագործի որպես պատրվակ նոր ջարդեր կազմակերպելու համար: Հեղինակը սուլթանի այդ քայլը գնահատել է որպես միապետի՝ իր իսկ հպատակների մի սովոր գանգվածի դեմ նյութած դավադրություն (տես Պողոսյան Վ., Հայոց ցեղասպանության առաջին փուլը՝ Ֆրանսիական պատմագրության և հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ, XX դարի սկիզբ), Եր., 2011, էջ 68):

անդրադառնալով՝ պարբերականը նշում է, որ օսմանյան կառավարությունը որոշում է կայացրել՝ արգելել հայերի մուտքը վիլայեթներից մայրաքաղաք: Ինչպես նաև համապատասխան միջոցներ են ձեռնարկվել՝ արգելելու դաշնակցական հայերի մուտքը կայսրություն տարածք<sup>1</sup>:

Առավել արժեքավոր են պարբերականի էջերում հրապարակված նյութերը հայ գաղթականության մասին:

Հայտնի է, որ հայերի նկատմամբ օսմանյան իշխանությունների իրականացրած զանգվածային կոտորածների հետևանքով Արևմտյան Հայաստանից, Կ. Պոլսից և թուրքական այլ քաղաքներից հայերը հոծ խմբերով գաղթեցին աշխարհի տարբեր երկրներ: Հայության արտագաղթին նպաստելը համիդյան քաղաքականության անկյունաքարերից մեկն էր և միտված էր փոխելու Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական պատկերը:

Հազարավոր հայեր 1896 թ. կոտորածների օրերին լքեցին իրենց տունը՝ գաղթելով Պարսկաստան, Ռուսաստան, Բուլղարիա, Եգիպտոս, Ամերիկա և այլ երկրներ: Թշվառ և անօգնական վիճակում հայտնված հայրենագուրկ հայերին օժանդակել են բարեգործական բազմաթիվ ընկերություններ: Մեծ թվով հայեր գաղթել են նաև Եգիպտոս: Միայն Ալեքսանդրիայում շուրջ 1000 հայ է ապաստան գտել: Հայ գաղթականության կարիքները հոգալու նպատակով հանգանակություններ են կազմակերպվել նաև Եգիպտոսում: Այս ժամանակներում Եգիպտոսը Բուլղարիայից հետո կարելի է համարել հայ գաղթականների երկրորդ գլխավոր կայանը<sup>2</sup>:

Զնայած XIX դարի վերջին քառորդին դեպի Եգիպտոս հայերի

<sup>1</sup> Նույն տեղում, 1896, 18 սեպտեմբեր:

<sup>2</sup> «Տաճկահայոց կոտորածներն ենք՝ 1896-1897 թուին, Եգիպտոսի գաղութը շատ ընդարձակուեցաւ, Եգիպտոսը Պուլկարիայէն ետք գլխաւոր կայանն եղաւ գաղթականներու: Հայ փաշաներու պէտքը, մեծ ընդունելութիւն ցուցանելով, թէ մոռցած չեն հայ ըլլալնին, և ասկէ տեղաց նոր գաղթականները, որոնք մեծաոյն մասամբ Պուլսէն էին, եռանդ ու աշխոյժ մտցուցին ազգային կեանքին մէջ, բացին տպարաններ, ընկերութիւններ, թերթեր, դասախոսութիւններ և թատրոն» (տես Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Եր., 2002, էջ 460):



գաղթի գլխավոր պատճառը համարվում են օսմանյան կառավարության իրագործած կոտորածները (1894-1896 թթ.), սակայն անհրաժեշտ է արձանագրել, որ հայերի հոսքը դեպի Եգիպտոս նկատելի էր տակավին 1882 թ.՝ այդտեղ բրիտանացիների հաստատվելուց հետո, երբ կայսրության տարբեր մասերից հայերը սկսել են գաղթել դեպի հեռու և մոտ երկրներ՝ հարկերից, բռնություններից ու սովից ազատվելու նպատակով:

Մինչ 1890-ական թթ. համիդյան ջարդերը հայերը Եգիպտոս էին տեղափոխվում հիմնականում մենակ կամ ընտանիքներով, իսկ կոտորածների ընթացքում արդեն գալիս էին հոծ խմբերով: Եթե մինչև 1880-ականների ավարտը նրանք գալիս էին սեփական ցանկությամբ, ապա 90-ականներին արդեն նրանց տեղափոխությունը բացառապես ստիպողական բնույթ էր կրում: Հիմնվելով Եգիպտոսի հայ կաթոլիկների 1885-1897 թթ. մարդահամարների տվյալների վրա՝ կարելի է վստահաբար ասել, որ, ի տարբերություն նախկինում Իզմիրից, Պոլսից, Սեբաստիայից և Հաճնից արտագաղթող հայերի, 1880-1890-ականներին Եգիպտոս ներգաղթածների ճնշող մասը եկել է կայսրության այն վայրերից (Պոլիս, Եվրոկիա, Մարզվան, Արաբկիր, Կեսարիա, Տրապիզոն, Ադանա, Բուրսա, Սասուն, Դիարբեքիր, Այնթապ, Թոքատ, Մարաշ և այլն), որտեղ իրականացվել են հայերի զանգվածային կոտորածներ<sup>1</sup>:

1896 թվակիր մի արխիվագրի տվյալներով՝ Կ. Պոլսից մեկնող «մեն մի շոգենավ հարյուրավոր գաղթականներ» էր տանում Եգիպտոս»<sup>2</sup>:

«Ալ-Մուքաթթամը» պարբերաբար տվյալներ է հաղորդում Եգիպտոս ժամանող հայերի մասին: Այդ առնչությամբ կարող ենք. «Խեղճ հայերը շարունակում են մեր երկիր ժամանել մեծ

<sup>1</sup> Դեպի Եգիպտոս հայերի գաղթի մասին առավել մանրամասն տե՛ս, محمد رفعة الامام الارمن, في مصر, القرن التاسع عشر, القاهرة, 1995, ص 49-65, Muhammed Rifaat El-Emam, The Armenians in Egypt, Nineteenth Century, Cairo 1995, էջ 49-65.

<sup>2</sup> Տե՛ս Թոփուզյան Հ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն, Եր., 1978, էջ 119:

խմբերով: Այս երկու օրերի ընթացքում 400 հոգուց ավելի են ժամանել: Նրանք գտնվում են ողբալի և թշվառ վիճակում, չնայած այստեղ հանդիպում են օտարների հոգածությանը, որոնց անուններն արժանի են երախտագիտությամբ հիշատակվելու»<sup>1</sup>:

Օրաթերթը հայտնում է Ալեքսանդրիայում հայտնի բարեգործ ոմն Ռուդոլֆի մասին, որն օրական 150 հոգուց ավելի աղքատ հայերի էր կերակրում: Նաև հայտնում է, որ Ալեքսանդրիա գաղթած հայերը հիմնականում բարեգործական կազմակերպությունների խնամակալությանն են հանձնվում:

Թվական տվյալներ է հաղորդվում նաև Կ. Պոլսից դեպի այլ երկրներ մեկնող հայերի մասին. «Ֆրանսիական երկու շոգենավ են ծով դուրս եկել՝ մոտավորապես 100 հայ փախստականների տեղափոխելով Մարսել: Նրանցից շատերը Պոլիսը լքել են նաև անգլիական և ռուսական նավերով: Օսմանյան կառավարությունը գոհունակությամբ (ընդգծ.- Ն. Ե.) աջակցում է հայերին՝ քաղաքից հեռանալու հարցում, և ձգտում է նրանց հեռացնել Օսմանյան կայսրության սահմաններից»<sup>2</sup>:

Նույնը չի կարելի ասել այն հայերի մասին, ովքեր կասկածելի էին թվում իշխանություններին: «Նյու Յորք հերալդից» մեջբերված հաղորդումից պարզվում է, որ Կ. Պոլսում Բրիտանիայի հյուպատոսն Օսմանյան բանկի 15 հայ աշխատակիցների փորձել է աջակցել Ալեքսանդրիա մեկնելու, սակայն օսմանյան կառավարությունը մերժել է նրանց անձնագրեր հատկացնել՝ պատճառաբանելով, որ հնարավոր է՝ նրանք նույնպես վերջին խռովությունների կազմակերպիչներից լինեն»<sup>3</sup>:

Հղում կատարելով «Դեյլի մեսիմջերում» տպված մի հոդվածի՝ պարբերականը տեղեկացնում է, որ հայերի աջակիցները պնդել են կազմել երեք անձից բաղկացած հանձնաժողով՝ Բուլղարիայում ապաստանած հայերի համար հավաքված ֆինանսական և

<sup>1</sup> «Ալ-Մուքաթթամ», 1896, 23 սեպտեմբեր:

<sup>2</sup> Նույն տեղում, 1896, 11 սեպտեմբեր:

<sup>3</sup> Նույն տեղում, 1896, 18 սեպտեմբեր:

նյութական միջոցները (125000 ֆրանկ արժողությամբ) բաժանելու նպատակով: Հողվածում նշվում է, որ այդ գումարի տասնապատիկ ավելին է անհրաժեշտ՝ այնտեղ գտնվող 50000 հայերին օգնելու համար<sup>1</sup>:

Հայ գաղթականներին վերաբերող հաջորդ տեղեկությունը ներկայացված է թերթի մեկ այլ համարում. «Երեկ Տիգրան փաշայի<sup>2</sup> տանը հավաքվել էին մայրաքաղաքի հեղինակավոր մի շարք անձինք՝ քննարկելու Եգիպտոսում ապաստանած հայերին օգնություն ցույց տալու հարցը: Որոշվեց կազմել հանձնաժողով, որը զբաղվելու է օգնության հավաքման կազմակերպման և այն աղքատ հայերին բաժանելու խնդիրներով»<sup>3</sup>:

Հ. Թոփուզյանը նշում է, որ Նպաստամատույց հանձնաժողովն ուներ «Գործադիր մարմին», որը բաղկացած էր 10 «հայ երեւելիներէ», կարգավորում էր նպաստի բաշխումը և ջանքեր գործադրում «մարդու համենատ...գործ գտնելու» ուղղությամբ<sup>4</sup>: Հիմք ընդունելով վերոնշյալը, ինչպես նաև այն, որ Տիգրան փաշան Կահիրեում Նպաստամատույց հանձնաժողովի ղեկավարն էր, կարող ենք հավաստել, որ խոսքը նույն կազմակերպությանն է վերաբերում: Այն հիմնադրվել էր Պողոս փաշա Նուբարի գլխավորությամբ, մասնաճյուղեր ուներ Ալեքսանդրիայում ու Կահիրեում և ամսիներով ստանձնել էր հազարավոր հայ փախստականների խնամակալությունը<sup>5</sup>:

Հայտնի է, որ հայ գաղթականներից շատերը Եգիպտոսում կարողանում էին աշխատանք գտնել հատկապես լեզուների իմացության շնորհիվ: Նրանք նույնիսկ պետական տարբեր պաշտոններ են զբաղեցրել և զբաղվել արհեստներով: Օսմանյան բանկի՝ Կահիրեի և Ալեքսանդրիայի եգիպտական մասնաճյուղերում 11 հայ է

<sup>1</sup> Նույն տեղում, 1896, 22 հոկտեմբեր:

<sup>2</sup> Տիգրան փաշայի մասին մանրամասն տես Օտեան Ե., Պողոս փաշա Նուբար (կենսագրական նօթեր), Կ. Պոլիս, 1913, էջ 12-15:

<sup>3</sup> Նույն տեղում, 1896, 24 հոկտեմբեր:

<sup>4</sup> Թոփուզյան Հ., նշվ. աշխ. էջ 119-120:

<sup>5</sup> Մանրամասն տես Օտեան Ե., նշվ. աշխ., էջ 12:

աշխատել: Շատ հայեր աշխատանք են ստացել դատարաններում (խմբագիրներ ու զրագիրներ), երկաթգծում և այլ ոլորտներում հատկապես Նուբար Փաշայի, Հակոբ Արթինի, Տիգրան փաշա Աբրոյանի աջակցության շնորհիվ<sup>1</sup>: Սկզբնական շրջանում Եգիպտոսում ապաստան գտած հազարավոր հայ գաղթականների կարիքները հոգում էր ազգային առաջնորդարանը և՛ Պողոս փաշա Նուբարի ղեկավարությամբ, ազգապատկան կալվածքների եկամուտներից, հետագայում օգնության հասան նաև օտարազգի մեծատունները: Իսկ ֆրանսիական «Լե Թան» պարբերականի թղթակցի ասածը մեջբերելով՝ պնդում է. «Այնչափ շատ եկած են և, մանավանդ այնչափ չքավորներ կան, որ ամբողջ ժողովուրդը զբաղված է ատոնց օգնելով: Եվրոպացի բոլոր գաղթականություններու երևելիներեն մի մասնաժողով կազմված է, հանգանակություններու համար թուղթեր կը պատցունե...»<sup>2</sup>:

Հետաքրքրական է, որ պարբերականը մշտապես հրապարակել է հայ գաղթականներին օգնելու մասին հայտարարություններ. «Հայտնի է, որ մեր մայրաքաղաք ժամանած խեղճ հայերը շատ են, և նրանք հանապազօրյա սննդի, ապաստարանի կարիք ունեն: Նրանց հատկապես օտարազգի բարեգործներն են օգնում, ինչպես գիտենք: Այդ պատճառով Հայերի օգնության կազմակերպությունը (Նպաստամատույց հանձնաժողովը.- Ն. Ե.) խնդրում է բոլոր բարի մարդկանց և բարեգործներին օգնել այդ թշվառներին՝ ֆինանսապես, հագուստ և սնունդ տրամադրելով: Ցանկացողները այդ հարցով կարող են դիմել հայոց առաջնորդարան»<sup>3</sup>: Ե. Օտյանը, որը ժամանակավորապես գտնվում էր Եգիպտոսում, կարևորել է Նպաստամատույց հանձնաժողովի դերակատարությունը Ալեքսանդրիայում ապաստանած հազարավոր հայ գաղթականներին օգնելու հարցում: Նաև ընդգծել է, որ Ալեքսանդրիայի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու բակն ու դպրոցը վերածվել էր ընդարձակ մի տոնավաճառի, իսկ եկեղեցու շուրջ

<sup>1</sup> Մանրամասն տես Muhammed Rifaat El-Emam, նշվ. աշխ., էջ 58:

<sup>2</sup> Տես Թոփուզյան Հ., նշվ. աշխ., էջ 120:

<sup>3</sup> Նույն տեղում, 1896, 8 դեկտեմբեր:

տարածվող ընդարձակ պարտեզը լցված էր փայտե տաղավարներով, որոնք ծառայում էին իբրև սրճարաններ, ճաշարաններ, սափրիչի, նպարավաճառի, ծխավաճառի խանութներ և այլն<sup>1</sup>:

1897 թ. կեսերին, երբ խաղաղությունը համեմատաբար վերահաստատվել էր Կ. Պոլսում և կայսրության հայկական վիլայեթներում, հայերի որոշ մասը սկսեց վերադառնալ, իսկ մյուս մասը մնաց Եգիպտոսում: Պետք է նշենք նաև, որ հայերի վերադարձի մի ուրիշ ալիք էլ սկսվեց նաև հետագայում՝ Օսմանյան սահմանադրության վերահռչակման և երիտթուրքական հեղաշրջման տարիներին, որը, սակայն, արագորեն մարելու էր ճիշտ այնպես, ինչպես մարեց երիտթուրքերի ներշնչած հույների ողջ խանդավառությունը, երբ թուրքիայում կրկին զանգվածային հալածանքներ սկսվեցին հայերի նկատմամբ, և երբ արդեն ակնհայտ էր, որ երիտթուրքերն ուղղակիորեն շարունակում էին սուլթան Աբդուլ Համիդի հայահալած քաղաքականությունը:

Հակառակ այն փաստերի, որոնք կան «Ալ-Մուքաթթամում» հայ գաղթականներին ապաստան տալու և նրանց համար օգնություն հավաքելու մասին, պետք է ասել, որ Եգիպտոսի իշխանությունները զգուշավոր դիրքորոշում էին բռնել նրանց նկատմամբ, ինչը պայմանավորված էր Բ. Դան հետ հարաբերությունները չսրելու՝ Եգիպտոսի ընտրած քաղաքական կողմնորոշմամբ: Այդպիսի մտայնությամբ էլ ներքին գործերի նախարարությունը աշխատանք չունեցող հայերին երկրից կրկին դեպի Կ. Պոլիս արտաքսելու հրաման էր հրապարակել: Ինչպես նաև որոշվել էր՝ կրճատել վերադարձող հայերի ճանապարհածախսը կիսով չափ, պայմանով, որ երկրորդ անգամ չվերադառնան Եգիպտոս: Ռուսական շոգենավերի ընկերությունը պարտավորություն էր ստանձնել նրանց կես գնով տեղափոխել իրենց բնակավայրերը: Իսկ խղիվական շոգենավերի ընկերությանը Եգիպտական կառավարու-

<sup>1</sup> «Բոլոր այդ գաղթականները կը կերակրվեին ու կը խնամվեին Նպաստամատուց Հանձնաժողովի մը ձեռքով, որուն հասույթի աղբյուրները այլապես առատ էին» (տես Օտյան Ե., Երկերի ժողովածու, հ. 4., եր., 1962, էջ 110):

թյունը հանձնարարել էր անվճար տեղափոխել հայերին: Հատկապես դրանից հետո առավել մեծ թափ ստացավ հայ գաղթականների մեկնումը Եգիպտոսից<sup>1</sup>:

Այն, որ օսմանյան կառավարությունը հայերի ունեցվածքն ու գույքը արագորեն բռնագրավում էր նրանց հեռանալուց հետո<sup>2</sup>, նույնպես արտացոլված է պարբերականում. «Հայերը» վերնագրված հեռագրերի շարքում ընթերցողը տեղեկացվում է. «Օղեսայից հայտնել են, որ ունևոր հայ ընտանիքներից շատերը, որոնք թուրքիայից եկել էին այդ քաղաք, ստիպված են այս օրերին վերադառնալ Պոլիս, որպեսզի կառավարությունը չբռնագրվի իրենց ունեցվածքը»<sup>3</sup>:

Իսկ Ամերիկայից ուղարկված մի նամակի վրա հիմնվելով՝ «Ալ-Մուքաթթամը» ծանուցում է, որ հայերի աջակիցների կազմակերպությունը արդեն հավաքել է 3883500 ֆրանկ՝ հայ աղքատների օգնելու նպատակով, և ԱՄՆ կառավարությունից պահանջում է առավել կոշտ միջոցներ գործադրել Բ. Դան նկատմամբ՝ Հայկական խնդրում արդյունքների հասնելու համար<sup>4</sup>:

Ծանոթանալով «Ալ-Մուքաթթամ» պարբերականի հրապարակումներում հայերին առնչվող նյութին՝ հարկ է փաստել, որ լիներով Եգիպտոսում բրիտանական շահերի խոսափող՝ պարբերականը ժամանակի խնդիրներն արտացոլել է բրիտանական քաղաքական առաջնայնությունների լույսի ներքո: Այնուհանդերձ, անհրաժեշտ է ընդգծել, որ «Ալ-Մուքաթթամի» էջերում տեղ գտած նյութը հայերի մասին աչքի է ընկնում իր անկողմնակա բնույթով, ինչը նշված պատմական ժամանակաշրջանում համահունչ էր բրիտանական ռազմավարությանը:

<sup>1</sup> Տես Թովուզյան Հ. Խ., նշվ. աշխ., էջ 119:

<sup>2</sup> Հայերի գույքը բռնագրավվում էր՝ համապատասխան կայսրության ընդունած օրենքի՝ «մահլուլ» անժառանգություն համարվող գույքի և տարածքների մասին, որը չնայած կիրառելի էր բոլոր հպատակների նկատմամբ, առանձնակի բժախնդրությամբ գործադրվում էր հատկապես հայերի դեպքում:

<sup>3</sup> Նույն տեղում, 1896, 30 նոյեմբեր:

<sup>4</sup> Նույն տեղում, 1896, 18 նոյեմբեր:

«Ալ-Մուքաթթամի» հրապարակումները ևս մեկ անգամ բարձրաձայնել են օսմանյան կառավարության կողմից Արևմտյան Հայաստանում ստեղծած ծանր կացության մասին: Արևմտյան Հայաստանում և կայսրության այլ բնակավայրերում հետևողականորեն իրականացված հայկական կոտորածները, դրանց հետևանքով իրենց հայրենիքից տեղահան եղած հայության խնդիրները, միջազգային հանրության կողմից հիշյալ խնդիրներին տրված գնահատականները լայնորեն լուսաբանվել են պարբերականի էջերում՝ դրանց մասին իրազեկելով ստվարաթիվ ընթերցողներին և համապատասխանաբար ձևավորելով եգիպտական հասարակության մի որոշակի զանգվածի ուրույն վերաբերմունքը:

**Narine Esayan – *Publications of the Egyptian Newspaper “Al-Muqattam” about Massacres of the Armenians and the Armenian Refugees (1889-1896)*** – Armenian massacres of 1894-1896 were reflected on the pages of the Egyptian daily “Al-Mukattam”, which was intended to represent the general interests of Britain in Egypt. It is repeatedly confirmed in the issues of “Al-Mukattam” that the Armenian massacres were organized and carried out by the Ottoman government. The newspaper condemned the positions of Great States towards the Armenian Question. “Al-Mukattam” also dealt with the problem of Armenian refugees in Egypt. “Al-Mukattam” is an important source of his times, which reveals the core views of the particular circles of the Egyptian public opinion about the policy of the Ottoman empire on the extermination of the armenians in Western Armenia.

## **ՀԱՅԿ ԵՆԳԻՐԱՐՅԱՆ**

### **ՀԱՅՈՑ ՄԵՃ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Հայագիտության մեջ հայ ժողովրդի պատմության ուսումնասիրման անբաժանելի մաս է համարվում հայկական գաղթօջախների պատմությունը: Ստեղծվել են ինչպես առանձին, հիմնարար աշխատություններ՝ նվիրված հնդկահայ, պարսկահայ, եգիպտահայ, լեհահայ, սիրիահայ կամ, ավելի կոնկրետ, Ղրիմի, Նոր Նախիջևանի, Աստրախանի, Նոր Ջուղայի, Հալեպի, Քեսապի և հայկական բազմաթիվ այլ գաղթօջախների<sup>1</sup>, այնպես էլ ակնարկներ ընդհանուր գաղթօջախների պատմության վերաբերյալ: Այս առումով հիշատակելի են հատկապես Ա. Արրահամյանի, Ա. Ալպոյաճյանի, Ս. Գասպարյանի և այլոց աշխատությունները<sup>2</sup>, որոնցում առավել տեղ և ուշադրություն է հատկացվել այն բանին, թե ինչպես է ձևավորվել գաղթօջախը, պատմական ինչ դժվարություններ է հաղթահարել, քաղաքական և սոցիալական ինչ մարտահրավերների է դիմակայել, ինչ գործիչներ ու գործեր է տվել աշխարհին ու հայրենիքին: Ահա պատմագիտական այսպիսի աշխատություններում է, որ անդրադարձ է կատարվում նաև հայրենադարձությանը, երբ խոսվում է հայրենիք-սփյուռք կապերի մասին: Նման դեպքերում հեղինակները ներգաղթի վերաբերյալ երբեմն տալիս են շատ հպանցիկ տեղեկություններ այս կամ այն համայնքի շրջանակներում:

1946-1948 թվականների հայրենադարձությունը հայ պատմագի-

<sup>1</sup> Տես **Թ. Խոջամալեան**, Պատմութիւն Հնդկաց, մաս 1-2, Կալկաթա, 1848-49, **Խ. Թովմասեան**, Հայք ի Հնդկկա Անգղիացոյ և Հոլանտացոյ, Վնտ., 1880, **Հ. Փահլևանյան**, Իրանահայ համայնքը (1941-1979 թթ.), Եր., 1989, **Հ. Թովուլյան**, Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805-1925), Եր., 1978, **Ն. Սիբայելեան**, Եգիպտահայ գաղութը 10-15-րդ դարերում, Պէյրոս, 1980 և այլն:

<sup>2</sup> Տես **Ա. Արրահամյան**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա, Բ, Եր., 1964, Եր., 1967, **Ա. Ալպոյաճեան**, Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. 1, 2, Կահիրէ, 1941, 1955, **Ս. Գասպարյան**, Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Եր., 1962:

տության մեջ անվանվում է նաև «Մեծ Հայրենադարձ»։ Նման ծավալով ու թվաքանակով դեռևս աննախադեպ այս երևույթը՝ դրական ու բացասական կողմերով, խորքային նպատակներով ու «ենթատեքստով», տասնյակ հազարավորների նվիրական երազներով ու ակնկալիքներով, հուսալքումներով ու տառապանքներով հանդերձ, մինչև օրս համընդհանուր և ամբողջական ուսումնասիրման չի արժանացել հայ պատմագիտության մեջ։

Խոսելով քննարկվող հարցի մասին՝ նախ և առաջ անհրաժեշտ է նկատել, որ մինչ օրս հայ եկեղեցու դերը մեծ հայրենադարձության գործընթացում ո՛չ պատմագիտական, ո՛չ էլ առավել ևս եկեղեցաբանական հետազոտությունների նյութ չի դարձել՝ բացառությամբ որոշ մասնավոր դեպքերի՝ մի քանի էջերից բաղկացած փոքրիկ հոդվածներ, որոնցում հայ եկեղեցու գործունեությունը Մեծ հայրենադարձության ընթացքում քննվում է մասնակիորեն՝ կամ հայ առաքելական եկեղեցու, կամ էլ կաթոլիկ եկեղեցու տեսանկյուններից<sup>1</sup>։

Պատմագիտության և եկեղեցաբանության մեջ երբեմն հանդիպում ենք ուսումնասիրությունների, որոնցում սույն թեման գլխավոր քննարկման առանցք չի դառնում, սակայն արծարծվում է, այսպես ասած, հարակից հայեցակետով։ Դրանցից են հիմնականում զուտ պատմագիտական կամ էլ մասնակի դեպքերում ազգագրական ակնարկները, ինչպես, օրինակ, Ստեփան Ստեփանյանցի և Արմենուհի Ստեփանյանի աշխատանքները<sup>2</sup>։

Մինչ այժմ 1946-1948 թթ. Մեծ հայրենադարձությունը պատմա-եկեղեցաբանական ամբողջական հետազոտության չի ենթարկ-

<sup>1</sup> Տես Վ. Պողոսյան, Ա. Դավթյան, 1946-1948 թթ. հայրենադարձությունը և հայ առաքելական եկեղեցու գործունեությունը, «1946-1948 թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրներն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., 2009, էջ 380-391, Լ. Հարությունյան, Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ. Չորեքյանի դերակատարությունը 1946-1948 թթ. հայրենադարձության կազմակերպման գործում, նույն ժողովածուում, էջ 372-379, Ա. Էլճանեան, Հայ կաթոլիկ պատրիարքարանի դիրքը Խորհրդ. Հայաստանին, ներգաղթին և Հայկական դատին հանդեպ, «Կայծ» մատենաշար, թիվ 30, Պեյրոս, 1947։

<sup>2</sup> Տես Ա. Ստեփանյանց, Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Եր., 1994, Ա. Ստեփանյան, XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Եր., 2010։

վել. այն մաս է կազմել է XX դ. ընդհանուր հայրենադարձության պատմության։ Անդրադառնալով հայ պատմագիտության մեջ սփյուռքահայերի հայրենադարձության պատմությանը՝ պատմաբան Պետրոս Հովհաննիսյանը այն բաժանում է երեք փուլի։ Առաջինը՝ 1920-1950-ական թվականներ, երբ սույն թեմային անդրադարձ է կատարվում հպանցիկորեն։ Երկրորդ փուլն ընդգրկում է 1960-ական թվականներից մինչև 1980-ականների վերջերը։ Այս ընթացքում հայրենադարձության պատմության ուսումնասիրությունը դրվում է գիտական հիմքերի վրա, ի հայտ են գալիս մենագրական առաջին հետազոտությունները։ Եվ վերջապես երրորդ փուլը՝ 1990-ական թվականների սկզբից մինչև մեր օրերը։ Այս փուլի հայրենադարձությանը նվիրված հետազոտությունները տարբերվում են նախորդներից, քանի որ, կարելի է ասել, առավել օբյեկտիվ են շարադրված և չունեն գաղափարական, կուսակցական մոտեցումներ<sup>1</sup>։

Խորհրդային տարիներին հայրենադարձության վերաբերյալ լույս տեսած հետազոտություններում հիմնականում շեշտը դրվում է հայրենադարձության նախապատրաստման ու իրականացման ուղղված խորհրդային իշխանությունների գործունեության վրա։ Չնայած մասնակի բացառություններին՝ դրականորեն է ներկայացվում ողջ գործընթացը, և անտեսվում են բազմաթիվ ողբերգական երևույթներ։ Այդ տարիներին ի հայտ են գալիս նաև հարցին որոշակիորեն առնչվող հետազոտություններ ու որոշ վիճակագրական աշխատանքներ<sup>2</sup>։

Հայրենադարձության պատմության ուսումնասիրման բնագավա-

<sup>1</sup> Տես Պ. Հովհաննիսյան, Հայրենադարձության պատմության պատմագրությունը, «1946-1948 թթ. հայրենադարձությունը և դրա դասերը...», Եր., 2009, էջ 32։

<sup>2</sup> Տես Ա. Խուրդադյան, Ներգաղթը և գաղթականության բնակեցումը Հայաստանում, «Նոր ուղի», Ե., 1924, թիվ 6, էջ 121-131, Հ. Հակոբյան, Խորհրդային Հայաստան, Եր., 1929, Պ. Մակինցյան, Նանսենի գործն ու գիրքը, «Նոր ուղի», Ե., 1929, թիվ 1, էջ 347-351, Հ. Էլիբեկյան, Վասպուրականի հայերը Միջագետքում և նրանց վերադարձը Սովետական Հայաստան, «Տեղեկագիր» ՀԳԱ (հասարակ. գիտ), 1949, թիվ 2, էջ 17-26, Ա. Հակոբյան, Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում, Եր., 1955, էջ 315-317, С. В. Хармандарян, Армянская ССР в первый год НОВОЙ экономической политики, Ереван, 1955, стр. 144-151։

ռում հսկայական աշխատանք է կատարել անվանի պատմաբան Յ. Մելիքսեթյանը գիտական պարբերականներում հրատարակված հոդվածներով, երկու մենագրական աշխատություններով<sup>1</sup>: Նա գիտական նոր հարթություն է տեղափոխում հայրենադարձության թեման: Առաջին գրքում՝ «Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1915-1940 թթ.)», խոսվում է գաղթական արևմտահայերի հայրենադարձության կազմակերպման ուղղությամբ Խորհրդային Հայաստանի ծավալած աշխատանքների, Սփյուռքի տարբեր կառույցների ու բարեգործական, հայրենակցական միությունների գործունեության, ինչպես նաև Ազգերի լիգայի քաղաքականության մասին:

Յ. Մելիքսեթյանի երկրորդ աշխատությունը «Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.)» մենագրությունն է, որտեղ հեղինակը անդրադառնում է Հայրենիք-Սփյուռք առնչություններին և խորհրդային տարիներին կազմակերպված հայրենադարձության պատմությանը, ուսումնասիրվել են 1920-1980-ական թվականների հայրենադարձության երեք փուլերը՝ 1921-1936 թթ., 1946-1948/1949 թթ., 1962-1982 թթ.: Հեղինակը խոսում է նաև ժամանակակից Սփյուռքի ձևավորման, գաղթականության հարցի լուծման առաջին ձեռնարկումների, Ազգերի լիգայում հայ գաղթականության խնդրի և Նանսենյան ծրագրի մասին, ինչպես նաև անդրադառնում է Հայրենիք-Սփյուռք կապերի զարգացման և հայրենադարձության իրականացման ուղղությամբ Հայաստանի օգնության կոմիտեի գործունեությանը և հայրենադարձության նկատմամբ սփյուռքյան կուսակցությունների ու կազմակերպությունների դիրքորոշումներին և այլ հարակից հարցերի:

Յ. Մելիքսեթյանը սույն աշխատության մեջ գրում է, որ սփյուռքահայությունը, որքան էլ հայրենասեր ու ավանդապահ, դատա-

<sup>1</sup> Տե՛ս Յ. Մելիքսեթյան, Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1920-1980 թթ.), Եր., 1975, նույնի՝ Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Եր., 1985:

պարտված է անխուսափելի ուժացման և անհետացման, ուստի գաղութահայության փրկության միակ ու իրական ուղին հայրենադարձությունն է, մայր հայրենիքում ապրող հայության հետ վերամիավորումը, ազգահավաքումը: Եվ ուրեմն, ո՞րն է պատճառը, որ պատմաբանը սփյուռքահայության հետագա գոյատևման նկատմամբ ունի նման վերաբերմունք, չէ՞ որ կյանքը ցույց տվեց, որ Սփյուռքը լավ էլ կարողացել է պահպանել իր ազգային ինքնությունը, հատկապես Խորհրդային Սիության տարիներին սփյուռքահայերը առավել խոր ազգային ու հոգևոր գիտակցությամբ են ապրել, քան Խորհրդային Հայաստանի իրենց հայրենակիցները: Մի՞թե այս կերպ Յ. Մելիքսեթյանը չի փորձել արդարացնել հայրենադարձության ողջ գործընթացը՝ անտեսելով ստալինյան քաղաքական ծրագրի հակամարդասիրական ուղղվածությունը: Բացի այդ, հայրենասեր Սփյուռքը ներգաղթում է անհատի մակարդակով, ուստի և խնդիր չունի Սփյուռքն ուժացումից փրկելու, այլ խնդիր ունի իր գլուխը պահելու, հետևաբար հայ մարդը ևս, որքան էլ գաղափարական լինի, ոչ թե կարգախոսներով է ապրում, այլ առօրեական հոգսերով:

Պետք է նշել նաև, որ հեղինակը շատ մեղմ է խոսում հայրենադարձության կազմակերպման ու իրականացման ժամանակ թույլ տրված սխալների ու թերությունների մասին՝ ներկայացնելով հայրենադարձության միայն դրական կողմերը, անտեսելով հայրենադարձների ընդունման և տեղավորման ժամանակ ի հայտ եկած բազում դժվարությունները, բնակարանների, կենցաղային տարրական պայմանների բացակայությունը, հայրենադարձների մեջ արտագաղթի տրամադրության առկայությունը և այլն, և այլն: Հեղինակը հայրենադարձների մեջ նկատվող բացասական տրամադրությունները բացատրում է մասամբ կենցաղային ու աշխատանքային դժվարություններով, մասամբ էլ նոր պայմանների ոչ ճիշտ ընկալմամբ և բարձրացնում է խորհրդային իշխանությունների դերը այդպիսի երևույթների վերացման հարցում՝ նշելով, որ հանրապետության կուսակցական և խորհրդային ղեկավար մարմինները լրացուցիչ գործնական միջոցառումներ են

ծեռնարկում հայրենադարձների աշխատանքային ու կենցաղա-  
յին պայմանները բարելավելու, նրանց նկատմամբ ամենօրյա ու-  
շադրություն, հոգատարություն ցուցաբերելու և նրանց շրջանում  
քաղաքական-դաստիարակչական աշխատանքները ուժեղացնե-  
լու ուղղությամբ: Անգամ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի ագիտացիայի և  
պրոպագանդիայի բաժնում ստեղծվում է հայրենադարձների  
շրջանում տարվող աշխատանքի սեկտոր<sup>1</sup>:

Ըստ Ամատունի Վիրաբյանի՝ Հ. Մելիքսեթյանը, ծանոթ չլինելով  
մի շարք արխիվային փաստաթղթերի, մասնավորապես ՀԿ(Բ)Կ  
Կենտկոմի առաջին քարտուղար Գր. Հարությունյանի կողմից  
Ստալինին և մյուս ղեկավարներին հղած գրություններին, չի  
ներկայացրել հայրենադարձության կազմակերպման ճանապար-  
հին ծագած մի շարք հարցեր<sup>2</sup>: Այնուհանդերձ պետք է նշել, որ  
հեղինակն օգտագործել է բավականին արխիվային նյութեր՝ ներ-  
կայացնելու համար հայրենադարձության ընդհանուր պատկերը՝  
ըստ թվաքանակի և ըստ երկրների, չնայած որ այստեղ էլ որոշ  
դեպքերում հանդիպում ենք փոքր-ինչ այլ տվյալների: Օրինակ՝  
ըստ Հ. Մելիքսեթյանի՝ 1946-1948/49 թվականների հայրենա-  
դարձների ընդհանուր թիվը 20646 ընտանիք է կան 89750 մարդ,  
որը, սակայն, Համլետ Սարգսյանը, հղում անելով Հայաստանի  
Նախարարների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեի տվյալ-  
ներին, ճշգրտում է՝ 20550 ընտանիք կան 89770 մարդ<sup>3</sup> (մի այլ  
տեղ նշված է 89637 հոգի<sup>4</sup>, իսկ մեկ այլ տեղ՝ 20325 ընտանիք  
կան 89665 մարդ<sup>5</sup>):

Քննելով 1946-1948 թվականների հայրենադարձությունը՝ Մելիք-

<sup>1</sup> Տե՛ս Հ. Մելիքսեթյան, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությու-  
նը, էջ 222:  
<sup>2</sup> Տե՛ս Ա. Վիրաբյան, Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով, հասարակական-  
քաղաքական կյանքը, Եր., 2001, էջ 9:  
<sup>3</sup> Տե՛ս Հ. Սարգսյան, 1946-1948 թթ. հայրենադարձության աշխարհագրությունը և  
ժողովրդագրությունը, «1946-1948 թթ. հայրենադարձությունը և դրա դասերը...», Եր.,  
2009, էջ 56:  
<sup>4</sup> Տե՛ս <http://hayrenadardz.org/history/1948-2>  
<sup>5</sup> Տե՛ս «1946-1948 թթ. հայրենադարձությունը և դրա դասերը...», էջ 55:

սեթյանը շատ մակերեսային է խոսում հայրենադարձության գոր-  
ծում հայ եկեղեցու դերակատարության մասին՝ բավարարվելով  
միայն մի փոքրիկ պարբերությամբ, որ հայրենադարձությանն  
աջակցելու գործում խրախուսելի դիրքորոշում է ցուցաբերել  
նաև «Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսությունը», և որ Սո-  
վետական կառավարության որոշումը հայ առաքելական եկեղե-  
ցին ողջունում է սրտաբաց, խորին երախտագիտության անկեղծ  
զգացումով: Մելիքսեթյանը նշում է նաև, որ «Կաթողիկոսական  
տեղապահ<sup>1</sup> Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը այդ առթիվ ար-  
տասահմանյան հայկական եկեղեցական թեմերի առաջնորդնե-  
րին հղած կոնդակներում և ուղերձներում կոչ արեց գործարար  
կերպով օգնել ներգաղթի տեղական կոմիտեներին՝ հայրենա-  
դարձության նվիրական գործը կազմակերպված ձևով և հաջողու-  
թյամբ իրականացնելու համար»<sup>2</sup>: Այնուամենայնիվ, կարծում  
ենք, որ եկեղեցու մեծ դերակատարությունն ու այդ ուղղությամբ  
նրա վարած հսկայածավալ գործունեությունը սույն պատմական  
անցքերում գրեթե անտեսված են: Այնինչ հայ եկեղեցին է այն  
գլխավոր լծակը, որի միջոցով իրագործվում է Մեծ հայրենադար-  
ձությունը, քանզի հայկական բոլոր համայնքներում հենց եկեղե-  
ցին է իր հեղինակությամբ ու ազդեցությամբ որպես հայապահ-  
պանության գլխավոր կենտրոն ու հայրենիքի հետ կապող օղակ  
ի գորու եղել գլխավորելու նման վիթխարի տեղաշարժ:

Անդրադառնալով հայրենադարձության նկատմամբ տարբեր դիր-  
քորոշումներին՝ Հ. Մելիքսեթյանը քննադատության է ենթարկում  
ՀՅԴ-ի և հայ կաթոլիկ եկեղեցու պատրիարք կարդինալ Աղաջան-  
յանի՝ ներգաղթի դեմ ծավալած քաղաքականությունը: Հատկա-  
պես մեջբերելով կարդինալ Աղաջանյանի՝ հայ կաթոլիկ համայն-  
քին ուղղված 1946 թվականի հուլիսի 6-ի «Թուրք հովվական»

<sup>1</sup> Հարկ է նկատել, որ այդ ժամանակ Չորեքչյանը արդեն ընտրվել էր Ամենայն Հայոց  
կաթողիկոս (1945 թվականի Ազգային-եկեղեցական ժողովի հունիսի 22-ի նիստում) և  
այլևս Կաթողիկոսական տեղապահ չէր:  
<sup>2</sup> Տե՛ս Հ. Մելիքսեթյան, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը  
(1920-1980 թթ.), էջ 187:



կոնդակը<sup>1</sup>, որով կարդինալը հորդորում է իր հոտին չներգաղթել խորհրդային Հայաստան այնտեղ տիրող կրոնական անազատության պատճառով, Մելիքսեթյանը անխնա քննադատում է կաթոլիկ պատրիարքի հականերգաղթյան գործունեությունը՝ այդ նպատակով տարբեր կարծիքներ ու դիրքորոշումներ մատնանշելով: Այս առումով Մելիքսեթյանը անդրադառնում է նաև Սիրիայի Բարձր Ջեզիրեի և Եփրատ նահանգների հայ կաթոլիկ եկեղեցու պատրիարքական փոխանորդ Կյուրեղ եպիսկոպոս Ջոհրայանի գործունեությանը<sup>2</sup>: Ակնհայտ է, որ Հ. Մելիքսեթյանի տեսակետը բխում էր միայն խորհրդային իրականությունից:

Ինչպես նշեցինք, խորհրդային պատմագիտության մեջ երբեք էլ համակողմանի քննության չի ենթարկվել հայոց հայրենադարձության թեման, չեն մատնանշվել ներգաղթի կազմակերպման ու իրականացման ժամանակ թույլ տրված սխալներն ու թերությունները՝ բազմաթիվ բացասական երևույթների ուղեկցությամբ, տասնյակ հազարավոր ներգաղթյալների տառապանքները, հիասթափություններն ու արտագաղթի տրամադրությունները: Չնայած այդ տարիներին ավելին պահանջել երկի հնարավոր չէր, որովհետև խորհրդային երկիրը չէր հանդուրժում որևէ քննադատություն:

Հայաստանի անկախացումից հետո, երբ արդեն վերանում է խորհրդային կուսակցական գաղափարախոսությունը, վերանում է նաև խորհրդային գրաքննությունը. հիմնահարցի ուսումնասիրման առումով հայ պատմաբանների ու հետազոտողների համար ալևս ի չիք են դառնում բոլոր կապանքները:

Եվ ահա հայոց հայրենադարձությունը սկսվում է նորովի ընկալվել, ի հայտ են գալիս որոշ հետազոտություններ<sup>3</sup>, ինչպես նաև

<sup>1</sup> Տե՛ս Կարդինալ Գրիգոր - Պետրոս Աղաճանեան, Չայն Հոլովական, Վենետիկ - Ս. Ղազար, 1967:  
<sup>2</sup> Տե՛ս Հ. Մելիքսեթյան, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), էջ 349:  
<sup>3</sup> Տե՛ս Հ. Սարգսյան, Արևմտահայերի գաղթը Արևելյան Հայաստան, «Հայոց ցեղապանությունը» (ուսումնասիրություններ), Եր., 2001, էջ 128-167, Մ. Աղաջանյան,

հարցին մասամբ վերաբերող աշխատանքներ<sup>1</sup>, որոնցում հայրենադարձությունը ուսումնասիրվում և ներկայացվում է առկա բացասական կողմերով հանդերձ:

Հարկ է նշել նաև Է. Դանիելյանի և Կ. Հայրապետյանի՝ արևմտահայ գաղթականության տարաբնույթ խնդիրներին նվիրված հետազոտությունները<sup>2</sup>, որոնք հիմնականում կատարվել են անկախացումից հետո:

Հայրենադարձության թեմայի և Հայկական հարցի ուսումնասիրության առումով կարևոր է ներկայացնել նաև պատմաբան Նորիկ Սարգսյանի աշխատանքները, որոնք հեղինակը կատարել է ինչպես խորհրդային տարիներին, այնպես էլ անկախացումից հետո: Պետք է նշել, որ «ՀԿԿ գործունեությունը սփյուռքահայերի հայրենադարձության կազմակերպման և նրանց սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու ուղղությամբ (1946-1948)» խորհրդային տարիներին լույս տեսած հոդվածում Ն. Սարգսյանը բացառապես դրական վերաբերմունքով է ներկայացնում հայրենադարձության կազմակերպման, ներգաղթողների ընդունման և տեղավորման ողջ գործընթացը՝ անտեսելով եղած

Հայրենադարձություն. իրավական ապահովման և արդյունավետ իրականացման հարցեր, «21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, թիվ 11 (11), Եր., 2006, էջ 53-81, Մ. Ստեփանյան, Հ. Սարգսյան, Իրանահայերի ներգաղթն ու վերաբնակեցման խնդիրները (1946-1970-ական թվականներին), «Պատմա-բանասիրական հանդես», 2009, թիվ 1, էջ 43-54, Մ. Կունդակչյան, Հայրենադարձների բռնաճնշումները ստալինյան ժամանակաշրջանում, Եր., 2010:  
<sup>1</sup> Տե՛ս Հ. Հակոբյան, Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, Եր., 2000, Նույնի՝ Հայրենիքն իբրև պատական կատեգորիա. տարագրություն և հայրենադարձություն, «Պատմա-բանասիրական հանդես», 2001, թիվ 2, էջ 143-163, Նույնի՝ Հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական և իրավական հիմքերը, Եր., 2002, և այլն:  
<sup>2</sup> Տե՛ս Է. Դանիելյան, Արևմտահայ գաղթականության հարցը Սովետական Հայաստանում, «Հայաստանում սովետական իշխանության հաստատման և ամրապնդման պատմության մի քանի հարցեր», ժողովածու, Եր., 1987, էջ 226-257, Կ. Հայրապետյան, Հայաստանի խորհրդայնացման մայիսյան փորձը (1920 թ.) և արևմտահայ փախստականները, «Լրաբեր» ՀԿԿ (հասարակ. գիտ.), 1990, թիվ 10, էջ 9-18, Նույնի՝ Փախստականների նկատմամբ պետական քաղաքականության օրենսդրական ձևակերպումը Հայաստանի Հանրապետությունում (1918 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր), «Պատմա-բանասիրական հանդես», 2004, թիվ 1, և այլն:

բազմաթիվ թերություններ: Այնուամենայնիվ Ն. Սարգսյանն իր հետագա ուսումնասիրություններում առավել օբյեկտիվ գնահատականներ է տալիս հայրենադարձության կազմակերպման խնդիրներին: Այս առումով հատկապես ուշագրավ են անկախացումից հետո հեղինակի կատարած մի շարք ուսումնասիրություններ, որտեղ Ն. Սարգսյանը արդեն մատնանշում է հայրենադարձության կազմակերպման գործի բացթողումներն ու շինարարության ոլորտում թույլ տված սխալները՝ նշելով, որ բոլոր միջոցառումները դատապարտված էին ձախողման<sup>1</sup>:

Հարկ է նկատել, որ հեղինակը, խոսելով 1946-1948 թթ. զանգվածային հայրենադարձության նախապատրաստական աշխատանքների մասին, անդրադառնում է, թեև շատ հպանցիկ, նաև հայ եկեղեցու դերակատարությանը, ինչպես նաև ներգաղթի նկատմամբ հայ կաթոլիկ եկեղեցու առաջնորդ կարդինալ Աղաջանյանի վերաբերմունքին:

«Հայրենադարձության նախապատրաստական աշխատանքներում իրենց ծանրակշիռ ու հեղինակավոր դերն ունեին էջմիածնի և Անթիլիասի հայոց եկեղեցիները: Եթե Բեյրութում չիմանային ու լավ չպատկերացնեին, թե ի՞նչ է սպասվում Սփյուռքի հայերին, ապա էջմիածնում դժվար թե չիմանային, որ հայրենադարձների հիմնական մասը հարկադրաբար հավատափոխ է արվելու, աստծո փոխարեն նրանք ստիպված կլինեն պաշտել Ստալինին, իսկ քրիստոնեության փոխարեն՝ մարքսիզմ-լենինիզմ: Այսքանով հանդերձ Ամենայն Հայոց Կաթողիկոս Պատրիարք Զ-ն իր կոչերում ի. Հայաստանը համարում էր շենշող երկիր ու հայության փրկության փարոս»<sup>2</sup>, - գրում է Ն. Սարգսյանը:

Նորիկ Սարգսյանը իր մեկ այլ հոդվածում<sup>3</sup>, անդրադառնալով

<sup>1</sup> Տես Ն. Սարգսյան, Սփյուռքահայերի 1946-1948թթ. զանգվածային հայրենադարձության նախապատրաստումը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1996, թիվ 3, էջ 9:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Տես Ն. Սարգսյան, 1945-1953 թթ. իսրայելի կողմից թուրքիայից հայկական տարածքների պահանջը որպես Հայկական Հարցի լուծման խոչընդոտ, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2011, համար Ա, էջ 220-229:

1945-1953 թթ. իսրայելի կողմից թուրքիայի հայկական տարածքների պահանջի խնդիրն, նշում է, որ այդ տարածքների պահանջն իրականում կապ չունի Հայկական հարցի հետ, քանզի, ըստ հեղինակի, այն առնչվում է միայն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, և հայկական տարածքների պահանջատիրությունը Ստալինի համար ուղղակի սակարկման առարկա է դարձրել, որպեսզի սևծովյան նեղուցներում նոր տարածքներ ստանա: Ն. Սարգսյանը նշում է, որ 1945 թվականի Պոտսդամի կոնֆերանսում երևում է, որ իսրայելը լուրջ չի մոտենում հայկական տարածքների պահանջին: «Երբ Մոլոտովը թուրքիային ներկայացվող պահանջները գրավոր հանձնում է Ու. Չերչիլին և Տրյումենին, հասկացնում է, որ եթե իրենք նեղուցների հարցում լեզու գտնեն թուրքերի հետ, ապա դրանով էլ կբավարարվեն»<sup>1</sup>, - գրում է Ն. Սարգսյանը:

Հեղինակը անդրադառնում է նաև որոշ պատմաբանների այն տեսակետին, ըստ որի՝ Ստալինը Հայկական հարցի լուծման համար հետևողական էր: Օրինակ, Լ. Խուրշուդյանի կարծիքով, Ստալինը Հայկական հարցում հետևողական էր, և պահանջելով թուրքիայից վերադարձնել հայկական տարածքները՝ Ստալինը, այնուամենայնիվ, մտադիր էր դրանց մի մասը նվիրաբերել Վրաստանին<sup>2</sup>: Իսկ Էդ. Մելքոնյանը գրում է. «Դա եզակի և իր նախադեպը չունեցող երևույթ էր, երբ Ստալինի ծրագրերը համահունչ էին հայ ժողովրդի ազգային շահերի և նպատակների հետ»<sup>3</sup>: Ահա Ն. Սարգսյանը հակադրվում է վերոնշյալ տեսակետին՝ նշելով, որ «եթե մենք հավատանք, որ Ստալինի ու հայության հույսերը պատմության որոշակի փուլում հանդնկել ու համահունչ են եղել, ուրեմն պիտի վերանայենք 1917-1921 թթ. նրա հակահայկական գործունեությունը»<sup>4</sup>: Այնուհետև Ն. Սարգսյանը,

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 221:

<sup>2</sup> Տես Լ. Խուրշուդյան, Հայկական հարցը, Եր., 1995, էջ 58:

<sup>3</sup> Էդ. Մելքոնյան, Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Եր., 2005, էջ 353:

<sup>4</sup> Ն. Սարգսյան, 1945-1953 թթ. իսրայելի կողմից թուրքիայից հայկական տարածքների պահանջը որպես Հայկական Հարցի լուծման խոչընդոտ, համար Ա, էջ 222:

առաջ քաշելով բազմաթիվ փաստարկներ, հիմնավորում է իր այն տեսակետը, որ 1945-1953 թթ. Թուրքիայից ԽՍՀՄ-ի տարածքային պահանջները ոչ մի առնչություն չունեն Հայկական հարցի հետ և խոչընդոտել են դրա արդարացի լուծմանը:

Հայոց հայրենադարձության քննության առումով կարևոր են ազգագրագետ Արմենուհի Ստեփանյանի կատարած հսկայածավալ ուսումնասիրությունները: «XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում» մենագրության մեջ<sup>1</sup> հեղինակը առաջին անգամ հայրենադարձության երևույթը դիտարկում է ազգաբանական տեսանկյունից՝ պատմաազգագրական հետազոտության ենթարկելով XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում: Աշխատանքում քննարկվում են հայրենադարձության փուլերը, ներգաղթածների ու տեղաբնակների փոխընկալումները, կենցաղամշակութային փոխներթափանցումները, ներգաղթի հարմարվելու ու ինտեգրման գործընթացները, նոր պայմաններում նորեկների ինքնության փոփոխությունները: Հեղինակի ուշադրությունը գրավում են հատկապես ներգաղթածներից ստացած տեղեկությունները, որոնցում ի հայտ են գալիս հայրենադարձների հոգեկան ապրումները, նրանց տառապանքներն ու զրկանքները, տեղաբնակների հետ հարաբերվելու առանձնահատկությունները, ինչպես նաև ներգաղթածների նկատմամբ անվստահության մթնոլորտի առկայությունը: Արմենուհի Ստեփանյանը հայրենադարձության ողջ գործընթացի ուսումնասիրությունը ներկայացնում է խորհրդային իրականությունում գոյություն ունեցած սարսափելի երևույթների վերհանումով, որոնք իրենց ազդեցությունն են թողնում հայրենադարձների պատկերացումների ու ընկալումների վրա:

Կարևոր է նշել, որ հայերի հայրենադարձության թեմային անդրադարձել են նաև օտար հեղինակներ, ինչպես, օրինակ, տնտեսա-

<sup>1</sup> Տե՛ս Ա. Ստեփանյան, XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Եր., 2010, տե՛ս նաև Ա. Խորալեյանի գրախոսականը, «Պատմա-բանասիրական հանդես», 2011, թիվ 1, էջ 337-339:

գետ, լրագրող, դիվանագետ, 1946-1948 թթ. Նյու Յորքում ԽՍՀՄ գլխավոր հյուպատոս Յակով Լոմակինը<sup>1</sup>: Անդրադառնալով 1946-1948 թթ. հայրենադարձությանը՝ նա նշում է, որ հայրենադարձության խնդիրը դրականորեն լուծվեց, որովհետև համընկնում էին հայերի հողային պահանջատիրության և Ստալինի կայսերապաշտական ծրագրերը: Լրագրող Կիրիլ Նովիկովը «խորհրդային Միությունում հայերը իրենց վիրավորված են զգում»<sup>2</sup> հրապարակման մեջ անդրադառնում է XIX դարի վերջին և XX դարում հայերի տեղաբաշխմանը, ինչպես նաև մեջբերում է ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության 1974 թ. մարտի 12-ի զեկույցից մի հատված, որում խոսվում է այն մասին, որ նախարարությունը քայլեր է ձեռնարկում՝ կանխելու հայրենիքից հայերի արտագաղթելու տրամադրությունները:

1946-1948 թվականների հայրենադարձության հիմնախնդիրների ուսումնասիրման առումով հատկանշական է 2008 թվականին ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ կազմակերպված «1946-1948 թթ. հայրենադարձությունը. հայրենադարձության հիմնախնդիրներն այսօր» համահայկական գիտաժողովը, որտեղ կարդացված զեկույցումները հրատարակվեցին առանձին ժողովածուով՝ երեք տասնյակից ավելի հոդվածներով ու ուսումնասիրություններով<sup>3</sup>: Դրանցից կարելի է առանձնացնել պատմաբաններ Պ. Հովհաննիսյանի, Էդ. Մելքոնյանի, Ա. Վիրաբյանի, Հ. Սարգսյանի պատմագիտական դիտարկումները: Պետք է նշել, որ զեկույցումներից մի քանիսը ինչ-ինչ պատճառներով չեն զետեղվել ժողովածուի մեջ: Քննվող թեմայի տեսակետից կարևոր է հատկապես նշել պատմագիտության դոկտոր Արծրունի Սահակյանի ելույթը՝ նվիրված Մեծ հայրենադարձի եկեղեցաբանական քննությանը, որում առաջին անգամ բացահայտվում է Ի. Ստալին-

<sup>1</sup> Տե՛ս Я. Ломакин, Репатриация армян, <https://sites.google.com/site/jacoblomakin/biografia/nu-jork-1946-1948-gg-holodnaa-vojna/4-7-repatriacia-arkan>.

<sup>2</sup> Տե՛ս К. Новиков, Армяне в Советском Союзе чувствуют себя обиженными, Журнал "Коммерсантъ Власть", №15 (618), 18.04.2005.

<sup>3</sup> Տե՛ս «1946-1948 թթ. հայրենադարձությունը և դրա դասերը...», Եր., 2009:

նի քաղաքական «բլեֆը». հայրենադարձությունը օգտագործել թուրքիային հողային պահանջ ներկայացնելու<sup>1</sup>, թե՞ հողային պահանջն օգտագործել հայրենադարձություն կազմակերպելու համար: Այս երկիմաստ դիվանագիտական քայլը խորհրդային և արդի շատ պատմաբաններ հակված են մեկնաբանելու առաջին տեսակետի օգտին, իսկ եկեղեցաբանական մոտեցումն այլ բան է հուշում, ինչի մասին կխոսվի մեկ այլ հոդվածում:

Ուշադրության է արժանի նաև 2011 թվականին կայացած «Հայ գաղթականությունը և հայրենիք-սփյուռք կապերը 1918-1985 թթ.» խորագրով միջազգային գիտաժողովը, որտեղ հայրենադարձության հիմնախնդիրները ևս լուրջ քննարկման նյութ են դարձել<sup>1</sup>:

Այսպիսով, հարկ է նշել, որ եթե հայոց Մեծ հայրենադարձության պատմության ուսումնասիրման առումով առկա են որոշակի պատմագիտական նվաճումներ, ապա նույնը չի կարելի ասել եկեղեցաբանական հետազոտությունների մասին: Այսինքն՝ հայ եկեղեցու դերակատարությունը Մեծ հայրենադարձության ընթացքում գրեթե անտեսված է, մինչդեռ հայրենադարձության զանգվածային իրականացումը հաջողվեց միմիայն հայ եկեղեցու շնորհիվ, քանի որ սփյուռքահայերին ոգևորել և խորհրդային Հայաստանով տոգորել կարող էր միայն եկեղեցին՝ որպես հայապահպանության և հայության համախմբման գլխավոր երաշխավոր, և որի կոչերն ու հորդորներն ընդունելի էին ամենուրեք:

**Hayk Yengibaryan – *The historiography of the Great Repatriation of Armenians* –**

The article presents the historiography of the 1946-1948 Great Repatriation and touches upon all the activities that are fully or partially related to the Great Repatriation. In the article, importance is attached to the fact that the role of the Armenian Church in repatriation is almost overlooked in historiography. Whereas there are certain achievements in historiography in terms of the study on the history of repatriation, the same cannot be said for ecclesiastical studies.

---

<sup>1</sup> Տե՛ս «Հայ գաղթականությունը և հայրենիք-սփյուռք կապերը 1918-1985 թթ.», միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Եր., 2011:

## ԷԼԻՆԱ ՄԻՐԶՈՅԱՆ

### ՀԱՅ - ԹՈՒՐԶԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ «ԱԿՕՍԻ» ԷԶԵՐՈՒՄ (1996-2007 թթ.)

*«Որքան ատեն որ Թուրքիա չի ժողովրդավարանար,  
Հայաստան երբեք ինքզինք պիտի չկարենայ  
ապահով զգալ»:*

*Հրանտ Դինք*

«Ակօս» պարբերականը, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ուղիների ընկալման հարցում երկու կողմերի մոտեցումները քննելով, որդեգրեց քաղաքական մի ուղեգիծ, որի հիմնական առանցքը սահմանների բացումն է: Պարբերաթերթը հանգամանորեն անդրադառնում է իր առաջադրած ուղեգծի բաղադրիչներին:

«Ակօսը» ճշգրտում է իր դիրքորոշումը. անհրաժեշտ է ջանքերը սևեռել սահմանների բացման ուղղությամբ, հաստատել դիվանագիտական հարաբերություններ, վերագնահատել և համախմբել սեփական ուժերը, մշակել գործունեության հստակ ու որոշակի ծրագիր, որում առաջնայնություն կտրվի ընդհանուր շահի սկզբունքին: Պարբերաթերթը վճռորոշ է համարում Թուրքիայի՝ Եվրամիությանն անդամակցության և ժողովրդավարացման խնդիրը, ուստի և քաջալերում է բոլոր այն ջանքերը, որ ուղղված են այդ նպատակին: Այս խնդրի լուծումով, ըստ «Ակօսի», Հայաստանը ի դեմս Թուրքիայի կունենա ժողովրդավարական ու մարդասիրական ձգտումներով առաջնորդվող հարևան երկիր: Այս տրամաբանությամբ է պարբերականը քննության դնում խնդիրը, որով, ըստ նրա, լուծվելու է Հայկական հարցը:

Պարբերականի հողվածներում և մի շարք այլ հրապարակումներում<sup>1</sup> տրվում է երկկողմ հարաբերությունների զարգացման պատ-

<sup>1</sup> Տե՛ս «Türkiye Ermenistan ilişkileri niye önemli?» (Baskın Oran, Agos, 12 Nisan 1996), «Misyon» (Oşin Çilingir, Agos, 30 Ağustos 1996), «İlişkiler yol ayrımında» (Agos, 29 Mayıs

մական ճշգրիտ գնահատականը: Այս առումով հեղինակները պաշտպանում են արտաքին միջամտության բացառման տեսակետը:

Ինչպես նշեցինք, «Ակօսը» առաջնային է համարում սահմանների բացման խնդիրը: «Անկախ պատճառներից՝ Հայաստան – Թուրքիա միջպետական հարաբերությունների զարգացումն ու կարգավորումը ուրախացնող են, - գրում է Մենսուր Աբգյունը, - քանի որ այդ հարաբերությունների հաստատումով ամեն բան դրախտային կլինի: Սահմանների բացումը կօգնի, որ միմյանց հետ հարաբերվելու համար երկու ժողովուրդները կրկին պատրաստ լինեն, պատմություններով վերստին մերձենան և հաշտվեն»<sup>1</sup>:

Պարբերաբերթն առաջարկում է ջանքեր գործադրել հայ – թուրքական հարաբերությունները բնականոն հուն տանելու ուղղությամբ՝ «միասնաբար ապահովելով հաղորդակցության ուղիների բացումը»: Այդ ուղղությամբ կատարվող առաջին քայլերից մեկը պետք է լինի սահմանների և երկաթուղային ճանապարհների բացումը. և ԱՏՕ-ի և ԵՄ-ի տարածաշրջանում հաղորդակցության նոր տեսլականի համար շփման այս եզրերն արդեն կենսական անհրաժեշտություն են: «Կամուրջ Թուրքիան, առանց աս ճամբաները բանալու ի՞նչպես կամուրջ պիտի կրնայ հանդիսանալ»<sup>2</sup>:

Բասքըն Օրանը «Ինչու՞ են Թուրքիա - Հայաստան հարաբերությունները կարևոր» վերտառությամբ հոդվածում շեշտադրում է հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունը երկու երկրների տնտեսական և միջազգային շահեկանության տեսան-

կյունից: Առաջարկում է շարժվել հաշտեցման, մերձեցման, համերաշխ գործակցության ճանապարհով: Նրա կարծիքով՝ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորումով երկու կողմերի համար բազմաթիվ խնդիրներ թե տնտեսության ոլորտում, թե՛ միջազգային հարաբերություններում փոխշահավետ լուծում կստանան: Հեղինակը միջպետական հարաբերությունների կարգավորման համար առաջադրում է հետևյալ հայեցակետերը.

**Հայաստանի տեսանկյունից:** Հայաստանը տնտեսական ճգնաժամ է ապրում, ուստի սահմանները բացելու դեպքում Տրապիզոնի նավահանգիստն օգտագործելով՝ կարող է դուրս գալ համաշխարհային շուկա:

Հայաստանն էներգետիկ ճգնաժամի մեջ է. աղբյուրանական նավթը և թուրքմենական բնական գազը դեպի Թուրքիա և այնտեղից էլ Եվրոպա իր տարածքով արտահանելու դեպքում տնտեսական լուրջ խնդիրներ կլուծի:

Թեև Հայաստանը ԽՍՀՄ փլուզումից հետո անկախ պետություն է, սակայն տակավին շարունակվում է ռուսական ներկայությունը տնտեսության և ռազմական ոլորտներում: Հարաբերությունների կարգավորումով Հայաստանում կարող են նվազել Ռուսաստանից ռազմական և Իրանից տնտեսական կախվածությունը:

**Թուրքիայի տեսանկյունից:** Միջին Ասիայի ավտոճանապարհային ծրագրի գործադրում, Բաքու-Ջեյհան նավթամուղի և թուրքմենական բնական գազամուղի ամենակարճ և անվտանգ մատակարարման իրականացում:

Սահմանների բացման դեպքում ընդլայնվում է թուրքական ապրանքաշրջանառությունը:

Շահագործումից կհանվի Մեծամորի ատոմակայանը, և Հայաստանին էլեկտրաէներգիա կվաճառվի:

Ըստ հեղինակի՝ գուցե ամենակարևորը կլինի այն, որ փոքր - ինչ «ոտքի կանգնելու» դեպքում Հայաստանը կծերբազատվի Իրանի

1996), «Yapın Efendiler Yapın...Yıkmayın» (Agos, 29 Mayıs 1996), «Biz zaten barışığız» (Agos, 2 Mayıs 1997), «Sözde Sert» (Agos, 3 Nisan 1999), «Az buz değiliz biz» (Hrant Dink, Agos, 22 Haziran 2001), «İleri hamleler denemeliyiz» (Agos, 3 Mayıs 2002), «İlişkiler giderek sıklaşıyor» (Agos, 10 Mayıs 2002), «Zorlaya zorlana diyalog (1)» (Hrant Dink, Agos, 13 Haziran 2003), «Zorlaya zorlana diyalog (2)» (Hrant Dink, Agos, 20 Haziran 2003), «Yeni döneme doğru» (Agos, 27 Haziran 2003), «Başbakan ağırdan aldı» (Agos, 4 Temmuz 2003), «Az diyeyim...Çok anlayın» (Agos, 28 Temmuz 2006), «Ambargo sahipsiz kaldı» (Agos, 11 Ağustos 2006) և այլն:

<sup>1</sup> Տե՛ս **Mensur Akgün**, «Türkiye ve Ermenistan», Agos, 19 Nisan 1996: Բոլոր մեջբերումներում պահպանում ենք բնագրի ուղղագրությունը, սակայն մեր կողմից թուրքերեն բնագրից թարգմանված մեջբերումները տալիս ենք արդի ուղղագրությամբ:

<sup>2</sup> «Ակօս», Ստամբուլ, թիւ 431, 2 հուլիս 2004:

և Ռուսաստանի ազդեցությունից, և նրանց նկրտումները կնվազեն կովկասյան տարածաշրջանում<sup>1</sup>:

Բասքըն Օրանն իր այս հրապարակման մեջ պաշտպանում է ուշագրավ այն տեսակետը, որ երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորումը կնպաստի՝ հայերը և թուրքերը վերանայն իրենց անցյալը. դա կօգնի Թուրքիային ապաքինելու իր «վերքերից» մեկը: Թուրքիայի հայկական համայնքի, ինչպես նաև հայկական եկեղեցու հանդեպ ոտնձգությունները դեռ շարունակվում են, նաև չի դադարում «Ափոն»<sup>2</sup> հայ է» կամ «հայու սերմ է»<sup>3</sup> տեղեկատվական արշավը: «Հայ – թուրքական հարաբերությունների կարգավորումը կօգնի Օսմանյան շրջանում թուրքերից նույնիսկ ավելի լավ օսմանցի եղած այս մարդկանց (հայերի - Է.Ս.)՝ թուրքական հասարակությանը ինտեգրվելուն»<sup>4</sup>: Հայերն այս հարցում շատ վճռական և կամային են, և իրենց ձեռքում եղած «Ակօսը» այս ճանապարհին առաջին քայլն է»<sup>5</sup>, գրում է հեղինակը: Հեղինակն իրավացիորեն նկատել է տալիս այն, որ պարբերականը ստեղծվեց «ինքնապաշտպանման համար»՝ որպես հակատեսությունների միջոց և եկեղեցու ու դպրոցի կողքին երրորդ իշխանության՝ մամուլի ուժ: Անհերքելի է, որ «Ակօսը» առողջ բանավեճի ասպարեզ ապահովեց՝ գիտակցելով, որ «առաջին մտահոգությունը պետք է ըլլայ Թուրքիա հաւաքա-

կանութեան համար պատմութեան վերաբերեալ ազատ տեղեկութեան հոսք»<sup>1</sup>: Ընդհանրապես պարբերաթերթը նախապատվություն էր տալիս արխիվների փոխանակությանը, որպեսզի «բաղդատական պատմութեան»<sup>2</sup> միջավայր ստեղծվի:

«Ակօսի» հոդվածագիրների մեծ մասը պաշտպանում է Հայաստան - Թուրքիա միջպետական հարաբերությունների կարգավորումով փոխադարձ տնտեսական շահավետությունն ապահովելու տեսակետը: Հրանտ Դինքն առաջարկում է նախ և առաջ երկու երկրների միջև առևտրային կապեր հաստատել: Ընդհանրապես պարբերաթերթը «ժողովուրդները պարտավոր են իրենց շահերը նկատի ունենալ» բանաձևն աներկբայորեն ճշգրիտ է համարում: Ընդ որում, անհերքելի է, որ Հայաստանն այս շրջափակումից առավել վնաս կրող կողմն է: «Ակօսը» այս առումով նկատել է տալիս հետևյալը. «Վրաստանի եւ Նախիջեւանի առևտրական յարաբերութիւնները դիւրացնելով առևտուրի զարկ տալու նպատակաւ, այս երկիրները իրենց սահմանները բաց կը պահեն... Երբ միատեղ, եղբայրաբար կ'ապրէինք, կայսերապաշտ ուժերու պատճառաւ իրարու թշնամիներ դարձանք, բայց թշնամութիւններուն ալ ցվերջ շարունակուելուն անկարելիութիւնը, ժողովուրդներու միջեւ երկխօսութեան կարելորութիւնը եւ ասոր գլխաւոր միջոցին ալ տնտեսութենէն անցնիլը պետք է շեշտադրել»<sup>3</sup>: Սակայն Եթվարթ Դանգիկյանը 1996 թ. համարներից մեկում հանդես է գալիս «սառը մեխանիկական դատողության» քննադատությամբ. «Դուք երեք - հինգ դուրուշ եք վաստակելու, իսկ մենք տարածքների միավորման մեր աշխատանքներն ենք

<sup>1</sup> St'ü Baskın Oran, «Türkiye Ermenistan ilişkileri niye önemli?», Agos, 12 Nisan 1996:  
<sup>2</sup> Ափոն (Աբրուլլահ Օջալան) Քրդստանի բանվորական կուսակցության (ԲԲԿ/ՔԿԿ) հիմնադիրն ու առաջնորդն է: 1999 թ. Թուրքիայում դատապարտվել է մահապատժի, սակայն որոշ ժամանակ անց այդ դատավճիռը համաշխարհային հանրության ճնշման տակ փոխարինվել է ցմախ բանտարկությամբ:  
<sup>3</sup> «Ակօս», թիւ 317, 26 ապրիլ 2002:  
<sup>4</sup> Ընդհանրապես պարբերականում պաշտպանվում էր այն մոտեցումը, որ մենք հայերս, նույնպես «օսմանցի» էինք, քանի որ «Օսմանեան ավանդություններն կու գայինք»: Այս մասին Հ. Դինքը գրում է. «Գէշ կամ լաւ, մենք ալ ընկալեալ սովորութեան պատշաճելով շատ ալ աղէկ կրնայինք մեր գործը կարգադրել: Բաւ է որ մարդիկ հարկադրուէին զիջանիլ»: Այստեղ նա նկատի ունի այն, որ հայերը թուրքերից լավ բաղաբացի են եղել Օսմանյան կայսրության համար, ավելին՝ նրանց ներդրումը տարբեր ոլորտներում գնահատելի է: Այդ մասին առավել մանրամասն տես «Ակօս», թիւ 496, 30 սեպտեմբեր 2005:  
<sup>5</sup> St'ü Baskın Oran, «Türkiye Ermenistan ilişkileri niye önemli?», Agos, 12 Nisan 1996:

<sup>1</sup> «Ակօս», թիւ 471, 8 ապրիլ 2005:  
<sup>2</sup> Պարբերաթերթում «պատմությունը» նկատվում է որպես «ապրուածին մեր մտքին մէջ վերապրումը», և այն մեր իմացական ըմբռնումներից անկախ չի կարող լինել: Հրանտ Դինքը պաշտպանում է այն մոտեցումը, որ «բաղդատական պատմությունը» կարող է լուծում լինել, քանի որ պատմության քննարկման համար կողմերից միայն մեկի տեսակետին հենվելով՝ հնարավոր չէ գաղափար կազմել: Այս ուղղությամբ Թուրքիայում «հակատեսությունների» լույս տեսնելը պետք է ազատ լինի: Այսինքն բաղդատական պատմության համար հարմար միջավայր պետք է ստեղծվի: Այս մասին առավել մանրամասն տես «Ակօս», թիւ 211, 14 ապրիլ 2000:  
<sup>3</sup> Այդ մասին առավել մանրամասն տես «Ակօս», թիւ 519, 10 մարտ 2006:

իրագործելու»: Ըստ հեղինակի՝ հնարավոր չէ ձևավորել երկկողմ «նորմալ» հարաբերություններ՝ առաջնորդվելով միայն «շահ/դրամ» տրամաբանությամբ: Հարկավոր է սկսել առևտրով, որին աստիճանաբար կհաջորդեն նորոպի ձևավորվող և կարգավորվող ցերմ հարաբերություններ, քանի որ, ինչպես կարծում է հեղինակը, առևտրային շփումները կնպաստեն կարգավորելու հարաբերությունները, սակայն գերխնդիր չեն կարող լինել, ուստի պետք չէ ամեն բան դրանով չափել<sup>1</sup>:

Պարբերաթերթը հայ - թուրքական հարաբերություններում հիմնական արգելք նկատում է պատմական քննարկումները, որոնք ի զորու չեն մոտ ապագայում հաշտություն ապահովելու երկու պետությունների միջև, քանի որ ժողովուրդների մտքերն ու խոսքերը «փակամի տակ» են: Նման պայմաններում Հ. Դինքը շեշտադրում է երկխոսության կարևորությունը. «Որքան ալ քիչ մը երեւակայական թուի, Հայաստան թուրքիոյ շնորհիւ Եւրոպական Միութեան անդամ պետութեան մը դրացի ըլլալու բախտը ձեռք բերած պիտի ըլլայ... Միմիայն երկխոսութեամբ կարելի պիտի ըլլայ յաղթահարել այս անելը»<sup>2</sup>: Ըստ նրա՝ Հայաստան – Թուրքիա երկխոսությունը կարևորելու գլխավորապես երկու պատճառ կա: Երկու երկրներն էլ որքան հնարավոր է շուտ պետք է հաղթահարեն միմյանց հետ հարաբերությունների պատմական և օրակարգային խնդիրները՝ ձևավորելով և զարգացնելով մշակութային, քաղաքական, տնտեսական, առևտրային և այլ կարգի երկկողմ հարաբերություններ: Այս դեպքում վստահ կարելի է ասել, որ «կույրերի մեջ իշխանություն վերցրած շեղակների կեղծիքները ի հայտ կգան»<sup>3</sup>:

Թաներ Աքչամը «Երկխոսությունից բացի կա՞ որիչ լուծում» վերտառությամբ հողվածում առաջ է քաշում այն տեսակետը, համաձայն որի՝ թուրք հասարակայնությունը վերջապես իր ժխտողական

<sup>1</sup> Տե՛ս **Hrant Dink**, «Ha gayret», Agos, 25 Ekim 1996:

<sup>2</sup> «Ակօս», թիւ 317, 26 ապրիլ 2002:

<sup>3</sup> **Hrant Dink**, «Az buz degiliz biz», Agos, 22 Haziran 2001.

դիրքորոշումը պետք է վերանայի՝ փոխարինելով այն առանց պայմանների երկխոսելու ունակությամբ<sup>1</sup>: «Ամենից առաջ պետք է մեկս մյուսիս հետ խոսենք. երկխոսությունը պարտադիր է, պետք է մեկս մյուսին լսի, որ հասկանանք... Սակայն մենք ինքներս դրան ընդառաջ չենք գնում»<sup>2</sup>, - նշում է հեղինակը: Իսկ մեկ այլ հողվածագիր՝ Աիդա Էրբալ, թուրք պատմաբաններին «արբեցյալների» է նմանեցնում, և այդ թմբիրը կործանարար է, քանի որ թույլ չի տալիս լինել իրատես, մի կողմ դնել սուբյեկտիվ մտածողությունը և անցյալը անձնական կարծիքներին չհարմարեցնել<sup>3</sup>:

Պարբերաթերթը ճիշտ է համարում այն դիտարկումը, որ ԱՄՆ քաղաքը այլևս ազատ գոտի է, ինչի համար շատ ճիգ է թափվել: Եթե երկու երկրների միջև երկխոսություն սկսվի, կամրջի վերահարդարումը օրակարգում տեղ կգտնի:

Այս առումով ուշագրավ է Մեսրոպ պատրիարքի նկատառումը. «Մարդիկ զիրար ճանչնալով, խօսակցելով է որ հասկացողութեան կու գան, բարեկամ կ'ըլլան: Թուրքերը եւ Հայերը, առնուազն հազար տարիէ ի վեր միասին կ'ապրին: Մենք իրարու հետ հարեւաններ, բարեկամներ ենք, միասին ձեռք բերուած բազմաթիւ անձեր այս երկրին համար իրենց կենաքը զոհեցին, աւելի ի՛նչ թանկագին բան կրնային տալ»: Նա նկատել է տալիս, որ հայ և թուրք երիտասարդության ճամփան պետք է բացել, քանի որ փակելը պատմական պատասխանատվություն կլինի սերունդների առաջ<sup>4</sup>: Նա առաջնային է համարում այն, որ պետք չէ ատելություն սերմանել, քանի որ ատելությունը քանդում է, իսկ սերը՝ կառուցում:

«Ակօս»-ը երկու ժողովուրդների միջև երկխոսության հնարավորությունները երեք տեսանկյունից է դիտարկում՝ հայ-թուրքական հարաբերությունների զարգացում, թուրքահայերի խնդիրներում

<sup>1</sup> Տե՛ս **Taner Akcam**, «Diyalogdan başka çözüm var mı?», Agos, 23 Haziran 2000:

<sup>2</sup> **Taner Akcam**, «Tarihi birakilim ticaretimize bakalim: 1915'in pazarligi yapilabilir mi?», Agos, 3 Agustos 2001. Տե՛ս նաև **Taner Akcam**, «Iç savař efsanesi», Agos, 23 Kasim 2001:

<sup>3</sup> Տե՛ս **Ayda Erbal**, «Ararat, kapilar, anahtarlar, alkolizm(6)», Agos, 22 Şubat 2002:

<sup>4</sup> Այդ մասին առավել մանրամասն տես «Ակօս», թիւ 535, 30 հունիս 2006: Տե՛ս նաև «Ակօս», թիւ 204, 25 փետրվար 2000:



ամեն տեսակի արտաքին միջամտություններից և պարտադրանքներից զերծ մնալը, աշխարհասփյուռ հայության հետ մերձեցում՝ կարևորելով երկխոսության ոճը<sup>1</sup>: Երկխոսության ճիշտ ոճն ընտրելուց հետո միայն կարելի է երկխոսել: Երկու կողմերը նախ պետք է փոխեն «իրարու մասին գործածած լեզուն ու խոսքերը»: Նախ և առաջ հարցին պետք է մոտենալ նորովի: Այս առումով ուշագրավ է Թաներ Աքչամի նկատառումը. «Պետք է նոր լեզու մը եւ նոր մտայնութիւն մը որդեգրուի, եթէ անկեղծօրէն կը փափաքին շօշափելի արդիւնք մը յանգիլ: Այլեւս ճանապարհ մը բացուած է եւ ո՛չ ոք պիտի ուրախանայ նախկին վիճակին վերադառնալով... Հարց մը կը լուծուի միայն հարցին վրայ *ԽՕՍԵԼՈՎ*: Իսկ *ԽՕՍԻԼՆ* ալ կ'իրականանայ, եթէ միայն եւ միայն պատրաստ էք դիմացի կողմը *ԼՍԵԼՈՒ, ՄՏԻԿ ԸՆԵԼՈՒ: ՄՏԻԿ ԸՆԵԼՆ* ալ կարելի կ'ըլլայ միայն եթէ դուք կը փափաքիք դիմացինին ըսածները *ՀԱՍԿՆԱԼ*: Իսկ *ԽՕՍԵԼՈՒ, ՄՏԻԿ ԸՆԵԼՈՒ* եւ *ՀԱՍԿՆԱԼ ՋԱՆԱԼՈՒ* առաջին պայմանն է հետեւեալը: Եթէ անմիջապէս պիտի չկարենաս գլուխդ փոխել, զոնէ պէտք է *ԼԵՉՈՒԴ* փոխել, խօսելակերպդ եւ տրամաբանութիւնդ փոխել»<sup>2</sup>: Փոքր-ինչ ձևափոխելով այս դիտարկումը՝ Հրանտ Դինքը վստահաբար բանաձևում է. «Առանց ոճի անկարելի է... Պետք է ընդունինք, որ շատ դժուր նիւթի մը մասին կը խօսինք: Փոխադարձ տեսութիւններով անցուդարձները սեւ ու ճերմակ ըլլալով ընկալող եւ այդ ձեւով արտայայտող կողմեր կան: Վրադիրք, երբ այդ յայտարարութիւնները կը կատարեն, բաւական անփոյթ են եւ ցաւալի պատմութեան մը մասին խօսելու ատեն անվայել ոճ մը կը գործածեն: Քանի մը նախադասութեան ետեւէն՝ կան գիրար դաւաճանութեան կ'ամբաստանեն եւ կան ալ գիրար կը նախատեն եւ այս կացութեամբ հարցին ալ աւելի ցաւալի հանգամանք մը կու տան»<sup>3</sup>:

«Ակօս»-ը երկխոսությունը կարևորում է նաև այն հանգամանքով, որ պետք է միմյանց հետ երկխոսել, որպեսզի ոչ մեկը չկարողա-

<sup>1</sup> Hrant Dink, «Bir gün 24 Nisan...». Agos, 20 Nisan 2001.  
<sup>2</sup> «Ակօս», թիւ 299, 21 դեկտեմբեր 2001:  
<sup>3</sup> «Ակօս», թիւ 496, 30 սեպտեմբեր 2005:

նա միջամտել և «հարցերը իր օգտին գործածել»: Այսինք պետք է բացառվի արտաքին միջամտությունը. «Եթէ հարցի խօսակիցները թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ երկխօսութեան գետին մը չկարենան գտնել, բազմաթիւ երկիրներ պիտի շարունակեն հարցը գործածել իբրեւ դրամագլուխ: Մինչ այդ՝ փոխադարձ երկխօսութեամբ անլուծելի շատ քիչ բան կայ»<sup>1</sup>:

Պարբերականը շատ կարճ ժամանակահատվածում որդեգրում է Հայաստան-Թուրքիա միջպետական հարաբերությունների կարգավորման գործընթացի ծրագրային քաղաքականություն՝ լուսաբանելով և վերլուծելով խնդրին առնչվող հրատապ իրադարձությունները, որոնք տեղ են գտնում երկու երկրների օրակարգում:

Իրար հաջորդող իրադարձությունների արձանագրումը հստակորեն ցույց է տալիս հայ-թուրքական հարաբերություններում «Ակօս»-ի կողմնորոշումները:

Պարբերականը երկկողմ հարաբերությունների կարգավորմանն ուղղված ամենաանընշան զարգացումներն անգամ լուսաբանում և մեկնաբանում է իր էջերում:

Այսպես, 1996-ի հուլիսի 28-ից օգոստոսի 1-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի եղբայր, Աժ պատգամավոր թեյևան Տեր-Պետրոսյանի ղեկավարած պատվիրակության այցը թուրքիա, որի ընթացքում «տարաբնույթ հարցեր»<sup>2</sup> են քննարկվել, «Ակօսը» համարում է որպես Հայաստան-Թուրքիա միջպետական հարաբերությունների սկզբնավորմանն ուղղված քայլ, որով երկու երկրների մերձեցման գործընթացը նոր շրջափուլ է թևակոխում: Այս առումով ուշագրավ է 1996 օգոստոսի 30-ի համարում տպագրված Օշին Չիլինգիրի հոդվածը<sup>3</sup>:

<sup>1</sup> «Ակօս», թիւ 211, 14 ապրիլ 2000:  
<sup>2</sup> Տե՛ս Erastan Hülya, Agos (1996-2005) : Türkçe-Ermenice bir gazetenin tarihi. Ankara, 2007. էջ 183:  
<sup>3</sup> Տե՛ս Oşin Çilingir, «Misyon», Agos, 30 Ağustos 1996: Օշին (Յալչըն) Չիլինգիրը Հրանտ Դինքի Դարեվանքի ընկերներից (սապարիկ) է, նաև «Ակօսի» թղթակիցներից:

1996 թ. սեպտեմբերի 22-ին ՀՀ նախագահի պաշտոնում վերընտրվում է Լ. Տեր-Պետրոսյանը: Պարբերականն այս իրադարձությունը նկատում է որպես Լ. Տեր-Պետրոսյանի կողմից երկրի արտաքին քաղաքականության մեջ լրջախոհ քայլեր կատարելու հնարավորություն ինչպես Սփյուռքի հետ տարվող հարաբերություններում, այնպես էլ Ղարաբաղի հակամարտության խնդրում հաշտարար քաղաքականության հաստատման և թուրքիայի հետ երկխոսության ձևավորման գործընթացում: Ասվածի վառ օրինակ է 1996 թ. սեպտեմբերի 22-ի համարում նախագահի վերընտրվելու մասին լրատվությունը:

1998-ին Սևծովյան տնտեսական համագործակցության գագաթաժողովին մասնակցելու համար թուրքիա ժամանած Լ. Տեր-Պետրոսյանի՝ թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի<sup>1</sup> և Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի հետ թուրքերեն խոսելը, ինչպես նաև թուրքիայի նախաձեռնությամբ երկու երկրների հաշտեցման գործընթացում կոնֆերանս կազմակերպելը պարբերականը հայ-թուրքական հարաբերություններում շոշափելի քայլեր է նկատում<sup>2</sup>:

1998 թ. սկզբին հայ - թուրքական հարաբերություններում նոր լարվածություն է նկատվում Լ. Տեր-Պետրոսյանի հարկադրական հրաժարականից և Ռոբերտ Քոչարյանի նախագահ ընտրվելուց հետո: Թուրքիայում հիասթափության տրամադրություններ են նկատվում: «Հյուրիները» գրում է. «Թուրքիան պետք է աջակցեր Տեր-Պետրոսյանի նման չափավոր նախագահին՝ նրան ճակատագրի քմահաճույքին հանձնելու փոխարեն»<sup>3</sup>: Մինչդեռ թուրք լրատվամիջոցներում «բազե (şahin)» որակված Ռ. Քոչարյանին «Ակօսը» «այսպես կոչված խստապահանջ/sert» մարդ է անվա-

<sup>1</sup> Սուլեյման Դեմիրելը յոթ անգամ գլխավորել է Թուրքիայի Հանրապետության կառավարությունը, այնուհետև 1993-2000 թթ. զբաղեցրել է Թուրքիայի Հանրապետության նախագահի պաշտոնը:

<sup>2</sup> Տե՛ս «Biz zaten barışığız», Agos, 2 Mayıs 1997:

<sup>3</sup> Hurriyet, 14. 2., 1998.

նում: «Ազդանշանները որոշ դրական և հուսադրող ուղղությամբ են»<sup>1</sup>, - նշում է պարբերականը:

Ընդհանրապես պարբերականը շատ կարևոր է համարում Լևոն Տեր-Պետրոսյանի այն մոտեցումը, համաձայն որի՝ երկու երկրների միջև միայն բարձրագույն մակարդակի հանդիպումները և տեսակցությունները արդյունավետ չեն: Ըստ նրա՝ երկիրը կվերականգնվի և ավելի ապահով ու զորավոր կլինի այն դեպքում, երբ դուրս գա շրջափակումից և «միջնատարածքի վիճակէն ել մեկուսացումէն»: Քանի որ Հայաստանը իր գոյությունը կարող է ապահով շարունակել դրացիների հետ բնականոն հարաբերություններ հաստատելով<sup>2</sup>:

Պարբերականում տեղ գտած մեկնաբանությունները հիմնականում մատնանշում և կարևորում են այն փաստը, որ Թուրքիայի ժողովրդավարացմամբ հայ-թուրքական հարաբերություններում փոփոխություններ կնկատվեն: ԵՄ-ի միջոցով ժողովրդավարացող Թուրքիան կարող է փոքրամասնություններին առնչվող խնդիրների լուծման հարցում առավել իրապաշտ և արդարամիտ ուղի որդեգրել: Այս մոտեցմամբ Հ. Դիմքը նկատել է տալիս այն, որ «Թուրքիոյ Հանրապետութեան հայրենակից մեզ Հայերս...բաց է ի բաց Իսլամութեան եւ Թըրքութեան թշնամի» կարող են Թուրքիայում որակել: Մի՞թե այդքան դյուրին է այդ երկրի մեջ այդ բանը: Ի լրումն սրա՝ նա գրում է. «Ու՞ր են օրէնքները, ու՞ր են դատախազները... միայն ասոր համար անգամ Եւրոպական Միութիւն պէտք է մտնենք»<sup>3</sup>:

«Ակօսը» հայ և թուրք ժողովուրդներին առաջարկում է արթնացնել հավաքական հիշողությունը՝ ի նպաստ իրենց անդրադարձ կատարելով պատմական ճշմարտությանը: Իսկ դա հնարավոր է միայն Թուրքիայի ժողովրդավարացման ճանապարհը բռնելու դեպքում<sup>4</sup>:

<sup>1</sup> «Sözde Sert», Agos, 3 Nisan 1999.

<sup>2</sup> Տե՛ս «Ակօս», թիւ 258, 9 մարտ 2001:

<sup>3</sup> «Ակօս», թիւ 331, 2 օգոստոս 2002:

<sup>4</sup> Տե՛ս **Hrant Dink**, «Öncelliğimiz ne olmalı», Agos, 17 Kasım 2000:

Դիմքը համոզված է, որ ԵՄ թեկնածու թուրքիայում փոքրամասնությունների խնդիրը ժամանակի ընթացքում օրակարգից դուրս կգա: Երկրի յուրաքանչյուր անկյունում մարդկանց իրավունքները պաշտպանված կլինեն: Գուցե այդժամ «Ափոն ասալայական» է կան «ասալայական չէ» և նման այլ վիճահարույց խնդիրներն էլ ժողովրդավար նոր մթնոլորտ ձևավորվելուց հետո այլևս դուրս մղվեն նրանց մտայնությունից<sup>1</sup>:

Որոշ հողվածագիրներ էլ թուրքիայի՝ ԵՄ անդամակցության հնարավորությունը որպես երազ են որակում, մի մասն էլ կարծում է, որ ԵՄ-ն թուրքիայի համար երազ է, իսկ այդ երազից արթնանալը, ինչպես նշում է Օշին Չիլինգիրը, բնավ դժվար չէ. ԵՄ-ն, թուրքիան դիտելով որպես «գնալով մեծացող շուկա», գուցե օրերից մի օր ասի՝ «թուրքիայում մեզ համար տեղ չկա»<sup>2</sup>:

Այս առումով ուշագրավ նյութ է 2002-ին տպագրված «Շատը գնաց, քիչը մնաց» վերտառությամբ հողվածը, որտեղ նշված ժամանակահատվածում ԵՄ մտնելու շրջանը արկածախնդրային է թվում, քանի որ թուրքիան նմանեցվում է նավի, որ ավելի քան 50 տարի օվկիանոսի մեջ թևերի օգնությամբ նավարկում է ցամաք հասնելու համար: Նկատելի է, որ ենթադրվում է, թե 2013 և 2015 թվականներին թուրքիան հազիվ թե կարող է մտնել ԵՄ, և այս «հեռավոր» թվականը ոմանց տրամադրությունները խանգարում է և հուսալքում է: Սակայն այս հոգեվիճակն էլ, ինչպես նշվում է գրության մեջ, այնքան էլ «զեշ» կողմ չունի: Եվ նյութը հատկանշական է համարում այն, որ «Երոպա հասցնելիքը՝ ոչ թե «ստիպողական ցանկութիւնը» պիտի ըլլայ, այլ «առանց աճապարանքի» շարժիլը, որովհետև միմիայն «ցանկալը» բաւարար չէ, այլ պետք է նաև «գործել»<sup>3</sup>: Թուրքիան ոչ թե պետք է ԵՄ մտնելու թվականները շահարկի, այլ պետք է գիտակցի, որ ժողովրդավարացումը հագուստ չէ, այլ կրթություն: Այն դրսից ներս չի

<sup>1</sup> Տե՛ս **Hrant Dink**, «Yükseliş Devri», Agos, 3 Aralık 1999:

<sup>2</sup> Տե՛ս **Öşin Çilingir**, «Avrupa Birliği ya da bir uykudan ayanış», Agos, 28 Mart 1997:

<sup>3</sup> «Ակօս», թիվ 350, 13 դեկտեմբեր 2002:

մտնում, այլ ներսից հոգեկան փորձություններով է ձեռք բերվում:

Հայաստան-թուրքիա հարաբերությունների ամրապնդման գործում պարբերաբերի կատարած շրջադարձային դերի մասին կարելի է մեծ գնահատանքով խոսել: Այս առումով հատկանշական է Հրանտ Դիմքի խոսքերը. «Մենք անցեալը չենք մոռնար, սակայն առանց այդ անցեալը մոռնալու՝ կը ջանանք մեր ապագային մասին ալ աշխատելու՝ աւելի արժանաւոր ու ապահով հանգրուաններու հասնելու համար, ինչ որ կը խորհինք թէ նոյնքան կարելոր պարագայ մըն է»<sup>1</sup>:

Այսպիսով, «Ակօս» պարբերականը, տպագրելով ինչպես հայ, այնպես էլ թուրք մտավորականների հողվածները հայ – թուրքական հարաբերությունների կարգավորման խնդրի շուրջ, նորովի և բազմակողմ կարծիքների հիման վրա առաջադրեց նոր հայեցակետեր և տեսություններ, որոնք հայ և թուրք ժողովուրդների ուշադրությունը սևեռեցին մշակվելիք փոխշահավետ քաղաքականության վրա:

*The Issue on Directions FOR THE Normalization OF Armenian-Turkish Relations AS Presented IN Agos Weekly (1996-2007)* – The Armenian-Turkish relations are one of the most complex issues in the domestic policies of both Armenia and Turkey. Moreover, the relations are of fundamental importance in the context of future political and economic advancements in the South Caucasus. This article presents the issue of the Armenian-Turkish relations as presented in Agos Weekly and based on the positions of Armenian and Turk journalists on the establishment and normalization of bilateral relations and their involvement. The periodical's descriptive characteristic for and weighty contribution to the establishment and normalization of relations between Armenia and Turkey in the post-Soviet era are emphasized on the basis of the analysis of the facts.

<sup>1</sup> «Ակօս», թիվ 211, 14 ապրիլ 2000:

**ՏԱԹԵՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ**

**ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԿԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀՀ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ**

Հայ ժողովուրդը, դարեր շարունակ զրկված լինելով պետականությունից, պատմական ճակատագրի բերումով կորցրել էր նաև իր համազգային մտածելակերպը: Դրան մեծապես նպաստել է նաև այն հանգամանքը, որ ժողովրդի զգալի մասը, հարկադրված լինելով արտագաղթել մայր հայրենիքից, բնակություն է հաստատել աշխարհի տարբեր երկրներում: Հայության միասնականության պահպանումը և ամրապնդումը բավականին բարդ ու դժվարին խնդիր էին:

Ավելին, շուրջ 70 տարիների ընթացքում Հայաստանում, Սփյուռքում, բացի մարդկային և նյութական հսկայական կորուստներից, հայության տարբեր հատվածների միջև խորթության հասնող անջրպետներ ստեղծվեցին, և նա փաստորեն զրկվեց կենսական նշանակություն ունեցող միասնականությունից: Հայաստանի բնակչությանը պարտադրվեց կապերը խզել Սփյուռքում ապրող մերձավորների հետ, որի պատճառով հայ ժողովրդի երկու հատվածները հեռացան միմյանցից: Բնական է, որ այս տևական վիճակը անդրադարձավ հայության տարբեր հատվածների հոգեբանության վրա՝ նրանց զրկելով հավաքական-կազմակերպված ուժ դառնալու հնարավորությունից:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո միայն նպաստավոր պայմաններ ստեղծվեցին ինչպես Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների բազմակողմանի ամրապնդման, այնպես էլ նախկին հանրապետությունների հայկական գաղթօջախների հետ հարաբերությունների կարգավորման ու զարգացման համար:

Հայաստանի անկախացումը նոր փուլ նշանավորեց Հայրենիք-Սփյուռք փոխհարաբերություններում: Ամենատարբեր մակարդակներով երկխոսություններ սկսվեցին անհատների, կազմակերպությունների ու պետական գործիչների միջև: Սակայն հեշտ չէր վերականգնել տարիներով խզված կապը, մանավանդ որ երկու հատվածներն իրենց աշխարհայացքով, ապրելակերպով, կենցաղով շատ էին հեռացել իրարից: Նորահաստատ իշխանություններն էլ իրենց հերթին երբեմն թույլ էին տալիս ոչ ճիշտ մոտեցումներ, որոնք խանգարում էին այդ հարաբերությունների կարգավորմանը<sup>1</sup>: Այսպես, անկախությունից հետո հայրենիքում գործելու լայն ասպարեզ ստացան Սփյուռքի ավանդական կուսակցությունները, որոնց դերն անգնահատելի է հայապահպանության գործում: Սակայն հայրենիք գալով՝ նրանք (ՀՀԴ, ՀՈԱԿ) անմիջապես փորձեցին առաջավոր դիրք գրավել, ինչո՞ւ չէ՝ նաև հասնել իշխանության: ՀՀԸ-ն իր իշխանությունը ամեն զնով պահպանելու նպատակով հալածական և կոշտ քաղաքականություն կիրառեց ավանդական կուսակցությունների նկատմամբ (ՀՀԴ-ն արգելվեց, ՀՈԱԿ-ը պառակտվեց): Հայաստանի իշխանությունները փորձեցին վարկաբեկել այդ կուսակցությունների գործունեությունը նաև արտասահմանում, որի հետևանքով Սփյուռքում վտանգվեցին ազգապահպանման գործին նվիրված շատ կազմակերպություններ, որոնք հիմնականում գործում էին այդ կուսակցությունների շնորհիվ: Դա բացասական եղավ նաև Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների համար: Սփյուռքի հետ հարաբերությունները տարերային բնույթ ունեին և հաճախ կախված էին այս կամ այն ղեկավարի նախասիրությունից ու կարողությունից:

Նոր պայմաններում Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները արդյունավետ կազմակերպելու գործում որոշակի դեր խաղաց

<sup>1</sup> Տես Էդիկ Մինասյան, Արարատ Վարդանյան, Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009 թթ.), Ստեփանակերտ, 2010, էջ 55:

տակավին 1964 թ. ստեղծված Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն<sup>1</sup>:

1991 թ. այն գլխավորում էր ակադեմիկոս Հր. Սիմոնյանը, որը մշակեց կոմիտեի գործունեության նոր կանոնադրություն: «Ղեկավարվելով հայ ժողովրդի ընդհանրական շահերով,- հայտարարեց նա,- նոր կոմիտեն առաջնություն չի տալու գաղափարախոսական որևէ ուղղության՝ ի վնաս մյուսների: Հայաստանը աշխարհով մեկ սփռված հայերի հայրենիքն է՝ անկախ նրանց կուսակցական պատկանելությունից և դասային դրությունից: Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն պետք է լիովին զերծ լինի որևէ կուսակցական ազդեցությունից»<sup>2</sup>: Նոր մշակված կանոնադրությունով հատուկ ուշադրություն էր հրավիրվում հայրենիքի և ներքին ու արտաքին Սփյուռքի աշխատանքների կարգավորմանը, համատեղ կառույցների ստեղծմանը, տնտեսական ու մշակութային մերձեցմանը, ինչպես նաև գիտակրթական համագործակցությանը:

Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում նոր էջ բացեց Արցախի ազատագրական պայքարը, որին սատար կանգնեց ողջ հայությունը թե՛ Հայաստանում և թե՛ արտերկրում: Ամենուր հասկացան, որ թուրք-ազերիական բռնություններին դիմակայելու հիմնական ուղին միասնությունն ու համախմբվածությունն են: Այդ գիտակցությունն էլ ավելի ամրապնդեցին 1988 թ. դեկտեմբերյան ավերիչ երկրաշարժի հետևանքները վերացնելուն ուղղված ջանքերը: Հայրենիքում և Սփյուռքում առաջին պլան մղվեց ազգապահպանման գաղափարը, և համապատասխան գործելակերպ մշակեց: Արցախի ազատագրական շարժումն ու երկրաշարժը ցնցեցին ողջ հայությանը և ամրապնդեցին ազգային միասնության գաղափարը: Անշուշտ, դրան հիմք ծառայեց Հայաստանի անկախ Հանրապետությունը, որն ամբողջ հայության հենարանն էր:

<sup>1</sup> Տես նույն տեղը, էջ 56:

<sup>2</sup> Տես «Հայրենիքի ծայն», 27 մարտի, 1991թ.:

Անկախությունից հետո պարզվեց, որ Սփյուռքի և Հայաստանի փոխհարաբերությունները թելադրված էին պահի պահանջներով: Բացակայում էր այն համազգային ծրագիրը, որի իրագործմանը պետք է լծվեին բոլոր հայերը՝ անկախ իրենց բնակավայրից: Այժմ նոր հարթության վրա էին դրվում Հայրենիք-Սփյուռք առնչությունները: Հայաստանը նպաստելու էր Սփյուռքի հայապահպան գործին, իսկ Սփյուռքը օգնելու էր Հայաստանի անկախության ամրապնդմանն ու տնտեսական զարգացմանը: «Այժմ յուրաքանչյուր հայի ձայն,- նշել է «Հայություն» շաբաթաթերթը,- որտեղից էլ նա լսվի, հայրենիքի ձայնն է»<sup>1</sup>: Հայ ժողովուրդը համոզվեց, որ Հայրենիքն ու Սփյուռքը առանձին-առանձին այլևս գոյություն ունենալ չեն կարող: Նրանց փոխհարաբերությունները պետք է խարսխվեն մեկ հայրենիք, մեկ ազգ կարգախոսի ներքո: Սակայն այդ հարաբերությունները պետք է փոխշահավետ լինեն:

Սփյուռքին սպառնում է ինքնության կորստի վտանգը: Հատկապես նոր սերնդի փոքր մասն է կապված ազգային կառույցների հետ, և ծուլման վտանգը շատ մեծ է: Այս և այլ հարցերի կարգավորման նպատակով 1996 թ. Հայաստանի Հանրապետության կառավարության կազմում ստեղծվեց Սփյուռքի հետ կապերի ստորաբաժանում, որի հիմնական նպատակը ճիշտ համագործակցության ապահովումն էր. «Մեր միասնական նպատակը,- հայտարարվեց ՀՀ կառավարության անունից,- պետք է լինի ստեղծել ուժեղ Հայաստան և ուժեղ սփյուռք: Գնահատագրի բերումով հայրենիքի խնդիրները սփյուռքին են և հակառակը»<sup>2</sup>:

Հայաստան-Սփյուռք փոխհարաբերություններում առաջնային են մշակութային կապերի ամրապնդումը, մշակութային միասնական ծրագրերի մշակումն ու կենսագործումը:

Հայրենիք-Սփյուռք առնչությունների, հայոց համազգային ինքնագիտակցման ու ինքնաճանաչման, հայապահպանության առաջնակարգ ու ամենաարդյունավետ գործոնը, թերևս, մատաղ

<sup>1</sup> «Հայություն», 1992թ. 14 փետրվարի:

<sup>2</sup> «Ասպարեզ», 1991թ. 11 դեկտեմբերի:

սերնդի ու երիտասարդության՝ մայրենի լեզվով կրթությունն ու դաստիարակությունն են: Իսկ դրանում կենտրոնական տեղ ու դեր ունի հայեցի կրթությունը, հայոց դպրոցը, որտեղ վճռորոշ դեմքը ուսուցիչն է: Նրա պատրաստականությունից, կարողությունից ու որակից են կախված նոր սերնդի հայեցի կրթությունն ու դաստիարակությունը:

Այս նպատակով հայրենիքում անցկացվում են սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ամենամյա դասընթացներ: Այսպես, օրինակ, 1991 թ. օգոստոսին վերապատրաստման նպատակով հայրենիք էին ժամանել ԱՄՆ-ի, Կանադայի, Ֆրանսիայի, Անգլիայի, Սիրիայի, Լիբանանի, Իրանի, Արաբական Միացյալ Եմիրությունների, Ավստրալիայի և այլ երկրների մոտ չորս տասնյակ ուսուցիչներ<sup>1</sup>: Դասախոսություններ են կարդացել հանրապետության լավագույն գիտնականները, կազմակերպվել են հանդիպումներ, շրջագայություններ և բովանդակալից այլ միջոցառումներ<sup>2</sup>:

Լոս Անջելեսի պետական միջնակարգ դպրոցների մասնագետ Չակոբ Թերջիմանյանը, որ բազմիցս մասնակցել է սփյուռքահայ ուսուցիչների ամառային դասընթացներին, այդ առիթով նշում է դրանց հույժ կարևորությունը և շնորհակալություն հայտնում հանրապետության ղեկավարությանը Հայաստանի համար այս ծանր պայմաններում սփյուռքահայ ուսուցիչներին վերապատրաստման հնարավորություն ընձեռելու և նրանց հյուրընկալելու համար: Նա նշում է նաև կոմիտեի աշխատակիցների ցուցաբերած ջերմ հոգատարությունը իրենց նկատմամբ:

Նշվում է, որ քննադատությունը, կարծիքների փոխանակումը և առաջարկությունները կօգնեն հայապահպանման ընդհանուր գործին, եթե Հայրենիքն ու Սփյուռքը գործեն որպես առողջ օրգանիզմ, մեր ազգային դժբախտությունները կվերածվեն բախտավորության, երջանկության: Այդ պարագայում արդյունավետ

<sup>1</sup> Տես «Հայրենիքի ծայն», 14 օգոստոսի, 1991 թ., էջ 9:  
<sup>2</sup> Տես նույն տեղը, 18 օգոստոսի, 1991թ., էջ 9, դ.:

կլինի նաև կրթության գործը, որը Հայրենիքի և Սփյուռքի սրբազան պարտքն է<sup>1</sup>:

Նշվում է նաև, որ Սփյուռքը նույնպես մեծ ուշադրություն է դարձնում հայկական դպրոցներին. Սփյուռքում գործում են օրինակելի կրթօջախներ, վարժարաններ և մշակութային միություններ, որոնց ավանդը հայեցի կրթության ու դաստիարակության, հայապահպանության գործում դժվար է գերազնահատել:

Սփյուռքահայ գաղթօջախները և դրանց կապերը հայրենիքի հետ կամրջող կարևոր օղակներից է Թեքեյան մշակութային միությունը, որը հիմնվել է 1947 թվականին Բեյրութում՝ Հայ ռամկավար ազատական կուսակցության նախաձեռնությամբ<sup>2</sup>:

1991 թ. հունվարի տվյալներով Թեքեյան միությունը ներկայացված էր Եվրոպայի, Հյուսիսային և Հարավային Ամերիկայի ու Մերձավոր Արևելքի քառասուն երկրներում: Իսկ Հայաստանում միությունը սկսեց գործել 1991 թ. նոյեմբերի 3-ից, և նրա առաջին միջոցառումը (նոյեմբերի 19-ից մինչև դեկտեմբերի 1-ը) մշակութային հանրապետական փառատոնն էր, որով հիմք դրվեց Հայրենիք-Սփյուռք հետագա արդյունավետ աշխատանքի, առնչությունների զարգացման ու սերտացման:

Թեքեյան մշակութային միությունը կարևոր նշանակություն է տալիս մատաղ սերնդի ազգային դաստիարակությանը: Նա ՀՀ-ում իր հովանու տակ է առել Աշտարակի շրջանի Կարբի գյուղի և Երևանի Վահան Թեքեյանի անվան դպրոցները<sup>3</sup>:

1994 թ. դրությամբ ԹՄՄ-ն ամբողջ աշխարհում, նաև Հայաստանում և Արցախում ուներ 51 մասնաճյուղ՝ իր 13 մշակութային կենտրոններով, մամուլով ու դպրոցներով<sup>4</sup>: Մինչև 1997 թ. վերջերը ԹՄՄ-ի Սփյուռքի կենտրոնական մարմինը Հայաստանի ԹՄՄ-

<sup>1</sup> Տես նույն տեղում:  
<sup>2</sup> Տես «Հայրենիքի ծայն», 1991 թ. 13 փետրվարի, էջ 9:  
<sup>3</sup> Տես «Հայրենիքի ծայն», 1991 թ. 30 հունվարի, էջ 9:  
<sup>4</sup> Տես «Սփյուռքահայ կազմակերպություններ», էջ 25:

ին ֆինանսական լայն աջակցություն էր ցույց տալիս, հետո աստիճանաբար դադարեցրեց հատկացումները: ՀԹՄՄ-ն հրատարակում էր գրքեր, կազմակերպում համերգներ, ցուցահանդեսներ, Ափյուռքի կրթօջախների համար նկարահանում տեսաֆիլմեր, երևանում հրավիրում արտերկրի երգահանների հեղինակային համերգներ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համատեղ արշավախումբ կազմակերպում՝ Արցախի և պատերազմից տուժած այլ շրջանների պատմամշակութային հուշարձաններ վերականգնելու նպատակով, հովանավորում էր որբ երեխաներին և ուսանողներին, կազմակերպում նրանց կրթական ու մշակութային հանգիստը և այլն<sup>1</sup>: Մեծ է ԹՄՄ-ի ներդրումը Հայաստանի մշակութային կյանքի զարգացման գործում, հատկապես սփյուռքահայության կյանքում, Հայրենիք-Սփյուռք փոխճանաչողության ու մշակութային առնչությունների բնագավառում:

Սփյուռքահայ սերունդներին հայեցի կրթելու ու դաստիարակելու, նրանց ուժացման վտանգից փրկելու և ընդհանրապես հայապահպանության սրբազան գործում անգնահատելի են Մխիթարյան միաբանության և նրա կրթական հաստատությունների դերն ու առաքելությունը:

Այդպիսի հաստատություններից հիշատակելի է, մասնավորապես, հնդկահայեր Ռաֆայելի ու նրա փեսա Մուրադի միջոցներով 1894 թ. Վենետիկում հիմնադրված Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը, ուր ուսումնառության են գալիս հայ երեխաներ Հունաստանից, Ալբանիայից, Բուլղարիայից, Հունգարիայից, Սիրիայից, Լիբանանից, Շվեյցարիայից, Ֆրանսիայից և Սփյուռքի այլ վայրերից, ինչպես նաև Հայաստանից: Հայրենիքի հետ Մխիթարյան միաբանության կապերն աշխուժացան խորհրդային կարգերի անկումից հետո: Միաբանության վարդապետ, տպարանի պատասխանատու Հ. Մարտիրոս Աբիգյանը վկայում է. «Վերջերս՝ 1995 թ., մեծ առիթ ունեցանք Հայաստան այցելելու և տեղի

<sup>1</sup> Տես Ք. Ռ. Պետրոսյան, Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1998-2001 թթ., Երևան 2011, էջ 145:

կրթական նախարարության հետ համաձայնության գալով բավական թվով, շուրջ 60 հազար գիրք ուղարկեցինք Հայաստան՝ գլխավորապես կրոնի, լեզվաբանության, ընթերցանության և այլ դասագրքեր»<sup>1</sup>:

1991 թ. Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, գտնվելով Իտալիայում, այցելում է Մխիթարյան միաբանություն: Ուշագրավ է նրա գնահատանքի խոսքը. «Մխիթարյանները չափազանց մեծ դեր են խաղում Իտալիայի հայկական գաղութի կյանքում: Բոլոր քաղաքներում զգացվում է մխիթարյանների շունչը: Իտալիայի մեծ մասը կամ Մխիթարյանների սաներն են, կամ Մխիթարյան միաբանության հովանավորներ: Ամեն ինչ կապված է Մխիթարյանների հետ: Հիրավի, Մխիթարյանները չափազանց մեծ ավանդ ունեն իտալահայ գաղութի բարգավաճման գործում: Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ խորհրդային կարգերի անկումից հետո առաջին անգամն է, որ միաբանությունը կրոնական և այլ դասագրքեր հայրենիքին տրամադրելու հնարավորություն է ունեցել»<sup>2</sup>:

Սփյուռքի հայկական խոշորագույն վարժարաններից էր Մելգոնյան կրթական հաստատությունը, որտեղ մոտ երկու տասնյակ երկրներից ուսանելու էին գալիս հայեցի կրթություն ստանալու ցանկություն ունեցող տղաներն ու աղջիկները: Այստեղ շատ այլ առարկաների հետ միասին դասավանդվում էին հայոց լեզու, հայ գրականություն և հայոց պատմություն:

Ուսուցանվող առարկաների քանակն ու որակը հնարավորություն են տալիս սաներին ու սանուհիներին ուսումը շարունակելու աշխարհի բարձրակարգ համալսարաններում:

Մելքոնյան կրթական հաստատությունը իր գոյության ընթացքում տվել է 1300 շրջանավարտ, որոնք տասնամյակների ընթացքում

<sup>1</sup> «Հայություն» 1995 թ., 3(57), նոյեմբեր, էջ 3:

<sup>2</sup> Նույն տեղում:

աշխարհի չորս ծայրերում սերմանել են իրենց ստացած գիտելիքները՝ հանուն հայության գոյապահպանման ու զարգացման:

Այսպիսով, Հայրենիք-Սփյուռք առնչությունների ասպարեզում հատկապես դրական աշխատանքներ իրականացվեցին կրթության ոլորտում, որոնք էլ նպաստեցին մշակութային կապերի էլ էլ ավելի ամրապնդմանն ու զարգացմանը:

**Tatevik Minasyan – *Homeland-Diaspora Relations in the Field of Education and Culture in the First Years of Independence*** – The article presents the process of strengthening of relations between the Homeland and the Diaspora in the education field in the first years of independence.

The author proves that the improvement of relations in the field of education promoted the development of cultural relations between the Republic of Armenia and the Diaspora.



## **ԹԱՂԵՎՈՍ ՏՈՆՈՅԱՆ**

### **ԲԱՆԻ (ՁԱՅՆԻ, ԽՈՍՔԻ, ՏԵՔՍԻ, ԵՐԳԻ) ԵՎ ՀԱՅԻ ՀԱՄԸՆԿԱԼՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԼԵԶՎԱՍՏԱԾՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ. ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ**

Ինչպիսին խոսքն է, այնպիսին քաղաքակրթական գոյությունն է, լինելությունը, կյանքը: Գոյության հիմքը հացն է: Ինչպիսի՞ն է կենսաբանական գոյության խարսխի՝ հացի և քաղաքակրթական գոյության խարսխի՝ խոսքի փոխհարաբերությունը հայ լեզվամտածողության մեջ:

«Հացի խնդիրը» հայ գրողի (Պերճ Պռոշյան, Նար-Ղոս, Վիլյամ Սարոյան, Վահագն Դավթյան, Համո Սահյան, Հրանտ Մաթևոսյան և այլք) ստեղծագործության մեջ միշտ էլ այս կամ այն կերպ արծարծվել է: Այդ արծարծումը միշտ էլ խարսխվել է գոյության կովին, սակայն ֆիզիկական գոյության հարցը չի բաժանել բարոյականության (որ քրիստոնեականն է), այսինքն՝ քաղաքակրթական լինելության խնդրից: Ֆիզիկական գոյության հիմքը հացն է, հոգևոր-քաղաքակրթական գոյության հիմքը՝ բանը (խոսքը, տեքստը): Սրանք նույն կյանքի ընկալման տարբեր բևեռներն են, որ հաճախ որպես հակադրություններ են ի հայտ գալիս, իսկ զեղարվեստական տեքստերում դրանց հակադրությունը մինչև իսկ թշնամական է, քանի որ զեղարվեստական մտածողության մեջ քաղաքակրթական գոյության տիրույթը այս երկու «հաց»-երով է ամբողջանում, և դրանցից յուրաքանչյուրի «աշխարհագրությունը» ընդլայնվում է բացառապես մյուսի հաշվին. մեկի շատությունից պակասում է մյուսը, առաջինի պակասությունից ավելանում է երկրորդը: Սկսած տերունական աղոթքից, որի մեջ ֆիզիկական գոյությունն ապահովող հացն այնքան քիչ է, որ այն խնդրելու կարիքը «հանապազորդ» է և զուգահեռվում է պարտքերը ներելու բարոյականությանը («որպես և մեք թողումք մերոց պարտապանաց»), այսինքն՝ հոգևոր հացին, վերջացրած արևի

տակ վայրագ պայքարի պոռոչանական խնդրով՝ հայերենի տեքստային տարածքը կարծես թե անընդհատ փորձում է լուծել «հացի խնդիրը»: Այս խնդրում հայերենի լեզվամտածողական համակարգն անչափ ճկուն է, և դրա վկայությունն այն է, որ հայերեն տեքստը կարողացել է ստեղծել հացի ընկալման և՛ պատմական (քրոնիկ), և՛ վերպատմական (վերժամանակային) մակարդակներ: Այս երկու մակարդակները դրսևորվում են հատկապես հայերեն չափածո տեքստերում և, բնականաբար, այն տեքստերում, որոնք բանահյուսական են (այսինքն՝ ժողովրդական մտածողության ռիթմն ու չափն են կրում):

Քանի որ ընդհանրապես գոյությունը հայերենի համատեքստը առնչում է ծայնին (հիշենք, թե ինչպես է Ձենով Հովանի ծայնը վերակենդանացում քառասուն գագ խորը մահվան փոսում հայտնված Դավթին՝ որպես արյան կանչ)<sup>1</sup>, իսկ մասնավորապես քաղաքակրթական գոյությունը՝ երգին, բանաստեղծությանը՝ լայն առումով, ապա, բնականաբար, հացը (որպես գոյության պարտադիր նախապայման, իսկ քաղաքակրթական գոյության պարտադիր նախապայմաններից մեկը) պետք է որ հոմանշային համընկալման մեջ լինի ծայնի, խոսք-տեքստի, երգի և արյան հետ: Այս առումով մինչև Դանիել Վարուժանի «Հացին երգը» ժողովածուին անցնելը գայթակղիչ է թվում Միսաք Մեծարենցի վերջին բանաստեղծություններից մեկը հիշելը, բանաստեղծություն, որը որոշ տեղեկությունների համաձայն արդեն մահվան մահձում, չկարողանալով ինքնուրույն գրել, հեղինակը ուրիշի է թելադրել<sup>2</sup>: Դա «Երգ» բանաստեղծությունն է, որ կարծես ոչ թե Մեծարենցինը պետք է լիներ, այլ հենց Վարուժանինը, քանի որ իր խոսքային ռիթմով, բանաստեղծական հույզերի ու կրքերի աշխարհագրությամբ այն ավելի շատ վարուժանական է, քան մեծարենցյան: Այդ բանաստեղծությունից տպավորություն են ստանում, թե Մեծարենցը կարծես հասնում է բանաստեղծության

այն «երկրամասին», որի իշխանը Վարուժանն է, և եթե չարանենգ մահը աշխարհից չխլեր Մեծարենցին, հայոց բանաստեղծության հիշյալ տարածքում երևի թե անսովոր մի իրավիճակ՝ երկիշխանություն, սկսվեր: Մեծարենցի «Երգ» բանաստեղծությունը **հացը** (ցորենը) **ծայնի, արյան (կյանքի)** հետ լեզվամտածողական հոմանիշությամբ է միավորում:

*Քույր, մոտեցիր նըվագին,  
Երգե՛ դաշտերն ու ցորյան,  
Ձի ամեն բան ինձ կրկին  
Կը դարձընե՛ ծայնն արյան (էջ 190):*

Ամենևին էլ բռնագրոսիկ չէ Վարուժանի առիթով մեր անդրադարձը Մեծարենցի «Երգ» բանաստեղծությանը:

Նախ ուզում ենք շեշտել, որ իր բանաստեղծությունը «Երգ» վերնագրելով՝ Մեծարենցը ներքին մղում է ունեցել՝ շեշտելու **զգացմունքային-հոգևոր** ուժերի այն համախմբումը, որ անհրաժեշտ է ընթերցողի (կամ լսարանի) վրա առավելագույն ազդեցությունը գործելու համար: Իսկ այն **հոգեբանական-ճակատագրական** պահը, որի մեջ ստեղծվել է այս բանաստեղծությունը. հիվանդ բանաստեղծին հաշված ժամեր են մնում կյանքին հրաժեշտ տալու, և նա կարիք ունի ասելու իր վերջին, թերևս ամենակարևոր խոսքը՝ ակնկալությամբ, որ այն չի մոռացվի, ավելին՝ կհիշվի ու կկրկնվի, ինչպես երգը, որի վրա խարսխվում են գոյության (ծայն) քաղաքակրթական երկու մակարդակները՝ տեքստ-խոսքը և զգացմունք-երաժշտությունը: Վարուժանի «Ձոն»-ը նույնպես երգ է, քանի որ, ինչպես կտեսնենք քիչ հետո, այն նույնպես երգի վերոնշյալ խորհուրդն է կրում:

Բացառիկ է այն ընդհանրությունը, որ, հիշյալ երգայնությունից գատ, կա Մեծարանցի «Երգ»-ի և Վարուժանի «Ցեղին սիրտը» գրքի «Ձոն»-ի միջև. խոսքը վերաբերում է նույն խնդիրների արծարծմանը և հենց այդ խնդիրները լուծելու լեզվական միջոցների նույնությամբ:

Երկու բանաստեղծությունների մեջ էլ նույն **կրակն** է՝ «Քույր, մո-

<sup>1</sup> Տես Հայ ինքնության խնդիրները 21-րդ դարում. գիտաժողովի նյութեր, Եր., 2013 էջ 157-165:

<sup>2</sup> Միսաք Մեծարենց, Երկերի լիակատար ժողովածու, 1981 թ., էջ 399-400:

տեցիր **կրակին**» (Մ. Մեծարենց) - «Ձեզի ընծա՛, **կրակի** գոհեր, Ընդ եղեգան փող բոց ելաներ» (Դ. Վարուժան), նույն **ծուխը** «**Օղխե** տերևն այս բուրյան» (Մեծարենց) - «Ընդ եղեգան փող **ծուխ** ելաներ» (Դ. Վարուժան), նույն **արյունն** է «Հոտն **արյան**», «համն **արյան**», «գույնն **արյան**», «ծայնն **արյան**» (Մ. Մեծարենց) - «Եղեգնյա գրչով երգեցի **արյուն**» (Դ. Վարուժան), նույն **վրեժն** է «Ձի ամե՛ն բան ինձ կրկին Կը հիշեցնե **վրեժն** արյան» (Մ. Մեծարենց), «Եղեգնյա գրչով **վրեժ** երգեցի» (Դ. Վարուժան):

Սրանք դեպի նույն ենթատեքստը մղող հայերենի համատեքստային այն ընդհանրություններն են, որոնց համատեղ ի հայտ գալուն նպաստում են նույն կամ նման, նեղանձնական կամ հանրային կյանքում վճռորոշ, ճակատագրական, բարձրակետային իրավիճակները: Ծիշտ է, առաջին հայացքից կարող է թվալ, թե մեծարենցյան այս երգը միայն նեղանձնական է, իսկ վարուժանական ծոնը՝ ընդհանուր-ցեղային, և գուցե դա նույնիսկ ավելի շատ հենց այդպես է, բայց Մեծարենցի «Երգ»-ի ավարտը վերջին տողը արյան վրեժով, ոչ այլ ինչ է, քան տեքստային սուբյեկտիվության անցում համատեքստային ընդհանուր լեզվամտածողական միջավայր. հայերենի համատեքստը Մ. Մեծարենցի այս «Երգ» բանաստեղծության վերջին տողում կարողանում է իր վերահսկողության տակ առնել մեծարենցյան տեքստը անձնականից այն փոխադրելով ազգային-հանրային ոլորտ:

Եթե մենք պնդում ենք, որ հայերենի համատեքստում հացը և խոսքը (տեքստը, երգը) հոմանիշային համընկալումներ են, բնականաբար և տրամաբանորեն մենք պարտավոր ենք փաստել, որ այս երկու բանաստեղծությունների միջև ընդհանրություն-նմանություն կա նաև հացի խորհրդի ընկալման առումով: Ահավասիկ Մեծարենցի «Երգ»-ի՝ այդ առումով մեզ անհրաժեշտ տողերը

*Քույր, մոտեցիր նվագին,  
երգե դաշտերն ու ցորյան....* (էջ 190):

Եթե մեզ հաջողվի Դ. Վարուժանի գրով փաստել, որ, իրոք, հացը և բանը (տեքստը, խոսքը, երգը) նրա տեքստի (այդ կերպ նաև

հայերենի) լեզվամտածողական կառույցում համընկալում-հոմանիշներ են, ապա կկարողանանք նաև պնդել, որ «Ձոն» բանաստեղծությունը Մ. Մեծարենցի «Երգ» բանաստեղծության հետ նույն արժեհամակարգային դաշտում է նաև հացի խորհրդի ընդգրկմամբ, քանի որ, ճիշտ է, ծոներգի մեջ անմիջականորեն, ուղղակիորեն հաց, ցորեն բառարտահայտությունները չեն օգտագործվում, սակայն կա դրանց հետ համընկալում հանդիսացող երգի (երգելու) խորհուրդը:

Այս առումով անհնար է խուսափել Դանիել Վարուժանի «Հացին երգը» ժողովածուի քննությունից, ավելին դա դառնում է պարտադիր:

**խոսքի և հացի** լեզվամտածողական հոմանիշության այս տիրույթում էլ փորձենք մասնավորեցնել Դանիել Վարուժանի «Հացին երգը» ժողովածուն:

Չայնն ընդհանրապես և քաղաքակրթական ծայնը (խոսքը, երգը, նվագը) մասնավորապես որպես կյանքի խորհուրդ ուղեկցում են ողջ «Հացին երգը», որի բնաբանը ևս նվագ է՝ «Ու նըվագներս կը ծընի՛ն...»: «Արտերուն հրավերը» ողողվել է առվակների կարկաչներով՝ «Սառեն լուծված կկարկաչեն առվակներ»։ «Մշակները» հագեցած է հոսուն երգով «Ավիշներու հոսուն երգն անոնք միայն են լսած», «Հարկիք»-ը լի է դաշտերի անցյալի երագով:

«Հացին երգում» հացի արարումը իր բոլոր փուլերի բանաստեղծական նկարագրությամբ, ուղեկցվում է հենց երգով

*Մարդը կերթա երգելով, մաճն ափին մեջ պնդաջիղ,  
Ու իր ճանփան կզծե իր հոգիին պես ուղիղ* (էջ 293)<sup>1</sup>:

«Հերկեր» բանաստեղծության մեջ ուշադրություն է գրավում այն իրողությունը, որ, փաստորեն, մաճը բռնած հերկ անող մարդու առջև հոգևոր-բարոյական ուղղամտության պահանջ է դրվում, կամ, որ ավելի ճիշտ է, հացի ստեղծման ողջ ընթացքը պայմա-

<sup>1</sup> Դանիել Վարուժան, Երկեր, Հայաստանի հրատ., Եր., 1969 թ.: Այսուհետև այս գրքից մեջբերումների էջերը կտրվեն շարադրանքում փակագծերի մեջ:

նավորում է հոգու բարձր հատկանիշներով: Այլ կերպ՝ հանապազօրյա ուտելու հացն այնպիսին է, ինչպիսին այդ հացն իր տքնանքով ստեղծողի հոգին: Իր հերթին՝ հացի արարման («կզծե») ընթացքը վերածվում է հոգու արարման ճանապարհի: Փաստորեն «Հացին երգում» հացի արարման գաղափարն անբաժանելի է հոգու արարման գաղափարից, քանի որ հանգում է միաժամանակ և՛ կենսական հացի, և՛ հոգու կերակուր-հացի խորհրդին: Հաց ստեղծելը՝ վարել, ցանել, հնձել, կալսել, աղալ, թխել և այլն, հոգու արարելն է: «Հացին երգի» հացը նաև հոգու կերակուրն է: Ահա թե ինչու մաճկալի խոսքը ամենաբարձր դրսևորմամբ՝ երգով է արտահայտվում. նրա խոսքը երգն է՝ «հո՛, հռո՛, հռո՛, հռո՛»: Եվ ուղիղ, ուղղամիտ հոգի ունեցող աշխատավորի ստեղծած հացը դառնում է նաև նշխար:

Իսկ «Ցան» բանաստեղծությունը պարզապես շարունակում է մեր խոսքը՝ գործնականում ջնջելով հացի ընկալման երկու՝ նյութական ու հոգևոր բևեռների միջև ընկած սահմանը.

*Մշակ, ցանե՛ - հանուն Տիրոջ նշխարին  
Թող մատերեդ հորդին սերմեր լուսեղեն (էջ 295):*

Վարուժանական (այդքանով նաև հայերենի) լեզվամտածողական համակարգում հացը ոչ թե զուտ ֆիզիկական գոյության զրավականն է, այլ, ինչպես ասացինք, նաև ու հավասարապես նշխար, այսինքն՝ հոգևոր-քրիստոնեական խորհուրդ:

Բանաստեղծության շարունակությունը պարզապես «Հացին երգի» վերափմաստավորման պահանջ է.

*Վաղը ամեն մեկ հասկի մեջ կաթնային  
Պիտի հասուննա մաս մ՝ Հիսուսի մարմինեն ... (էջ 295):*

Իսկ Հիսուսը խոսքն է, բանն է: Եվ հացի արարման վարուժանական-հայկական ծիսակարգում հացի երզը դառնում է նաև Հիսուսի երզը, հետևաբար՝ խոսքի երզը: Ուրեմն ի՛նչ աստիճանի են սխալվում նրանք, ովքեր «Հացին երզը» զուգահեռում են նախաքրիստոնեական բանաստեղծության հետ: Վարուժանի այս՝

«Ցան» բանաստեղծության մեջ բերված տողերը պարտադրում են և հուշում ընդհանրապես և միշտ, որ երբ հայերեն տեքստը հաց է ասում, ամեն ինչից զատ՝ անպայմանորեն մտածել է պետք դրա քրիստոնեական ընկալման մասին:

Հայերենն արձանագրել, մշակել ու պահպանել է «Որտեղ հաց, այնտեղ կաց» խոսքը (տեքստը): Մարդկային, քաղաքակրթական հոգևոր բարձր արժեքների հետ առաջին հայացքից չներդաշնակվող այս տեքստի մեկնաբանությունը կարծես թե պարզից էլ պարզ է. որտեղ ապրուստ, ուտելու բան կա, այնտեղ էլ մնա՛ ու ապրի՛ր: Մարդու հոգևոր էության նկատմամբ բաց տեքստով այս, մեղմ ասած, արհամարհանքը, չգիտես ինչու, երբեմն պատեհ, երբեմն էլ անպատեհ առիթներով համառորեն վերհիշվում է մի լեզվի համատեքստում, որը համաշխարհային քաղաքակրթության հոգևոր վերընթացին իր անուրանալի ավանդն է բերել: Ի՞նչն է պատճառն այդ համառության:

Բանն այն է, որ եթե «Որտեղ հաց, այնտեղ կաց»-ը զուտ տեքստ լիներ, այն վաղուց ոչ ոք չէր կրկնի: **Որևէ տեքստ չի մոռացվում և ամրակայվում է տվյալ լեզվի տիրույթում, եթե անընդհատական սատարում է ստանում նույն այդ լեզվի համատեքստից:** Ուրեմն հայերենի համատեքստը, չգիտես ինչու, անընդհատ սատարում է «Որտեղ հաց, այնտեղ կաց» խոսքին, խոսք, որն առաջին հայացքից, հիշեցնում ենք, չի ներդաշնակում քաղաքակրթական արժեքներին: Ի՞նչն է պատճառը: Պատճառը կարող է միայն մեկ բան լինել. «Որտեղ հաց, այնտեղ կաց» խոսքը տեքստ լինելուց առաջ նախ համատեքստ է, համատեքստի մի հատված, պատառիկ: Որքան էլ որպես բաց տեքստ այն կարող է վիրավորել հոգևոր բարձր արժեքներ կրող մարդու արժանապատվությունը, այնուամենայնիվ որպես համատեքստ մղված է պահպանելու հայի քրիստոնեական հոգեբանության և լեզվամտածողության որոշակի մի հատված, որը կառուցվում է տվյալ ասացվածքի վերկենցաղային, վերապատմական ու վերժամանակային ընկալման վրա: Բացատրենք: Նախ ներկայացնենք այս մեկնաբանության տրամաբանությունը: Երբ Դանիել Վարու-

Ժանը «Ցան» բանաստեղծության մեջ, հացը նկատի առնելով, ասում է «Պիտ հասուննա մաս մ'Յիսուսի մարմինեն», իր տեքստը բացահայտորեն օրգանապես շաղկապում-ծուլում է աստվածաշնչյան «Այս է մարմինս, առեք ու կերեք» խոսքին: Երկրորդ կարծիք այստեղ լինել չի կարող: «Որտեղ հաց, այնտեղ կաց»-ը քրիստոնեական մտածողության մեջ կյանքի բանա-ծնունդն է. այդ բանաձևը հետևյալն է. **կաց-ը** (այսինքն՝ լինելը, կյանքը) այնտեղ է, որտեղ **հացն** է: Բայց ՀԱՅԸ Քրիստոսն է, որ ասում է. «Այս է մարմինս, առեք ու կերեք»: Այսինքն՝ Քրիստոսի մարմինը հացն է: **Բայց ի՞նչ է Քրիստոսի մարմինը: Յիսուսը Աստծո ԲԱՆՆ է, ԽՈՍԷԸ, ուրեմն՝ Քրիստոսի մարմինը հենց Աստծո ԲԱՆՆ է, ԽՈՍԷԸ:** Հայ-քրիստոնեական հոգեբանության ու լեզվամտածողության մեջ պահվում-պահպանվում է հացի ընկալման այս կարևորագույն գաղտնագիր-շերտը, որը նման կերպ գաղտնաբացելուց հետո մեզ ստիպում է «Որտեղ հաց, այնտեղ կաց» հայկական ժողովրդական ասացվածքը ընթերցել հետևյալ կերպ. «Որտեղ Քրիստոսն է, այնտեղ կյանքն է», այսինքն՝ «Որտեղ Աստծո խոսքն է, այնտեղ կյանքն է», այսինքն՝ «Որտեղ խոսք (հաց), այնտեղ կյանք (կաց)»: Ուրեմն Դանիել Վարուժանի «Հացին երգը» վերնագիրը «Ցան» բանաստեղծության «Պիտ հասուննա մաս մ'Յիսուսի մարմինեն» տողի օգնությամբ դառնում է «Տիրոջ խոսքի երգը» նաև: «Պիտ հասուննա մաս մ'Յիսուսի մարմինեն» տողն այնքան ուղղակի է, որ արդեն իսկ բավարար հիմք է մեր եզրահանգման համար, սակայն «Ցան» բանաստեղծության ընթերցումը շարունակելով՝ հանդիպում ենք նմանատիպ մի «անակնկալի» ևս, որը Վարուժանի բանաստեղծության միջոցով դարձյալ փաստում է հայերենի լեզվամտածողական համակարգի մեր բացահայտման ճշտությունը՝ հացի խորհրդի քրիստոնեական ատաղձը. «Ցան» բանաստեղծության հաջորդ տունն ավարտվում է հետևյալ երկտողով:

*Ծիտերն ինչ փուլթ, թե հատիկներդ կավարեն.-  
Տեղը Աստված պիտի մարգրիտ սերմանե:*

Դժվար է ասել՝ Վարուժանի քրիստոնեական-տեսական հայա՞ցքն

է այդ իսկ պահին ակնարկում այն մարգարիտները, որ չպետք է շաղ տալ խոզերի առաջ, թե՞ հայկական համատեքստն է «կառավարում» Վարուժանի գրիչը՝ հացը որպես Յիսուսի մարմին հիշող տողերից հետո վերականգնելու մարգարիտները խոզերի առջև շաղ չտալու ենթատեքստը: Երկուսն էլ: Տարբերություն չկա. հիմքը նույն լեզվամտածողությունն է, որ Վարուժանը կրում է թե՛ տեսական-գաղափարական առումով, թե՛ ենթագիտակցական-հոգեբանական, լեզվամտածողական: Լեզվամտածողական նման կառույցի էությամբ ու ձևով դրսևորվելու ընթացքը Վարուժանի տեքստը, գուցեև հեղինակի կամքից անկախ, շարունակում է «Առաջին գիշեր» բանաստեղծության մեջ. «Ամեն ընծյուղ մարգրիտ մ'ունի իր բերանն...» (էջ 298): Քանի որ խոսքը բերանում է լինում, և ահա այս մարգարիտը ընծյուղի բերանում է, ուրեմն դա հենց աստվածաշնչյան խոսքը չէ՞ արդյոք: Խոսքն է բերանում լինում, խոսքը, ուրիշ էլ ի՞նչը:

Ահա թե ինչպես է Վարուժանի «Հացին երգը» գրքում ծայն (տեքստ, խոսք)-կյանք համընկալումը, հաղթահարելով պատմական (կենցաղային, առօրեական) ոլորտը, վերածվում հայերենի քրիստոնեական լեզվամտածողության համատեքստային մի հատվածի:

«Հացին երգը» գրքի «Կալերուն գիշեր» բանաստեղծության վերջին տունն իր «Եվ այսպես՝ օր մը պառկած փողփողումին տակ երկնի // Իմ ծնողներս մըշակ՝ զիս հղացան կաթոգին» (էջ 217) տողերով ենթագիտակցական-համատեքստային մի ակնարկ է այն իրողության, որ մարդն ինքը (տվյալ դեպքում՝ բանաստեղծության հեղինակը) ծնունդ է այն ընթացքի, որ հացի արարումն է, ծնողները զավակ են հղանում կալերում, ուր հացն է հավաքվում.

*Ձիս հղացա՛ն, սևեռած իրենց աչքերը բարի  
Վերն ամենեն մեծ Աստղին, ամենավառ Հրայրքին* (էջ 317):

Ձուգորդությունը «Եւ ահա այն աստղը, որ տեսել էին արեւելքում, առաջնորդեց նրանց, մինչեւ որ եկաւ կանգնեց այն տեղի վրայ,

ուր մանուկն էր»<sup>1</sup> խոսքի հետ անհնար է չարծանագրել: Վարու-  
ժանն «իր» Աստղը մեծատառով է գրել, որովհետև դրա հետ է  
շաղկապվում իր ծնունդը, ինչպես որ Կենաց հաց Հիսուսի  
ծնունդն է առնչվում հիշյալ աստղին: «Ես եմ կենդանի հացը, որ  
երկնքից է իջած. թե մէկն այս հացից ուտի, յաւիտեմապէս կապրի.  
Եւ այն հացը, որ կտամ, իմ մարմինն է, որը ես կտամ աշխարհի  
կեանքի համար»<sup>2</sup>. Վարուժանի բանաստեղծության մեջ մանուկը  
ծնվում է այնտեղ, որտեղ հացն է՝ կալերում, ծնվում է ամենամեծ  
Աստղի հովանու ներքո, ինչպես Հիսուսը, որ կյանքի հացն է:

Հիսուսի և վարուժանական բանաստեղծության մեջ մանկան  
ծնունդի համատեքստային այս գաղտնառնչությունն է փոխում  
Վարուժանի «Հացին երգի» հացի «համը». այդ հացից Հիսուսի,  
նրա խոսքի բույրն է գալիս:

Եվ «Կալերու գիշեր»-ին անմիջապես հաջորդում է «Խաչքուռ»  
բանաստեղծությունը՝ որպես վավերական կնիքն այս ամենի:  
Ինչպե՞ս է Վարուժանը հյուսում հացը՝ ցորենի հասկերը.

*Ես հյուսեցի զանոնք, գիսակ առ գիսակ,  
Տալով խաչին ձևը Որդվույդ կարեվեր,  
Որուն արյունն, ամեն Ջատկի, սու՛րբ կըրակ,  
Սեր ակոսներն են խմեր:*

Հաջորդող «Կամներգ» բանաստեղծությունում արդեն միա-  
խառնվում են հացն ու երգը, հացն ու խոսքը.

*Հորձանքին մեջ աշխետ հունձքին  
Ես կը լողամ երգերուս հետ... (էջ 320):*

Եվ եթե արդեն իրավունք ունենք պնդելու, որ Վարուժանի հացը  
Հիսուս-հացի մի պատառն է, ու Հիսուսն էլ խոսքն է, տրա-  
մաբանական շղթան փակվում է. խոսքը միախառնվում է խոսքին  
(հող էր, հող դարձավ), այսինքն՝ «Հացին երգում» միախառնվում  
են Աստծո խոսքն ու Վարուժանի խոսքը՝ որպես հայերենի լեզ-

<sup>1</sup> Նոր կտակարան, Ավետարան ըստ Մատթեոսի, մոզերի երկրպագությունը, Մայր  
Աթոռ, թիվ 9, Ս. էջմիածին:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 268:

վամտածողական համակարգի համատեքստային երկու անտար-  
բալուծելի իրողություն:

Խոսքը՝ հաց. սա է հայ ժողովրդի կենսաընկալումը: Հացի արար-  
ման վարուժանական կառույցը փաստում է հայերենի՝ հացը  
որպես խոսք և խոսքը որպես հաց քրիստոնեական ընկալումը:

Եվ ամենևին պատահական չէ, որ Վարուժանն իր «Հացին երգը»  
նախապես մտադրված է եղել անվանելու «Հացին խոսքը»:

**Tadevos Tonoyan – Word (voice, speech, text, song) and bread co-perception.**  
**Daniel Varoujan – Speech as Bread:** this is the life’s perception for Armenian nation.  
Varoujan’s lingual-thinking structure of bread creation proves that Armenian bread  
perceives as speech and speech perceives as bread. This is Christian (typical)  
perception, because Jesus himself presents as bread come down from sky.  
In “Hatsin Yerg” God’s speech and Varoujan’s speech interflow and become an  
indissoluble unity in Armenian lingual thinking system.  
And in the Varoujan’s (Armenians’) rite of creating bread the song of bread becomes  
also a song of Jesus, therefore - the song of speech.

**ՀԱՄԱԳՈՐԾԱԾԱԿԱՆ ԲԱՆԵՐԻ ԵՐԳԻԾԱԿԱՆ  
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐՎԱՆԴ ՕՏՅԱՆԻ ԱՐՉԱԿՈՒՄ**

Շատ են գիտական հիմնավոր ուսումնասիրությունները 20-րդ դարի գրող, երգիծաբան Երվանդ Օտյանի գրական ժառանգության վերաբերյալ<sup>1</sup>: Այդ աշխատությունները գրականագիտական բնույթի են. դրանցում գրողի խոսքարվեստի հարցերը քննվում են խիստ մասնակիորեն՝ պայմանավորված նյութի թելադրանքով:

Այս հոդվածը փորձ է անդրադառնալու Օտյանի երկերում համագործածական բառերի երգիծական իրացումներին, ընդհանուր գծերով ներկայացնելու գրողի՝ երգիծանք ստեղծելու նպատակով բառընտրության և բառագործածության վարպետությունը:

Ընդհանրապես գրողի բառապաշարի ուսումնասիրության համար ծանրակշիռ տեղ ունի համագործածական բառերի ոճական քննությունը, քանի որ այս բառաշերտը ոչ միայն հանընդհանուր լեզվի, այլև հեղինակի (անհատի) լեզվի հիմքն է: Եվ հեղինակի խոսքարվեստի քննության ժամանակ հետաքրքիր է լինում նկատել, թե որքանով և ինչպես է օգտվում հեղինակը չեզոք բառաշերտի միավորներից:

Համագործածական բառերը բնորոշվում են որպես ոճականորեն չեզոք միավորներ և ունեն անվանողական, հաղորդակցական

արժեք<sup>1</sup>: Սակայն հայտնի և անվիճելի իրողություն է այն, որ համագործածական յուրաքանչյուր բառ, գործածվելով խոսքային համապատասխան միջավայրում, կարող է ձեռք բերել ոճական արժեք և այդ համատեքստում կորցնել իր հիմնական հատկանիշը՝ չեզոքությունը: Այս առումով համագործածական բառի ոճավորումը գրողից պահանջում է ոչ միայն լեզվի գերազանց իմացություն, այլև որոշակի լեզվագագացողություն, բառընտրության և բառօգտագործման գեղագիտական նորմերին տիրապետելու հմտություն: Չեզոք բառի ոճական իրացումը պետք է լինի արդարացված և համապատասխան խոսքային տվյալ իրադրությանը: Ուշագրավ է չափածոյի վերաբերյալ Վ. Բելինսկու այն դիտարկումը, որ յուրաքանչյուր բառ ողջ ստեղծագործության համատեքստում պետք է այնքան սպառնիչ արտահայտի իր իմաստը, որ հաստատի այն իրողությունը, թե լեզվում գոյություն չունի նման մի բառ, որը կարողանա խոսքային այդ միջավայրում փոխարինել իրեն<sup>2</sup>:

Այս մոտեցմամբ առաջնային է դառնում նախ և առաջ բառի ճիշտ **փոխաբերացումը**, քանի որ «բառի փոխաբերական նշանակությունը ինքնին ոճական երևույթ է: Եվ... փոխաբերական նշանակությամբ առավել չափով օժտվում են համագործածական բառերը...»<sup>3</sup>: Բառը փոխաբերական կիրառության շնորհիվ խոսքային տվյալ միջավայրը դարձնում է ուշագրավ, արտառոց՝ այնտեղ խտացնելով գաղափարի, պատկերի բովանդակային ընկալումը: Եվ ոչ միայն. համագործածական բառի ոճականորեն հաջող փոխաբերացումը վկայում է նաև գրողի վարպետության մասին. ինչպես նշում է Վ. Առաքելյանը, «փոխաբերությունը սահմաններ չունի, քանի որ նմանություն կարելի է գտնել բոլոր տեսակի առարկաների միջև»<sup>4</sup>:

<sup>1</sup> Տես **Սակարյան Ա.**, Երվանդ Օտյան, Եր., 1965, **Ուլյնի**, Երվանդ Օտյանի կյանքը և հրապարակախոսական գործունեությունը, Եր., 1977, **Մանուկյան Ա.**, Երվանդ Օտյան. կյանքը, հրապարակախոսությունը, գեղարվեստական վաստակը, Եր., 1997, **Մուրադյան Ա.**, Երվանդ Օտյան: կյանքը և գործը, Եր., 1996, **Էլոյան Ռ.**, Երվանդ Օտյանի քաղաքական երգիծանքը, Եր., 1999 և այլն:

<sup>1</sup> Տես **Աղայան Եղ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 135-137, **Սուքիասյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1999, էջ 164-165:  
<sup>2</sup> Տես **Белинский В.**, Полное собрание сочинений: в 13 т., М., 1954, т. 4, էջ 545:  
<sup>3</sup> **Մելքոնյան Ա.**, Անհարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 92:  
<sup>4</sup> **Առաքելյան Վ.**, Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Եր., 1975, էջ 236:

Օտյանի գեղարվեստական արձակը հազեցած է համագործածական բառերի ոճական կիրառություններով, որոնք երևան են հանուն գրողի գեղագիտական վառ մտածողությունը և ուրույն լեզվազգացողությունը: Երգիծաբանի երկերի գեղարվեստական կարևոր յուրահատկություններից է պատումի պարզ ոճը: Պարզ պատումի մեջ համագործածական բառերի երգիծական փոխաբերացումներով Օտյանը ստեղծում է խոսքի կոմիզ: Ընդ որում, այդ կիրառությունները մեծ մասամբ բնորոշ են հեղինակային խոսքին: Դրանց միջոցով երգիծաբանը վարպետորեն կերպավորում է հերոսին, նրա միջավայրը, ընդգծում կերպարի բնավորության այս կամ այն գիծը: Ինչպես, օրինակ, ներկայացնելով միջնորդությամբ զբաղվող քահանային, հեղինակը գրում է. «Տաներեց: ...Մսոտ շրթունքներ, **գիշատիչ քիթ** մը»<sup>1</sup>: **Գիշատիչ** բառը այս համատեքստից դուրս համագործածական չեզոք բառ է. ըստ էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի»՝ **գիշատիչ** բառն ունի հետևյալ իմաստները՝ *ած. 1.* ուրիշ կենդանիներ ուտող (կենդանիների մասին), *2.* գիշատող, գիշատելու հատկություն ունեցող, *3.* *փխբ.* հարստահարիչ, կեղեքիչ, *4.* *փխբ.* վայրագ, բարբարոս, *5.* *գ.* գիշատիչ կենդանի (հ. 1, էջ 238): Ակնհայտ է, որ այս կիրառության մեջ առաջ են մղվել բառի փոխաբերական իմաստները: Այսպիսի գործածությունը մեծացրել է համատեքստի ոճական լիցքը. «**գիշատիչ քիթ** մը» կապակցության մեջ ընդգծված բառը միայն արտաքին դիմագծի նկարագրությունն է: Երգիծանքի տեսաբաններից Վ. Պրոպալը գրում է, որ կոմիկական ծիծաղը ծնվում է այն ժամանակ, երբ սկզբում մարդու գիտակցության մեջ անհատի դրական էության վերաբերյալ եղած պատկերացումը կտրուկ փոխվում է հանկարծակի բացահայտված ներքին արատների պատճառով, որոնք ի հայտ են գալիս արտաքինի նկարագրության քողի տակ<sup>2</sup>: Եվ ահա **գիշատիչ քիթ** կապակցությամբ խախտվում է մարդու մտապատկերում

<sup>1</sup> Օտյան Եր., Երկերի ժողովածու 6 հատ., հատ. I, Եր., 1960, էջ 3: Այսուհետև վեցհատորյակից մեջբերումների հղումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերում՝ նշելով հատորը և էջը: Պահպանել ենք բնագրի ուղղագրությունը:  
<sup>2</sup> Տե՛ս Пшонн В., Проблемы комизма и смеха, М., 1976, էջ 146:

եղած քրիստոնյա քահանայի (ընդհանրապես հոգևորականի) տիպական ընկալումը: Այս կապակցությունը ակնարկում է քահանայի վտանգավոր էությունը, հաջող ընտրված բառը օգնում է նաև «գործի մարդ» քահանայի երգիծական դիմանկարի ստեղծմանը: Ավելին՝ **գիշատիչ** բառի գործածությամբ կարծես գրողը իրեն ազատում է կերպարի հոգեբանությունը ամբողջացնող հավելյալ նկարագրությունից:

Տարբեր երկերի լեզվի քննությունը ցույց է տալիս, որ Օտյանը նախընտրում է հերոսների կերպավորման այս միջոցը. հաճախ տուրք չտալով երկարաշունչ նկարագրությունների՝ երգիծաբանը համագործածական մի բառի ընտրությամբ հերոսների արտաքինի նկարագրության զուգորդումով ենթատեքստում բացահայտում է նրանց ներքին էության ինչ-ինչ հատկանիշներ: Ընդ որում, կերպավորման այս միջոցը Օտյանը կիրառում է և՛ գլխավոր, և՛ երկրորդական հերոսներ կերտելիս: Այսպես, «Ազգային բարերար» վիպակում պատրաստվում են Թաղական նոր խորհրդի ընտրության: Եկեղեցու բակում հավաքվել են «ընդդիմամարտ» ուժերը: Հեղինակը, ներկայացնելով «մենծ աղայականության» ընտրյալ Սահակ էֆենտու հակառակորդին՝ ձկնավաճառ Համբիկին (երկրորդական կերպար է), գրում է. «Ձկնավաճառ խամջի Համբիկ խոշոր բանթալոն մը հագած, պեխերը **սպառնական ու մարտահրավեր**, լայն ու տատանոտ քայլվածքով մը կը չափեր ժամուն բակը» (1, 318): Ընդգծված բառերը էապես նպաստում են երկրորդական կերպարի երգիծական բնութագրմանը. **սպառնական ու մարտահրավեր պեխեր** կապակցության միջոցով ներկայանում է կենդանի և շարժուն հերոսը, կոմիկականորեն ցուցադրվում է անհանգիստ ու կռվի նախապատրաստվող մարդու և հոգեվիճակը, և՛ այդ հոգեվիճակի դիմային արտահայտությունը: Նմանատիպ կիրառությունները հաճախադեպ են, ինչպես՝ «Սրբազանը արծակեց իր **լեցուն, ծարպոտ** ու որովայնաշարժ քաիքաիը» (ՄԵ, 129), «Բարսեղ Արգամյան, հագիվ 52-55 տարեկան, ...մարդ մըն էր ...**չեչտված քիթով** մը և հեշտամուկ կարմիր շրթունքներով» (5, 9), «...տիկին Կելիթյանն էր, գիրուկ, կարմրե-



րես, **պաշտոնական ժպիտ մը...**» (6, 20) և այլն: Ակնհայտ է, որ օտյանական կերպավորումները գերծ են բառային առատ կուտակումներից. երգիծաբանին հաճախ է հաջողվում գեղարվեստական կերպար ստեղծել մեկ բառով: Այս առիթով տեղին է լեզվաբան Յ. Հարությունյանի դիտարկումը. «Գեղարվեստական խոսքի գեղեցկությունը, արտահայտչականությունը ոչ թե բառերի քանակով են պայմանավորված, այլ բառի տեղին գործածությամբ»<sup>1</sup>: Այսպես, հեզնելով միջնորդ քահանայի դրամաշորթությունը, հեղինակը գրում է. «Տեր Բարսեղ դրամը **կ'անհետացնե** վերարկուին գրպանի մեջ» (1, 129): **Անհետացնել** բառը այս համատեքստից դուրս ոճական արժեք չունի, մինչդեռ նշված խոսքաշարում այն անփոխարինելի է: Եթե Օտյանը **անհետացնել** համագործածական բառը փոխարիներ մեկ այլ համագործածական բառով՝ **դնել**-ով («Տեր Բարսեղ դրամը կը դնե վերարկուին գրպանի մեջ»), ապա խոսքը ոչ միայն կզրկվեր իր որոշակի բովանդակությունից, այլև թերի կմնար դրամապաշտ քահանայի կերպարի երգիծումը. **անհետացնել** բառի գործածությամբ ընդգծվում է կաշառակեր քահանայի գործողության բովանդակությունը (ակնթարթային արագությամբ դրամը գրպանելը):

Համագործածական բառերի ոճական կիրառություններով երգիծվում են նաև վայ-հեղափոխականները և նրանց գործունեությունը («Պրոպագանդիստը», «Գործի մարդիկ», «Հեղափոխության մակարությունները»): Այս դեպքում դրանք նպաստում են հեզնանքի ձևավորմանը, ինչպես՝ «Հիմակ գործունեության լավագույն դաշտի մը՝ հեղափոխության **շահագործումը** կը հրապուրեր զինքը» (1, 286), կամ՝ «Աշոտ վեց ամիս ի վեր **կը մարզվեր** «հեղափոխական» ասպարեզին մեջ» (1, 260): Այո, հեղափոխությունը կարծես մի մարզածն էր, որի խաղաղաշտում, շահագործելով մարդկանց «աչքափակ վստահությունը», իրենց խաբեբայական ուժերն էին փորձում «օճառի պղպջակներն շինված համբավները» (1, 564): Կամ՝ դարձյալ համագործածական բառերի

մեկտեղումով երգիծաբանը հեզնում է «ամենեն անվնաս մարդերեն մեկ»-ի՝ մյուսյու ժաքի աստիճանական փոխակերպումը լրտեսի՝ «**Հագավ** լրտեսությունը ...և սկսավ **շահագործել** զայն» (1, 414): Առաջին հայացքից պարզ ասույթն ամբողջությամբ փոխաբերություն է, որը պայմանավորված է դարձյալ խոսքային միջավայրում ընդգծված բառերի փոխաբերական իմաստների կուտակումով:

Համատեքստում համագործածական բառերի փոխաբերացումը բովանդակային առավել լայն դրսևորում է ունենում **խոսքային հոմանիշների** գործածությամբ, որը մեծացնում է գեղարվեստական պատկերավորությունը, ընդլայնում ընկալման շրջանակները: Ի տարբերություն լեզվական հոմանիշների, որոնք իմաստով իրար մոտ կամ նույն բառերն են և տարբերվում են ոճական կիրառությամբ, խոսքային հոմանիշները «լեզվի խոսքային համակարգում ստացած կիրառության մեջ են ստանում հոմանիշային արժեք և կիրառությունից դուրս հոմանիշային հարաբերություն չեն դրսևորում, տարբեր իմաստներով բառեր են»<sup>1</sup>: Խոսքային հոմանիշների կիրառության մեջ կարևոր է **բառընտրության** դերը. այն անմիջականորեն կապվում է գրողի լեզվամտածողության, աշխարհընկալման, ճանաչողության և իրերի, երևույթների բազմազան կապերի մեջ ներթափանցելու գեղագիտական կարողության հետ: Երգիծական երկերում էլ ավելի է մեծանում նրանց իմաստային գործառույթը, քանի որ, ըստ Յու. Բորևի, երևույթների անսպասելի համադրումը հնարավորություն է տալիս առավել ընդգծելու դրանց իրական հակադրությունները, հնարավորություն է ընձեռում նոր լույսի տակ տեսնելու այդ հակասությունները և ներթափանցելու երևույթի բուն էության մեջ<sup>2</sup>:

Խոսքային հոմանշությունը Օտյանի երգիծական մտածողության հարազատ ձևերից է: Շատ են խոսքային հոմանիշների երգիծական գործածության հաջող օրինակները, որոնք օգնում են հե-

<sup>1</sup> Էդյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Եր., 1989, էջ 139:

<sup>2</sup> Стен Боров Ю., О комическом, М., 1957, էջ 93:

<sup>1</sup> Հարությունյան Յ., Գեղարվեստական խոսք, Եր., 1986, էջ 35:

րոսների հոգեբանության, մտածողության այս կամ այն հատկանիշի բացահայտմանը: Ընդ որում, երգիծաբանը այդ կիրառությունները իրացնում է հենց հերոսների խոսքում, որի միջոցով նրանք իրենք են աննկատ բացահայտվում: Օրինակ՝ հարուստ վաճառականը խրատում է որդուն՝ ասելով. «Դուն նայե, որ ժամ առաջ **կատարյալ մարդ ըլլաս, դրամ շահիս**» (4, 581): **Կատարյալ մարդ ըլլալ - դրամ շահիլ** կապակցությունների կողք կողքի գործածությունը, կարծում ենք, ինքնանպատակ կամ պատահական չէ. թերևս այս կերպ շեշտվում է այն, որ դրանք խոսքաշարում իմաստային նուրբ հարաբերության մեջ են դրվել վաճառական Գոզմայի էությունը, հոգեբանությունը հեզնելու նպատակով: Ըստ վաճառականի՝ կատարյալ մարդ է նա, ով դրամ է շահում կամ՝ հակառակը: Հերոսի մտածողության այսպիսի նկարագրությունը ունի ընդգրկման համեմատաբար լայն սահմաններ, որի միջոցով Օտյանը ստեղծում է բոլոր ժամանակներին բնորոշ վաճառականի տիպը:

Խոսքային հոմանիշների երգիծական գործածության ակտիվացում է նկատվում հատկապես Օտյանի քաղաքական երգիծանքում: Այստեղ խոսքային հոմանիշների կիրառությունը բնորոշ է և հեղինակի, և՛ հերոսների խոսքին, սակայն դրանց երգիծական ոճավորումն առավելապես հեղինակային խոսքի առանձնահատկությունն է: Հերոսների խոսքում դրանք հիմնականում միտված են գործողության, երևույթի կամ անձի համակողմանի բնութագրմանը, մինչդեռ հեղինակի խոսքում համատեքստային հոմանշությունը, որպես կանոն, ձեռք է բերում խոր բովանդակություն: Օրինակ՝ «Հեղափոխության մակաբույծները» շարքի հերոսների, ինչպես նաև առհասարակ ինքնակոչ գործիչների բնութագրման համար ընդհանրական են դառնում **հեղափոխական** և **մակաբույծ** բառերի հոմանիշային գործածությունները. գրողը գտնված բառով դիմակազերծում է այս հերոսներին՝ ցուցադրելով նրանց արատները: Երգիծաբանը **հեղափոխական** բառի փոխարեն հաճախ միտումնավոր գործածում է **մակաբույծ** բառը և, հակառակը, **մակաբույծ** բառի փոխարեն՝ **հեղափոխական**-ը: Օրինակ՝

«Տգետ, անխելք, ...երկչոտ մարդ մը..., որ իր ոչնչության գիտակցությունն ունի և որ սակայն կ'ուզե հանրային դեր մը խաղալ, թեթե հրատարակել, կուսակցություն կազմել, հրամանին տակ մասնաճյուղեր ունենալ... վերջապես **մակաբույծ մը**, մեծկակ **մակաբույծ** մը ըլլալ» (ԵԺ-1, 396): Կամ՝ «...կարգ մը **մակաբույծներու** համար ստակ հավաքած ատեննին բռնված հերոսներ...» (ԵԺ-1, 399): Ընդգծված բառերը հոմանիշներ չեն և այս համատեքստից դուրս չունեն իմաստային ընդհանուր եզր: Սակայն այս կիրառության մեջ, արտահայտելով գրողի անհատական վերաբերմունքը, վերածվում են խոսքային հոմանիշների: Այսպիսի կիրառությամբ ձևավորվել է իմաստային որոշակի առնչություն իմաստով տարբեր բառերի միջև. ըստ էության, հավասարության նշան է դրվել **հեղափոխական** ու **մակաբույծ** բառերի միջև: Բառային այսպիսի գործածություններով երգիծաբանին հաջողվում է տալ հասարակական մի ողջ խավի նկարագիր:

Բառային յուրօրինակ զուգորդումներով արտահայտված հեզմանքը ձեռք է բերում նորանոր նրբերանգներ, որոնք օգնում են կեղծ հեղափոխականների պատկերմանը: Օրինակ՝ «Պրոպագանդիստը զգացեր էր թե իր վրա դրված քննիչը չէր այն **անաչառ, անկաչառ, անշահախնդիր, անհամբույր և անհաշտ առասպելական** տիպարներն մեկը, որոնք իբր թե գոյություն ունին աշխարհի վրա...» (1, 295): Խոսքաշարում ընդգծված հոմանիշներին երգիծական ընդգրկում արժեք է տալիս **առասպելական** բառը, որով էլ պայմանավորված է մյուս՝ **անաչառ, անկաչառ, անշահախնդիր, անհամբույր, անհաշտ** բառերի համատեղ գործածության ոճական անհրաժեշտությունը: **Առասպելական** բառի գործածությունը էլ ավելի նպատակային է, քանի որ Օտյանը, այն դեռելով նույն շարքում **անաչառ, անկաչառ, անշահախնդիր, անհամբույր, անհաշտ** բառերի հետ, կարծես համոզում, հավատացնում է, որ նման քննիչների գոյությունը միջակա հորինվածք է:

Ընդհանրապես Օտյանի քաղաքական երգիծանքում **հեղափոխական** բառը հաճախ է գործածվում որպես խոսքային հոմա-

նշության հիմնական եզր՝ ամեն անգամ ունենալով նոր ու անսպասելի զուգորդումներ համագործակցության այս կամ այն բառի հետ: Բառագործածման այսպիսի յուրօրինակությունը բխում է երգիծաբանի գեղագիտական նպատակադրումից: Այս լեզվաճանաչական իրողությունը, ի դեպ, գեղարվեստական գրականության մեջ տարածված երևույթ է: Օրինակ՝ լեզվաբան Ա. Եֆիմովը, քննելով ռուս նշանավոր երգիծաբան Սալտիկով-Շչեդրինի երկերում բառագործածության յուրահատկությունները, գրում է. «Շչեդրինի մտածողությանը բնորոշ է ամենատարբեր համատեքստերում միևնույն բառի իմաստային-կիրառական բոլոր հնարավորությունների մշակումը... Գտնելով անհրաժեշտ և առանձնահատուկ մակդիր՝ նա երկար ժամանակ չի բաժանվում դրանից»<sup>1</sup>: Այսպես, Փանջունու մասին երգիծաբանը գրում է. «Խեղճ մարդը կը սխալեր իր լավատեսության մեջ: Փանջունի **փորձանք** չափտի ըլլար, այլ **հեղափոխական** գործիչ»<sup>2</sup>: Ինչպես գիտենք, լեզվական հոմանիշները, չնայած իրենց իմաստային մերձությանը, դրսևորում են որոշակի տարբերություններ՝ իմաստաբանական, աստիճանական, հասկացական և այլն<sup>3</sup>: Ըստ էության, **փորձանք** և **հեղափոխական** բառերը համատեքստում կազմում են խոսքային հոմանիշներ՝ տարբերվելով միմյանցից հենց երևույթին բնորոշ հատկանիշի աստիճանական սաստկացումով: Այսպիսի բառագործածությունը հնարավորություն է տալիս Փանջունուն ընկալելու որպես հասարակությանը պատուհասած մի կործանարար աղետ: Հոմանշային այս կիրառությամբ ստեղծված պատկերը ակնհայտ է դարձնում օտյանական սպանիչ ծաղրը վայ-հեղափոխականի նկատմամբ:

Երվանդ Օտյանի երգիծանքին նոր լիցք են հաղորդում **խոսքային հականիշների** տարատեսակ կիրառությունները<sup>4</sup>: Լեզվա-

կան մակարդակում շատ բառեր որևէ հակադրական իմաստ չեն արտահայտում, մինչդեռ խոսքի որոշակի հատվածում դրանք, ընդլայնելով իրենց բառային իմաստները, հականշային զույգ են կազմում՝ արտահայտելով հակադրական տարբեր իմաստներ: Հականշություն հասկացությանը անմիջականորեն կապվում է **հակադրույթի** կամ **հակադրության** (անտիթեզ) ըմբռնումը: Ինչպես նշում է Ս. Էլոյանը, «հականիշ բառերի գործառույթը հենց անտիթեզերի համար իբրև լեզվական միջոց ծառայելն է»<sup>1</sup>, իսկ հակադրույթը արտահայտչական համակարգի իրողություն է, «որի շնորհիվ տարբեր երևույթներ, առարկաներ ու հատկանիշներ, վիճակներ, իրադրություններ առավել ցայտունորեն են ընդգծվում»<sup>2</sup>:

Ընդհանրապես հականիշների գործածությունը այնքան բնորոշ է Օտյանի գեղարվեստական արձակին, որ այն զգալիորեն ծուլվել է նրա աշխարհընկալմանը. հակադրությունը դարձել է մտածողության ձև, իրերի, երևույթների, հատկանիշների մեջ քափանցելու և գեղագիտական պատկեր ստեղծելու հիմնական միջոցներից մեկը: Միշտ չէ, որ հեղինակը ծաղրելու, պարսավելու նպատակ ունի. երբեմն նրա հեզմանքը լուռ բողոք է՝ ուղղված անողոք ճակատագրին, որ հայ ժողովրդին դատապարտել է բազում զրկանքների: Այս առումով հատկանշական է Հ. Օշականի դիտարկումը. «Երուանդ Օտյանի դիտողութուններուն հագցուցած է մանաւանդ անփոյթ հեզմութիւն մը, որ իրերուն եղերականութիւնը կը մեղմէ շատ անգամ ու մահերուն դէմ կ'ելլէ խնդալով: ...Կենքի անսպառ տռամին ու լացողներու կորաքամակ կարաւանին առջեւ կը բռնէ ծիծաղին մոռցնող ու թերեւս իմաստուն պսակը»<sup>3</sup>: Այսպես, «Տասներկու տարի Պոլսեն դուրս» ծավալուն հուշագրության մեջ, անդրադառնալով Հունաստանում ապաս-

<sup>1</sup> Ефимов А., Язык сатиры Салтыкова-Щедрина, М., 1953, с. 388.

<sup>2</sup> Օտյան Եր., Ընկեր Բ. Փանջունի, Եր., 1989, էջ 25: Այսուհետև այս գրքից մեջբերումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերում՝ նշելով վերնագիրը և էջը:

<sup>3</sup> Տես Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 68-71:

<sup>4</sup> Ոճագիտական աշխատություններում հականշային կիրառությունները ներկայացվում են որոշակի խմբերով՝ 1. ոչ հականիշ բառերի հականիշացում, 2. բառերի և կա-

պակցությունների իմաստների հակադրական հարաբերություն, 3. հակադրվող եզրերի խոսքիմասային տարբեր պատկանելություն, 4. պարբերությանից հականշություն և այլն. տես Էլոյան Ս., նշվ. աշխ., էջ 155-164, Մելքոնյան Ս., նշվ. աշխ., էջ 82-88:

<sup>1</sup> Էլոյան Ս., նշվ. աշխ., էջ 164:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> «Ճակատամարտ», 4. Պոլիս, 1921, 1 յունուարի, № 647:

տանած մշեցի ածխաթաթախ գաղթականների նկարագրությանը, դառը հեզանքով վճռում է. «Չէ՛, շա՛տ աղտոտ էին՝ մաքրվելու իրավունք ունենալու համար» (4, 94): Կամ՝ դարձյալ գաղթականության թեմատիկայի անդրադարձներում կորստի ցավը արտահայտվում է հեզանքով, որը դրսևորվում է խոսքային դիպուկ հականշությամբ. «Ողջո՛յն քեզ, **Հայ ժողովուրդ**, - մեղա՛յ, ողջո՛յն ձեզ, **Հայութեան մնացորդներ...**»<sup>1</sup>: Այսպիսի մտածողությունը բխում է Օտյանի երգիծելու սկզբունքից: «...Լեսիմ մըն եմ, որ փոխն ի փոխ լալու կամ խնդալու դատապարտուած՝ վերջապես երկուքէն ալ կը հրաժարի ու կը սկսի ծաղրել: Ինչպէս կը տեսնես, երբեք չեմ նույնացներ ծաղրելը խնդալուն հետ: Խնդալը գոհունակութեան, հաճոյքի, զուարճութեան արտահայտութիւն է: ...Ծաղրը, ո՛վ գիտէ, գուցէ լալու մէկ դառնագոյն ձեւն է»<sup>2</sup>, - գրում է Օտյանը:

Հականշային տարբեր գործածություններով Օտյանը ամեն անգամ մի նոր կողմից է մերկացնում հասարակության տարբեր շերտերի (հոգևորականներ, առևտրականներ, կեղծ բարերարներ և այլն) արատները, ցուցադրում նրանց մերժելի, վտանգավոր կողմերը: Երկերից մեկում վաճառականի և նրա հոգեբանության պատկերավոր նկարագրությանը օգնում է հենց խոսքային հականշությունը: Ջայրանալով, որ որդին ուսումնառության ընթացքում «վերացական բաներու ուժ տված է», գրում է. «Կը փափաքեի որ առաջին հանդիսանայիր **թվաբանության** և **տոմարակալության** մեջ, որոնք աշխարհիս երկու առանցքներն են... Դուն ընդհակառակը, առաջին հանդիսացեր ես **գրականության** և **պատմության** մեջ» (4, 617): Հակադրության մի եզրում դրված են **թվաբանությունն** ու **տոմարակալությունը**, մյուս եզրում՝ **գրականությունն** ու **պատմությունը**՝ որպես իրարամերձ հասկացություններ: Վաճառականի աշխարհում ամեն ինչի օգտակարությունը չափվում է եկամտաբերության նժարով, ուստի

<sup>1</sup> **Օտեան Եր.**, Հայ տիասբորան, Եր., 1999, էջ 11: Այսուհետև այս գրքից մեջբերումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերում՝ մշեցով վերնագիրը և էջը:  
<sup>2</sup> «Անահիտ», Փարիզ, 1898, № 1, նոյեմբեր, էջ 42:

**թվաբանությանն** ու **տոմարակալությանը** հակադրվում են **գրականությունն** ու **պատմությունը**, որոնք որևէ արժեք չունեն «կատարյալ մարդու» դաստիարակության գործում: Իսկ այս հարցապնդումներով՝ «Քանի՞ փարա կ'ընեն ատոնք: ...Երեք՝ երեք ալ վեց, վեց անգամ վեց՝ երեսունվեց. քու ո՞ր բանաստեղծությունդ կ'արժե ասիկա» (ն. տ.), Օտյանը սրում է հակադրությունը՝ մեծացնելով հեզանքի ուժը:

Հականշային տարբեր կիրառություններով Օտյանը անխնա ծաղրում է նաև «լուրջ ու հանդիսավոր ոչնչություններիս»՝ կեղծ բարերարներին. «**Բարերարներու** սերունդ մը ունինք մեր մեջ, որ բավական **չարիք** հասուցած է մեր գլխին» (1, 544), կամ՝ «Քսանըհինգ տարվան մեջ ժամուն երեք հազար ոսկին **գողցած էր պապա մարդ**. Հաճի աղան» (1, 546): Խոսքային հականշությունը դժվար է տարանջատել հակադրությից, քանի որ դրանք փոխկապակցված իրողություններ են: Իսկ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ խոսքային հականշության դեպքում խոսքիմասային նույն պատկանելության սկզբունքը պարտադիր օրինաչափություն չէ<sup>1</sup>, ապա առաջնահերթ նախապայման է դառնում երևույթների գլխավոր և երկրորդական հատկանիշները հակադրելու ճիշտ հաշվարկը: Այս առումով բերված օրինակները՝ **բարերար-չարիք** և **գողնալ - պապա մարդ** (այստեղ՝ հարգանք վայելող մեծ մարդ), ձևավորում են երգիծական հակադրույթ, որի ծաղրը ակնհայտ է: «Ազգային բարերարը» վիպակում նմանատիպ ոճավորմամբ է ստեղծվում նաև Սահակ էֆենտու կերպարը (կեղծ բարերարների ամբողջական տիպը): «Միայն թե իր շուկացիի, գործնական մարդու խառնվածքը զինքը ինքնաբուխ կերպով ու անգիտակցաբար կը մղեր **բարերարության** մեջն ալ գործածելու **առևտուրի** հնարքները» (1, 336): Հակադրության եզրերն են **բարերարություն** և **առևտուր** բառերը, որոնք, հանդես գալով միևնույն համատեքստում, ձևավորում են հեզանք, միաժամանակ ցուցադրում ազգային բարե-

<sup>1</sup> Տես Էլոյան Ս., *Նշվ.աշխ.*, էջ 163:

րարի «ռազմավարությունը»: Երգիծանքում նման հակադրությունները հանգեցնում են ծիծաղի, ինչն այս դեպքում այն ճանապարհն է, որն օգնում է և՛ անհատին, և՛ հանրությանը իրականության մեջ տարանջատելու կեղծիքի և ճշմարիտի օբյեկտիվ սահմանները:

Հականիշների գեղագիտական իրացումները Օտյանի քաղաքական երգիծանքում ունեն էլ ավելի խոր ընդհանրացումներ: Նկատելի է երգիծաբանի մտքի լարումը, որի շնորհիվ համատեքստում համագործածական բառերի անսպասելի զուգորդումներից ձևավորված հակադրությունները ակնհայտ են դարձնում դրանց համատեղ կիրառության ոճական-երգիծական ճշգրիտ հաշվարկը: Ընդ որում, բացի «Ընկ. Բ. Փանջունի» եռագրությունից, քաղաքական երգիծանքի մյուս էջերում դրանց գործածությունները, անկախ դիպաշարի բաղադրատարրերից (էական չէ՝ կերպա՞ր է ստեղծում, երևո՞ւյթ է ներկայացնում, միջավա՞յր, թե՞ մի այլ բան), կառուցողական խնդիրներից, նպաստում են երգիծանքի դրսևորման հիմնական ձևերից հեզմանքի արտահայտությանը: Ինչպես, օրինակ՝ «Աս տղան փորձանք մը պիտի բերե... կը պաղատեր Ակորճան աղա, որ «**հեղափոխական**» ըլլալով հանդերձ միշտ **խոհեմ** մնացած էր» (1, 276): Խոսքային միջավայրում **հեղափոխական** և **խոհեմ** բառերը թերևս որոշակի հակադրության մեջ են. կարելի է ենթադրել, որ գրողը միաժամանակ կասկածի տակ է դնում և՛ նրանց «հեղափոխականությունը», և՛ բացառում ինքնակոչ հեղափոխականների **խոհեմության** հատկանիշը:

Գրողը երբեմն խոսքային հականշություն է ձևավորում՝ որպես հակադրության եզրեր ընտրելով հենց նույն բառը: Այս կերպ «լեզվատարրերի և բովանդակության հակադրությամբ ստեղծվում է **հակադրական իրադրություն**, որում ամբողջ արտահայտչականությունը երբեմն գեղարվեստական նուրբ «միջամտությամբ» հենվում է նույն բառի տարբեր կամ իրար հակառակ իմաստներով կառուցված հակադրության վրա»<sup>1</sup>: Օրինակ՝ «Հնչակ

<sup>1</sup> Ավետիսյան Յու., Արևմտահայ բանաստեղծության լեզուն, Եր., 2002, էջ 340:

առած ժամանակին, Հնչակ կարդացած ժամանակին, Հնչակ տված ժամանակին ձերբակալված **հերոսներ**, կարգ մը մակաբույծներու համար ստակ հավաքած ատենին բռնված **հերոսներ**, խահվեի մը անկյունը քանի մը գավաթ օղիի ազդեցության տակ անօգուտ շաղակրատություն ընող **հերոսներ**, վտանգավոր թղթեր գրպանին պտտցնող **հերոսներ**» (1, 399), կամ՝ «հիմա **հերոս** մըն է անիկա ու կռթնած իր **հերոսության**՝ քաղաքե քաղաք կը պտտի ստակ հավաքելու իրեն համար: Արդարև **մուրացկանության հերոս** մը...» (1, 400): **Հերոս** բառի նման գործածությունը, ինչպես նաև հեզմանքի հնչերանգային յուրահատկությունը ձևավորել են հերոս-հակահերոս հակադրությամբ: Առաջին օրինակի համեմատությամբ արտահայտչականությամբ փոքրինչ տարողունակ է երկրորդ կառույցը, որը, կարելի է ասել, հակադրությամբ է հակադրության մեջ: Մի դեպքում՝ տարբեր նախադասություններում **հերոս (հերոսություն)** բառի հակադրական կիրառությունը, մյուս դեպքում՝ **մուրացկանության հերոս** օբյեկտորնը մեծացնում են հեզմանքը՝ ամրապնդելով հերոսի այս տեսակի ժխտման միտումը: Կամ՝ «Մեծ հոբելյանեն ետքը» ֆելիետոնում այլաբանական երկխոսություն է ծավալվում Հայաստանի ոգու և Հայ ժողովրդի միջև, որտեղ ազգային անփառունակ գործիչների դատարկաբանությունից զայրացած Հայաստանի ոգին իր բողոքը հնչեցնում է հենց նույն բառի իրար հակառակ իմաստների հակադրությամբ՝ «...ո՛վ Հայ ժողովուրդ, երկու երեք օր **խօսեցաք**, ճառեցիք, ճառաբանեցիք...: Կեցի՛ր քիչ մը, ու լրջօրեն **խօսի՛նք**»<sup>1</sup>:

Ամփոփելով համագործածական բառերի գեղագիտական գործածությունների ոճական-երգիծական քննությունը՝ նշենք, որ Օտյանի գեղարվեստական արձակը հարուստ է բառապաշարի չեզոք շերտի բառերի ոճավորված կիրառություններով, որոնք զգալիորեն նպաստում են երգիծանքի տարատեսակ ձևերի ստեղծմանը: Համագործածական բառերի մեջ մեծ խումբ են կազմում

<sup>1</sup> Օտեան Եր., Մեր երեսփոխանները, Եր., 1999, էջ 168:

այն բառերը, որոնք համատեքստային տվյալ իրադրության մեջ ձևավորում են խոսքային հոմանիշներ կամ հակահիշներ: Որպես կանոն, այդ գործածությունները հիմնականում և՛ գեղագիտական, և՛ ոճական-երգիծական առումներով հաջողված են: Դրանք հաճախ իրենց վրա են վերցնում ստեղծագործության ինչպես գաղափարական արտահայտության երգիծական «բեռը», այնպես էլ նպաստում հերոսների կերպավորմանը, երևույթների երգիծական նկարագրությանը, երգիծատիպերի հոգեբանական կողմերի վերհանմանը:

**Sargsyan Liana – *The satiric use of words in the prose of Yervand Otian*** – The paper is referred to the satirical-stylistic study of widely used words. A large group of these words in Otian's prose form such words, which, in a particular contextual situation, form verbal synonyms or antonyms. As a rule, the use of these words is successful both in aesthetic and in satirical-stylistic terms. They mostly contribute to the imaging the hero's character, the description of comic phenomena, revealing psychological aspects of satire.

## **ՆԱՌԱ ՄԱՐԳՍՅԱՆ**

### **ՀՈԳԵԿԵՐՏՎԱԾՔԱՅԻՆ ՆՈՐ ՀԵՐՈՍԸ ԵՐՈՒԽԱՆԻ ՆՈՐԱՎԵՊԵՐՈՒՄ**

Երուխանի ինքնատիպ գրականության արժևորումը թերի կլիներ առանց նրա՝ գաղթականության թեմայով գրված նորավեպերի քննության և ուսումնասիրության: Նա 80-ականների գրական սերնդի մեջ այն եզակիներից էր, ով ոչ միայն մայրենի գրականությունը թանձրացրեց ու հարստացրեց մարդու և նրա թաքուն ներաշխարհի հոգեբանական նուրբ իրողությունների, դրանց ներքին ենթաշերտերի բացահայտմամբ՝ ազգային գրականությանը հաղորդելով համաշխարհիկ բաբախներ, այլ նաև իր մի քանի գրչակից ընկերների պես 1894-96 թթ. դեպքերին գեղարվեստական նոր ընթացք տվեց՝ խոսելով արյան ու մղձավանջի, սովի և մուրացկանության, իր ուղեկորույս ժողովրդի ողբերգական ճանապարհի մասին: Եվ քանի որ նրա ստեղծագործական ուղին անցավ քաղաքական կյանքի ակեկոծումների մեջ, որի ականատեսն էր ու ժամանակակիցը, ուստի նրա գրականությունն էլ վերածվեց այդ ժամանակաշրջանի յուրօրինակ գեղարվեստական դրսևորման:

Պանդխտության թեման նոր չէր դարավերջի արևմտահայ գրականության մեջ: Աչքի էին ընկնում հատկապես Հրանդի (Մելքոն Կյուրճյան) զգայուն ու հուզախռով ստեղծագործությունները («Պանդուխտի կեանքէն»): Երուխանը, շարունակելով և լրացնելով իր գրչակից ընկերոջը, նոր որակի հասցրեց պանդխտության թեման՝ քննելով ու բացահայտելով ոչ միայն մինչ այդ գաղթականությանը բնորոշ սոցիալ-բարոյական խնդիրներ, այլ նաև իրադրությամբ պայմանավորված հոգեբանական ու հոգեկերտվածքային նոր իրողություններ, որ շատ չափով պակասում էր

տիրող գրականությանը: Նա, թերևս այն բացառիկներից էր, ով ուսումնասիրեց և հայտնաբերեց զանգվածային ջարդերից՝ մահվան մղձավանջից փրկված գաղթականության հետմաքենը, գնաց ազգային հոգեբանության տիպաբանական յուրահատկությունների ուսումնասիրության ճանապարհով:

Գրականագիտությունը, բարեբախտաբար, անդրադարձել է Երուխանի պանդխտության թեմայով գրված նորավեպերին, դրանցում նկատել գաղթականության սոցիալ-բարոյական խնդիրների արժարժույթը, գաղթականների ողբերգական կյանքի ծանր վիճակը, հուսահատությունը և այլն<sup>1</sup>: Սակայն չեն քննվել կամ գրեթե սյուժետային նկարագրման մակարդակի են զանգվածային կոտորածներից փրկված հայության հոգու նոր իրականության թաքուն ու նուրբ ենթաշերտերը՝ ամենաբազմազան հոգեբանական դրսևորումներով:

Ինչպես Երուխանի հրապարակախոսությունը, այնպես էլ պանդխտությանը ծոնված նրա նորավեպերը միտում ունենին. դրանք հայերի հոգեկան անաղարտության, բարոյականության, աշխատասիրության և պարտականությունները սրբորեն պահպանելու, ուժացման վտանգին կուլ չզնալու և ցեղային հոգեկերտվածքին հարազատ մնալու հարցերն են: Բայց եթե Երուխանի հողվածները տոգորված էին ազգային խնդիրների, անել իրականության խոր մեկնությամբ, ապա նորավեպերում իրականությունն ու գեղարվեստը միաձուլված են այնպես, որ հաճախ թվում է՝ անտրոհելի են: Ահա այսպես է տարագիր գրողը դառնում ուղեկորույս ժողովրդի դանթեական ճանապարհի ճշմարիտ տարեգիրը:

Երուխանը օտար երկնքի տակ առաջինը նկատում է մեծ ողբերգության փոքր զոհին՝ հայ մանկանը՝ դառնալով խոցելի ներաշխարհի անկորնչելի արժեքների բացահայտման նուրբ մեկնիչը:

<sup>1</sup> Այս մասին մանրամասն տես **Ս. Հովհաննիսյան**, Երուխան, Եր., 1970թ., **Ստ. Թովչյան**, Անհունի անդրադարձը, Եր., 1987թ., **Հ. Հակոբջանյան**, Երուխան (կյանքը և գործը), Գյումրի, 2003:

Այս առումով հուզախոռով և խոր երկ է «Ինքնօգնությունը փոքրիկների վրա» նորավեպը:

Իրեն բաժին հասած ճակատագրի դառնությունը չի զգում կամ ավելին է զգում ու տառապում Մշո Արտակը՝ նրբին ու զգայուն էությանը մանուկը: Երուխանը նրբորեն բացում է նրա անմեղ ներաշխարհի ենթագիտակցական դրսևորումների եղերական բնույթը. «Պատի՞կ բան է՝ դեռ աչքերը մինչև երկնքի կապույտին չհառած, համառորեն սևեռել աշխարհի ցավերուն, տառապանքներուն ու անանց արհավրալից պատկերներուն, դյուրի՞ն է շուրթերը բաժնել մոր ստինքն ու անմիջապես կյանքի դառնությամբ լցված բաժակին կպցնելու զանոնք»<sup>1</sup>: Ողբերգականն այն է, որ այդ տեսիլներից ծնված տառապանքները հասունացրել են մանուկ հոգին ու միտքը. «Մանուկ չեղած, մարդ եղեր է»<sup>2</sup>: Երուխանը մանկան կրած լուռ տառապանքով է չափում փոքր եղեռնի ողջ ահագնությունը<sup>3</sup>: Ու չնայած սրան՝ ի հայտ է գալիս անհնարինը՝ տարօրինակ ցեղային ոգին, նվիրումը, որ չի հաղթահարվում ցավից. նա մեծ մարդկանց նման է գաղթել, անցել Գողգոթայի ճանապարհով, բայց ի տարբերություն շատերի՝ չի կորցրել հոգու անմար հուրը՝ գեներտիկ եռանդը. «Ու մեծ մարդերու պես ալ շարունակած է իր կյանքը, բանելով, դատելով, ապրուստի կռիվն հիմակուց մղելով անխոնջ արիությամբ» (234): Ջարմանալին ցեղային հոգեկերտվածքի իր կորովը, աշխատասիրությամբ գոյատևելու հայկական գենը բնագոյորեն պահպանելն էր. «Ճակատին քրտինքովը կճարե իր հացը, և ուրիշներունը» (236): Պատահական չէ, որ նա հենց Մշո (ցեղային արիության խորհրդանիշի) Արտակն է և ուզում է իր հայրենիքի անունով իրեն կանչեն՝ «Մուշու Արտաքի»: Այս ծաղիկ հոգու մեջ պահպանվել է

<sup>1</sup> Տես **Երուխան**, Նովելներ, Եր., 1965 թ., էջ 234: Այսուհետ սույն գրքից բոլոր մեջբերումները կտրվեն շարադրանքում. կնշվի միայն էջը:  
<sup>2</sup> Թերևս ինչ-որ տեղ մանկան պահվածքը ասես խելագարի է:  
<sup>3</sup> Կարծում եմ՝ այդ էր պատճառը, որ միայն Երուխանը խանդավառ տարերջով կարողացավ լավագույնս մեկնել և հայտնաբերել Ռ. Ջարդարյանի հրաշալի երկի՝ «Ցեղին գավակի» նուրբ ենթաշերտերը, հոգեբանական իրողությունները: Մանրամասն տես **Գրական ասուլիսներ**, Գ. (Ռ. Ջարդարեանի «Ցայգալոյսը»), Կ. Պոլիս, 1913 թ.:



մեկ այլ գեղեցկության բույր. այն չարից ու չարիքից միակ փրկվածն է՝ ժպիտը, որ, անցնելով արյան ու մղծավանջի միջով, չեղծվեց, նորից երևաց ու բույր տվեց մարդուն ու աշխարհին. «Զվարթ, բարձրիզլուխ կքալե՝ փոխանակ թուլորեն գետինները քաշկռտվելու իբրև գոհ երջանիկ արարած»<sup>1</sup>: Եվ հիացած է Երուխանը Մշո Արտակի խելքով ու սրտով. լինելով մանուկ՝ չի հաղթվել գարիուրանքի բերած կործանարար հետևանքներից, այլ շարունակել է լուսավորել գաղթականի իր ուղին՝ մշտապես վառ պահելով իր թաքուն երազները: Թերևս այդ երազներից էին երանգ առնում և քաղցրանում մանկան աչքերը. «Ուլունքի պես պճլտացող իր մանր կապտանուշ աչքերը, անարատ ծերմկությամբ երեսին վրա երկու լուսեղեններ, քերովբեներու խնկավետ աշխարհն երագել կուտան քեզ» (234) (Այս և հետագա ընդգծումներն իմն են – Ն. Ս.): Իր քաղցրությամբ նա կարողանում է գրավել անտարբեր օտարի աչքն ու հոգին, ստիպել հարգել իր աշխատանքը: Իսկ մայրը, որը, թվում է, ամենաշատը պետք է կրեր ճակատագրի դառնությունը և հոգսերը՝ դառնալով որդու՝ գաղթականության եղերական օրերի Աստվածամայրը, մանկանը թողել է կյանքի հոգսերի տակ («խաղալիքի տեղ՝ վաճառք կամ դրամ կանցնին ձեռքը»)՝ դառնալով նրա առևտրի «շահագրգիռ» ականատեսը. «Կին մը հեռվանց իրեն կհետևի, թերևս իր մայրը, բայց ավելի հավանաբար զինքը **շահագործող մը**» (235): Բայց ինչպես հավատավոր մանկան հոգուն է Աստված մշտապես զորություն տվել, այնպես էլ Մուշու Արթաքիին՝ փրկելով ու պահպանելով նրան հայի՝ այդ ժամանակներին բնորոշ մեկ այլ գարիուրանքից՝ սովամահությունից: Այս դեպքում Աստված երկնայինից վերածվում է մանուկ քրիստոսների երկրային Հոր:

Կյանքի անարդարությունների դեմ բողոք չունի ու չի ընդվզում փոքրիկ Արտակը. հեզությամբ կրում է աշխարհի՝ իր փոքրիկ ուսերին անգթորեն դրածը՝ հոգսերի ու դրամի բեռը, որ դարձրել

<sup>1</sup> Տես Երուխան, Նովելներ, Եր., 1965 թ., էջ 234: Այսուհետ սույն գրքից բոլոր մեջբերումները կտրվեն շարադրանքում. կնշվի միայն էջը:

էր իրեն «կրկեսի մանչ»: Մինչդեռ կյանքն ինքը կրկեսն էր, որ անտարբերությամբ դիտում էր մանկան գողգոթային կյանքը:

Մշո Արտակը նույնիսկ առևտրական աշխարհի մեջ է եզակի: Եզակի է նաև նրան «արիեստակից» մի տղա, որ բնավ ժպտուն չէ, բայց աշխատում է՝ դպրոցի իր ծախսերը հոգալու: Նորավիպագիրը երկու բախտակից մանուկների անգոր դրության մեջ գնահատում է արտասովոր գեղեցիկ միտքն ու հոգին: Եվ ինչն է կարևոր. ծավալվում է գեղեցիկը. նրանք կարողանում են ուժեղ հոգով պայքարել, համառ աշխատանքով ըմբոստանալ ու ընդվզել անկարեկից աշխարհի դեմ՝ երբեք չմատնվելով հուսահատության, չավիրելով իրենց հոգու թաքուն երազները<sup>1</sup>: Այստեղ կարծես բացահայտվում է փոքր եղեմի բուն էությունը, որ նախ և առաջ կարող է անխնա սպանել երազն ու ձգտումը իրական կյանքում և աշխարհի չարիքին անտեղյակ մանկան հոգուն:

Երուխանը իր անթաքույց հիացմունքը Մուշու Արթաքիի նկատմամբ չի կարողանում զսպել մյուս՝ «Կեվրեքձին» նորավեպում՝ նրա արարքը համարելով հերոսական: Շարունակելով թեմայի՝ տակավին չանբողջացած ասելիքը այս նորավեպում՝ Երուխանը հերոսական է համարում նաև կեվրեք (փխրաբլիթ) վաճառող ծերունու աշխատասիրությունը: Նրա տկար ու հյուծված մարմնի մեջ դեռ պահպանվել է հոգու աշխույժը. «Իր այս անգիտակից ու շնչասպառ փոխադրության մեջ ծերուկը, **դարավոր կաղնի**, որուն ճյուղերը, որքան փտին, կորանան, դեռ կպահեն **վաղնջական աշխույժ մը**, իր դողդոջուն անդամներովը...» (249): Թվում է՝ ջարդերից «քշված» այս ծերունին պետք է կորցներ հոգու գեներտիկ ուժով պայմանավորված կորովը, բայց ցույց է տալիս ստեղծված իրադրության համար անսովորը. «Տարօրինակ գործունեություն մը ցույց տվավ: Կողով մը առավ, կեվրեք լեցուց մեջը, և սկսավ ծախել» (249): Բայց կողովի հետ միասին քարշ է

<sup>1</sup> Երուխանը Մշո Արտակի կերպարն օրինակ է ծառայեցնում գաղթականությանը, որ մատնվել էին հուսահատության և անգործության: Այսինքն՝ կարելի է, թերևս, նկատել կերպարների որոշ միտումնայնություն (տենդենցիոզություն), սակայն դրանից երկի գեղարվեստականությունը դուրյան-ինչ չի տուժում:

տալիս իր ցավերով բեռնավորված հոգին և դրանից դող առնող մարմինը. այդ կողովը ինչ-որ չափով տառապանքների կողովն էր<sup>1</sup>: Իսկ ամեն մի փխրաբլիթի վաճառքով դարձանվում էր հոգին՝ «ցավի» գնորդի հետ. ««Կեվրե՛ք», որուն եղանակավորումին մեջ կարծես ավելի «**ողորմեցեք**»ի տխրական ավաջ մը կա, քան ապրանք վաճառելու թելադրիչ հրավեր մը» (250): Խորքն է նկատում Երուխանը. նա գուր ու վերաբերմունք է ողորմում աշխարհից, ոչ երբեք դրամ, այդ իսկ պատճառով իր հոգուն դիպած այս «ողբագին մրմունջի» մեջ հոգեբան գրողը տեսնում է Տառապյալին՝ ոչ Մուրացկանին: Մարմնով վտիտ, բայց հոգով դիմացկուն ծերունու ծեռքերը կարող էին ողորմասեր լինել, բայց հեռու են դրանից. նա արդար վաստակի ջատագովն է: Նրբանկատ Երուխանը մեծ տարբերություն է տեսնում ծերունու և մուրացկանի որոնածի միջև. «Կտեսնես այս աննկուն ծերունիին քովն անցնիլը մուրացկանի մը, որ չամչնար ծեռքն ի մույր կարկանել անվթար կազմվածքովը և ուժեղ անդամներովը» (250):

Երուխանը ծերունու արժանապատվության, աննկուն ոգու կողքին տեսնում է վիրավորիչ հակասությունը. գաղթականության մեջ աղքատ, բայց առույգ այն երիտասարդներին, ովքեր փոխանակ ապրուստ հայթայթելու՝ «փողոցներն ու սրճարանները կղեզերեն՝ շուրթերուն վրա տաղտկալի տրտունջ մը **գործի չգոյության մասին**» (250): Մինչդեռ ծերունին «առանց շփոթելու, առանց խռովելու, միմիայն վստահելով իր աննկուն ոգիին և իր փլչելու մոտ մարմնին, անծայն, անշշուկ, գործի կծեռնարկեր» (250):

Նորավեպում նկատելի է գաղափարական միտումը, որ նորավեպագիրը բազմիցս քարոզում է հողվածներում. ազատվել տեսածի և ապրածի տեսիլներից, ապրել նոր կյանքով, վերջ տալ նողկալի և եղերական ողորմությանը, որ հայի ժամանակի «հիվան-

<sup>1</sup> Թերևս որոշ ընդհանրություններ կարելի է տեսնել Գր. Չոիրապի «Ճիտին պարտքի» Հուսեփ աղայի հետ իրավիճակի առումով, սակայն այլ են և նպատակադրումները, և՛ գեղագիտական հարցադրումները:

դությունն» էր դարձել. «Ան թվականին, տարօրինակ տեսարան մը կպարզվեր Վառնայի մեջ, որուն մմանը շատ քիչ տեսնված է: Ողորմասեր ծեռքեր, հեռուեն, նպաստ կկառկառեին հոս ամբարված թշվառության» (250): Իսկ նրանք, ովքեր իսկապես իրավունք ունեին նպաստի և օգնության, չէին ստանում այդ, այլ բարձր պահելով նախ ազգային, ապա իրենց մարդկային արժանապատվությունը, որ այդ օրերի համար հերոսական արարք էր, շարունակում էին չչեղվել իրենց ընտրած շավիղից: Այդպես և ծերունին. «Առանց բնավ նշմարել տալու այն սքանչելի երևույթը, գոր ինք ի հանդես կբերեր այդ ընդհանուր իրարանցման մեջ» (251): Եվ Մշո Արտակը, և՛ ծերունին չեն ծուլվում թշվառությանը. սա է կարևորը: Եվ համառ Ըմբոստը փառք է տալիս տիրոջն իրեն սովահար չթողնելու համար ու նորից ընթանում է իր հասկացած ճանապարհով և աշխարհին ու մարդուն իր դառը ճակատագրի տառապանքը լալագին զանգակահարելով՝ «Կեվրե՛ք...»:

1894-96 թթ. դեպքերը՝ զանգվածային կոտորածները, հանգեցրին տրամաբանական այլ հետևանքի՝ մուրացկանության, որ բարոյական ոչնչացման էր տանում ազգին: «Օղորմություն մը» նորավեպում Երուխանը ընդգծում և գեղարվեստորեն զարգացնում է այս՝ մուրացկանության խնդիրը, որը «Կեվրեքճի»-ում արժարծվել էր հպանցիկ:

Պոլսի թաղերի մեջ գրողը տեսնում է մուրացկան մի կնոջ, որի պաղատանքի, լացուկոծի մեջ կեղծիք է նկատում՝ «մուրալու ստոր գռեհկությունը, որ արգահատանքի տեղ թշնամություն կհարուցանե մեջդ» (278): Նրա մարմինն էլ հոգու պես ապականված է, և փոխանակ իր հանդեպ սուրբ արգահատանք առաջացնելու՝ իր կեղծավորությամբ ու քծնանքով ավելի է զայրացնում ու վանում անցորդներին: Բայց ահա արհավիրքից հետո բացվում է բոլորովին այլ սոսկալի իրականության պատկեր, որ հոգեբանական է. «Վառնա, հիվանդանոցի ստվերոտ սրահներուն մեջ թշվառությունը կհեծեծար: **Աղաղակող** համասփյուռ աղքատության մեջ միս-մենակ նրբակազմ աղջիկ մը ... կմաքառեր անոր

դեմ ... իր ազնվական ժպիտին տակեն լալով ամբողջ ազգի մը անգթորեն եզական այս վիճակին վրա:

Մերկության, անոթության, ցավի ու արցունքի, հառաչանքի ու սպառնալիքի այդ ահավոր ալեկոծումը աչքիս առջև կայարգվեր օրը-օրին» (278-279): Հայի միտքն ու հոգին ողորմասեր էին դարձել, իսկ ողբերգականը զարհուրանքից հետո անգիտակից, առանց բարոյական գիտակցության ապրելն էր. «Կիներու, աղջիկներու, տղոց դժգույն, սարսափահար ոհմակ մը ... կնետվեր հոն՝ սուրեն ու մահակեն ճողոպրված կյանքը ապրելու տեսակ մը **անգիտակից կատաղությամբ**» (278): Մեծ վտանգ կա այս հոգեկան ու հոգեբանական իրավիճակի մեջ:

Եվ, ահա, այս ընդհանուր խառնաշփոթի ու մոլորության մեջ Երուխանը Վառնայում նորից հանդիպում է Պոլսի մուրացկանուհուն: Այս անգամ գրողը նրա մեջ տեսնում է տառապալիհն, նոր հոգեբանության տեր կնոջը. արհավիրքը թեև ավերակել էր հայ մուրացկանուհու հոգին, սակայն չէր ոչնչացրել հոգու բնականությունը. «Արցունքները, որ իր դեմքին ավերումը կթրջեին, սրտեն կբխեին շիփ-շիտակ: **Իր մուրալու ձևին մեջ արվեստականություն չիկար ա՛լ**» (280): Ցավն ու տառապանքը անկեղծացրել, ազնվացրել էին մուրացկան հոգին: Սակայն այս անգամ ամբոխն է անմարդկային գտնվում. «Հրեցին, հրմշտկեցին մինչև սրահին դուռը»: Համընդհանուր ազգային ողբերգության մեջ նողկալի է նրանց գանակոծումը. «Այս տեղի հացը մե՛ր իրավունքն է, - պոռագին, անիկա դուրսն ալ կրնա մուրալ» (280): Կնոջ մեջ բնական ու գեներտիկ մարդկայինը շուտով անհետանում է մարդկանց անխղճության պատճառով, թե՞ կյանքի անարդարության՝ դժվար է ասել: Փաստն այն է, որ նա, մերժելով օրիորդ Ֆրեյգերի՝ Շումլա գնալու առաջարկը, նորից հազնում է կեղծության շապիկ՝ վերադառնալով մուրացկանության:

Հայ մուրացկան կնոջ անպատվաբեր արարքին Երուխանը «Արյան ուժը» նորավեպում հակադրում է արժանապատվության տեր կնոջը, որ նույնպես գումար է մուրում, բայց հոգով ու բարոյակա-

նությամբ մնում է ուժեղ<sup>1</sup>: Այս ծեր կինը նույնպես «անմոռանալի ցավերու և կորուստներու էլեկտրականության տակ իր գլուխը մշտօրոր, անիկա կզտիկ կըլլա» (283): Բայց դաժան ճակատագիրը հասունացրել էր նաև կնոջ գրկում գտնվող մանկանը: Ծեր կինը երեք մանուկների հետ խորհրդանշում է ավերակված Հայաստանի պատկերը: Ծավալվում է հոգեբանականը: Գավառացի այս կնոջ նայվածքի մեջ «ցավին քերթվածը կողբերգվի»: Նա, աչքերի մեջ աղերսանք, մորմոքում է կորսված օջախի համար: Երբ արհավիրքը խլում է նրանից երջանկությունը՝ ընտանիքը, ծեր հայուհին, զայրությով լցված, ապրեցնում է երեք փոքրիկ թռռնիկներին: Հերոսական են և՛ նրա արարքը, և՛ նրա տեսակը: Երուխանը հիանում է նրանով նաև այն ժամանակ, երբ գավառացի կինը մերժում է «օտար մարդորսներին» և չի զիջում իր թռռներին: Նրա արյունոտ ու արցունքոտ սրտի մեջ հանկարծ բոցավառվում է մայրական անպարտելի գեներ, որ ենթագիտակցորեն նաև ազգային կյանքի պահպանման տագնապ էր. «Ո՛չ, - **կմռնչե, - չեմ ի տար թռռներս**» (284): Չափազանց սուր է գրողի դիտողունակությունը. «մարդորսության» երևույթը ինքնին արդեն յուրատեսակ ծուլում է, նպատակաուղղված ծրագիր. «Օտար մարդորսներ, որոնք դիակի մը վրա իջնող ագռավներու քստմնելի աշխուժովը ամենուրեք երևցան, **ուր հայ մը կար գողնալիք կրոնքովն ու ազգությանբը**» (284): Ի դեպ՝ Երուխանը այս խնդրին առանձին անդրադարձել է «Կրոնքի մղծավանջը» հոդվածում<sup>2</sup>, որ օգնում է հասկանալու նորավեպի խոր ենթատեքստը:

Հայաստանը իր քայքայված վիճակով արգասավոր հող էր հավատքի «որսորդների» համար, որոնք արհավիրքից ծնված ընկճվածությունը փորձում էին գործադրել իբրև միջոց՝ հային իր նախահայրերի կրոնից հեռացնելու, ասել է՝ ազգային ինքնությունից զրկելու համար: Ուրեմն հայի թշնամիները նաև այս կերպ

<sup>1</sup> Նկատենք, որ վերոնշյալ երկու նորավեպերը տպագրվեցին «Շավիղ» հանդեսում, ուր շեշտադրվում էին ազգային գաղափարները:

<sup>2</sup> Տե՛ս Երուխան, Կրոնքի մղծավանջը, «Շավիղ», Վառնա, 1900 թ., № 8:

են հայտնվում. «Անօթի ու սարսափահար գեղացիին աչքին առջև երերցնելով հացի շերտ մը... յաւիտենական կեանքի»<sup>1</sup>: Եւանգելիստի գրողը այն որակում է իբրև մեր գոյության վտանգներից մեկը, «գոր մինչև այսօր միմիայն մեր **արեան գնովը** յաջողած ենք պահպանել»<sup>2</sup>: Այս իսկ պատճառով ոգևորիչ է կնոջ արժանապատիվ պատասխանը օտար բռնակալին: Սա ազգային տեսակետից չափազանց կարևոր է անիրավ ու բիրտ, քաղաքակրթության դիմակով դարի մեջ:

Գավառացի հեգ կինը, առանց գիտակցելու, մայրական սուրբ խանդով իր ցեղին մահվան արհավիրքից տանում է փրկության. նա է արյան Ուժը. «Գավառացի այս խեղճ կնոջ բերանով ամբողջ ցեղի մը արյան ուժն է, որ երևան կուգա, ազգության գաղափարին կույր, անպատրվակ փարունը, վայրենորեն սուրբ այն խանդը, որ հայ կնոջ նկարագիրն իսկ է և որ անհիշատակ դարերու, անցյալի թոհուրոհին մեջեն ցեղը բերած հասուցած է մինչև հիմակ» (284): Երուխանը նրա մեջ տեսնում է նվիրյալին, որ ցավի ու տառապանքի մեջ արյան կանչի գիտակցումի ուժով մերժումը «նետում է ... օտար մարդասիրության երեսն ի վեր»: Եվ ինչն է կարևոր. «Ամեն գնով թող չտալ, որ այդ երեք մանուկները, որոնք իր շունչին տակ կրնան ապագա բոցեր ըլլալ հայրենի երկինքին ներքև վրեժխնդրությամբ գալարուն, **երթան ավելցնել ահռելի կորուստները, զոր կրեցինք և պիտի կրենք**» (285): Նա հայ կնոջն ընդհանրացնող խորհրդանիշ է, որը սերնդեսերունդ փոխանցել է արգասավորը՝ կենսապարզև արյունը: Եվ ինչքան էլ օտարը հյուժի ու կործանի ազգը, հայ կինը պետք է շարունակի վերընծյուղել ցեղը՝ մնալով «նույն տաք, եռացկոտ սիրտը, նույն անվիատ մատակարարը անապակ ու ազնիվ արյան» (285):

Երուխանը՝ իր հերոսների վշտերի ականատեսը, մշտապես նրանց ցավերի հետ է ու նրանց հոգու մեջ: Թերևս կարելի է ասել, որ ինչ-որ տեղ նրանց միջոցով է կիսում գաղթական մարդու իր

վշտերն ու մտահոգությունները, հուզմունքն ու զարմանքը ընթերցողի հետ:

«Սայլորդը» նորավեպը մի փոքր տարբերվում է գաղթականության թեմայով գրված մյուս նորավեպերից: Այստեղ արդեն հոգեդեն մորմոքներին փոխարինելու է գալիս... սերը: Գաղթական կյանքի խավարի մեջ նա տեսնում է հավերժորեն լուսավոր սերը, որ անմարդկային իրավիճակի մեջ դառնում է արտասովոր, դառնում գեղեցիկ՝ չճանաչելով այլ իրականություն, քան հոգին ինքն է: Այս առումով «Սայլորդը» դառնում է ջարդի գրականության մի հոյակապ ու եզակի «քնարական» նորավեպ: Եթե նախորդ նորավեպերում գեղարվեստը իր դիրքերը մի փոքր «գիջում» էր ցուրտ իրականության պատկերներին, ապա այստեղ Երուխանը իր տաղանդի հմայքոտ ուժով կատարելության է հասցնում ընտրած թեմայի բնական գեղարվեստականությունը, ուր արհավիրքը դառնում է ոչ միայն նպատակ, այլ նաև միջոց մարդկային հոգու թաքուն ներաշխարհի բացահայտման համար:

Ինչպես մարդու սրտի կենսամատյանը ուսումնասիրողի՝ Թումանյանի, այնպես էլ Երուխանի գրականության մեծ հոսքի մեջ մեծ տեղ են գրավում հանկարծությունն ու ճակատագիրը, որոնք հավերժորեն ուղեկցում են մարդու անհաստատ բախտին:

Ահա, 1894-96 թթ. դեպքերը, հանկարծահաս լինելով, փոխում են Համբիկի կյանքի ու երջանկաբեր գործունեության ընթացքը. «96-ի գաղթականության հոսանքը գանի ալ Վառնա նետեր էր՝ **հանկարծ բաժնելով զինքը ջրհանեն, որուն վրա անսահման էր իր սերը**: Պոլսո քաջընթաց ջրհանկիրներեն էր, հանդուգն, հուժկու և կռվազան» (292): Իր գործի նվիրյալն էր՝ հիացնելով բոլորին: Համբիկի բոլոր երազներն ու սպասումները կապված են եղել իր աշխատանքի հետ, և նրանով էր երջանիկ. «Իր հավատքը, իր իղեալը, իր ակնարկությունները, ըզձանքներն ու ձգտումները ջրհանին վրա կամփոփվեին» (292): Սակայն Վառնա գաղթելով՝ գրկվել էր իր բերկրանքից. «Ջրհան չիկար, և ո՛վ դժբախտություն, չի կար նաև հրդեհ»: Իսկ եթե ջրհանկրություն չկար,

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 115:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 116:

չկային նաև հոգու ինքնաբավ երազներ<sup>1</sup>: Բայց շուտով ճակատագիրը երկար սպասեցնել չի տալիս: Տեղի է ունենում անխուսափելի: Ծնվում է սերը: Համբիկը հիվանդանոցի դռան մոտ սայլապանություն անելիս տեսնում է օրհորդ Ֆրեյզերին, որ «հայկական ցրվունին բոթը լսելուն պես՝ Բուլզարիա շտապած էր ոսկիի բեռով մը» (293): Հանկարծ փոխվում է Համբիկի խաղաղ հոգեաշխարհը՝ վերածվելով իսկական հրդեհի<sup>2</sup>: Օրհորդի քաղցր ժպիտը՝ հոգու բարությանը շաղախված, վեր է բարձրացնում նրան իրականությունից, լցնում երազներով: Եվ հուզվում է Համբիկի կոշտ մարմնի տակ թաքնված նուրբ հոգին: Պարզ չէ՝ արդյո՞ք նա օրհորդ Ֆրեյզերի մեջ տեսնում և սիրում է իր ազգի սովահարներին կյանք պարզևող «գերմարդկային անձնավորությանը», թե՞ բոլորովին մարդկային պարզ և անկեղծ զգացողություն է՝ անկախ հանգամանքից: Երկուսը միասին: Գաղթից հետո հոգու նոր իրականություն է ստեղծվել Համբիկի համար, որ հափշտակել ու համակել էր ողջ էությունը. «Ի՞նչ ակնհի է, պե՛, - կըսեր ինձի, աչքերը անճառ ու պաշտողական հիացմամբ լի, - նստելու, նայելու, խնդալու պիչիմը, է՛հ, ստեղծողիդ մեռնիմ» (294): Նա իր երազուն հոգով, բացառիկ սիրով տարբերվում է այն գաղթականներից, որոնք «ամերիկուհիին մագնիսող ոլորտին մեջ կդառնային սփոփվելու համար անոր տաք շունչեն» (294): Համբիկը հեռվից է սիրում միտքն ու հոգին այրողին՝ «անոր մոտենալու այնքան դյուրին հանդգությունը իր մեջ չզգալով» (294): Այն «յաման Համբիկը», որ հրդեհների հետ կոնվ տվել և դրանց գեհեններով անցել էր աներկյուղ, այժմ դարձել էր անհամարձակ: Բայց թաքուն դրսևորում է իր դյուցազնությունները՝ «օրհորդին հանդեպ անարգական ընթացք բռնողներուն հետ կատաղորեն կռվելով»՝ առանց որևէ վերաբերմունքի ակնկալիքի: Նա հեռվից ու առանց ցուցադրության է ընծայում իր սերը: Մինչ

<sup>1</sup> Ջրհանկիր մարդու տեսակը հաճախ է հանդես գալիս Երուխանի նորավեպերում՝ «Ջրհանկիրի մը պատմությունը», «Մեռելներուն ջրկիրը» և այլն:

<sup>2</sup> Սիրո հանկարծությունը, որ հոգին վերափոխելու գործությունը ունի, բնորոշ է Երուխանի՝ սիրո հոգեբանությամբ հագեցած մի շարք նորավեպերի՝ «Քարիտեզմին», «Պատանեկան սեր», «Կուզը», «Ջրհանկիրի մը պատմությունը» և այլն:

նա իր երազների հետ էր, վրա է հասնում մյուս հանկարծությունը. մահանում է օրհորդ Ֆրեյզերը: Այս անգամ ճակատագիրն էր վերածվել յուրօրինակ ջրհանկրի, որ գալիս էր մարելու անուրջների հուրը: Համբիկը դառնում է իր սեփական տառապանքներից ու ցավերից ծնված արցունքների Սայլորդը. «Կնգուղին ծալքերուն տակ իր դեմքը խուլ և սաստիկ տառապանքի մը կծկումը արտահայտեց: Ուժգնությամբ քաշեց ձիու սանձը, ու տեսա, որ հովին ալիքները կնգուղին վրա ինկած կաթիլներ կթոցնեին, կտանեին» (296):

Տեղին է հիշել Վ. Փափագյանի նուրբ դիտարկումը. «Ձօհրապի միթը, սակայն, զգայնական սերն է մեծ մասով, հետազօտութեան ենթարկուած աշխարհն ալ գլխաւորապէս քաղքենի կենցաղն է, քաղքենի բարքերը:

Սրմաքէշխանլեանը, ընդհակառակն, կ'ընտրէ աշխատաւոր դասակարգի կենցաղը, կ'ուսումնասիրէ զայն իր բոլոր խորութիւններով, կը վերարտադրէ զանոնք հմտութեամբ, գիտէ ընտրել տպաւորիչ վայրկեաններ, գիտէ ըլլալ կարճաբան, կտրուկ ու սեղմ...»<sup>1</sup>:

Պանդխտության մեջ Երուխանը հայտնաբերում է նաև այնպիսի տիպական կերպարների, որոնք ջարդերից հետո օտար երկրում կան շարունակում են իրենց խորամանկությունները՝ դառնալով հավատավոր շահասեր, կան կորցնում են նախկին ունեցվածքն ու փառքը՝ վերածվելով հուսահատ, աշխարհից հիասթափված մարդու: «Հուռութք» նորավեպը վերջինի լավագույն վկայությունն է: Նորավեպի սկզբնամասում Երուխանը խաղաղ ծովի հետ է կիսում խոհերը, որ ստեղծում է խորհրդանշական տրամադրություն, ինչը հետագայում վերածվում է տրամաբանության: Նա հանդիպում է վաղեմի ընկերոջը՝ Հրանտին, որը Պոլսում զվարթ, կյանքի դժվարությունները անտեսող երիտասարդ է եղել, օգնել բոլորին. «Մեր մտերմական շրջանակին մեջ քիչեր կային,

<sup>1</sup> Տես Վ. Փափագյան, Պատմութիւն հայ գրականութեան, Երկրորդ գիրք, Կ. Պօլիս, 1914, էջ 156:

որ անկից օգտված չըլլային նյութապես: Հայրը՝ վաճառական, ինքն ալ վաճառական եղավ, բայց մեծանձն, զվարթ ու լայնախո վաճառական մը» (299): Ջարդերի հանկարծահասությունը փոխում է զվարթ երիտասարդի հոգեաշխարհը՝ հասցնելով տարօրինակության: «96-ի դեպքերուն, բնականաբար, կորսնցուցինք զիրար, շնչասպառ ու խելահեղ ցրվումին պահուն, որ հայրը՝ զավեն, եղբայրը՝ քրոջմեն զատեց ... տասը տարի վերջը ան մեկենիմեկ դեմս կելլար ... հանկարծական ու տարօրինակ ... **աչվրներուն ծանոթ մշտակա ժպիտին տեղ՝ գոռոզ, կրնամ ըսել՝ հարձակողական դառնության շողարձակումով մը**» (299): Կասկած չկա, որ Հրանտը տառապանքների բովով է անցել ու հյուծվել «ինչպես բուրդ հայերը՝ քիչ շատ»: Տարօրինակն այն է, որ դեպքերը փոխել են ազնիվ հոգուն, այլ երանգներ տվել նրան: «Իր վրա ամեն բան թափառահած պոհեմի հանդուզն, սանձարձակ ու տխուր անմտածությունը կմատներ: Անոր մեջ ինձի ծանոթ մարդը մեռած էր գրեթե, և **ուրիշ մեկը կար**, ալքուի տեմդով բռնկած նայվածքով» (300-301): Նա հորից ժառանգած ունեցվածքը վատահել է ընկերներին, որոնք խաբել են նրան, նրա շնորհիվ հարստացել են և անտարբերության մատնել: Նա զուրկ է վաճառականի հոգեբանությունից, այդ պատճառով էլ տարբերվում է իր՝ արդեն հարստացած ընկերներից: Բայց միայն սա չէ կարևորում գրողը: Հրանտի մեջ գնահատում է նրա յուրօրինակ բարոյականությունը, հայրենասիրական գաղափարները: Նա գիտակցում է ջարդերի բերած աղետների լրջությունը, դրանց կորստաբեր հետևանքները: Այստեղ ևս նուրբ է Երուխանը: Հրանտը այս ամենը հասկանալով է օգնել ընկերներին՝ իբրև ստեղծված իրավիճակի սուրբ պարտականություն: «Վրյունալի դեպքերը և ազգային մեծ ցավը արդեն մատնած էին զիս խորին թաղվածության մը, և ջղային այնպիսի դրության մեջ էի, որ ազգակիցներու դառն կացության դարման մը տանիլը, **ինձի համար սրբազան անհրաժեշտ պարտք մը երևցավ**»<sup>1</sup> (303):

<sup>1</sup> Հրանտի խոհերի մեջ ակնհայտ է Երուխանի միտումնայնությունը: Գրողը հայրենիքի նկատմամբ հայերի սրբազան պարտքի մասին բազմիցս կոչ է արել և անդրադարձել

Բայց եսամոլությունն ու շահասիրությունը հաճախ թույլ չեն տալիս նկատելու հավերժորեն գեղեցիկը, տեսնելու և հասկանալու նվիրյալին, նրա հայրենասիրության և մարդասիրության խորքը: Ու չեն հասկանում նրան ընկերները. այս ամենի դիմաց ընկերը՝ Ղուկաս Կեռնրյուկճյանը, փոխհատուցում է չնչին դրամով (ընդամենը հինգ դուրուշ): Հրանտը՝ Երուխանի խոհերի ու մտքերի գաղափարակիրը, տեսնում է մարդկային ողջ բարոյական ապականությունը, որ հուռուք դարձրած (դրամը) պահում էր կրծքին՝ իբրև անարդար աշխարհի խորհրդանիշ:

Մի նուրբ և աննկատ իրողություն կա նորավեպում: Հրանտը, արյունալի տեսարաններից բացի, հոր հանկարծահաս մահվան ականատեսն է եղել. «97-ին հայրս մեռավ հանկարծ, ամբողջ հարստությունը ու գործը ինձի ձգելով» (303): Հայրը կանխատեսել էր դեպքերը: Կարծում եմ՝ սա իր հոգեբանական ազդեցությունը անպայմանորեն ունեցել է Հրանտի նոր՝ խեղաթյուրված հոգեաշխարհի վրա: Նա շրջահայաց հոր հանկարծակի մահն է տեսել, ինչն ավելի տպավորող է պատանի հոգու ու մտքի համար: Այդ պատճառով Հրանտը, ինչ էլ ձեռնարկեր, անհաջողության էր մատնվելու: Եվ ոչ միայն հոր մահը, այլև հանկարծահաս դեպքերը բարդությամբ լորել և իրենց կնիքն էին դրել նրա պայծառ գալիքի վրա<sup>1</sup>:

«Հաջողության գաղտնիքը» նորավեպում նույն անկումային հոգեվիճակի տրամադրությունն է: Մարտիրոս աղան աչքի է ընկնում իր առասպելական դարձած մորուքով. «Մազի այդ հրաբխային ժայթքումը դեմքեն դուրս, տեսակ մը խորհրդավորություն և պատկառելիություն կուտար Մարտիրոս աղային» (333): Նրա էությունը կարծես մորուքի մեջ էր ամփոփվել, որը ոչ միայն լուրջ տեսք էր տվել, այլև պատիվ էր բերում նրան: Գրողը տեսնում է հակասությունը. այն իր փարթածության տակ կարող

«Շավիղում» (մասնավորապես «Վրտասահմանի հայությունը» հոդվածը և այլն): Այս տեսանկյունից ավելի է արժևորվում Հրանտի բարոյական պահվածքը:

<sup>1</sup> Ուշագրավ է, որ և Երուխանի և Ռ. Ջարդարյանի հերոսների (1894-94 թթ. դեպքերին վերաբերող երկերը) հոգեաշխարհը և կյանքը ցայգալույսային է:

էր ծածկել «գռեհիկ, աննշան և ողորմելի մարդ մը իսկ» (334): Այլ կերպ՝ Մարտիրոս աղան չէր կարող սեփական խելքով հասնել մինչև ժողովարանի բեմը, պատվական մարդու տեսք ստանալ և, մանավանդ, դրամ շահել, եթե չլիներին «նշանավոր» բեղերը: Այստեղ նկատելի է գրողի հեզնանքը. «Իմ հերոսս ալ փողոցաշրջիկ թշվառ մը պիտի ըլլար, եթե Տերը (որուն անունովը կխոսեր միշտ) իր շրթները մագերու այդ պերճ փունջովը զարդարած չըլլար» (335): Սակայն այս հաջողությունը տևում է մինչև աղետալի դեպքերը. «Բայց ահա եկավ հասավ 96-ի ուրազանը: Ամեն բան տակնուվրա եղավ Պոլստ մեջ: «Կրցողը թող փախչի»-ի ահագանգը հնչեց ամեն կողմ: Փախան: Փախանք: Ոմանք օրեր ու ամիսներ հետո, գիրար գտան դիպվածով, արտասահմանի անհուն տարածությանը վրա: Իսկ շատեր հավետ կորսնցուցին գիրար» (336): Եվ ահա Մարտիրոս աղային գրողը հանդիպում է Վառնայում, որ արդեն ցանցառացած մորուքով մոտակա գյուղեր էր գնում Սուրբ գիրք վաճառելու<sup>1</sup>: Նա էլ էր ողբերգության գոհ. կողոպտել էին նրա տունը, և մի կերպ կարողացել էր ճողոպրել և հաստատվել Բուլղարիայում: Թշնամու մտքով միայն մեկ բան չէր անցել՝ դիպչել Մարտիրոս աղայի հաջողությանը՝ մորուքին: Ու նա նորից շարունակում է իր կյանքի հաջող ընթացքը Բուլղարիայում: Բայց որքան էլ հաջող ընթանան Մարտիրոս աղայի գործերը, խնամքով պահվեն կամ մոռացության մատնվեն արհավրալից մղծավանջները, միևնույնն է, որոշ ժամանակ անց ցավը զգացնել է տալիս իրեն. այն դանդաղ տարուբերում է հոգին, որ հետո սասանի, ցնցի նրան: Եվ այդ ազդակները լուռ արտացոլվում են խորհրդանշական մորուքի վրա, որ բոլորովին պատահական չէր. «Պատվելին, սա ահավոր պեխերով մեր երանելի պատվելին, Բալքաններու հեռավոր մեկ գյուղին աղտոտ ու զարշահոտ կապելային մեջ, նիհարցած, և մանավանդ, բայց մանավանդ մերկացած իր պատմական, իր հսկայական պեխերեն,

<sup>1</sup> Այս երևույթը (Սուրբ գիրք վաճառելու) հետագայում արտացոլվում է «Գաղթականները» վեպում: Ընդ որում՝ ընդհանրություններ կան Մարտիրոս աղայի և Ղուկաս աղայի կերպարների միջև:

որոնցմե մեկ քանի թել-խլյակներ կմնային ողբալիորեն կախված վերին շրթներեն» (338-339): Եթե մի ժամանակ մորուքը խնամքով թաքցնում էր Մարտիրոս աղայի եռթյունը, ապա այժմ արտացոլում էր հոգում անթեղված ցավը՝ դառնալով հաստատուն անկման պատճառ. «Երկու տարի առաջ, չեմ գիտեր ինչու, պեխերս թափիլ սկսան» (339): Ուշագրավն այն է, որ նա դեռ չի հասկացել մորուքի թափվելու ողբերգական իմաստը. այն Սուլթան Յամիդի՝ նրա հոգու երջանկությունն ու հաջողությունը կողոպտելն էր. «Սուլթան Յամիտը տունս-տեղս կողոպտեց, հոգս չեղավ. պեխերս թափեցան՝ տունս կործանվեցավ» (339):

Երուխանը, որ մշտապես ծաղկում էր եկեղեցականների տգիտությունը, անտարբերությունը և շահասիրությունը, ինչպես ասենք «Գաղթականները» վեպի Ղուկաս աղային, հանկարծ այս կրոնավորի մեջ տեսնում է թույլ, բայց, այդուամենայնիվ, տառապալին, ու մի պահ խղճում է նրան: Այս անգամ ոչ թե հեզնում է նրա բախտը, այլև կարեկցում է ճակատագրի գոհին. «Ու տեսա, որ քանի մը խոշոր արցունքներ թավալեցան ինկան իր այտերուն ու շրթունքներուն վրա, հոն, ուր ժամանակին աշխարհիս ամենեմ փառավոր պեխերը կհանգչեին» (339):

Երուխանը, բացի շահասեր ու խավարամիտ, դրամին երկրպագող կրոնավորներից («Տեր պապային հինգերորդ տունը» և այլն), այսպես նաև ունեցվածքով աչքի ընկնող ազգայնականներին, որոնք նույնպես մեծ դեր ունեն ժողովրդի դժբախտ ճակատագրի մեջ: «Կտակը» նորավեպը ասվածի լավագույն վկայությունն է:

Մարկոս էֆենտի Նազարիկյանը «երևույթով ամիրայական, սիրտով մենծ աղա, վարմունքով ամբարտավան ըլլալու չափ վես և նկարագրով ինքնահավան: Բայց ... գրեթե աղեկ մարդ մըն էր» (369): Հետաքրքրական է ազգասերի նրա տեսակի (նա ոսկե միջինն է) հոգեբանությունը, սահմանափակ մտածողությունը, որ գավելշտի (եթե չասենք՝ ողբերգության) է հասնում. «Եկեղեցիին գավիթը ս. աստվածածնա պատկերին առջև վառող մոմերուն բազմախորշ աշտանակին վիճակը ավելի կարևորություն ուներ

իրեն համար, **քան թե ազգային ծախողված մը, որուն մեջեն ցեղին գոյության հարցը ցցվեր»** (370): Նա ո՛չ գծուծ է, ո՛չ առատեծեռն. գիտի տեղին ծախսել դրամը: Բայց գծուծ է հայրենիքին օգնելու հարցում, թեև եկեղեցասեր էր: Ըստ նրա՝ «Եկեղեցին ծուփ-ծուփ ծփալու էր» (370): Բանն այն է, որ Մարկոս էֆենտին իր հոգու հավերժ փրկությունը կապում է եկեղեցու հարատևության հետ: Երուխանը, իհարկե, կողմ է եկեղեցապաշտության՝ գենետիկական իրողության վերածված հավատամքին ու նվիրումին. «Ուտըը անպակաս ընել եկեղեցիեն և զանիկա պայծառեցնել», սակայն դեմ է ամեն ինչ եկեղեցուն նվիրաբերելու պարտակա-նությանը: Նամանավանդ որ փոխվել էր ազգային իրականու-թյունը, և ազգի շահը այլ բան էր պահանջելու՝ իրատես ու զգոն ազգասերների, ոչ թե սեփական անձի հարատևության հավատա-վորի: Ինչպես քահանաների, այնպես էլ ազգայնականների դեպ-քում, Երուխանը այսպանում է տգիտությունն ու անհեռատեսությու-նը<sup>1</sup>, որ մինչև այժմ չեն զատում կարևորը անկարևորից. «Տգետ ու խավարամիտ, չէր հավատար, որ մեր հառաջադիմության մեջ դպրոցը կարևոր դեր մը պիտի խաղար» (371): Եկեղեցին նրանց շնորհիվ հարստանում էր, իսկ դպրոցը՝ ազգայինի դաստիարա-կության հիմքը, խեղճանում: Նուրբ ու սուր է դիտարկում Երուխա-նը. «Տերտեր, վարդապետ, տիրացու, լուսարար, ծայնավոր մեծա-պես նպաստավորվելով այս «եկեղեցամուլ» ռեժիմեն, բնականա-բար կըլլային Նազարիկյան իշխանության մեյ մեկ գորավոր նե-ցուկները»<sup>2</sup> (371): Բայց ցավալին այն է, որ նույնիսկ ազգակործան դեպքերից հետո նրանց հոգեկերտվածքը նույնն է մնում. «96-ի դեպքերուն ահեղասատ փոթորիկին անդորրացունեն հետո, **նորեն իր սովորական կյանքն սկսած էր ապրիլ, ա՛լ ամբող-ջովին նվիրվելով եկեղեցիին ու անոր անվերջանալի բարե-գարությանն ու պայծառությանը»** (372): Թվում է՝ սրանում ոչինչ հոգեբանական չկա: Մինչդեռ այս երևույթը իր ներքին բար-

<sup>1</sup> Հետաքրքրական է, որ Տ. Չոլկյուրյանը ևս «Լուռ հերոս» երկում չի հանդուրժում ունևորների անտարբերությունն ու տգիտությունը ազգի դժբախտության հանդեպ:

<sup>2</sup> Երուխանը մշակապես ասոցեց հայ առաջնորդների այն եղբրական անտարբերությունը, որ շատ չափով ճակատագրական եղավ հայրենիքի համար:

դույթներով ինքնին հոգեբանական է. մահվան երկյուղից փախչող Նազարիկյանն այս անգամ ավելի ուժգին է փարվում եկեղեցուն՝ հոգով տևելու համար: Մի՞թե սա բնորոշ չէ հային. եկեղեցին մշտապես նրա հոգու մեցուկն է եղել:

Հոր խավարամիտ ոգուն հակադրվում է որդին՝ Ջարեհը՝ ազգա-պահպան իր ուրույն գաղափարներով, ձգտումներով և իղծերով. «Իր մեջ կզգար զարգանալու, նոր ու փրկարար գաղափարներով տոգորվելու ցանկություն մը, որուն շվարած էր, թե ինչ կերպով կարենար գոհացում տալ, երբ 96-ի դեպքերը հանկարծ վրա հա-սած էին» (372): Հակառակվելով հոր ցանկությանը՝ նա փախչում է արտասահման՝ գիտակցելով ստեղծված իրավիճակը:

Ջարեհին համակրում է գրողը, որ նաև նրա գաղափարակիր հե-րոսն է: Այլախոհ էր նա և փրկության ելք էր փնտրում՝ ազատու-թյան գաղափարներով տոգորված: Շատ չանցած՝ վերափոխված հոգու նոր իրականությանը գալիս է հայրենիք՝ հեղաշրջելով մյուսներին. «Ջարեհ, անհամբեր հոգի, իսկույն իր շուրջը ամփո-փեց գյուղին երիտասարդությունը և ցնցող հորդորներով հաջո-ղեցավ անոր թմրությունը փարատել, եռանդ, աշխույժ, գործու-նեության ոգի ներշնչեց անոր: **Թաղը հեղաշրջվեցավ**» (374): Երուխանը սրանով ցույց է տալիս, որ հնարավոր է փոխել իրա-վիճակը, եթե մի գիտակից ու զարգացած անհատ կարողանա համախմբել և իր գաղափարներով հրդեհել հայի թմրած միտքն ու հոգին: Ակնհայտ է Երուխանի գաղափարական միտումը՝ ազգը հեղափոխությամբ վերափոխելու ծրագիրը, որ նաև հստակ ընդգծվում էր «Շավիղի» հոդվածներում («Եկեղեցականությունը արտասահմանի մեջ» և այլն): Ջարեհի հավատավոր տեսակն է ազգը տանում դեպի փրկության և հարատևության ուղիները և ոչ թե վերացական սերն ու շահը, որ կարող է և տանել փորձության ու վերջնական կործանման («Երեք ամսվա սուգ»): Նա միակ կերպարն է Երուխանի նորավեպերի մեջ, որ ընդվզում է և հաշտ չէ ճակատագրի հետ:

Այսպիսով՝ հայ գաղթականության ողբերգու մեկնիչը՝ Երուխանը,



պանդխտության մեջ դարձավ հայապահպանության, ազգի բարոյական դիմագծի պահպանման, ցեղային ոգու հարատևման յուրօրինակ Ջանգապահարը: Ավերումի դառնությունը սրտում, անցնելով դանթեականության բոլոր պարունակների միջով՝ կարողացավ այստեղ տեսնել և բացահայտել հայի հոգին՝ ամենաբազմազան դրսևորումներով, որ մշտապես հետաքրքրեց նրան և դարձավ նրա գեղարվեստի նյութը: Նա այն բացառիկներից մեկն է, ում հաջողվեց բազմազան տիպական կերպարներով, նրբին երևայթներով, դեպքերի նկարագրությամբ ցույց տալ 1894-96 թթ. ջարդերի (մասնավորապես 1896 թ.) եղերականությունը, նաև եղավ զաղթական հայի հոգեբանության, հոգեկերտվածքի, բարոյական վարքագծի հետագա ընթացքի վրա նրա ճակատագրական ազդեցության մեկնիչը:

«Եւ արդէն մեր ցեղին ալ այս չէ՞ եղած ընթացքը դարերու ընդմէջէն: Թորգոմեան զարմը կը քալէ, անսասան, դժոխային խառնաշփոթութեան մը մէջ, խուժաններու զազանային ժխորին և խածատիչ գրոհներուն մէջ»,- ոչ պատահականորեն գրում էր Երուխանը Ռ. Ջարդարյանի «Ցայգալոյսի» առիթով: Ու, չնայած այս ամենին, Երուխանը հավատում էր իր ժողովրդի գալիքի արշալույսներին:

**Sargsyan Nara** - *New mental hero in the Erukhan's novel* - The article examines one of the greatest Western Armenian novelist's and publicist's, Erukhan's works' and 1894-96 incidents' inner connections. By analyzing Erukhan's novel, an attempt is made to prove, that the massacres of 1894-96 period were not only ethnic disasters, but also had a great impact on national psychology, resulting in the formation of a new "type" of Armenians. It is also taken into account, that after these incidents, in the literature T. Chyokyuryan, R. Zardaryan L. Bashalyan, E. Otyan, Arandzar and others is presented a new mental hero, who is in confusion in connection with the days and is bothered about the future. The article also reveals psychological layers of Erukhan's novel from such a point of view, which is an attempt to analyze Erukhan's work, in a new way.

## **ԿԱՐԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

### **ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ**

Գրողի ստեղծագործության մեջ կարևոր նշանակություն ունեն նորակազմությունները: Անկախ այն բանից, թե դրանք ինչ ճանապարհով են առաջացել՝ արտաքին թե ներքին, վկայում են տվյալ արվեստագետի ինքնատիպության, երևակայության, խոսքը տպավորիչ դարձնելու հմտության մասին: Անշուշտ, նորակազմությունները հարստացնում են լեզուն: Ռուբեն Սևակի լեզվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նորակազմությունները հիմնականում ստեղծվել են հայերենի ներքին հնարավորությունների գործադրման ճանապարհով: Դրանք խոսում են հեղինակի նախասիրությունների, լեզվական ու գեղարվեստական հակումների մասին: Այդ բառերի առաջացման հիմնական պատճառ կարելի է համարել ոճական շարժառիթը: Նորակազմությունները կարող են հանդես գալ հասարակական կյանքում կատարված փոփոխությունների հետևանքով, դրանք ունեն անվանողական դեր: Ինչ վերաբերում է հեղինակային նորակազմություններին, ապա դրանք ստեղծվել են լեզվում գոյություն ունեցող բառակազմական միջոցներով<sup>1</sup>: Հայերենում բառաբարդման «անսահմանափակ հնարավորությունները թույլ են տալիս ազատորեն կազմել նորանոր բառեր ու դրանցով հարստացնել մեր լեզվի բառապաշարը»<sup>2</sup>: Մեր ուսումնասիրությունից պարզվեց, որ նորակազմությունները գերազանցապես բնորոշ են Սևակի չափաձոյին, արձակում դրանք չկան: Սա մեկ անգամ ևս վկայում է, որ նորակազմությունները կատարում են առավելապես ոճական գործառույթ<sup>3</sup>: Երկու դեպքում էլ նորակազմությունները գերա-

<sup>1</sup> Տե՛ս Լ. Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2003, էջ 135-136:

<sup>2</sup> Գ. Ջահուկյան, Էդ. Աղայան, Հայոց լեզու, Եր., 1980, էջ 333:

<sup>3</sup> Տե՛ս Ս. Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Եր., 1989, էջ 227:

զանցապես հեղինակային հույզերի, ընկալումների, գնահատողական վերաբերմունքի արդյունք են: Դրանք տարբեր բառերի, բառակազմական տարբեր բաղադրիչների համադրումներ են: Նորակերտ բառերի կաղապարները կարելի է բաժանել հետևյալ խմբերի. գոյական+գոյական՝ **սիրաթույր** (129)<sup>1</sup>, **արքայափառ** (157), **մահաբարբառ** (170), **հրաշալույս** (221), **մահաժպիտ** (89), **եթերարշավ** (91), **դարահողով** (29), **դիվահանդես** (199), **հայածեծ** (173), **ծյունագունտեր** (91), ածական+գոյական՝ **ոսկեփառք** (173), գոյական+որեն՝ **շիրիմորեն** (126), **մահորեն** (82, 127), **մեռելորեն** (199), գոյական+ածական՝ **մահունակ** (98), **գաղջունակ** (98), գոյական+ավետ՝ **մահավետ** (84), թվական+գոյական+յան՝ **հազարդարյան** (206), գոյական+ված՝ **հորիզոնված** (159), գոյական+բայ՝ **հրաշակ** (98), **հյուծահալ** (98), նախածանց+գոյական+վերջածանց՝ **անդրհեղեղյան** (26), **անդրմարդկային** (298), ածական+ածական՝ **ահագնալուռ** (105)<sup>2</sup>:

Ինչպես տեսնում ենք, Սևակի նորակազմություններին առավել բնորոշ է գոյական+գոյական կաղապարը, որի շնորհիվ ստեղծվում են բառեր, որոնք ունեն ածականի իմաստ: Պարզ է, որ դրանք ստեղծվել են գերազանցապես ոճական նպատակներով և հինչում են միանգամայն բնական ու իմաստավոր: Այդ ածականները որպես լրացում դառնում են ոչ այնքան որոշիչներ, որքան մակդիրներ՝ ձեռք բերելով փոխաբերական իմաստներ:

*Եթե գիտնայի՜ր, ո՛վ անձանոթ քույր,  
Թե որքա՛ն ատեն է կը փնտռեն կո՛ւյր,  
Ճամբուս վրա ոտքիդ հետքը սիրաթո՛ւյր,  
Եթե՛ գիտնայիր...*

<sup>1</sup> Տե՛ս Ռ. Սևակ, Երկեր, Եր., 1985, էջ 129: Այսուհետ սույն գրքից հղումները կտրվեն չարադրանքում, և կնշվի միայն էջը:

<sup>2</sup> Նորակազմությունները ներկայացվում են ըստ մեր ձեռքի տակ եղած բառարանների՝ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Ս. Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, Եր., հ. 1-4, 1944, էր. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, Ս. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., 2002:

Անձանոթուհուն ուղղած խոսքը բանաստեղծի համար դառնում է «Եթե գիտնայի՜ր» բանաստեղծության ատաղձը: Քանի որ սիրո առարկան գրեթե դեռահաս է և գեղեցիկ է, հետևաբար մահը նրա համար այնքա՛ն հեռու է, քանի որ «ով աղվոր է՝ քիչ մ'անմահ է այն», քանի որ նրա համար ամեն ինչ լավ է, մինչդեռ նա չգիտե, որ վարդերը ընդամենը մի առավոտ են միայն ապրում: Բայց որտե՞ղ է սիրո էակի նրբությունը ամենից ավելի երևում, եթե ոչ նրա հետքերի մեջ: Ընդհանրապես Սևակը կարևորում է մարդկային ոտնահետքերի բնույթը: Եթե բանաստեղծի համար «դամբաններ են ոտքիս հետքեր» («Ինչո՞ւ»), ապա վերոհիշյալ բանաստեղծության մեջ պարմանուհու ոտքի հետքը **սիրաթույր** է, «սիրո գույն» ունի: Բայց և միաժամանակ դա մաքուր, ամաչկոտ, ամենքի աչքից խափող, միայն իր սիրելիին ցուցանվող ոտնահետք է: Ըստ երևույթին այդ հետքերը կարող է միայն ճանաչել նա, ով մշտապես հետամուտ է դրանց և դրանք տարբերում է մյուսների հետքերից: Բանաստեղծը խոսում է նաև քնարական հերոսուհու արտաքին գեղեցկության, ավելի ծիշտ նրա երիտասարդական, ներքին ծաղկող ուժի մասին. «Աչքերդ խոնավ, շրթներդ մսուտ են...// Բայց համբույրներուն մի՛ հավատար, սուտ են...» (130): Թեև պիտի ասել, որ գեղագիտորեն հաջողված պատկեր չէ (շրթներդ մսուտ): Հեղինակը այստեղ հարանունությանը ավելի շատ բառախաղ ստեղծելու միտում է ունեցել՝ **մսուտ // սուտ**, որ դարձյալ գեղարվեստականորեն հաջողված չէ: Սեփական մերժված հոգու տվայտանքները ներկայացնելու նպատակով բանաստեղծը գործածում է այնպիսի նորակազմություն, որը դառնում է և առարկայորեն ընկալելի, և իմաստի առումով խորը: Քանի որ սիրած էակն անհասանելի է մնալու նրան, հետևաբար նրա հոգին դառնում է աշխարհի համար փակ ու լուռ. «Ահա հոգիս **շիրիմորեն** փակ ու չա՛ր» (126): Բնութագրումը ոչ միայն գաղտնիքը լռությամբ, շիրիմի պես լռությամբ պահել է նշանակում, այլև բախտի հարվածները շիրիմի պես հլու-հնազանդ տանելու պատրաստակամություն: «Արգասավորում» բանաստեղծությունում խոսելով կառքը քաշող ձիերի մա-

սին՝ գրողը երևույթի մեջ մշտնջենական Տառապանքն է տեսնում: Դրանք կյանքի կառքին լծված հլու կենդանիներ են, որ անհորիզոն ճանապարհի լռության մեջ լսում են խարազանի ձայնը:

*Այսպես թշվառ արքայափառ մտրակի մը ներքև շեն,  
Չավիտյանին Անեծքն իրենց Արզանդին մեջ ախտաշեն,  
Մառախուղի առավոտով, ծեփ ծիծերը կը քաշեն... (157):*

Ստրակը, որ ոչ այնքան ուղղորդում, որքան փորձում է արագացնել կյանքի ընթացքը, անգոր է ու թշվառ դժվար կյանքի հանդեպ, բայց քանի որ ինքն է կյանքը «ղեկավարող» ուժը, հետևապես այն արքայական փառքով օծված կամ **արքայափառ** մտրակ է, որ շաչում է առավոտյան մառախուղի մեջ:

«Ահազանգերը» բանաստեղծությունը իր պատկերներով հիշեցնում է «Զարդի խենթը» պոեմը: Այստեղ կործանումների պատկերները այլաձևումներով արտահայտվում են բանաստեղծի երևակայության մեջ: Ծան ոհմակների ոռնոցի ներքո երևում են և առարկայական պատկերներ:

*Ու չե՞ք տեսներ, ախ հեռուե հեռու  
Չրդեհով կարմիր հորիզոններու  
Վրրա տիրաբար ու աստվածաբար  
Իշխող գմբեթները մահաբարբառ (170):*

Ակնհայտ է, որ կործանումների չվերջացող կարմիր հորիզոնի վրա, ինչը սիմվոլացնում է արյունն ու անկումները, Սևակն առանձնացնում է կրոնի գերակա նշանակությունը: Չորիզոնների վրա անգամ «աստվածաբար» իշխող գմբեթները **մահաբարբառ** են: Դրանք ոչ թե եղբայրություն ու սեր են քարոզում, այլ մահ են բարբառում: Եվ բնական է, որ բանաստեղծի հիվանդ հոգու մեջ գնալով պիտի ծավալվեն ստույգ կործանումների ահազանգերը: «Չայ գատիկը» ավանդավետում գրողը խոսում է Արտավազդի ավանդազրույցի մասին: Դարբինն ավանդական կարգը պահելու նպատակով միշտ ծեծում է սալը՝ նրա շղթաներն ամրացնելու նպատակով: Դարբինը երեք տղա ուներ. առաջին երկուսը գնացին Արտավազդի հետքով ու չվերադարձան:

*Ու մյուսներուն պես՝ երրորդին պատմեց  
Չի՞ն հի՞ն օրերու **ոսկեփառքը** մեծ,  
Ցուցուց սուրբ նշխար մ'որ սրտեն հանեց:  
-Գնա, տես կապրի՞ դեռ Արքան **հայածեծ...** (173):*

Քանի որ դարբնի որդին վերջինն է երրորդը, ուստի անցյալի փառքերի մասին նա խոսում է առավել եռանդով, հետևապես նրա համար անցյալը օծված է «ոսկեփառքով», ինչը պարզապես անփոխարինելի է դարբնի համար: Թերևս ավելի կարևոր է «հայածեծ» նորակազմությունը: Մեր գրականության մեջ ոչ ոք Արտավազդին նման բնորոշում չի տվել: Անշուշտ, բառն առաջացել է սալը կամ զնդանը ծեծելու ավանդույթի արդյունքում: Բայց բառն ստանում է և այլ իմաստ. արքան, որ գուցե և ազատություն էր բերելու ազգին, նրա կողմից մշտապես ծեծվեց. մարդիկ դարբնով ամրացրին նրա շղթաները: Չետևապես այն դարձավ հայերից ծեծված, մերժված արքա:

Սևակը, խոսելով մեր կորուստների ու տառապանքների մասին, դրանց տևական բնույթը ցույց տալու համար ստեղծում է նոր բառ՝ ավանդական սկզբունքի հիմքի վրա:

*Ահա մենք կուզանք, ուսով հրելով  
Մեր Ցավին Անիվը **դարահողով** (29):*

Տպավորիչ է դարբնով շրջված, գլորված, հոլովված մեր ցավի անիվը: Այդքան կորուստների դիմաց նոր եկող սերունդը, որ մեծ ներուժ է ունենալու, կխոսեցնի համայնատարած գերեզմանոցները:

*Ահա մենք կուզանք, **ահեղակորով**  
Մեր Չույսին կռանիթ գարշապարներով... (29):*

Այս սերունդը, որ լինելու է «վրեժներու հիդրան», արդարությանը հասնելու մեծ մղում է ունենալու: Նա այնքան հզոր է, կորովի, որ այդ ուժը դառնում է չափազանց շատ, ահեղ, հետևապես այդ սերնդին հեղինակը բնութագրում է «ահեղակորով» նորակազմությամբ: «Պոլսո որովայնին մեջ» բանաստեղծության մեջ, խոսելով մարդկային ախտերի մասին, ներկայացնում է քաղաքի հետնախորշերը, որտեղ բյուզանդական ավերակների վրա մարդկու-

թյունը շարունակում է քարշ տալ իր գոյությունը, Արևմուտքը Արևելքին է պարզում կործանումի բաժակը: Այս իրադրությունը բանաստեղծը ներկայացնում է **մահաժպիտ** բառով, որ ամենից լավ է բնութագրում իրավիճակը: Այցելուին մատուցվող ժպիտը կործանումի սկիզբն է, հետևապես այն մահվան հրավեր է.

*Ո՛վ մահաժպիտ, զա՛րշ, արյունալի՜  
Չակադարձ երեսը այն «մետայլ»-ի  
Ուր ՄԱՐԴ ոսկետառ անունն կը փայլի... (89):*

«Մեռցնելու իրավունքը» պատումում հերոսները խոսում են մարդուն, անասելիորեն ծանր վիճակում հայտնված մարդուն կյանքից զրկելու կամ այդ մահը երկարացնելու մասին: Ոչ ոք իրավունք չունի մյուսին զրկելու կյանքից, քանի որ դա Աստծու շնորհն է: Իսկ հերոսներից մեկը խոսում է մահվան մասին, որը հեռու է սովորական լինելուց, դա ընդհանրապես վեր է մարդկային ուժից, դա մարդկային մահ չէ, այն մարդկայինի սահմաններից անդին է. «Այսպես վերջացավ այս անվերջանալի, այս ահավոր, այս **անդրմարդկային** մահը, ի՞նչ կ'ըսեն, այս ոճիրը, ոճիրներուն գլուխ-գործոցը...» (298):

Երբ խոսքը մաքուր սիրո մասին է, այդ դեպքում ամեն ինչ դառնում է և՛ երազային, և՛ իրական պատկերների համադրումներ: Բնության տեսարաններն ուղղակի մասնակցում են քնարական հերոսի ապրումների, զգացողությունների ծավալմանը: Այն ներքին հակասական զգացողությունները, որ ապրում է հերոսը, արտահայտվում են նորակազմություններով:

*Բոցի հագա՛ր լեզուներ մեզ կողողեն.  
Ու կը սահի՛նք,- ու կզգամ, որ կսուրան  
Կուրծքիս վրա ծյունագունտերդ հրեղեն:  
Ու կը սահի՛նք, եթերարշա՛վ զույգ հուրի... (91):*

Առաջին բառը գործածվում է միանգամայն նոր իմաստով, որ չի արձանագրված բառարաններում (իմաստային նորաբանություն է), իսկ երկրորդ բանաստեղծի ստեղծածն է, որ լավ է բնութագրում եթերում ճախրող սիրահարների երազային զգացողությունները: Սևա-

կի բանաստեղծության մեջ կարևոր տեղ է գրավում կյանքի ու մահվան փոխհարաբերության հարցը: Դա է պատճառը, որ նա ամեն պահի մեջ տեսնում է մարդկային կյանքի վերջը կամ ավարտը տանող ճանապարհը: Պատահական չէ, որ նա իր սիրած աղջկան հաճախ է հարաբերակցում մահվան զգացողությանը: Սևակն ընտրում է լռության թերևս բարձրագույն ձևը, որ սահման չունի: «Կ'արյունի» բանաստեղծությունը կապված է կյանքի անցողիկության զգացողությանը, հետևաբար բնությունը, լճի ջուրը «մեռած» են: Այրվող հորիզոնն արյունվում է քնարական հերոսի հոգու մեջ, իսկ իր կողքին նստած գեղուհին «մահորեն» լուռ է. «Տժգույն դողողոջ գիծ արյունի...// **Մահորե՛ն** լուռ, նստած կողքիս...» (82): Ընդգծված բառը ոչ միայն բնութագրում է լռության աստիճանը, այլև հոգեբանական նշանակություն է ձեռք բերում. այդ լռությունը կապվում է անխուսափելի կործանման զգացողությանը. սիրո էակը մահորեն լուռ է, քանի որ համոզված է, որ ամեն ինչ անցողիկ է, անվերադարձ, այդ պատճառով էլ խոսքը դառնում է անտեղի ու անիմաստ: Կյանքի անցողիկության զգացողությունը մշտապես հետապնդում է բանաստեղծին: Նրա համար միակ երջանկությունը սիրած էակի զրկում քարանալն է: «Մեռնի՛լ... Կու լա՛ս... Կը խորհեի, սիրակա՛ն, // Թևերուդ մեջ քարանալու հաճույքին, // Քո՛ւյր, **մահանո՛ւյշ** քույր, **մահագոր**, մահագին...» (118): Սևակը միմյանց է համադրում անհամադրելի բառերը: Սիրո էակը նրա համար ոչ միայն մահվան գին ունի, մահի նման զորավոր է, այլ նաև մահանույշ է: Բանաստեղծը ոչ միայն նման բնութագրումներ է տալիս իր սիրո էակին, այլև խոսում է ընդհանրապես կնոջ մասին, որը իր էությամբ Մեղքի կրողն է՝ որպես Եվայի ծնունդ: Այն իր գոյությամբ դառնում է ոչ միայն կյանքի սկիզբ, այլև յուրօրինակ վերջ, այդ պատճառով էլ դառնում է նաև «**Մահավետ** սընունդ» (84): «Մահորեն» բառածևը բանաստեղծը գործածում է և ուղղակի իմաստով: Նկարագրելով, թե ինչպես է նավավարը լքում այրվող նավակը, գրում է. «Նավակի մը մեջ, հեկեկալո՛վ, **մահորե՛ն**, // Կը հեռանար վիզը ծռած, աչքն ետին...» (127): Որքան էլ որ բառն ուղղակի նշանակություն ունենա, միևնույնն է՝ այն ևս առնչվում է վերջի զգացո-

ղությանը: Ամեն ինչ անցողիկ է, անգամ ծովի վրա գտնվող նավակն այրվելուց ապահովագրված չէ: Բանաստեղծը «Կարիճը» բանաստեղծության մեջ «մահունակ» նորակազմությունը գործածում է ուղղակի իմաստով, բառն արտահայտում է «մահաբեր» իմաստը.

*Իրիկուն է: Փոքրիկ, ահեղ, մահունակ,  
Կարիճն հանդարտ մեղմ արևուն կը տաքնա (96):*

Ակնհայտ է, որ **մահաբեր** բառը չի արտահայտում «մահը բերելու ունակություն ունեցող» իմաստը: Խոսքն այն մասին է, որ փոքրիկ միջատը ունի այդ ունակությունը, որ կարող է կյանք խավարել: Առանձին դեպքերում էլ թվում է՝ բանաստեղծը նոր բառ է կազմել հանգավորում ստեղծելու համար.

*Անձա՛ն հեշտանք. հեքն արևուն գաղջունակ,  
Կռնակե ներս, արյունին մեջ կ'ընթանա,  
Մինչ տտունն իր գլխուն վերև շարունակ  
Կ'ելևէջե, արքայորեն անխընա:*

**Անդրհեղեղյան** բառը Սևակը մի դեպքում գործածում է որպես սոսկ առարկան բնութագրող բառ, մեկ այլ դեպքում ժամանկը ներկայացնող բառ: «Ջարդի խենթը» պոեմում խենթը, տեսնելով կործանումները, դիակների անսահման քանակությունը, ասում է. «Ու որչա՛փ ալ կա, մինչև հեռակա // ճամբարներուն ե՛զրը փռվա՛ծ, կարծես // **Անդրհեղեղյան** անտառի մը պես...» (26): Պարզ է, որ գրողը նկատի է ունեցել անդրհեղեղյան անտառի բազմաքանակությունը, հեղեղից հետո եղած անտառը միայն նախկին վիճակին հասնելու ճանապարհին է: Այս բառը Սևակը գործածում է և «Իրենց պատմությունը» բանաստեղծության մեջ, որպեսզի ցույց տա հայ ժողովրդի՝ անդրհեղեղյան ժամանակներից եկող պատմությունը. «**Անդրհեղեղյան** ո՞ր դյուցազներեն, // Ո՞ր կիկլոպներեն կյանք տվավ իրեն» (205): Բառարաններում արձանագրված է «անդրջրհեղեղյան» բառը, ինչն անշուշտ ծանոթ է եղել բանաստեղծին: Բայց գործածության, արտասանության տեսակետից ավելի նպատակահարմար է բառի սղված ձևը: Միաժամանակ, մեզ թվում է, որ **հեղեղ** բառը ավելի տպավորիչ է,

քան **ջուր** բառը: Բացի այդ, այն արդեն պարունակում է **ջուր** բառի իմաստը: Նույն բանաստեղծության մեջ հեղինակը ժողովրդի երկարամայ պատմությունը ներկայացնելու համար գործածում է «**հազարդարյան**» նորակազմությունը. «Բայց հազիվ կյանքի վերստացան շունչ // Այդ **հազարդարյան** ոսկորներն անշշունջ...» (206): Սովորաբար գործածական է «բազմադարյան» արտահայտությունը, բայց «բազում»-ը որևէ կերպ չի արտահայտում **հազարի** իմաստը: Սևակը հասնում է բառիմաստի, թվաքանակի սաստկացմանը: «Կարմիր դրոշակը» ստեղծագործության մեջ գրողը, ներկայացնելով մարդկային բազմությունների երթը զրկանքների, կործանումների ժամանակների միջով, ցույց տալով սոցիալական անարդարության աղաղակող հակասությունները, մարդկային բազմությունը դիտում է որպես սովից լլկված ամբոխ:

*Կառքին գեղջուկ բեմին վրա **հյուծահա՛լ**  
Խեղճեր ելան խոսք առնելու, կիներ ալ... (98):*

Բնական է, որ **հյուծված** բառի գործածությունը չէր ունենա այն ազդեցությունը կամ իմաստը, ինչ որ կա նոր բառի մեջ՝ հյուծվածությունից հավված, մաշված իմաստով: Ոչ ոք չի օգնում, սատարում սովյալներին, անգամ տաճարները.

*Ինչո՞ւ հազա՛ր պերճ տաճարներ **հրաշակա,**  
Աստուծո մը հոգվո՛ւյն համար, որ չիկա... (98):*

Ընդգծված բառը միայն հրաշքի իմաստը չունի, այլ հրաշք, որն առկա է, կա, մենք տեսնում ենք այն: Բայց անգամ հրաշքով առկա տաճարները չեն լսում մարդկանց ողբերը:

Սևակի չափածոյում հանդիպում ենք և գոյականի բայացման երևույթին: Սա «վերջին տասնամյակների գեղարվեստական գրականության մեջ լայնորեն տարածված երևույթ է»<sup>1</sup>: Բառակազմական այս միջոցը դարասկզբին այնքան էլ տարածված

<sup>1</sup> Տես Ս. Մելքոնյան, Գ. Թումանյանը և արևելահայ գեղարվեստական գրականության լեզուն, Եր., 1986, էջ 58:

երևույթ չէր: Արևելքի դարավոր անշարժությունը ցույց տալու համար գրողը հետաքրքիր բացահայտում է արել: Սովորաբար «հորիզոն» բառը, որը նշանակում է երկնքի և երկրի թվացող միացման գիծ, գործածվում է և ծավալային իմաստով՝ որպես ընդարձակության, շատության իմաստ արտահայտող բառ: Գործածական է նաև «անհորիզոն» բառը, որ խոսում է անսահմանության մասին: Սևակը գործածում է **հորիզոնված** բառը, որ դառնում է **անհորիզոն** բառի հականիշը:

*Չորիզոնված, շրջանակված հավիտյան,  
Անվերջ, անհուն վերջալույսով մը միայն,  
-Արևելքի պատմությունն է լռելյայն... (159):*

Սևակը հայերենի բառակազմական օրինաչափության հիմքի վրա կառուցել է մեկ այլ բառ՝ **ահագնալուռ**, որ նշանակում է **ահագնացող լուռություն**: Ոչ մի տեղ այդ լուռությունը այնքան **ահագնացող** չէ, որքան գերեզմանի փոսի առջև. «Անցիր անոնց **ահագնալուռ** գերեզմանի փոսին քով» (105):

Իր ասելիքը տպավորիչ, թարմ գույներով ներկայացնելու նպատակով Ռուբեն Սևակը դիմել է տարատեսակ նորակազմությունների: Դրանք ավելի բնորոշ են բանաստեղծական լեզվին, դրանց հիմնականում լեզվաբանորեն ներուժունակ բառեր չեն և տարածվելու, ընդհանրանալու մեծ հնարավորություններ չունեն, առավելապես ոճական նշանակություն ունեն: Դրանց թողած ազդեցությունը բավականաչափ մեծ է: Ա. Գվոզդևը վկայում է, որ նորակազմությունների մի մասը կարող է աչքի զարնել միանգամից, իսկ մյուս մասը «հազիվ է առանձնանում համատեքստի մնացած բառերից»<sup>1</sup>:

Սևակի նորակազմությունները իրենց ոճական առումով, ուժեղ ներգործությամբ տպավորիչ են դարձնում բանաստեղծական խոսքը: Դրանք որքան էլ անսովոր, ինքնատիպ, միևնույնն է՝ կառուցված են հայերենի բառակազմական օրինաչափություններով:

րով, հետևաբար ընթերցողի համար ընկալելի են: Հասկանալի է, որ ինչպես բառապաշարի մյուս շերտերի, անյպես էլ նորաբանությունների գործածությունը պայմանավորված է հեղինակի գեղարվեստական նախասիրություններով և նպաստում է դրանց ոճական իրացմանը:

**Karine Avetisyan – Neologisms in Ruben Sevak's Poetical Works** – The study of the individual style of the writer in terms of word-formation is of current importance in modern linguistics. The author's neologisms have always attracted attention. This article is an attempt to systematize the existing views and provide a definitive interpretation of neologisms. The output is as follows: in Sevak's works the author's individual-stylistic words - neologisms are of great importance, which are created by the author for specific artistic purposes. The studies show that in Sevak's poetry neologisms are mainly created by using the resources of the Armenian language. They talk about the stylistic preferences of the author.

In Sevak's poetry the neologisms have a strong stylistic influence on his impressive poetic word. In the lexicon as well as in other layers, the used words depend on the artistic preferences of the author and contribute to their stylistic implementation. The author's word-building is one of the components of the concept of "personal style." Therefore the author's neologisms are the way of expressing the individual style and their complex is a reflection of the individual word-formation style.

<sup>1</sup> А. Гвоздев, Очерки по стилистике русского языка. М., 1965, стр. 102.

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

ՀԱՅ ԳԱՂԹԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՓՈՐՁ..... 3

**ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ**

ՍՓՅՈՒՌՔԻ ԶԱՆՔԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿՈՂՄԻՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ՈՒ  
ՊԱՏԱՊԱՐՏՄԱՆ ԲԱՆԱԶԵՎԵՐԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ ..... 29

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

ՀԱՅ ԱԶԳԱՔԵՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
ԸՍՏ 1959–1989 ԹԹ. ՄԱՐԴԱԳԱՄԱՐՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ..... 44

**ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ**

ՀԱՅԵՐԸ ԶԺՅ-ՈՒՄ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ 21-ՐԴ ՊԱՐԻ ՍԿԶԲԻՆ ..... 56

**ԷՂԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ԵՐԿՈՒ ՓԱՏՏԱԹՈՒՂԹ ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԶՔԵՆԱԿՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 76

**ՆԱՐԻՆԵ ԵՐԱՆՈՍՅԱՆ**

ԵԳԻՊՏՈՍԻ «ԱԼ-ՄՈՒՔԱԹԱՄ» ՕՐԱԹԵՐԹԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ  
ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԵՎ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ  
(1889-1896 թթ.) ..... 97

**ՀԱՅԿ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ**

ՀԱՅՈՑ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱՂԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ..... 113

**ԷԼԻՆԱ ՄԻՐՉՈՅԱՆ**

ՀԱՅ - ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՅԸ «ԱԿՕՄԻ»  
ԷՋԵՐՈՒՄ (1996-2007 թթ.) ..... 127

**ՏԱԹԵՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ**

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ԲՆԱԳԱԿԱՌՈՒՄ ՀՀ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ..... 140

**ԹԱՂԵՎՈՍ ՏՈՆՈՅԱՆ**

ԲԱՆԻ (ԶԱՅՆԻ, ԽՈՍՔԻ, ՏԵՔՍՏԻ, ԵՐԳԻ) ԵՎ ՀԱՑԻ ՀԱՄԸՆԿԱԼՈՒՄԸ  
ՀԱՅԵՐԵՆԻ ԼԵԶՎԱՍՏԱԾՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ. ՂԱՆԻԵԼ  
ՎԱՐՈՒԺԱՆ..... 149

**ԼԻԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀԱՄԱԳՈՐԾԱԾԱԿԱՆ ԲԱՈՒԵՐԻ ԵՐԳԻԾԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԵՐՎԱՆԴ ՕՏՅԱՆԻ ԱՐՉԱԿՈՒՄ ..... 160

**ՆԱՌԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀՈԳԵՎԵՐՏՎԱԾՔԱՅԻՆ ՆՈՐ ՀԵՐՈՍԸ ԵՐՈՒՄԱՆԻ ՆՈՐԱՎԵՊԵՐՈՒՄ ..... 175

**ԿԱՐԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՔԵՆ ՍԵՎԱԿԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ..... 195



# ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԵԳԻՐՔ

Հրատ. խմբագիր՝ **Լևոն Ավետիսյան**  
Տեխ. խմբագրումը և համ. ձևավորումը՝  
**Աննա Աղուզումցյանի**  
Համ. շարվածքը՝ **Գայանե Գրիգորյանի**  
Սրբագրիչ՝ **Վահանդուխտ Դերձյան**

Չափսը՝ 60x84 1/16:

Թուղթ՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ:

Տպագր. 13 մամուլ: Տպաքանակ՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

---

Տպագրված է՝ «Բլանկիհրատ» ՓԲԸ  
ք. Երևան, Պ. Սևակի 47